“The Armenian Genocide is remarkable in many respects, including the fact that in the bloody 20th century it was an early example of mass genocide, which many recognize as a “dress rehearsal” of the Holocaust”<sup>9</sup>.

**SOL GITTLEMAN**, *Provost and Head of the Chair of Judaic Studies, Tufts University (US):*

“The campaign of vilification and dehumanization which preceded the destruction of hundreds of thousands of Armenians in 1895-1896 and again in 1915 was, in subtlety and in preparation, just as carefully orchestrated as was the preparation of Dr. Goebbels. The Armenians were categorized according to the stereotype. Therefore, they were less than human, and killing men, women, and children was not an act of brutality, but rather an act of heroism necessary to free the country from an infection”<sup>10</sup>.

**LUCY DAWIDOWICZ**, *Expert on Holocaust, Harvard (US):*

“The Armenian Genocide in its extent and horror most closely approximated the murder of the European Jews <...> The once unthinkable “Armenian solution” became, in our time achievable “Final solution”, the Nazi code name for the annihilation of the European Jews”<sup>11</sup>.

Meanwhile, Israel urged to recognize the Armenian Genocide not only by leading experts on the Holocaust. Over the years Knesset members Aryeh Eldad, Ze'ev Elkin, Zahava Gal-On, Haim Oron, Yossi Sarid, Yuri Stern, Yair Tzaban, Alexander Tzinker and others bore on the agenda of the plenary sessions of the Israeli parliament proposals for official recognition of this tragic fact of history. Today's Israeli president Reuven Rivlin – the then Speaker of the Knesset – also considered the recognition of the Armenian Genocide to be the duty of the Israeli parliament<sup>12</sup>.

A crucial support for the recognition of Armenian Genocide demonstrated Yona Metzger, Chief Rabbi of Israel, who visited the Memorial to the victims of the Armenian Genocide in Tsitsernakaberd in 2005<sup>13</sup>.

We welcome the members of the European Jewish Parliament at the National Assembly of the Republic of Armenia on the eve of the 100th anniversary of the Armenian Genocide in the Ottoman Empire. Let me express my confidence that today's joint discussion of ours will advance the understanding and implementation of constructive cooperation between the Armenians of the world and world Jewry in the interests of security and sustainable development of the Republic of Armenia and the State of Israel, as well as the Armenian and the Jewish Diasporas.

In conclusion, I feel genuinely obliged to speak about the appropriateness of the invitation of His Excellency the President of Israel Dear Mr. Reuven Rivlin to Yerevan in April 2015 to take part in events marking the 100th anniversary of the Armenian Genocide in the Ottoman Empire. This visit, reflecting the national security interests of the State of Israel and the Republic of Armenia, and I am sure of it, may become a high performance act of moral duty for all the states and peoples of the world - in relation to the memory of the victims of crimes against humanity and mankind.

\* \* \*

In terms of political science, an attempt is made for the first time in the articles published in this issue to comprehensively study the Armenian Genocide and the problems related to it. For a long time the motto of our journal has been "Never again! Armenia can not afford to lose any war" as a regular column, while covering the RA defense-security problems, goals and objectives, and the progress of the defense reforms being implemented in the Republic. The first part of the motto represents the commitment of our people spread all over the world, of our state, our Armed Forces to never again let the possibility of the Genocides recurrence. That means that we – grieving over 1.5 millions of our innocent victims – with the grief must coldheadedly analyze the lessons learned from the past, draw correct, logically relevant conclusions and in line with them develop military and political security programs for the future.

This collection is the fruit of the effective cooperation of the competent specialists from Armenia, Diaspora and the abroad, therefore I express my gratitude to the Advisor to the Head of the INSS, MOD, RA, Corresponding Member of NAS, RA, Honored Scholar of Armenia, Doctor of History, Professor *N. H. Hovhannisyan* and the Research Fellow of the Analytical Center of the INSS, MOD, RA, Doctor of History, Professor *A. G. Avagyan*, who are also Academic Editors of this issue; Doctor of History, Professor at the Chair of the Armenian History of YSU *A. N. Hayruni*; Permanent Representative of the Republic of Armenia to the OSCE (Head of Mission), Doctor of History, Professor, Ambassador Extraordinary and Plenipotentiary *A. J. Kirakossian*; Dean of the Faculty of History of YSU, Doctor of History, Professor *E. G. Minasyan*; Associate Professor of the Chair of the Armenian History of the Armenian

State Pedagogical University after Kh. Abovyan, PhD in History A. H. *Harutyunyan*; Senior Research Fellow at the Institute of Language of NAS, RA, PhD in Philology, Associate Professor J. A. *Barnasyan*; Senior Research Fellow at the Division of Turkey of the Institute of Oriental Studies of NAS, RA A. R. *Hovhannisyan*; PhD in History, Professor A. A. *Papazyan* (US); Research Scholar at the Free University of Berlin, Doctor of History, Professor h. c. T. *Hofmann* (Germany); Professor of Modern and Recent History of the Faculty of Arts of the Damanhour University, Doctor of History M. *Refaat Al-Emam* (Egypt); Member of the Knesset, Chairperson of the Meretz party Z. *Gal-On* (Israel); Founding Director of the Turkish Belge Publishing House, Human Rights Activist R. *Zarakolu*; and Master of History S. *Chetinoglu* (Turkey).

<sup>1</sup> See “Конвенция о предупреждении преступления геноцида и наказании за него. Принята резолюцией 260 (III) Генеральной Ассамблеи ООН” от 9 декабря 1948 года ([http://www.un.org/ru/documents/decl\\_conv/conventions/genocide.shtml](http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/genocide.shtml)),

H.V. *Hakobian*. The Genocide of the Armenians in Azerbaijan from 1988-1990, from the standpoint of international law. “Haykakan Banak” Quarterly Journal of Military Sciences, MOD, RA, Yerevan, 1997.

<sup>2</sup> See *Гайк Котанджян*. “Никогда опять” - императив гарантирования безопасности еврейского и армянского народов. “International expert Center for Electoral Systems”, 31 мая 2011 (<http://www.elections-ices.org/russian/publications/textid:10805/>).

<sup>3</sup> See *Hayk Kotanjjan*. Minister of Foreign Affairs of the Nagorno-Karabakh Government In-Exile Speaks of the Twenty-Fifth Anniversary of the Karabakh National-Liberation Movement. “International Center for Electoral Systems”, Israel (<http://www.elections-ices.org/files/publications/298.pdf>).

<sup>4</sup> See in detail B. A. *Пономарев*. Трагические события, которые можно было предотвратить. Военно-научный журнал ИНСИ МО РА “Армянская армия”, 2012, N 3.

<sup>5</sup> See “Французские евреи испытали ужас от массового захоронения в Губе”. “АзерТАдж”, 27 октября 2012 (<http://news.day.az/politics/363021.html>).

<sup>6</sup> See *Гайк Котанджян*. Политологи против политики ксенофобии главы Азербайджанского государства, 01.11.2012 (<http://www.elections-ices.org/files/publications/16038.pdf>).

<sup>7</sup> See “Почему и как Российские евреи принимали христианство по армянскому обряду (1910-1915 гг.)”. Документы и материалы Центрального Государственного Исторического Архива России. Подборка. Составитель и автор введения академик НАН РА Вардгес Микаелян. Е., “Наири”, 1999.

<sup>8</sup> See “IS said to destroy Armenian Genocide memorial: Complex in Deir ez-Zor was often compared to the Auschwitz death camp in Poland”. “The Times of Israel”, September 22, 2014 (<http://www.timesofisrael.com/is-reportedly-destroys-armenian-genocide-memorial/#ixzz3L1iCdUis>).

<sup>9</sup> Israel W. Charny. Ed., Introduction to “The Widening Circle of Genocide” – “Genocide: A Critical Bibliographic review”. Vol. 3. New Branswick, N.J.: Transaction, 1994, P. XIX; “The Ottoman Empire: A Troubled Legacy”. Views, Comments and Judgements by Noted Experts Worldwide. Compiled by Vahakn N. Dadrian for the Association of Genocide Scholars. Williamsburg (USA), 1997, P. 69.

<sup>10</sup> *Sol Gittleman*. The Stereotype as a Prelude to Genocide in “Genocide and Human Rights”. A special issue of the “Journal of American Studies”, IV, 1 & 2, 1992, P. 5; “The Ottoman Empire: A Troubled Legacy”. Views, Comments and Judgements by Noted Experts Worldwide. Compiled by Vahakn N. Dadrian for the Association of Genocide Scholars. Williamsburg (USA), 1997, P. 75.

<sup>11</sup> *Dawidowicz Lucy*. The Holocaust and the Historians. Cambridge, MA: Harvard University Press, 1981, P. 20.

<sup>12</sup> “Knesset Speaker working to boost recognition of Armenian genocide”. “Haaretz”, May 31, 2011 (<http://www.haaretz.com/print-edition/news/knesset-speaker-working-to-boost-recognition-of-armenian-genocide-1.365034>).

<sup>13</sup> “Israeli chief rabbi says killing of Armenians in 1915 was genocide”. “World Jewish Congress”, November 23, 2005 ([http://www.worldjewishcongress.org/en/news/5737/israeli\\_chief\\_rabbi\\_says\\_killing\\_of\\_armenians\\_in\\_1915\\_was\\_genocide](http://www.worldjewishcongress.org/en/news/5737/israeli_chief_rabbi_says_killing_of_armenians_in_1915_was_genocide)).

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ.  
ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

*Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի պետի խորհրդական*

1. ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ ԵՐԿՐՈՐԴԻ  
ՏԱՊԱԼՈՒՄԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԳԼՈՒԽ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԶԵՐԻ  
ԱՆՑՆԵԼԸ



Արևմտյան Հայաստանն Օսմանյան կայսրության կազմում հայտնվել էր վերջինիս և շահական Պարսկաստանի միջև 1639 թ. Կարս-ի-Շիրինում պայմանագրի կնքումից հետո, երբ Հայաստանը բաժանվեց երկու մասի՝ Արևմտյան և Արևելյան: Արևմտյան Հայաստանը, որը կազմում է Հայաստանի մեծ մասը, անցավ օսմանյան, իսկ Արևելյան Հայաստանը՝ պարսկական տիրապետության ներքո, ապա 19-րդ դ. սկզբներին միացվեց Ռուսաստանին:

Օսմանյան կայսրությունը հետամնաց, ռազմավատական և բռնատիրական պետություն էր, որը համարվում էր ժողովուրդների բանտ, իսկ Յուսուֆ Յազբեկի բնութագրմամբ՝ «սուլթան Աբդուլ Համիդի բանտ»<sup>1</sup>: Այդ թուրքական պետությունում հալածանքների, կոտորածների և ջարդերի քաղաքականությունն իրականացվում էր պետական մակարդակով և իր գազաթնակետին հասավ սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի գահակալության տարիներին (1876–1909 թթ.): Նրա սուլթանության տարիները պատմագիտության մեջ մտել են որպես «գուլումի» տարիներ, ճգնաժամի, որն ընդգրկել էր քաղաքական, պետականավարային, սոցիալ-տնտեսական և ազգամիջյան հարաբերությունների ոլորտները: Դժգոհությունը համակել էր սոցիալական և հասարակական բոլոր խավերին: Ստեղծված պայմաններում 20-րդ դ. սկզբներին իր գործունեությունն ակտիվացրեց հակահամիդյան ընդդիմությունը, որի միջուկը կազմում էին այսպես կոչված «Երիտասարդ թուրքերը» և նրանց աջակցող զինվորականները, որոնք միավորվեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության մեջ: Հայտնի արաբ պատմաբան Էմիլ Թուման այդ կապակցությամբ նշում է, որ «Կայսրության զանազան ազգությունների հակամիապետական խմբերը և հոսանքները քանի գնում, այն-

<sup>1</sup> Yusuf Ibrahim Yazbek. *Hıqayat an al-Awal Ayyar fi Alam va Lubnan*. Beirut, 1974, P. 48 (*Յուսուֆ Իբրահիմ Յազբեկ, Մայիսի մեկի մասին աշխարհում և Լիբանանում (արաբերեն)*):

քան ավելի էին համոզվում, որ անհրաժեշտ է միավորվել, և, ի վերջո, երկրում ստեղծվեց գույումի վարչակարգի դեմ հանդես եկող հիմնական ուժերի բլոկ»<sup>2</sup>:

1907 թ. դեկտեմբերի վերջերին Փարիզում տեղի ունեցավ սուլթան Աբդուլ Համիդին ընդդիմադիր ուժերի համաժողով, որին, բացի երիտթուրքերից, մասնակցում էին նաև ոչ թուրքական կազմակերպությունների, այդ թվում՝ արաբական ազգայնական «Հայֆեթ» կազմակերպության, հրեական «Լավարա» կոմիտեի, Հայ հեղափոխական դաշնակցության և մակեդոնական հեղափոխական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Որոշում ընդունվեց բարձրացնելու ապստամբություն, որի հարվածային ուժը պետք է լիներ բանակը: Երիտթուրքական զինվորական հեղաշրջումը, որը տեղի ունեցավ 1908 թ. հուլիսի 23-ին, պսակվեց հաջողությամբ: Իշխանությունն անցավ երիտթուրքերի ձեռքը: «Արյունարբու սուլթան» Աբդուլ Համիդ Երկրորդը գահընկեց արվեց 1909 թ. ապրիլի 27-ին, և օսմանների գահին բազմեց սուլթան Մեհմեդ Հինգերորդ Ռեշադը:

Կայսրության ժողովուրդները՝ արաբները, հայերը, հույները, ասորիները, բուլղարները, մակեդոնացիները, սերբերը և ուրիշներ խանդավառությամբ ընդունեցին հեղաշրջումը և Աբդուլ Համիդ Երկրորդի տապալումը: Նրանք կարծում էին, թե Օսմանյան կայսրության պատմության մեջ սկսվում է մի նոր դարաշրջան: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ հեղաշրջումն իրագործվեց 1789 թ. ֆրանսիական հեղափոխության «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսով: Սակայն շատ ժամանակ չպահանջվեց, որ այդ ժողովուրդները հասկանային, որ խորապես սխալվել են: Իշխանությունը գրաված երիտթուրքերի ծրագրային հայտարարությունները և գործնական քաղաքականությունը բացահայտեցին երիտթուրքերի իսկական դեմքը: Նրանք հրաժարվեցին իրենց հռչակած «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսից և սուլթանական կառավարման զինանոցից վերցրեցին բռնությունների և հալածանքների քաղաքականությունը՝ էլ ավելի սաստկացնելով այն:

Որպես իրենց ներքին քաղաքականության հիմնական նպատակ երիտթուրքերը հռչակեցին թուրքականության՝ Օսմանյան կայսրությունը էթնիկապես միատարր թուրքական պետության վերածելու քաղաքականությունը: Իսկ դա հնարավոր էր երկու ճանապարհով՝ կա՛մ բոլոր ոչ թուրք ժողովուրդների, առաջին հերթին քրիստոնյաների (հայեր, հույներ, ասորիներ, քաղղեացիներ), հուդայականների (հրեաներ), զրադաշտականների, ոչ թուրք մահմեդականների (հատկապես՝ արաբներ) կամավոր ձուլման ուղիով, կա՛մ, եթե այդ ուղին մերժվեր, նրանց բնաջնջման ու վերացման ճանապարհով:

Արտաքին քաղաքականության բնագավառում երիտթուրքերը որդեգրեցին պանթուրքականության քաղաքականությունը, որի նպատակն էր աշխարհի բոլոր թյուրքալեզու ժողովուրդների համախմբումը Թուրքիայի տիրապետության ներքո և թուրքական մեկ միասնական լայնածավալ կայսրության ստեղծումը, որը ձգվելու էր Փոքր Ասիայից մինչև Ալթայ և Հեռավոր Արևելք: Պանթուրքականության քաղաքականությունն ուղղված էր Ռուսաստանի, Իրանի, հայերի, արաբների և

<sup>2</sup> Эмиль Тума. Национально-освободительное движение и проблема арабского единства. Перевод с арабского. М., 1977, с. 84.

այլ երկրների ու ժողովուրդների դեմ: Այս առնչությամբ հետաքրքրական է երիտթուրքերի դեկավարներից մեկի՝ Ալի Իհսան փաշայի տեսակետը. «Եթե չլինեին հայերը, մենք վաղուց նվաճած կլինեինք Կովկասը»<sup>3</sup>:

Երիտթուրքերը Օսմանյան կայսրությունը էթնիկապես միատարր թուրքական պետության վերածելու և պանթուրքականության քաղաքականության իրականացման ճանապարհին Աբդուլ Համիդի ջարդերի ու կոտորածների քաղաքականությունից սահուն կերպով անցում կատարեցին իրենց խանգարող էթնոսներն ամբողջապես բնաջնջելու քաղաքականությանը, որը հետագայում կոչվեց ցեղասպանություն, իսկ Օսմանյան պետությունը դարձավ 20-րդ դարի առաջին ցեղասպան պետությունը:

Երբ խոսվում է հայերի ցեղասպանության պատճառների մասին, հարկ է նկատի ունենալ պանթուրքականության ճանապարհին կանգնած հայկական պատմեշի վերացման անհրաժեշտությունը: Երիտթուրքական առաջնորդները՝ որպես Օսմանյան կայսրությունը զուտ թուրքական պետության վերածելու իրենց հայեցակարգի կենսագործման առաջին քայլ, 1915 թ. ցեղասպանության ենթարկեցին հայերին:

**2. ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՆՈՐ ԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ: 20-ՐԴ ԴԱՐԸ՝ ՀԱՅՈՑ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՄԲ ՍԿՍՎԱԾ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ**

20-րդ դարը պատմության մեջ մտել է առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների, Սառը պատերազմի և բազմաթիվ տարածաշրջանային պատերազմների ու էթնոքաղաքական բախումների հետ մեկտեղ, նաև որպես ցեղասպանությունների դարաշրջան: Մարդկության պատմության մեջ դեռ չէր եղել այնպիսի մի շրջան, որ մեկ հարյուրամյակի ընթացքում բազմաթիվ ժողովուրդներ ենթարկվեին ֆիզիկական բնաջնջման կամ գտնվեին դրա վտանգի տակ: Ցեղասպանության քաղաքականությունը 20-րդ դարում բարձրացվեց պետական քաղաքականության մակարդակի, որի իրագործման համար ստեղծվեցին համապատասխան մեխանիզմներ:

20-րդ դարի առաջին ցեղասպանությունը՝ Հայոց ցեղասպանությունը, իրագործվեց Օսմանյան կայսրությունում 1915 թ՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երկրորդը՝ հրեաների Ողջակիզումը, տեղի ունեցավ մացիստական Գերմանիայում՝ երկրորդ համաշխարհային պատերազմի (1939–1945 թթ.) տարիներին: Ցեղասպանությունների մի նոր հզոր ալիք բարձրացավ երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին: Հայտնի ամերիկյան ցեղասպանագետ Բարբարա Հարֆը հաշվել է, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում իրագործվել են մոտ 50 ցեղասպանություն և արյունալի ջարդեր: Ցեղասպանություններ իրագործվել են Կամբոջայում, Սուդան-

<sup>3</sup> Տես *Salih Zahr al-Din*. Al-Arman Shaab wa Kadiya. Beirtut, 1988, P. 95 (*Մալիհ Չահր ալ Դին*, Հայերը. ժողովուրդ և հիմնախնդիր (արաբերեն)):



նում, Արևելյան Թիմորում, Ռուանդայում, Բուրունդիում, Ռեգանդայում, Հասարակածային Գվինեայում, Բալկաններում և այլ երկրներում<sup>4</sup>: Իսկ եթե դրանց ավելացնենք հայերի, հրեաների, գնչուների և մի շարք այլ ժողովուրդների ցեղասպանությունները որոնք իրագործվել են մինչ այդ, ապա պատկերը դառնում է ավելի սահմնկեցուցիչ:

Այդ նույն տեսակետն է հայտնել նաև ականավոր ամերիկյան ցեղասպանագետ Հելեն Ֆայնը, իսկ Մերիլենդի համալսարանի պրոֆեսոր Թեդ Գարի հաշվարկներով 1945–1990 թթ. աշխարհում ավելի քան 230 էթնիկական խմբեր եղել են ռասայական խտրականության և ցեղասպանության հավանական զոհ<sup>5</sup>:

Տասնյակ տարիներ առաջ մենք դեռ չէինք կարող խոսել ցեղասպանագիտության՝ որպես գիտական ուղղության մասին, քանի դեռ Հայոց ցեղասպանությունը մնում էր 20-րդ դարի առաջին և միակ ցեղասպանությունը: Մակայն հետագայում, երբ ցեղասպանություններ կատարվեցին նաև այլ երկրներում և այլ ժողովուրդների ու էթնիկական խմբերի նկատմամբ, պարզ դարձավ, որ մի ժողովրդի կառավարողների կողմից մեկ այլ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման կազմակերպումը դարձել է մեր դարաշրջանի ամենացավալի իրողություններից մեկը, որն էլ ուսումնասիրեց ցեղասպանագիտությունը:

Ցեղասպանագիտության ծագումն ունեցավ պատմական կարևոր, կարելի է ասել, շրջադարձային նշանակություն: Ցեղասպանությունների ուսումնասիրման նախկին ոչ մասնագիտական, զգայական, սիրողական մակարդակն այլևս չէր կարող բավարարել: Անհրաժեշտ էր հիմնախնդրի մասնագիտական, խոր և բազմակողմանի ուսումնասիրություն, որով սկսեց զբաղվել նոր գիտական ուղղությունը՝ ցեղասպանագիտությունը, որը ձևավորվեց անցյալ դարի 70–80-ական թվականներին: Այսօր ցեղասպանագիտական կենտրոններ են ձևավորվել ԱՄՆ-ում, Անգլիայում, Շվեդիայում, Հայաստանում, Գերմանիայում, Ավստրիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Կանադայում, Լիբանանում և այլ երկրներում: 1994 թ. ստեղծվեց Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան (ՅՄԱ), որն իր շարքերում համախմբել է աշխարհի բոլոր ականավոր ցեղասպանագետ պատմաբաններին, քաղաքագետներին, իրավաբաններին, միջազգայնագետներին, սոցիոլոգներին և այլ հարակից մասնագետների ու դարձել է ցեղասպանության բնագավառում աշխարհի ամենահեղինակավոր գիտական մարմինը: Այդ նորաստեղծ կարևոր մարմնի առաջին քայլերից մեկը եղան Հայոց ցեղասպանության ճանաչումն ու պահանջը, որ արդի Թուրքիայի կառավարությունը հրաժարվի Հայոց ցեղասպանությունը ժխտելու քաղաքականությունից և ընդունի Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը:

Այսօր ցեղասպանագետները համակողմանիորեն հետազոտում են ցեղասպանությունների բոլոր հանգամանքները և այն վտանգները, որոնք ցեղասպա-

<sup>4</sup> Տես *Barbara Harff*. Rescuing Endangered Peoples: Missed Opportunities. «Social Research». An International Quarterly of the Social Sciences. New York, Spring, 1995, Vol. 62, N 1:

<sup>5</sup> Տես *Ted Robert Gurr, Barbara Harff*. Ethnic Conflict in World Politics. Westview Press. Boulder, San Francisco, 1995, PP. 5–6:

նությունները ներկայացնում են համայն մարդկության համար: Հանրագումարի բերելով ցեղասպանության ուսումնասիրության արդյունքները՝ ցեղասպանագետները հանգել են այն եզրակացության, որ 20-րդ դարը մաս ցեղասպանությունների դար է: Երուսաղեմի Հրեական համալսարանի պրոֆեսոր Ֆրանկլին Լիթելի կարծիքով՝ Հայոց ցեղասպանությունը պետք է համարել նոր դարաշրջանի սկիզբ: «Կամբոջայի, Սուդանի, Բուրունդիի, Ռուանդայի և Բոսնիայի կառավարությունների ցեղասպան գործողություններից հետո մենք կարող ենք Հայոց ցեղասպանությամբ սկսված այս՝ 20-րդ դարի մասին խոսել որպես Ցեղասպանությունների դարաշրջանի մասին»<sup>6</sup>: Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի առաջատար մասնագետ Վիկտոր Նադեին-Ռանսկին հաստատում է, որ «20-րդ դարը վկան է մի քանի իրադարձությունների, որոնք որակվում են որպես ցեղասպանություն: Նման տիպի առաջին և ամենամեծ ռճիրը Օսմանյան կայսրությունում հայերի և մյուս՝ գլխավորապես քրիստոնյա, ազգային փոքրամասնությունների կոտորածներն էին»<sup>7</sup>: Նույն տեսակետն է արտահայտում ման ամերիկյան քաղաքագետ Մայքլ Բենքսը, որը Հայոց ցեղասպանությունը համարում է «քսաներորդ դարի ամենախոշոր ցեղասպանությունը»<sup>8</sup>:

### 3. ԳԵՆՈՑԻԴ ԵՎ ԱՐՄԵՆՈՑԻԴ (ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ)

Մինչև 1944 թ. գիտությանը հայտնի չէր «**գենոցիդ**» տերմինը, որի հայկական համարժեքը «**ցեղասպանություն**» է: Մարդկությունը մինչ այդ **հիմնականում** օգտագործում էր «ջարդեր» և «կոտորածներ» տերմինները, որոնք իմաստային առումով հաճախ հանընկնում էին «ցեղասպանություն» հասկացության հետ կամ մոտ էին դրան, իսկ երբեմն՝ ոչ:

«Գենոցիդ» տերմինն ստեղծել և առաջին անգամ գիտական գրականության մեջ ու քաղաքական բառարանում շրջանառության մեջ է դրել մասնագիտությամբ իրավաբան, ծագումով լեհական հրեա Ռաֆայել Լեմկինը 1944 թ.: Նոր տերմինն առանց դժվարության ճանաչում ստացավ գիտական աշխարհում, քաղաքականության բնագավառում և, որը շատ կարևոր է, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների և առաջին հերթին, Միավորված ազգերի կազմակերպության կողմից, որը 1948 դեկտեմբերի 9-ին ընդունեց «Ցեղասպանության հանցագործության կանխման և նրա համար պատժման մասին կոնվենցիան»:

«Գենոցիդ» տերմինի հայտնագործումը լոկ առաջին քայլն էր: Երկրորդը նրա բովանդակության սահմանումն էր: Ըստ այս կոնվենցիայի որպես ցեղասպանություն են դիտվում որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի որպես այդպիսին լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ կատարվող հետևյալ գործողությունները՝ այդպիսի խմբի անդամների սպանութ-

<sup>6</sup> Franklin Little. Problems of Genocide. Canada, 1997, P. 29.

<sup>7</sup> Viktor Nadein-Raevski. Problems of Genocide. Canada, 1997, PP. 201–202.

<sup>8</sup> Michael Banks. Four Cooperations of Peace. New York, P. 267.

յունը կամ լուրջ մարմնական վնասվածքների ու մտավոր խանգարումների պատճառով, որևէ խմբի համար այնպիսի կենսապայմանների կանխամտածված ստեղծումը, որոնք նպատակաուղղված են այդ խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, այդպիսի խմբի միջավայրում մանկածնության կանխմանը նպատակաուղղված միջոցառումները, երեխաների բռնի փոխադրումը մարդկային մի խմբից մյուսը<sup>9</sup>: Սա ՄԱԿ-ի «ցեղասպանություն» հասկացության սահմանումն է, որը ոչ ոք չի վիճարկում:

«Գեոնոցիդ» տերմինը դրեց գիտության մի նոր ուղղության ցեղասպանագիտության հիմքը: Ցեղասպանագիտությունը, ինչպես ամեն մի այլ գիտություն, ունի իր նախադրյալները: Այդպես է առաջին հերթին «գեոնոցիդ-ցեղասպանություն» տերմինի ծագման պարագայում: Ռաֆայել Լեմկինի համար **նման** նախադրյալ է դարձել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը: Ցեղասպանագիտության բնագավառում մի այնպիսի անառարկելի հեղինակություն, ինչպիսին ԱՄՆ-ի Ցեղասպանագիտության ինստիտուտի գործադիր տնօրեն պրոֆեսոր Հելեն Ֆայնն է, որի հետազոտություններում մշտապես շոշափվում են Հայոց ցեղասպանության հարցերը, նշում է, որ «գեոնոցիդ» հասկացությունը մտցրել է Ռաֆայել Լեմկինը 1944 թ., և վկայում է, որ դեռ «1933 թ. նա առաջարկել էր (Ազգերի լիգային.–Ն. Հ.) որպես բարբարոսական ոճրագործություն արգելել նման գործողությունները, ներառյալ այն, ինչ հայտնի էր որպես «Հայկական կոտորածներ»»<sup>10</sup>:

ՌԻշագրավ է մի շատ կարևոր հանգամանք ևս: Լեմկինն առաջարկել է «արգելել նման գործողությունները», այսինքն՝ ցեղասպանությունը 1933 թ., երբ դեռ չէր իրագործվել հրեաների Հոլոքոստը, ուստի և այդ ժամանակ առաջին ու միակ բարբարոսական գործողությունը կամ ժամանակակից տերմինաբանությամբ՝ ցեղասպանությունը, հայերի 1915 թ. ցեղասպանությունն էր: Հետևաբար սխալված չենք լինի, եթե ասենք, որ լեռն իրավաբանի համար որպես «գեոնոցիդ» հասկացության նախանյութ է ծառայել առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի նկատմամբ երիտթուրքերի կատարած ոճրագործությունը: Բարեբախտաբար, այդ մասին պահպանվել է հենց իր՝ Ռաֆայել Լեմկինի 1949 թ. հակիրճ հարցազրույցը ամերիկյան ՍիԲիԷս (CBS) գործակալության թրթակցի հետ: Այդ հարցազրույցում Լեմկինը պարզաբանում է, թե ինչպես է սկսել զբաղվել ցեղասպանության հարցերով. «Ես սկսեցի զբաղվել ցեղասպանություններով, քանի որ դա կատարվել էր հայերի նկատմամբ, իսկ հետո հայերի հետ շատ կոպիտ վարվեցին Վերսալի խորհրդածողովում (նկատի ունի 1919–1920 թթ. Փարիզի Հաշտության վեհաժողովը.–Ն. Հ.), քանի որ ցեղասպանության ոճրագործները չպատժվեցին»<sup>11</sup>:

<sup>9</sup> Տես «Права человека. Сборник международных договоров», т. 1, ч. 2, «Универсальные договоры». Организация Объединенных Наций. Нью-Йорк и Женева, 1994, сс. 780–785:

<sup>10</sup> Տես Ն. Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում: Ե., 2002, էջ 11–12:

<sup>11</sup> Տես Harut Sassounian. Lemkin Discusses Armenian Genocide In Newly-Found 1949 CBS Interview. «The California Courier». Los Angeles, 8 December 2005:

Ճիշտ չէր լինի թերագնահատել, առավել ևս՝ անտեսել նաև այն դերը, որ ունի հրեական Հոլոքոստը՝ Ողջակիզումը, ցեղասպանագիտության ձևավորման գործում: Ցեղասպանության վերաբերյալ Ռ-աֆայել Լեմկինի տեսակետը խարսխված էր երկու հիմնասյուների՝ 1915 թ. Օսմանյան կայսրությունում իրագործված հայկական ցեղասպանության և 1930-ական թվականներին Գերմանիայում իշխանության գլուխ եկած նացիստների կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ իրագործված հրեական Ողջակիզման վրա: Հետագայում՝ 1960-ական թվականներին, միջազգային շրջանառության մեջ դրվեց «Արմենոցիդ» (*Հայասպանություն*) տերմինը՝ որպես Հայոց ցեղասպանությանը, կամ Հայասպանությանը, համարժեք: Այդ տերմինի հեղինակային իրավունքը պատկանում է վաստակաշատ արաբ գիտնական Մուսա Պրենսին, որի կարծիքով՝ «Արմենոցիդը ամենագեոցիդային գեոցիդն է»<sup>12</sup>:

Դա համարձակ, նոր, և միևնույն ժամանակ՝ միանգամայն հիմնավորված պնդում էր, որն արդեն ստացել է մասնագետների լայն ճանաչումը<sup>13</sup>:

#### 4. ԴԱՀԻՃ ԵՎ ԶՈՀ: ՎԻԿՏԻՄԱՅՈՒՄ (ԶՈՀԱՅՈՒՄ)

Ցեղասպանագիտության շնորհիվ, ինչպես նշվեց, ցեղասպանության ուսումնասիրությունն զգայական-սիրողական դաշտից տեղափոխվեց գիտական դաշտ: Դա նոր գիտական ուղղության առաջին կարևոր նվաճումն էր: Երկրորդը ցեղասպանության իրականացման մեթոդաբանության և մեխանիզմների բացահայտումն էր, դրանց համակարգված ու հայեցակարգային ուսումնասիրությունը, որի շնորհիվ մարդկության դեմ ուղղված այդ ոճրագործության մեջ ի հայտ եկան նոր, մինչ այդ անհայտ շերտեր: Դրանց շարքում ամենակարևորներից մեկը վիկտիմացման (*victimization*)՝ զոհացման երևույթն է:

Հասկացության այս առումով զոհն անբաժան է ցեղասպանությունից: Սակայն հիմնական նորությունն այն է, որ ցեղասպանության պահին չէ, որ զոհը դառնում է զոհ, և ոչ էլ դահիճն է դահիճ դառնում ցեղասպանության իրագործման ժամանակ: Իրականում դա մի բարդ պրոցես է, որն սկսվում է շատ ավելի վաղ, քան բուն ցեղասպանությունը: Այն ունենում է մի ամբողջ նախապատրաստական շրջան, անգամ՝ դարաշրջան: Հայերի պարագայում այդ դարաշրջանի սկիզբը դրեց սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը, որը 1876 թվականից սկսած իրագործում էր հայերի բազմաթիվ զանգվածային ջարդեր, որոնք նրանց զոհի վերածելու փուլերն էին:

Այդ հանգամանքը լավ է հասկացել ամերիկյան հեղինակ Մայքլ Բենքսը, որն իր «Խաղաղության չորս տեսադրույթները» աշխատության մեջ, քննարկելով ժողովուրդներին վիկտիմացման ենթարկելու՝ զոհի վերածելու հարցը, որպես օրի-

<sup>12</sup> *Moussa Prince avec la collaboration de Marie-Ange M. Prince. Un genocide impuni. L'Armenocide. Paris, 10-14 Julliet 1967* (Գիրքը լույս է տեսել նաև անգլերեն 1975 թ. և արաբերեն՝ 1996 թ.):

<sup>13</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես Ն. Հովհաննիսյան, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է: Ե., 2010, *նույնի՝* Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո: Ե., 2004 (Գիրքը լույս է տեսել նաև անգլերեն՝ 2005 թ. և արաբերեն՝ 2011 թ.):

նակ նշում է Հարավային Աֆրիկայի սևամորթներին, Մերձավոր Արևելքի քրդերին, լեհերին և հայերին<sup>14</sup>: Որպես կանոն՝ հավաժանքների, խտրականության և, ի վերջո, զոհացման՝ վիկտիմացման նշանակետ են դառնում էթնիկական խմբերը: Բարբարա Հարֆը, քննարկելով ցեղասպանություն–զոհ կապակցության հարցը, գալիս է այն եզրակացության, որ «Ցեղասպանության ժամանակ զոհաբերության ենթակա խմբերը վարչակարգի կողմից որոշվում են առաջին հերթին ըստ նրանց համայնքային հատկանիշների, որպիսիք են էթնիկական պատկանելությունը, կրոնը կամ ազգությունը»<sup>15</sup>:

Օսմանյան Թուրքիայի ղեկավարությունը՝ որպես դահիճ, կայսրության տարածքում գտնվող հայությանը որպես զոհ ընտրել էր առնվազն 19-րդ դարի 70-ական թվականների վերջերին, երբ կյանքի կոչվեց «Հայկական հարցի լուծման լավագույն ձևը հայերի ֆիզիկական ոչնչացումն է» բանաձևը, որը որդեգրել էր սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը: Արյունարբու սուլթանը չհասցրեց մինչև վերջ իրագործել հայությանն ի սպառ ոչնչացնելու իր բարբարոսական ծրագիրը: Այն ավարտին հասցրեցին երիտթուրքերը՝ «մաքուր թուրքական ազգի» ստեղծման ռասայական քաղաքականության միջոցով, որը, ինչպես նշվեց, հնարավոր էր կայսրության ոչ թուրք ժողովուրդների կամ բռնի ուժացմամբ, կամ ֆիզիկական ոչնչացմամբ: Հայերի պարագայում իրագործվեց ամենավատ տարբերակը՝ ֆիզիկական ոչնչացումը, քանի որ նրանք կտրականապես դեմ էին կամավոր ուժացմանը:

Այս կապակցությամբ կարևոր ենք համարում ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա:

Առաջին. ըստ ցեղասպանագիտության՝ զոհացման վերաբերյալ հիմնադրույթի, եթե կա զոհ, ապա անհրաժեշտաբար պետք է լինի նաև դահիճ, անկախ այն բանից, թե կատարվածը ջարդ է, կոտորած, թե՛ ցեղասպանություն: Հայոց ցեղասպանության դեպքում երկուսն էլ հայտնի են. զոհը հայությունն է, իսկ դահիճը՝ Օսմանյան կայսրության սուլթանական, ապա՝ երիտթուրքական ղեկավարությունն ու վարչակարգը: Երկրորդ. քանի որ ցեղասպանագիտության օրենքների համաձայն՝ զոհի ընտրությունը և նրան զոհաբերության ենթարկելը որոշակի պատմական պրոցես է, ապա դրանից տրամաբանորեն հետևում է, որ ցեղասպանության ոճիրի մեջ հանկարծակիության կամ անսպասելիության գործոն գոյություն չունի: Հետևաբար, զոհն իր զոհի վերածվելը չի կարող արդարացնել դրանով: Դիմադրությանն անպատրաստությունը և դահիճին ազգովի դիմակայելու անկարողությունը որևէ արդարացում չունեն, որովհետև դրա գինը տվյալ ժողովրդի կամ էթնոսի ոչնչացումն է: Ասվածը հավասարապես վերաբերում է ցեղասպանության ենթարկված հայության ազգային, քաղաքական, կուսակցական և կրոնական գործիչներին:

Երիտթուրքերի բարձրագույն ղեկավարությունը՝ ռազմական նախարար Էնվերը, Օսմանյան կայսրության վարչապետ և ներքին գործերի նախարար Թա-

<sup>14</sup> Տես *Մայքլ Բենթոն*, Նշ. աշխ., էջ 267:

<sup>15</sup> *Barbara Harff*. Rescuing Endangered Peoples: Missed Opportunities, P. 24.

լեաթը և ռազմածովային ուժերի նախարար Ջեմալը փաստորեն ընդունում էին իրենց դահիճ լինելը և հայերին դիտում էին որպես զոհ, ինչը հաստատվում է բարեբախտաբար պահպանված մի շարք փաստաթղթերով: Ռազմական նախարար Էնվերը 1916 թ. մայիսի 19-ին հայտարարել էր. «Օսմանյան կայսրությունը պետք է մաքրվեր հայերից և լիբանանցիներից: Առաջիններին (այսինքն՝ հայերին. – Ն. Հ.) մենք ոչնչացրել ենք սրով, վերջիններին (լիբանանցիներին, այսինքն՝ արաբներին. – Ն. Հ.) մենք կոչնչացնենք սովամահությամբ»<sup>16</sup>: Երբ գերմանացի դեսպանը վարչապետ Թալեաթի հետ գրույցի ժամանակ բարձրացրել է Հայկական հարցը, նա ժպտալով պատասխանել է. «Ի՞նչ եք դուք ուզում: Հարցը լուծված է: Այլևս հայեր չկան»<sup>17</sup>: Իսկ երիտթուրքական եռապետության երրորդ անդամ Ջեմալ փաշան հաստատել է, որ «Ըստ Թուրքիայի ներքին գործերի նախարարի հրապարակային հայտարարության, նախարարության փորձագետների հաշվարկներով 800000 տեղահանված հայեր իրականում սպանվել են», ավելացնելով, որ իրական թիվը թաքցվել է «արյունոտ անցյալը մաքրելու նպատակով»<sup>18</sup>: Այդ ամենից հետո Ջեմալ փաշան, որը, ինչպես Էնվերը, Թալեաթը և երիտթուրքական մյուս դահիճները, մինչև կոկորդները թաղված էր անմեղ հայ զոհերի արյան մեջ, հանդգնություն է ունեցել մի գերմանական սպայի հետ Խարբեբդում ունեցած գրույցի ժամանակ անամոթաբար հայտարարելու. «Ես ամաչում եմ իմ ազգից»<sup>19</sup>: Թուրք դահիճն ամենայն հավանականությամբ փորձել է գերմանացու վրա գործել քաղաքակիրթ մարդու տպավորություն՝ «մոռանալով», սակայն, որ թուրքերի գերմանացի գործընկերները Հայոց ցեղասպանությանը չխոչընդոտելու մեջ ունեն մեղքի իրենց բաժինը:

Այսպիսով՝ գոհացումը (վիկտիմացում) ցեղասպանության իրականացման կարևոր նպատակներից է և դրա մեխանիզմի կարևոր բաղադրատարրերից մեկը:

## 5. ՀԱՅՈՒԹՅԱՆ ՋԻՆԱԿԱՆ-ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԿԱՆԽԱՎ ՎԵՐԱՅՈՒՄԸ

Ցեղասպանության թիրախ էթնոսին կամ ժողովրդին դիմադրության հնարավորությունից զրկելը ցեղասպանության իրականացման մեթոդաբանության և մեխանիզմների համակարգում գրավում է անկյունաքարային տեղ: Դա հաստատում է նաև Հայոց ցեղասպանության պատմական փորձը: Ցեղասպանություն իրականացնող կողմը՝ դահիճը, չի կարող հանդուրժել ցեղասպանության առարկայի, այսինքն՝ զոհի, դիմադրողական, այն էլ՝ զինական ներուժի պահպանումը: Նա սովորաբար դիմում է տվյալ էթնոսի, մեր դեպքում՝ հայության բնաջնջմանը

<sup>16</sup> Տես «Armenian Genocide Quotes». «Turkish Quotes. Enver Pasha» ([http://www.armeniapedia.org/index.php?title=Armenian\\_Genocide\\_Quotes#Turkish\\_Quotes](http://www.armeniapedia.org/index.php?title=Armenian_Genocide_Quotes#Turkish_Quotes)):

<sup>17</sup> Տես «Armenian Genocide Quotes». «Turkish Quotes. Talat Pasha» ([http://www.armeniapedia.org/index.php?title=Armenian\\_Genocide\\_Quotes#Turkish\\_Quotes](http://www.armeniapedia.org/index.php?title=Armenian_Genocide_Quotes#Turkish_Quotes)):

<sup>18</sup> Տես «Armenian Genocide Quotes». «Turkish Quotes. Cemal Pasha» ([http://www.armeniapedia.org/index.php?title=Armenian\\_Genocide\\_Quotes#Turkish\\_Quotes](http://www.armeniapedia.org/index.php?title=Armenian_Genocide_Quotes#Turkish_Quotes)):

<sup>19</sup> Տես նույն տեղում:

միայն այն բանից հետո, երբ վստահ է, որ չի հանդիպի որևէ լուրջ դիմադրության և հաղթանակով կավարտի տվյալ էթնոսի վերացման իր քաղաքական ծրագիրը:

Երբ 1914 թ. օգոստոսի 1-ին սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, գերմանական ռազմաքաղաքական բլոկում ընդդեմ Անտանտի հանդես եկող Օսմանյան կայսրությունը հաջորդ օրը՝ օգոստոսի 2-ին, հայտարարեց ընդհանուր զորահավաք, իսկ հոկտեմբերի 29-ին մտավ պատերազմի մեջ<sup>20</sup>: Պատերազմը նոր իրավիճակ ստեղծեց Օսմանյան կայսրության ամբողջ հայության համար: Ուսման ալ Թուրքը նշում է, որ «1914 թ. հայտարարվեց ընդհանուր զորահավաք, և բոլորը, 18–45 տարեկան տղամարդիկ, առանց բացառության, բանակ զորակոչվեցին»<sup>21</sup>: Ջորակոչվեցին նաև նույն տարիքի հայ տղամարդիկ, որոնք մեկնեցին բանակ «իրենց պարտքը կատարելու», ինչպես վստահեցրել էին հայ ազգային գործիչները օսմանյան իշխանություններին և երիտթուրքական ղեկավարությանը:

Սակայն այստեղ անհրաժեշտ է շեշտել երկու կարևոր հանգամանք: Առաջին. զորակոչված հայ զինվորները, ռազմական նախարարության գաղտնի հրամաններով, ծառայում էին իրենց գյուղերից և քաղաքներից հեռու, ինչը պատահական չէր: Երիտթուրքական ղեկավարությունը մտավախություն ուներ, որ եթե հայ զինվորները գտնվեին հայկական բնակավայրերի մոտ, ապա հայերին բնաջնջելու իր ծրագիրն իրագործելու ժամանակ նրանք կարող էին օգնության հասնել վտանգի մեջ հայտնված հայրենակիցներին: Երկրորդ. օսմանյան իշխանությունները, հայ տղամարդկանց զորակոչելով բանակ, սակավաթիվ բացառություններով, նրանց ձեռքը տվեցին ոչ թե զենք, այլ բահեր և այլ շինարարական գործիքներ, ինչը նույնպես պատահական չէր: Գտնվելով բանակում՝ նրանք ըստ էության հեռու էին իսկական զինվորական ծառայությունից: Հայ զինվորները ընդգրկվեցին աշխատանքային գումարտակներում, որոնց թիվը, ինչպես վկայում է նիդերլանդացի թուրքագետ Էրիկ Ջուրցիերը, «պատերազմի տարիներին տատանվում էր 70-ից մինչև 120-ը»<sup>22</sup>: Աշխատանքային գումարտակները համալրված հայ զինվորներին հանձնարարված էր փորել խրամատներ (այդ պատճառով էլ նրանց հրացանների փոխարեն տրվել էին բահեր), որոնք շուտով դառնալու էին նրանց գերեզմանը: Նրանց օգտագործեցին նաև բեռներ փոխադրելու աշխատանքներում<sup>23</sup>, որոնց ավարտից հետո Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվերի 1915 թ. փետրվարի հրամանով անգեն հայ զինվորները ոչնչացվեցին<sup>24</sup>: Էրիկ Ջուրցիերը նշում է, որ «Աշխատանքային գումարտակների

<sup>20</sup> Տես Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն (VII-2005), հ. II, «Օսմանյան տիրապետության շրջան. 1516–1918»: Ե., 2004, էջ 501–502:

<sup>21</sup> Ուսման ալ Թուրք, Էջեր հայ ազգի պատմությունից: Հալեթ, 1960, էջ 238 (արաբերեն):

<sup>22</sup> Տես Erik Jan Zürcher. Ottoman labour battalions in World War I (<http://arts.yorku.ca/hist/gallant/documents/zurchrotomanlaborbattalions.pdf>):

<sup>23</sup> Տես նույն տեղում:

<sup>24</sup> Տես «Հայկական հարց» հանրագիտարան: Ե., 1996, էջ 305; Moussa Prince. Un genocide impuni. L'Armenocide. Heidelberg-Lebanon, 1967, P. 32:

ոչ մահմեդական զինվորները կենդանի մնալու ոչ մի հնարավորություն չունեին»<sup>25</sup>: Թուրքական բանակի վեներաբլեացի սպա Նոզալեսը վկայում է, որ «1915 թ. ապրիլին, Մուշից Խլաթ գնալու ճանապարհին տեսել է բազմաթիվ հայերի դիակներ, որոնք ընկած էին ճանապարհների եզրերին»<sup>26</sup>: Դրանք եղել են հենց հայ զինվորների դիակները: Սպանված հայ զինվորների ընդհանուր թիվը կազմել է մոտ 60 հազար<sup>27</sup>:

Աշխատանքային գումարտակներում ընդգրկված հայերին ոչնչացնելու մասին ռազմական նախարար Էնվերի հրամանը տրվել և իրականացվել է 1915 թ. փետրվարին, այսինքն՝ ոչ թե Հայոց ցեղասպանության ժամանակ, որի սկիզբը պաշտոնապես համարվում է 1915 թ. ապրիլի 24-ը, այլ դրանից մոտ երկու ամիս առաջ: Սա ևս զալիս է հաստատելու Հայոց ցեղասպանությունը երիտթուրքական դահիճների կողմից վաղորոք ծրագրված լինելու փաստը, ինչը լիովին տեղավորվում է ցեղասպանության մեթոդաբանության և մեխանիզմների վերաբերյալ մեր բերած հիմնադրույթի շրջանակներում:

## 6. ՊՈԼԻՏԻՑԻՅԻԳԸ՝ ՔԱՂՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԳՐԱՏԱՐԲ

Ցեղասպանագիտության շնորհիվ ընդլայնվեցին «ցեղասպանություն» հասկացության սահմանները, ավելի մանրամասնվեցին ու կոնկրետացվեցին նրա հիմնադրույթները: Ցեղասպանությունը երկար տարիներ ուսումնասիրվում էր միազիժ կերպով, գլխավորապես՝ «ջարդեր – բռնի տեղահանություններ» շրջանակներում: Մենք հեռու ենք մնան մոտեցման կարևորությունը թերագնահատելուց, բայց պետք է նաև շեշտենք, որ շնորհիվ ցեղասպանագիտության ավելի խորացան մեր գիտելիքները և պատկերացումները մարդկության դեմ ուղղված այդ ոճրագործության մասին: Առաջ քաշվեց մի այնպիսի դրույթ ևս, ինչպիսին պոլիտիցիոն է (քաղսպանություն, կամ տվյալ ազգի սերունդի վերացում):

Քաղսպանությունն իրագործվում է ինչպես ցեղասպանությունից առաջ, այնպես էլ նրա ընթացքում՝ զանգվածային բնաջնջմանը զուգահեռաբար, երբ ոչնչացվում են տվյալ ժողովրդի ազգային-քաղաքական ղեկավարությունը, ռազմական, կրոնական, հասարակական և մշակութային առաջնորդները, որոնք ընդունակ են կազմակերպելու ցեղասպանությանը դիմադրություն: Քաղսպանության՝ պոլիտիցիոն նպատակն է գլխատել ցեղասպանության ենթակա ազգին, կոտրել նրա դիմադրողական ոգին և անցնել զանգվածային սպանող կազմակերպելուն:

Քաղսպանության դասական օրինակ է Հայոց ցեղասպանությունը՝ հայասպանությանը: Քաղսպանությունը կիրառվեց 1915 թ. ապրիլի 24-ից, որը համարվում է Հայոց ցեղասպանության սկիզբը: Այդ օրվանից տեղի ունեցան հայ խորհրդարանական, քաղաքական, կրոնական, հասարակական և մշակութային գործիչների՝ մոտ 800 մարդու ձերբակալությունն ու ոչնչացումը: Ցեղասպանության զոհ

<sup>25</sup> Տես *Raphael de Nogales*. Four Years Beneath the Crescent. N.Y., London, 1926, P. 41:

<sup>26</sup> Տես նույն տեղում, էջ 44:

<sup>27</sup> Տես «Հայկական հարց» հանրագիտարան, էջ 305:



դարձան Օսմանյան խորհրդարանի բոլոր 12 հայ անդամները, այդ թվում՝ անվանի գրող Գրիգոր Ջոհրապը, Վռամյանը և ուրիշներ: Դրան հաջորդեց հայ ազգային կուսակցությունների ղեկավարների սպանությունը, Կոստանդնուպոլսում կախաղան հանվեցին հնչակյան կուսակցության 20 գործիչներ, այդ թվում և Փարամազը, Ջեյթունում սպանվեց Նազարեթ Չաուշը, Վանում՝ Իշխանն ու նրա ընկերները և շատ ու շատ ուրիշներ: Տեղում կամ գաղթի ճանապարհին սպանվեցին հայ տաղանդավոր գրողներ՝ Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Ռուբեն Չարդարյանը, Արտաշես Հարությունյանը, Թղկատինցին, Երուխանը, Տիգրան Չոկյուրյանը և Սմբատ Բյուրատը, ակամավոր հրապարակախոսներ և թերթերի խմբագիրներ Նազարեթ Տաղավարյանը, Տիրան Քելեկյանը, Գագիկ Օզանյանը և այլ երևելի դեմքեր: Մեծ էր հայ եկեղեցու այն սպասավորների՝ քահանաների և այլ կարգավիճակ ունեցող հոգևորականների թիվը, որոնք սպանվեցին եկեղեցիներում, տանջամահ արվեցին արաբական անապատներում՝ գաղթի ճանապարհին: Ըստ էության՝ ցեղասպանության զոհ դարձավ Մեծն Կոմիտասը, որը տեսնելով հարյուր հազարավոր հայ մանուկների, կանանց, աղջիկների և ծերունիների տանջանքներն ու բարբարոսական չարչարանքները, խելագարվեց:

Քաղսպանության հետևանքով արևմտահայությունը գլխատվեց և մնաց առանց ազգային, քաղաքական ու ռազմական ղեկավարության: 1915 թ. փետրվարին իրագործված հայկական զինական ներուժի ոչնչացումից հետո քաղսպանությունը երկրորդ ծանր հարվածն էր, որ ստացավ հայության արևմտահայ հատվածը: Դրան հետևեց երրորդ և ամենածանր հարվածը՝ Հայոց ցեղասպանությունը հայկական վեց վիլայեթներում՝ Խարբեթում, Սվասում, Բիթլիսում, Էրզրումում, Վանում և Դիարբեքիում, ինչպես նաև հայոց Կիլիկիայում և Անատոլիայի բոլոր հայաբնակ վայրերում: Այդ ոճիրի պատճառով Արևմտյան Հայաստանը, կամ «Էրզիրը», լրիվ հայաթափ եղավ, զոհերի թիվն անցավ մեկուկես միլիոնից:

Քաղսպանության մասին հիմնադրույթն օգնում է ավելի խորը հասկանալու ցեղասպանության երևույթը, ցեղասպան ուժերի ռազմավարությունն ու մարտավարությունը, ինչպես նաև ցեղասպանության իրագործման մեթոդաբանությունն ու մեխանիզմը:

## 7. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ցեղասպանության իրագործման մեթոդաբանության և մեխանիզմների ուսումնասիրության ժամանակ ի հայտ եկավ ևս մեկ նոր հանգամանք՝ հարմար պահի ընտրության հարցը: Դա բավական բարդ խնդիր է, որը պահանջում է ճշգրիտ հաշվարկումներ, քանի որ սխալվելը կարող է ճակատագրական լինել ցեղասպանությունն իրականացնող պետությունների, կառավարությունների կամ կուսակցությունների համար: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել երկու գործոն՝ ներքին և արտաքին:

Ներքին գործոնը կապված է այն բանի հետ, թե արդյոք ցեղասպանություն իրականացնող պետության կամ երկրի ներսում բնակչության բոլոր խավերը և քաղաքական ու հասարակական ուժերը այս կամ այն էթնոսի ոչնչացման հարցում չեն ընդդիմանա, պատրաստ կլինեն պաշտպանելու և աջակցելու իրենց կառավարությանը: Ինչպես վկայում են փաստերը և Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքը, Օսմանյան կայսրությունում չկային սուլթանին և երիտթուրքական կառավարությանն ընդդիմացող մեծ խավեր կամ ուժեր: Ըստ էության, նրանք միահամուռ էին Օսմանյան կայսրությունը էթնիկապես միատարր թուրքական պետության վերածելու և արևմտահայությանն ամբողջապես բնաջնջելու հարցում: Դա բացատրվում է նաև այն հանգամանքով, որ տասնամյակներ, եթե ոչ հարյուրամյակներ շարունակ Օսմանյան կայսրությունում ասորիների, արաբների, բուլղարների, հայերի, հույների, սերբերի և այլ ոչ թուրք ժողովուրդների պարբերաբար կազմակերպվող ջարդերը հանգեցրել էին այն բանին, որ թուրք հասարակությունն ընտելացել էր այդ կոտորածներին:

Տարիների ընթացքում Օսմանյան կայսրության ներսում թուրքերից, քրդերից և չերքեզներից ձևավորվել էր մի ստվար սոցիալական խավ, որը մասնագիտացել էր սպանություններ ու կոտորածներ կազմակերպելու և իրականացնելու մեջ: Դա մասնագիտության պես մի բան էր, որը դարձել էր նրանց գոյության, ապրուստի և անօրինական ճանապարհով հարստություն դիզելու աղբյուր, ինչը նաև որոշակի տեղ ու դիրք էր նրանց ապահովում օսմանյան հասարակական ու պետական աստիճանակարգում: Հենց այս խավերն էին շահագրգռված Հայոց ցեղասպանության իրականացման գործում: Ուրեմն արևմտահայության ցեղասպանությունն իրականացնելու համար ներքին գործոնը ժամանակի հարմարության առումով միանգամայն բարենպաստ էր:

Ինչ վերաբերում է արտաքին գործոնին, ապա այստեղ նկատի ունենք տվյալ պատմական ժամանակաշրջանում մեծ տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, որոնք տնօրինում էին աշխարհի բախտը և բազմիցս միջամտել էին ու Օսմանյան իշխանություններին ստիպել դադարեցնել ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում՝ հայերի ջարդերը: Հայոց ցեղասպանության ժամանակ ընթանում էր առաջին համաշխարհային պատերազմը, և նշված պետությունները բաժանվել էին երկու թշնամական ռազմաքաղաքական բլոկների՝ Անտանտի (Անգլիա, Ֆրանսիա և Ռուսաստան) ու Եռյակ դաշինքի (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա և նրանց միացած Օսմանյան կայսրությունը): Պատերազմի տարիներին Անտանտի երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, զրկվեցին Օսմանյան կայսրության վրա ազդելու բոլոր լծակներից, ինչը երիտթուրքական կառավարության համար ստեղծեց ազատորեն գործելու համար բարենպաստ պայմաններ, քանի որ այդ պետությունները չէին կարող միջամտել և Օսմանյան կառավարությանը հարկադրել դադարեցնել հայերի կամ մյուս ոչ թուրք ժողովուրդների ջարդերը: Մնացին Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, որոնք, մանավանդ Գերմանիան, կարող էին միջամտել և ստիպել երիտթուրքերին դադարեցնել հայերի ցեղասպանությունը,

բայց, լինելով Օսմանյան կայսրության դաշնակիցը, չբռնեցին երիտթուրքական մարդասպանների ձեռքը:

Կան մի շարք փաստաթղթեր, որոնք լիովին հաստատում են այս տեսակետը՝ կապված պահի հարմարության հետ: 1914 թ. վերջերին, երբ Օսմանյան կայսրությունն արդեն մտել էր առաջին համաշխարհային պատերազմի մեջ, և երբ արդեն Հայոց ցեղասպանության մասին որոշում էր ընդունվել, երիտթուրքական կուսակցության գաղափարախոս, կրթության նախարար Նազիմը, ելույթ ունենալով կուսակցության գաղտնի նիստերից մեկում, ասել է. «... պետք է հայ ազգը արմատախիլ ըլլայ, մեր հողին վրայ անհատ մը անգամ չմնայ, հայ անունը մոռցուի: Հիմա պատերազմի մեջ ենք, ասկէ յարմար առիթ չի գտնուիր, մեծ պետութեանց միջամտութիւնը եւ թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ, ըլլալու պարագային խնդիրը կատարուած իրողութիւն մը կը դառնայ եւ կը փակուի. այս անգամուան գործողութիւնը բնաջնջումի գործողութիւն մը պիտի ըլլայ, հայերէն անհատ մը իսկ չմնալու պայմանաւ բնաջնջումը անհարաժեշտ է. ... ես թուրքին, միայն թուրքին ապրիլը, այս հողին վրայ անկախ իշխող մը ըլլալը կը փափաքիմ: Ոչ – թուրք տարրերը թող ջնջուին, ո՛ր ազգութեան եւ ո՛ր կրօնին ալ պատկանած ըլլան»<sup>28</sup>:

Գլխավոր ոճրագործ-մարդասպան, Օսմանյան կայսրության վարչապետ և ներքին գործերի նախարար Թալեաթը նույնպես հաստատել է, որ առաջին համաշխարհային պատերազմը Հայոց ցեղասպանության իրականացման համար ամենահարմար պահն էր: Նա Գերմանիայի դեսպանության աշխատող դոկտոր Մորդմանի հետ 1915 թ. հունիսին ունեցած զրույցի ժամանակ ասել է. «Թուրքիան օգտվեց պատերազմի ընձեռած հնարավորությունից, որպեսզի ամբողջապես վերացնի իր ներքին թշնամուն, այսինքն՝ տեղական քրիստոնյաներին, առանց անհանգստանալու արտաքին միջամտությունից»<sup>29</sup>:

Այսպիսով՝ արտաքին գործոնի առումով ևս պահը հարմար էր:

## 8. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄԻԱՅՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԷՐ, ՈՐԸ 20-ՐԴ ԳԱՐՈՒՄ ԻՐԱԳՈՐԾԵՑ ԱՌԱՋԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԼԵՎ ԱՌԱՋԻՆԸ, ՈՐ ՀՈՉԱԿՎԵՑ «ՑԵՂԱՍՊԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

Ցեղասպանագիտության կարևոր նվաճումներից մեկը «ցեղասպան պետության» տեսադրույթի առաջքաշումն ու հիմնավորումն է: Դա արվեց Հայոց և Հրեական, ապա նաև դրանց հաջորդած մյուս ցեղասպանությունների վերլուծության հիման վրա: Տվյալ դրույթը, որը մինչ այդ անհայտ էր գիտությանը, առաջ քաշվեց 1970-ական թվականներին: Այն հիմնավորել են հայտնի ցեղասպանագետներ

<sup>28</sup> Տես *Մելվին Զարե Բիֆաթ*, Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթքիհատի հայաջինջ ծրագիրները: Ե., 1990, էջ 98:

<sup>29</sup> Տես «Armenian Genocide Quotes». «Turkish Quotes. Talat Pasha» ([http://www.armeniapedia.org/index.php?title=Armenian\\_Genocide\\_Quotes#Turkish\\_Quotes](http://www.armeniapedia.org/index.php?title=Armenian_Genocide_Quotes#Turkish_Quotes)):

Իրվինգ Հորովիցը, Լեո Կուպերը, Յուրի Բարսեղովը և այլ մասնագետներ: Այդ խնդրի ուսումնասիրությամբ զբաղվում է նաև տողերիս հեղինակը<sup>30</sup>:

Ո՞րն է «ցեղասպան պետության» դրույթի էությունը, ի՞նչ սկզբունքների վրա է այն խարսխվում: Առաջին. հնարավոր չէ ցեղասպանություն կատարել բոլոր պետություններում և հասարակություններում: Դա հնարավոր է միայն այնպիսի պետություններում, որոնք տիպաբանորեն պատկանում են բռնատիրական վարչակարգ ունեցող պետությունների շարքին: Այդ վարչակարգը կարող է լինել ռազմաֆեոդալական, բռնապետական կամ ամբողջատիրական և գտնվել զարգացման տարբեր աստիճաններում: Սակայն այդ հանգամանքն ինքնին դեռ բավարար չէ ցեղասպանության համար: Կարևոր հանգամանք են տեսական կանխադրույթները, որոնց վրա խարսխվում են ցեղասպանություն իրագործող պետություն–հասարակությունը և նրա պաշտոնական քաղաքականությունն ու գաղափարախոսությունը: Դրանցից, մի կողմից, առաջնային է տվյալ պետության սահմաններում բնակվող մնացած բոլոր ազգությունների նկատմամբ տիրապետող ազգի գերազանցության գաղափարը, մյուս կողմից՝ «օտարածին» մարմիններից ազատվելու և էթնիկական առումով «մաքուր» ու միատարր երկիր ստեղծելու ձգտումը: Եվ, ինչպես վկայում է պատմական փորձը, էթնիկապես «մաքուր» պետություն ստեղծելու այլ ուղի, քան բռնությունն է, գոյություն չունի: Իսկ բռնությունից մինչև ցեղասպանություն ընդամենը մեկ քայլ է:

Սակայն ցեղասպան պետություն դառնալու համար անհրաժեշտ է նաև մեկ այլ նախապայման: Կարևոր է, որ տվյալ հասարակությունը ոչ միայն չընդվզի էթնիկական «մաքման» դեմ, այլև ընդունի և ակտիվ կամ պասիվ կերպով պաշտպանի այդ քաղաքականությունն: Այսինքն՝ որ այդ քաղաքականությունը դառնա համազգային քաղաքականություն: Եթե այս բոլոր նախադրյալներն առկա են, ապա տվյալ պետությունը այլ բարենպաստ պայմանների դեպքում կարող է վերածվել ցեղասպան պետության:

Երբ մենք «ցեղասպան պետության» դրույթը կիրառում ենք Հայոց ցեղասպանության և հրեական Ողջակիզման առնչությամբ, ապա ակնհայտ է դառնում, որ դա միանգամայն պատշաճում է և՛ Օսմանյան կայսրությանը, և՛ հիտլերյան–նացիստական Գերմանիային: Այս երկու պետություններն էլ բոլոր չափանիշներով համապատասխանում են ցեղասպան պետության վերաբերյալ դրույթին: Երկու երկրներում էլ գոյություն ունեւ բռնատիրական ռազմաֆեոդալական (Օսմանյան կայսրություն) կամ բռնապետական–ամբողջատիրական (նացիստական Գերմանիա) վարչակարգ: Երկուսին էլ բնորոշ էին պաշտոնական ռասիստական գաղափարախոսությունը և, համապատասխանաբար, թուրքական ու գերմանական ազգերի գերազանցության, «օտար» ազգերից բռնությամբ իրենց երկիրը մաքրելու՝ իշխանությունների հետադիմական քաղաքականությունը: Երկու երկրներն էլ կուտակել էին զանգվածային սպանությունների հարուստ

<sup>30</sup> Տես *Nikolay Hovhannisyán. The Armenian Genocide. Armenocide–The Most Genocidal Genocide. In Ten languages of the World: In English, French, Russian, German, Turkish, Japanese, Hungarian, Armenian, Arabic, Persian. Yerevan, 2009:*

փորձ և այդ բնագավառում հասել «բարձր մշակույթի»: Եվ, վերջապես, երկու երկրների հասարակությունների համար էլ ընդունելի էր նման քաղաքականությունը:

«Արմենոցիդ» տերմինն ստեղծող հայտնի ցեղասպանագետ-պատմաբան Մուսա Պրենսն առաջիններից էր, որ ուշադրություն դարձրեց ոչ միայն քաղաքական ու ռասայական գործոնների, այլև «ցեղասպան պետության» առաջացման հոգեբանական-ախտաբանական գործոնների վրա, որոնք առկա էին ինչպես հայ-թուրքական, այնպես էլ գերմանա-հրեական հարաբերություններում և իրենց ճակատագրական դերակատարումն ունեցան Հայոց ցեղասպանության և Հրեական ողջակիզման իրագործման մեջ<sup>31</sup>: Թուրքերի և գերմանացիների սադիզմը Մուսա Պրենսը բացատրում է նաև թուրքերի մեջ՝ հայերի նկատմամբ, և գերմանացիների մեջ՝ հրեաների նկատմամբ ձևավորված հիվանդագին ատելությամբ, որովհետև այլ կերպ անհնար է հասկանալ, այդ երկու ոճրագործությունների ներքին շարժառիթավորումը: Դա առողջ մարդու, առողջ էթնոսի վարքագիծ չէ, դա կույր մոլագարությամբ տառապող հավաքականության հիվանդագին արյունաժարավորություն է:

Մի կարևոր հանգամանք ևս: Ֆեղասպան պետությունը ողբերգություն է բերում ոչ միայն ենթակա ժողովուրդներին, այլև պատժում է իր հասարակությանը՝ նրան, կամա թե ակամա, ոճրագործության մեղսակից դարձնելով: Այդ բանը շատ լավ գիտակցեցին և ընդունեցին հետիտլերյան Գերմանիայում, այդ բանը դեռ պետք է գիտակցեն և ընդունեն հետկայսերական Թուրքիայում:

Կարծում ենք, որ «ցեղասպան պետության» վերաբերյալ ցեղասպանագիտության հիմնադրույթը, այդ ոճրագործության մեթոդաբանության և կիրառման մեխանիզմների պարզումը ավելի հասկանալի են դարձնում Հայոց ցեղասպանության պատճառները, գործադրման հնարավորությունները և սպանդի ահռելի մասշտաբները:

\* \* \*

Լրանում է Հայոց ցեղասպանության հարյուրամյակը: Դա որոշակի բնագիծ է, որը **պահանջում** է հետադարձ հայացք նետել անցած ուղու, ձեռքբերումների, ինչպես նաև բացթողումների ու վրիպումների վրա: Հարյուրամյակը ոչ մի դեպքում չի կարող առիթ ծառայել հերթական անգամ ուրիշներից աղի արցունքներ կորզելու և լացուկոծի համար: Դրա ժամանակն անցել է: 1,5 միլիոն մեր անմեղ նահատակների խնկելի հիշատակը հարգելով հանդերձ՝ մենք պետք է սթափությամբ, իմաստնորեն մշակենք մեր ապագա քայլերը և դրանց հերթականությունը: Հարկ է շեշտադրումը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից, որն արդեն կատարված իրողություն է, փոխադրել արդարացի հատուցման ընդունման վրա: Հայությունը, որ արդեն հրաժարվել է զոհի կարգավիճակից և դարձել պետութենաստեղծ ազգ՝ ստեղծելով Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը, պետք է արժանապատվությամբ ոտք դնի երրորդ հազա-

<sup>31</sup> Տես *Moussa Prince. Un genocide impuni. L'Armenocide*, P. 22:

րամյակ, ապավինելով իր, այդ թվում և զինական ուժերին: Դա է նրա գոյատևման առիվատու շնորհը:

Ինչ վերաբերում է դահճին, ապա նա մնաց դահիճ՝ դառնալով, ինչպես նշում է թուրք ցեղասպանագետ Թաներ Աքչամը, «ցեղասպանության ժխտման արդյունաբերության հիմնադիր»:

## МЕТОДОЛОГИЯ И МЕХАНИЗМЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ: ГЕНОЦИДОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ

*Н. О. ОГАНЕСЯН, член-корреспондент НАН РА, доктор исторических наук, профессор, Заслуженный деятель науки Армении, советник Начальника ИНСИ МО РА*

### РЕЗЮМЕ

Османская империя являлась отсталой военно-феодальной страной с деспотической системой правления и по праву считалась «тюрьмой народов». Она на государственном уровне осуществляла политику этнической дискриминации и погромов, которая достигла пика в годы правления султана Абдула Гамида Второго (1876–1909 гг.). Пришедшие ему на смену в результате государственного переворота младотурки поставили во главу угла во внутренней политике идею «гомогенизации населения» страны путем добровольного отказа населявших империю многочисленных народов от своей этнической принадлежности, а в случае отказа – насильственного отуречивания и истребления этих этносов, а во внешней политике – пантюркизм с объединением всех тюркоязычных народов и созданием Великого Турана от Малой Азии до Алтая и Дальнего Востока. Основным препятствием на внутренней арене были христианские народы империи (армяне, греки, ассирийцы, халдеи), иудеи (евреи), мусульмане нетурецкого происхождения (в первую очередь, арабы), а также балканские народы. Хотя и все народы существенно пострадали от младотурок, но основной удар был нанесен по армянам. В 1915 году в Османской империи младотурки осуществили Геноцид армян, который был первым геноцидом 20-го века.

Термин «геноцид» предложил адвокат, польский еврей Рафаэль Лемкин в 1944 году. В дальнейшем, в 1960-е годы, арабский историк Муса Препвелл в научный оборот термин «арменоцид» как эквивалент понятия Геноцида армян, отметив, что «Арменоцид – самый геноцидальный геноцид».

Интернационализация понятия геноцида, сопровождаемая многочисленными научными исследованиями в данной области, объективно привела к возникновению новой научной дисциплины – геноцидологии.

Согласно геноцидологии, жертва геноцида становится таковой не в момент геноцида: становление жертвой (виктимизация) является сложным

историческим процессом, который предшествует непосредственно геноциду и может длиться десятилетия и более. В случае армян этот процесс возник в годы правления Абдула Гамида Второго, когда руководство Османской Турции взяло на вооружение принцип «Лучшим решением армянского вопроса является физическое уничтожение армян». Правительство младотурок завершило эту варварскую программу. В то же время из тезиса о виктимизации следует, что в преступлении геноцида отсутствует фактор внезапности, и жертва не может этим оправдать свою незащищенность.

Лишение жертвы способности к сопротивлению играет краеугольную роль в методологии геноцида. Об этом свидетельствует также опыт Геноцида армян. В Османской империи подверглись мобилизации мужчины-армяне в возрасте 18–45 лет, однако служили они в рабочих батальонах, без оружия, и после завершения работ были ликвидированы общим числом около 60 тысяч человек.

Другим механизмом геноцида является политицид, или политическое убийство, т. е. уничтожение по политическим мотивам национального, социально-политического руководства, интеллигенции, военных, религиозных, культурных и общественных деятелей и предводителей жертвы-этноса. Политицид осуществляется как до, так и непосредственно во время геноцида. Классическим примером политицида является Арменочицид: начиная с 24 апреля 1915 года были арестованы и убиты около 800 армян – парламентариев, политических, религиозных, общественных и культурных лидеров.

Важное значение имеет выбор исторического момента, подразумевающий точный расчет, ибо ошибка может дорого обойтись организаторам геноцида. Решающими являются два фактора – внутренний и внешний. Внутренний фактор обусловлен тем, насколько общественность страны-палача одобряет геноцидальную политику своего руководства. А внешний – тем, насколько страна-палач защищена от внешнего вмешательства других государств, которые могут воспрепятствовать преступлению. Правительство младотурок для Арменочицида выбрало очень подходящий момент с учетом и внутреннего, и внешнего факторов. Внутреннего – потому, что мусульманское население Османской империи в течение десятилетий было очевидцем и участником резни армян, ассирийцев, болгар, греков, сербов и других немусульманских народов, и для него геноцид стал привычным явлением. Внешнего, потому что геноцид был осуществлен во время Первой мировой войны, и этим была исключена возможность внешнего вмешательства.

Существенное значение имело и то, что Османская империя типологически относилась к странам с деспотической формой правления, с доминирующей идеологией расизма, поддерживаемой большинством населения, т. е. была, по современной терминологии, геноцидальным государством.

В 50-е годы XX века поднялась новая волна геноцидов. В различных странах Европы, Азии, Африки и Америки было осуществлено около 50 геноцидов и кровавых погромов. В связи с этим геноцидология провозгласила 20-й век эпохой геноцидов, начало которой положил Геноцид армян.

Вот основные методологические принципы и механизмы осуществления Геноцида армян, 100-летие которого исполняется в этом году. Признание Арменоицида – свершившийся факт. Следовательно, необходимо перенести акценты на признание справедливого требования возмещения потерь армянства.

## THE METHODOLOGY AND MECHANISMS FOR COMMITTING THE ARMENIAN GENOCIDE IN THE OTTOMAN EMPIRE: A GENOCIDOLOGY ANALYSIS

*N. H. HOVHANNISYAN, Corresponding Member, NAS, RA, Doctor of History, Professor,  
Honored Scholar of Armenia, Advisor to the Head, INSS, MOD, RA*

### SUMMARY

The Ottoman Empire was a lagging military and feudal country with a despotic system of government and was indeed considered the «prison of nations». It implemented a policy of ethnic discrimination and pogroms at state level, which reached its peak during the reign of Sultan Abdul Hamid II (1876 – 1909). The Young Turks who came to replace him in consequence of the coup d'état put at the forefront of the domestic policy the idea of «homogenization of the population» of the country through the Empire's numerous peoples voluntary renunciation of their ethnicity, and in case of the refusal – through forcible Turkification and extermination of these ethnic groups. As for the foreign policy, the basic idea was Pan-Turkism with the consolidation of all Turkic peoples and the establishment of Great Turan from Asia Minor to Altai and the Far East. The main obstacle on the domestic arena was the Christian peoples of the Empire (Armenians, Greeks, Assyrians, the Chaldeans), Jews, Muslims of non-Turkish origin (primarily, the Arabs), as well as the Balkan peoples. Even though all the peoples greatly suffered from the Young Turks, the major blow was delivered to the Armenians. In 1915, the Young Turks committed the Armenian Genocide in the Ottoman Empire, the first genocide in the 20th century.

The term «genocide» was offered by a lawyer, a Polish Jew Raphael Lemkin in 1944. Later on, in the 1960s, Arab historian Musa Preps introduced the term «Armenocide» into scientific use – as an equivalent to the concept of the Armenian Genocide, noting that «Armenocide is the most genocidal genocide».



The internationalization of the notion «genocide», accompanied by numerous scholarly studies in this area, objectively led to the emergence of a new academic discipline – genocidology.

According to genocidology, a victim of genocide is fallen to not at the time of the genocide: becoming a victim (victimization) is a complex historical process which precedes directly the genocide and can last for decades or more. In case of the Armenians, this process emerged during the reign of Abdul Hamid II when the leadership of the Ottoman Turkey adopted the principle «The best solution to the Armenian issue is the physical extermination of the Armenians». That barbaric program was accomplished by the Young Turk government. At the same time, as follows from the victimization point, the crime of genocide lacks the surprise factor, and thereby the victim can not justify his vulnerability.

Depriving the victim of the capability for resistance plays a key role in the methodology of genocide. The experience of the Armenian Genocide also indicates this fact. Armenian men aged 18 – 45 were subjected to mobilization in the Ottoman Empire, but they served in the labor battalions without weapons, and after the completion of the works. The total number of the killed was 60 000.

Another mechanism of genocide is politicide or political assassination, i. e. the extermination of national, social and political leaders, intellectuals, military, religious, cultural and public figures and leaders of the victim ethnic group for political reasons. Politicide is carried out both before and directly during the genocide. A classic example of politicide is Armenocide: nearly 800 Armenians were arrested and killed starting from 24 April, 1915: these were the parliamentarians, political, religious, public and cultural leaders and figures.

The choice of historical moment is important implying an accurate calculation, since a mistake can cost a lot to the genocide organizers. Two factors are crucial – internal and external ones. The internal factor is conditioned by the fact as how far the society of the executing country approves the genocidal policy of its leadership. And the external factor refers to the fact as to what extent the executing country is protected from external interference of other states which can prevent the crime. The Young Turk government chose a very appropriate time for the Armenocide, taking into account both the internal and external factors. It chose the internal one because the Muslim population of the Ottoman Empire had witnessed and participated in the massacres of Armenians, Assyrians, Bulgarians, Greeks, Serbs and other non-Muslim nations for decades, and the genocide became a usual thing for it. The external factor was chosen because the genocide was committed during the World War I, and that left out the possibility of external intervention.

The fact of the Ottoman Empire being typologically a country with a despotic form of government, with the dominant ideology of racism supported by

the majority of the population, was of essential significance. That is, the Ottoman Empire was, according to modern terminology, a genocidal state.

In the 50s of the 20th century, a new wave of genocides rose. About 50 genocides and bloody pogroms were implemented in different countries of Europe, Asia, Africa and America. In these terms, genocidology proclaimed the 20th century the era of genocides, initiated with the Armenian Genocide.

Here are the main methodological principles and mechanisms of perpetrating the Armenian Genocide, the centenary of which will be this year. The recognition of Armenocide is a fait accompli. Therefore, it is necessary to put the emphasis on the recognition of just requirements of the compensation for the losses of the Armenians.

# ՄԻԱՏԱՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔԻ ԱՏԵՂԾՄԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԶՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի վերլուծական կենտրոնի գիտնական-վերլուծաբան



Օսմանյան կայսրության հզորացման շրջանում ստեղծվել էր հպատակ ժողովուրդների կառավարման մի յուրահատուկ համակարգ, որը կոչվում էր «միլիթների համակարգ»<sup>1</sup>: Նվաճված ժողովուրդների նկատմամբ որոշակի հանդուրժողականության շնորհիվ այն ապահովում էր նրանց կառավարման ավելի մեծ արդյունավետություն<sup>1</sup>:

Մինչև 19-րդ դարը, երբ թուրքական վերնախավում (առաջին հերթին՝ զինվորականների ու պետական պաշտոնյաների շրջանում) սկսվեց ազգային ինքնագիտակցության ձևավորումը, հայրենիքի գաղափարը որպես այդպիսին դեռ հասունացած չէր. թուրքական կառավարող շրջանները ցուցաբերում էին կայսերական մտածողություն՝ նույնիսկ խուսափելով «թուրք» բառից, որը նվաստացուցիչ իմաստ ուներ, և նախընտրելով «օսմանցի» տերմինը: Օսմանյան կայսրությունն իր բնույթով շարիաթական օրենսդրության վրա հիմնվող կրոնապետություն էր. կայսրության հասարակությունը բաժանված էր երկու հատվածի՝ մահմեդականների և ոչ մահմեդականների, իսկ կառավարման համակարգում, կամ վերնախավում, տեղ զբաղեցնելու համար մահմեդական լինելը պարտադիր պայման էր: Այսպիսով՝ կրոնական միասնականությունը, պայմանավորված լինելով պետության կամակարգի բնույթով, դարձել էր թուրքական ազգայնականության հիմքերից մեկը<sup>2</sup>: Այդ իսկ պատճառով հայրենիքն սկզբնական շրջանում

<sup>1</sup> Թուրքական պատմագրությունը «միլիթների» համակարգը ներկայացնում է որպես ապացույց այն բանի, որ Օսմանյան կայսրությունում այլազգիներն ապրում էին բարեկեցիկ կյանքով, իսկ օսմանյան իշխանությունները չէին միջամտում նրանց ներքին գործերին: Այսպես. թուրքական պատմագրության «Հայկական հարցի» մեկնաբանության առանցքային աշխատություններից մեկում՝ Էսադ Ռիբասի «Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը» մեկնաբանությունում, նշվում է. «Նվաճողից (խոսքը սուլթան Մեհմեդ 2-րդ Ֆաթիհի (Նվաճող) մասին է, որը 1453 թ. նվաճել էր Կոստանդնուպոլիսը – Ա. Ա.) մինչև Մահմուդ 2-րդը, երեք ու կես դար իշխանությունները բացարձակապես չէին միջամտում քրիստոնյաների, այդ թվում՝ հայերի, կրոնական և հասարակական գործերին: Պատրիարքարաններն ունեին իրենց դատարաններն ու բանտերը: Մարմնական պատիժների, արտաքսման մասին որոշումներ էին կայացնում» (տես Esat Uras. Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi. Ankara, 1950, s. 151–152): Պատմաբան Լ. Գումիլևը՝ պատմագրության գաղափարի վրա հիմնված իր տեսության մեջ այդ հանդուրժողականությունը համարում է օսմանյան թուրքերի պատմագրության գաղտնիքը (տես Լ. Գումիլև. Древняя Русь и Великая степь. М., 1992, *նույնի*՝ Тысячелетие вокруг Каспия, М., 2008):

<sup>2</sup> Տես Fatma Müge Göçek. Osmanlı Devleti'nde Türk Milliyetçiliğinin Oluşumu:

ընկալվում էր ոչ թե որպես «ազգ-պետություն» (այսինքն՝ զուտ ազգայնականության տեսակետից), այլ որպես մահմեդականներով բնակեցված մի տարածք, որը հետագայում միասնական լեզվի, կրոնի ու մշակույթի հիմքի վրա պետք է թուրքանար:

Թուրքական ազգայնականության կրոնական բաղադրիչը դրսևորվեց «նոր օսմանների» շարժման օրոք, երբ թուրք մտավորականության շրջանում սկսեց տարածվել այն գաղափարը, որ գավթված երկիրը պետք է թուրքերի կողմից ընկալվի որպես հայրենիք կամ նախահայրենիք, և այնտեղ եկվոր թուրքերը կկազմեն մեծամասնություն: «Նոր օսմանների» շրջանում ազգայնականության նկատմամբ դեռ գերիշխում էր իսլամականությունը, այն է՝ «կրոնն ու ժողովուրդը մեկ են»<sup>3</sup>: Ինչպես բնութագրում է թյուրքականության և պանթյուրքականության հիմնադիրներից մեկը՝ Յուսուֆ Աքչուրան, «սկզբնական շրջանում հիմնականում «հայրենիք (*vatan*)» և «օսմանականություն (*osmanlilik*)», այսինքն՝ հայրենիքում բնակվող բոլոր ժողովուրդներից բաղկացած օսմանականության կոչերով մեկնարկած՝ նոր օսման բանաստեղծների և քաղաքական գործիչների մեծամասնության գործունեության համար վերջնակետ հանդիսացավ «իսլամականությունը (*İslamiyet*)»<sup>4</sup>: «Նոր օսմանների» գաղափարական հայացքներում հայրենիքի և կրոնի միասնական և անբաժանելի ընկալման լավագույն օրինակներից է այդ շարժման առաջնորդներից մեկի՝ հայտնի բանաստեղծ Նամիք Քեմալի «Հայրենիք, կամ Սիլիստրիա» պիեսը, որտեղ գլխավոր հերոսն է Իսլամ բեյի հավաքական կերպարը<sup>5</sup>:

Երիտթուրքական շարժումն իր ձևավորման շրջանում կրում էր «նոր օսմանների» գաղափարական ազդեցությունը<sup>6</sup>: Կործանվող կայսրության փրկության գաղափարը երիտթուրքական շարժման միավորիչ ուժն էր, և 1908 թ. հուլիսի 23-ի հեղաշրջման համար անմիջական առիթ եղավ Մակեդոնիայի հարցի սրումը<sup>7</sup>: Սակայն եթե երիտթուրքական սպայության մեծ մասը դեռ հավատում էր, որ հնարավոր է փրկել կայսրությունը նրա տարածքում տարբեր ժողովուրդների միավորմամբ ձևավորելով միասնական «օսմանյան ազգ», ապա երիտթուրքական կուսակցության պարագլուխները, հատկապես՝ Թալեաթի խմբավորումը (որի մեջ մտնում էին դոկտոր Նազիմը, Բեհաեդդին Շաքիրը, Քարա Քեմալը և ուրիշներ), այդ ճանապարհի անհեռանկարայնությունը հասկացան դեռ 1909 թվականին, երբ պարզ դարձավ, որ խորհրդարանում երիտթուրքերի նախաձեռնած «կամավոր» ձուլման բոլոր օրենսդրական փորձերը (օրինակ՝ թուրքերենի իմացությունը

Sosyolojik Bir Yaklaşım. «Modern Türkiye’de Siyasi Düşünce», Cilt 4 Milliyetçilik. İstanbul, 2002, s. 65:

<sup>3</sup> Տես *Yusuf Akçura*. Üç Tarz-ı Siyaset. Ankara, 1998, s. 21:

<sup>4</sup> Տես նույն տեղում:

<sup>5</sup> Տես *Namık Kemal*. Vatan yahut Silistre. İstanbul, 2003:

<sup>6</sup> Տես *Ю. А. Петросян*. Младотурецкое движение (вторая половина XIX - начало XX вв.). М., 1971, сс. 101–102:

<sup>7</sup> Տես *В. И. Шпилькова*. Младотурецкая революция 1908-1909 гг. М., 1977, сс. 89–112:

պարտադրող օրենքի ընդունումն ու իրագործումը) դատապարտված են անհաջողության՝ առաջին հերթին քրիստոնյա ժողովուրդների դիմադրության պատճառով:

Մի շարք փաստերի հիման վրա կարելի է ենթադրել, որ դեռ 1909 թվականին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն սկսեց մշակել Փոքր Ասիան (ներառյալ՝ Հայկական բարձրավանդակը) այնպիսի տարածքի վերածման ռազմավարություն, որի բնակչությունը պետք է լիներ գերազանցապես թուրքական: Հարկավոր էր այդ տարածքը մաքրել բնիկ քրիստոնյա ժողովուրդներից և հետագայում այլ ազգի մահմեդականներին թուրքացնելու ճանապարհով վերածել «թուրքերի հայրենիքի»: Երիտթուրքական և քեմալական կառավարությունները 1914–1923 թթ. իրականացրել էին այն ժողովուրդների ոչնչացումն ու հայրենագրումը, որոնց կենսատարածքը համընկնում էր թուրքերի բնակության սահմանների հետ: Հայերի և ասորիների ցեղասպանությունը, Պոնտոսի և Փոքր Ասիայի հույների զանգվածային կոտորածները, այդ ժողովուրդների հայրենագրումն ու նրանց ունեցվածքի հափշտակումը միատարր թուրքական տարածք-հայրենիք ստեղծելու երիտթուրքական ռազմավարության բաղկացուցիչ մասերն էին:

Ինչ վերաբերում է քրդերին, լազերին, չերքեզներին և այլ մահմեդական փոքրամասնությունների, որոնց բնակվելու շրջանները ևս համընկնում էին Փոքր Ասիայում (Անատոլիայում) թուրքերի բնակության տարածքի հետ, ապա երիտթուրքերը և նրանց հաջորդած քեմալականները (երիտթուրքերի երկրորդ ալիքը) վստահ էին, որ հնարավոր է նրանց թուրքացնել<sup>\*</sup>: Երբ մահմեդական ժողովուրդների ձուլման քաղաքականությունը ձախողվեց, հանրապետական Թուրքիան 1925 թվականից սկսեց վարել թուրքերից հետո թվաքանակով երկրորդ և հոծ բնակվող քրդերի բռնի ձուլման ու հալածանքների քաղաքականություն:

Փոքր Ասիայի տարածաշրջանում թուրքերի հայրենիքի ստեղծման, այդ հայրենիքի սահմանների վերաբերյալ երիտթուրքերի (ազգայնական թևի) քաղաքականության իրականացման համար շրջադարձային եղան Բալկանյան պատերազմները: Այն ժամանակ, երբ իդեալիստական հայացքներ դավանող երիտթուրքական սպայությունը կրած պարտության հետևանքով զանգվածաբար ինքնասպանություն էր գործում, Իթթիհատի վերնախավը եվրոպական վիլայեթների կորուստը դիտում էր որպես ասիական հատվածում «թուրքական հայրենիքի» ստեղծման վերջին խոչընդոտի վերացում: «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից կայսրության ազգային պատկերի փոփոխումը և «թուրքական հայրենիք» ստեղծելու քաղաքականությունը ուսումնասիրող

\* Այդ կապակցությամբ Յուսուֆ Աբչուրան նշում էր. «Ինչ վերաբերում է թուրքական միության քաղաքականության առավելություններին, Օսմանյան պետությունում թուրքերը ամուր կապված են և՛ կրոնական, և՛ ազգային կապերով, նրանք կմիավորվեն միայն կրոնական կապով իրենց հետ շողկապվածների հետ, և ոչ թուրք մահմեդականները որոշակիորեն կթուրքանան, և նրանք ավելի մեծ շափով կընդունեն թրքություն, և այդպիսով հնարավոր է թուրքացնել նույնիսկ դեռ թրքության հետ կապ չունեցողներին» (տես *Յուսուֆ Աբչուրա*, Նշ. աշխ., էջ 33):

թուրք պատմաբան Ֆուադ Դունդարը նշում է, որ հայրենիքի փնտրտուքում երիտթուրքերի վրա մեծ ազդեցություն են գործել գերմանացիները, հատկապես՝ ֆոն դեր Գուլցը, որը դեռ 1897 թ. «Դոչչե Ռունդշաու» հանդեսում հրատարակված «Օսմանյան կայսրության թուլությունը և ուժը» հոդվածում հստակ կերպով նշել էր, որ «Թուրքիան լայնածավալ և անձև պետության փոխարեն պետք է վերածվի ավելի փոքր, սակայն ավելի հզոր ժամանակակից պետության: ...Ի՞նչ արդյունք կունենա Բալկանյան թերակղզում սահմանների ճշգրտումը: Պետությունը թույլ բյուզանդականից կվերածվի ուժեղ թուրքական և արաբական պետության, ինչը իրավիճակի բերումով շատ ավելի նպաստավոր է»<sup>8</sup>: Նորաստեղծ պետության մայրաքաղաքը ֆոն դեր Գուլցն առաջարկում էր «տեղափոխել թուրք և արաբական սահմանին, օրինակ՝ Կոնիա կամ Կայսերի քաղաքները, կամ ավելի հարավ»<sup>9</sup>:

Ուշագրավ է, որ ֆոն դեր Գուլցը խոսում է թուրք-արաբական պետության կամ «թուրք-արաբական կայսրության» մասին, սակայն հետագա զարգացումները ցույց տվեցին, որ իրենց ծրագրերում երիտթուրքերն ավելի իրատես էին և նոր ստեղծվելիք արհեստական թուրքական հայրենիքի հարավային սահման համարում էին Հալեպ-Ջերբուք գիծը<sup>10</sup>, թեև առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ջեմալ փաշան ջանքեր գործադրեց այդ պայմանական սահմանը դեպի հարավ տաղափոխելու համար՝ ի թիվս այլ միջոցների փորձելով օգտագործել նաև Սիրիա տեղահանված հայ բնակչությունը, հիմնականում՝ կիլիկիահայերին:

Թուրք պատմաբան Ֆուադ Դունդարը գրում է, որ երիտթուրքերը «Անատոլիայի իսլամացման և թուրքացման գործում օգտագործել են երեք հիմնական գործիք՝ էթնովիճակագրություն, ազգագրական քարտեզ և ազգագրական հետազոտություններ»<sup>11</sup>: Իթթիհատի ամենաազդեցիկ գործիչներից մեկը ԿԿ անդամ, դոկտոր Նազիմը մշակում էր Մակեդոնիայից քրիստոնյա ժողովուրդների արտաքսման և փոխարենը այնտեղ մահմեդական մուսուլմանների և Ռուսաստանից գաղթած հրեաների բնակեցման կազմակերպման ծրագրեր: Այդ նպատակով Մալոնիկում անցկացվում էին գաղտնի ժողովներ, որտեղ տարածաշրջանում մահմեդականության ամրապնդումը դիտվում էր որպես այն պահելու միակ հնարավորություն: Նման ծրագրերի շնորհիվ դոկտոր Նազիմը այնքան մեծ համբավ էր ձեռք բերել Մակեդոնիայի թուրքական բնակչության շրջանում, որ երբ նախընտրական քարոզչության շրջանակներում 1912 թ. փետրվարի 22-ին ժամանել էր Քավալա, նրան դիմավորել էր 20000 մարդ, որոնք բարձրացրել էին Նազիմի ավտոմեքենան և ուսերի վրա տարել դեպի հրապարակ<sup>12</sup>:

<sup>8</sup> Stü Fuat Dünder. Modern Türkiye'nin Şifresi. İttihat ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913–1918). İstanbul, 2008, s. 64:

<sup>9</sup> Stü նույն տեղում, էջ 65:

<sup>10</sup> Stü նույն տեղում, էջ 66:

<sup>11</sup> Stü նույն տեղում, էջ 85:

<sup>12</sup> Stü «İttihatbat. Doktor Nazım Bey». «Tanin», 24 Şubat 1912:

Իրենց ծրագրերում երիտթուրքերի պարագլուխները հաշվի էին առնում նաև Օսմանյան կայսրությունում եղած նախադեպերը, մասնավորապես՝ Բալկաններից մահմեդական ու թուրք մուհաջիրների տարահանումը կայսրության ասիական վիլայեթներ: Այսպես, Սեհմեդ Թալեաթի հաշվարկներով 1878–1913 թթ. մինչև Բալկանյան պատերազմները՝ Բալկաններից կայսրության ասիական վիլայեթներ տեղափոխված մահմեդականների թիվը կազմում էր 926000<sup>13</sup>: Ըստ նրա՝ Բալկանյան պատերազմից հետո տեղափոխվել էր 339074 մարդ<sup>14</sup>: Այսինքն՝ Փոքր Ասիայում (ներառյալ՝ Արևմտյան Հայաստանը), «թուրքական հայրենիք» ստեղծելու համար կար բավարար մարդկային ռեսուրս:

1910–1911 թթ. երիտթուրքական վերնախավում տեղի ունեցած քննարկումներից և հաշվարկումներից հետո ընդհանուր առմամբ ուրվագծվեց այն տարածքը, որտեղից պետք է տարահանվեին կամ որտեղ պետք է ոչնչացվեին բնիկ քրիստոնյա ժողովուրդները և ստեղծվեր «թուրքական պետություն»՝ «ազգ-պետության» սկզբունքով: Իթքիհատի՝ 1911 թ. Սալոնիկում կայացած 4-րդ համագումարն ընդունեց քրիստոնյա ժողովուրդների բռնի մահմեդականացման ծրագիրը: 1912 թվականին հրատարակված՝ «Լոնդոնի համաժողովի հարցերից. Անատոլիայում Թուրքիան կապրի՞, թե՞ չի ապրի» հոդվածում խոսվում էր մայրաքաղաքը Ստամբուլից Անկարա տեղափոխելու, Բալկաններից և արաբական վիլայեթներից քաշվելու, Անատոլիայում թուրքական ազգային պետություն ստեղծելու մասին<sup>15</sup>: Բալկանյան պատերազմներից հետո խորհրդարանում իթքիհատական պատգամավորները նույնիսկ ուրախություն էին հայտնում, որ ազատվեցին Մակեդոնիայի նման գլխացավանքից և այժմ կարող են կենտրոնանալ Անատոլիայի վրա<sup>16</sup>: 1913 թ. մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ փաշայի սպանությունից հետո (նա միակն էր որ ի վիճակի էր հակազդելու Թալեաթ-Էնվեր երկյակին), երբ հաստատվեց Էնվեր-Թալեաթ-Ջեմալ եռյակի իշխանությունը, ի կատար անվեց քրիստոնյա ժողովուրդների հայրենագրկման ծրագիրը, որի գոհ դարձան փոքրասիական և Պոնտոսի տարածաշրջանի հույները, հայերն ու ասորիները<sup>17</sup>: Ծրագրի իրականացումն սկսվեց 1913 թվականին Եգեյան ծովի ափամերձ շրջանում ապրող հույն բնակչության տեղահանմամբ: Քանի որ համաշխարհային պատերազմը դեռ չէր բռնկվել, և չկային բարենպաստ պայմաններ՝ ծրագիրը բացահայտ կերպով, առանց մեծ տերությունների միջամտության իրագործելու համար, ուստի երիտթուրքերն ստիպված եղան գործելու ծածուկ եղանակով: 1914 թ. մայիսի 14-ին

<sup>13</sup> Տես *Murat Bardakçı*. Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi. Sadrazam Talat Paşa'nın özel arşivinde bulunan Ermeni tehciri konusundaki belgeler ve hususi yazışmalar. İstanbul, 2009, s. 35:

<sup>14</sup> Տես նույն տեղում, էջ 39:

<sup>15</sup> Տես *Ֆուադ Դունդար*, Նշ. աշխ., էջ 60:

<sup>16</sup> Տես նույն տեղում, էջ 59:

<sup>17</sup> Ֆուադ Դունդարի կարծիքով՝ Էնվեր-Թալեաթ-Ջեմալ եռապետության իշխանության հաստատումը Փոքր Ասիան և Արևմտյան Հայաստանը թուրքական հայրենիքի վերածելու ծրագրի մասերից մեկն էր (տես *Ֆուադ Դունդար*, Նշ. աշխ., էջ 62):

Չմյուռնիայի վալի Ռահմիին ներքին գործերի նախարար Թալեաթի տված գրավոր հանձնարարականում ասվում էր. «Լաղաքական պատճառների հաշվառմամբ չի կարելի հետաձգել, որ Փոքր Ասիայի ասիերին բնակվող հույները հարկադրաբար լքեն իրենց գյուղերը՝ Էրզրումի և Խալդիայի վիլայեթներ տեղափոխվելու համար: Եթե հրաժարվեն նշված վայրերը տեղափոխվելուց, բանավոր հրահանգներ տվեք մեր մահմեդական եղբայրներին, որպեսզի բոլոր տեսակի դաժանություններով հույներին հարկադրեն լքել բնակավայրերն իրենց համաձայնությամբ»<sup>18</sup>:

Դրանից հետո երիտթուրքերը ձեռնամուխ եղան իրենց ծրագրի առավել կարևոր ու հրեշավոր մասի իրականացմանը՝ ֆիզիկական ոչնչացմամբ Արևմտյան Հայաստանի բնիկ ու մի շարք վիլայեթներում դեռևս մեծամասնություն կազմող արևմտահայության հայրենագրկմանը:

Հայոց Մեծ Եղեռնն սկսվեց ավելի վաղ, քան ընդունվեց 1915 թ. մայիսի 30-ի «Տեղահանության ժամանակավոր օրենքը». օսմանյան արխիվային փաստաթղթերի համաձայն՝ դա տեղի ունեցավ 1915 թ. մարտի 2-ին Դորթյուլի հայերի տեղահանությամբ<sup>19</sup>: Թեև տեղահանության առաջին փրախ դարձավ կիլիկիահայությունը, սակայն 1915–1916 թթ. Մեծ Եղեռնի ժամանակ բռնության ենթարկված արևմտահայության մյուս հատվածների համեմատությամբ նա սակավ տուժեց: Կիլիկիահայությունը հիմնականում կորուստներ կրեց 1918 թվականի վերադարձից հետո՝ թուրքական ազգայնական շարժման տարիներին՝ 1919–1922 թթ.: Վերադարձից հետո կիլիկիահայությունը նույնիսկ կարողացավ զգալի չափով հետ բերել 1915 թ. հունիսի 10-ի «Պատերազմի և արտակարգ քաղաքական իրավիճակի պատճառով այլ շրջաններ տեղահանված հայերին պատկանող ունեցվածքի և հողի կառավարման վերաբերյալ հրահանգի» համաձայն բռնագանձված ունեցվածքը, որից նա վերջնականապես զրկվեց արդեն քեմալական կառավարության կողմից 1922 թ. ապրիլի 20-ի «Հայրենիքից փախած և կորած բնակչության շարժական և անշարժ գույքի կառավարման վերաբերյալ օրենքի» համաձայն<sup>20</sup>:

Կիլիկիահայության նկատմամբ համեմատաբար «հանդուրժողական» վերաբերմունքը բացատրվում էր մի շարք հանգամանքներով, որոնց թվում թուրք պատմաբանները նշում են նաև Ջեմալ փաշայի առանձնահատուկ վերաբերմունքը, քանի որ նա 1909 թ. Ադանայի կոտորածից հետո նշանակվել էր այդ շրջանի վալի և լավ հարաբերություններ էր հաստատել հայերի հետ: Հայ մեծահարուստները «կաշառքի» շնորհիվ կարողացան փրկվել՝ տեղահանության առաջին փուլում

<sup>18</sup> Տես *Գևորգ Վարդանյան*, Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914–1923 թթ.): Ե., 2012, էջ 73:

<sup>19</sup> Դորթյուլի հայերի տեղահանության որոշումը տես «Dörtüyl Ermenilerin Sevki, 15 R. 1333 (2 Mart 1915)». «Osmanlı Belgelerinde Ermeniler (1915–1920)». T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü. Ankara, 1994, s. 20:

<sup>20</sup> Ավելի հանգամանորեն տես *Nezhat Onaran*. Emvâl-i Metrûke Olayı. Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi. İstanbul, 2010, s. 326–333:



համեմատաբար անվտանգ կերպով տեղափոխվելով Սիրիա և Լիբանան\*։ Սակայն Ձեմալ փաշայի նման վերաբերմունքը կարելի է բացատրել ոչ թե հայերի նկատմամբ ունեցած համակրանքով, այլ արաբների նկատմամբ հակակրանքով։ Դրա հիմքում քաղաքական դրդապատճառներ էին. տեղահանված հայերին բնակեցնելով Սիրիայի և Լիբանանի քաղաքներում՝ Ձեմալ փաշան փորձում էր իր համար հենարան ստեղծել՝ ի հակակշիռ այդ երկրամասերի ապստամբած արաբ բնակչության, որին նա անխնա կերպով ճնշում էր<sup>21</sup>։ Կիլիկիահայությունը նվազ վտանգ էր ներկայացնում, քանի որ նա այդ երկրամասում եկվոր էր, և Կիլիկիան չէր մտնում Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների թվի մեջ և քաղաքական տեսակետից անջատման վտանգով հղի չէր։ Դա է պատճառներից մեկը, որ 1915–1916 թթ. Արևմտյան Հայաստանի համեմատությամբ Կիլիկիայում ավելի քիչ կոտորածներ կազմակերպվեցին, և որ կիլիկիահայությունը հիմնականում օգտագործվեց Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցման աշխատանքներում, հատկապես՝ Թորոսների լեռներում թունելների փորմանը, ինչի շնորհիվ նրանցից շատերին հաջողվեց փրկվել։

Բուն հայրենիքից (Արևմտյան Հայաստանից) դուրս անխնա բնաջնջված արևմտահայության մյուս մասը Փոքր Ասիայի կենտրոնական հատվածում՝ Անկարայի, Ամասիայի, Յուզգաթի և այլ շրջանների ապրող հայությունն էր։ Այդ շրջանների հայության ոչնչացման կազմակերպման առանձնահատկությունն այն էր, որ իրականացվել էր հիմնականում «հատուկ կազմակերպության» ջոկատների և ժանդարմերիայի միջոցով, քանի որ չկար քրդական տարրը։ Դա պատճառներից մեկն է, որ 1919–1921 թթ. դատավարությունների ժամանակ ավելի հեշտ փաստվեց, որ հայերի ոչնչացման հրահանգները տրվում էին կառավարության կողմից, և մարդկային կորուստները վատ կազմակերպված տեղահանության հետևանք չեն։ Օրինակ, Յուզգաթի գավառի հայության կոտորածների կազմակերպման գործում աչքի ընկավ Բողազյանի կայմակա՝ Քեմալը, որը խոստովանեց, որ ինքը միայն բարեխղճորեն կատարել է ստացված հրահանգը և 1919 թ. դատարանի որոշմամբ կախաղան հանվեց, ապա հռչակվեց «ազգի նահատակ»<sup>22</sup>։ Այդ շրջանների հայության բնաջնջումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Փոքր Ասիայի կենտրոնական հատվածը պետք է դառնար սպազա թուրքական հայրենիքի միջուկը, որտեղ քրիստոնյաների գոյությունն անընդունելի էր ու կթուլացներ ձևավորվող թուրքական ազգը։ Մայրաքաղաքը

\* Թուրք պատմաբան Հիքմեթ Օզեմիրը նույնիսկ հատուկ աշխատություն է նվիրել հայ տեղահանվածների նկատմամբ Ձեմալ փաշայի «մարդասիրական» վերաբերմունքի լուսաբանմանը (տես *Prof. Dr. Hikmet Özdemir. Cemal Paşa ve Ermeni Göçmenler. 4. Ordu İnsanı Yardımları. İstanbul, 2009*):

<sup>21</sup> 4-րդ բանակի շտաբի պետ գեներալ Ալի Ֆուադ Էրդենը նշում է, որ Ձեմալ փաշան փրկել է 200000 հայի (տես *Ali Fuad Erden. Birinci Dünya Harbi'nde Suriye Hatıraları. İstanbul, 2003, s. 152*):

<sup>22</sup> Տես *Vahakn N. Dadrian, Taner Akçam. «Teheir ve Taktik». Divan-ı Harb-i Örfi Zabıtları. İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922. İstanbul, 2008, s. 711–715*:

Ստամբուլից Անկարա տեղափոխելով՝ քեմալականներն ավարտին հասցրին թուրքական հայրենիքի ստեղծման երիտթուրքական ծրագրի երկրորդ փուլը:

Արևմտյան Հայաստանի վիլայեթների բնակչության տեղահանման և ոչնչացման հիմքում ի սկզբանե դրված էր հայրենագրկման ծրագիրը, որի համաձայն էլ կազմակերպվել էր ցեղասպանությունը: Հայկական վեց վիլայեթներում այն նախապատրաստվել էր ավելի հանգամանորեն, և հայ բնակչության ոչնչացման գործն ստանձնած «Հատուկ կազմակերպության»<sup>23</sup> հրոսակախմբերի մեծ մասը կենտրոնացված էր այդ տարածաշրջանում<sup>24</sup>, մոբիլիզացվել էին նաև քրդական ցեղախմբերը: Հայոց ցեղասպանության հիմնական «ճարտարապետներից» մեկը՝ Բեհաեդդին Շաքիրը, դեռ 1912 թ. փետրվար-մարտ ամիսներին այցելել էր Արևմտյան Հայաստանի մի շարք վիլայեթներ, և ներքին գործերի նախարարությունից նրա այցելության հետ կապված գաղտնի հրահանգներ էին ուղարկվել Էրզրումի, Դիարբեքի, Բիթլիսի ու Երզնկայի վալիներին: Շաքիրի այցի մասին պաշտոնապես հայտարարվեց, թե իբր նրա այցելության նպատակն է «ուսումնասիրել խղերայի համաճարակի հարցը, քանի որ այն զարման ամիսներին ձեր վիլայեթներում բռնկվելու ավելի մեծ հավանականություն ունի»<sup>25</sup>:

Արևմտյան Հայաստանի վիլայեթներից տեղահանված հայերի քարավաններից քչերն էին, այն էլ չափազանց նոսրացած վիճակում, հասնում Մեքքեների, Ռաս-ուլ-Այնի և Դեյր-Չորի (Դեր-Չոր) համակենտրոնացման ճամբարներ: Այսպես. ներքին գործերի նախարար Թալեաթի 1915 թ. մայիսի 18-ի հրամանով Էրզրում վիլայեթի հայությունը պետք է տեղահանվեր Ռիֆա և Մոսուլի վիլայեթների հարավային մաս և Չոր սանջակը<sup>26</sup>: Նույն շրջանները նախատեսված էին նաև Վանի վիլայեթի հայերի բնակեցման համար<sup>27</sup>: Սակայն Վանի հայության դաժան ճակատագիրը հայտնի է, իսկ օսմանյան արխիվային փաստաթղթերից հայտնի է դառնում, որ Էրզրումից տեղահանված հայերի քարավանը Էրզրումի և Էրզինջանի միջև ենթարկվել է քրդերի ավազակային հարձակմանը և կրել մեծ կորուստներ<sup>28</sup>: Հատկանշական է, որ Էրզրումի վալի Թահսինը, լավ իմանալով, թե ինչ է սպասում տեղահանվողներին, մի քանի կիլոմետր ուղեկցել է քարավանը՝ փորձելով պաշտպանել նրան:

<sup>23</sup> Տես Հ. Հ. Հատիկյան, «Հատուկ կազմակերպության» հայաջինջ գործունեությունը հայոց Մեծ Եղեռնի տարիներին: «ՀԲ», 2014, հմ. 3–4:

<sup>24</sup> Տես *Arif Cemil*. I Dünya Savaşı'nda Teşkilat-ı Mahsusa. İstanbul, 1997, s. 256:

<sup>25</sup> 1912 թ. Բեհաեդդին Շաքիրի արևելյան վիլայեթներ այցի մասին ավելի հանգամանորեն տես *Արսեն Ավագյան*, 1915 թ. ցեղասպանության նախապատրաստական փուլից. Բեհաեդդին Շաքիրի այցը արևելյան վիլայեթներ: «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. IV: Ե., 2006, էջ 245–251:

<sup>26</sup> Տես «Erzurum'dan Çıkarılan Ermenilerin Urfa ve Musul'un Güneye ve Zor sancağına Gönderilmesi, 4 B. 1333 (18 Mayıs 1915)». «Osmanlı Belgelerinde Ermeniler (1915–1920)». T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü. Ankara, 1994, s. 32–33:

<sup>27</sup> Տես «Van Vilayetindeki Ermenilerin Musul, Zor ve Urfa Yerleştirilmesi, 3 B. 1333 (23 Mayıs 1915)». «Osmanlı Belgelerinde Ermeniler (1915–1920)», s. 33–34:

<sup>28</sup> Տես նույն տեղում, էջ 44:

Մեծ Եղեռնի մյուս առանձնահատկությունն այն է, որ Արևմտյան Հայաստանի վիլայեթներից տեղահանվածները հիմնականում ոչնչացվում էին տեղահանվող վիլայեթի սահմաններում կամ հատուկ նախատեսված վայրերում, որտեղ միավորում էին մի քանի շրջաններից բերված քարավանները՝ սպանող կազմակերպելու նպատակով: Այսպես. Էրզրումի և Տրապիզոնի (այն հայերի, որոնք խեղդամահ չէին արվել ծովում) վիլայեթների հայության համար նման վայր դարձավ Եփրատ գետի Կամախի ձորը, որտեղ, գերմանացի սպա Հայնրիխ Ֆիրբյուխերի վկայությամբ, տասնյակ հազարավոր հայերի դաժանաբար սպանեցին<sup>29</sup>:

Ամայացած հայկական գյուղերում անմիջապես բնակեցվում էին Բալկաններից և այլ վայրերից ժամանած մուհաջիրները, որոնց սկզբնական շրջանում երկու տարի ժամկետով տրամադրվում էր հայերի գույքը, ինչից հետո այն դառնում էր նրանց սեփականությունը: Հայերի ունեցվածքի մի զգալի մասին տիրացան Մեծ Եղեռնին եռանդուն կերպով մասնակցած քրդական ցեղախմբերը:

Այն, որ թիրախը Արևմտյան Հայաստանն էր և առաջին հերթին պետք է բնաջնջվեր նրա բնիկ բնակչությունը, իսկ հատուկենտ փրկվածները, կորցնելով վերադարձի հնարավորությունը, պետք է հայրենագրվեին, փաստում են նաև երկու հանգամանք. տեղահանված հայերի ընդհանուր թիվն ու դրա ոչնչացված մասը և Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ վիլայեթներում օսմանյան իշխանությունների գործելակերպի համեմատությունը:

Տեղահանված ու զանգվածաբար կոտորված հայերի թվաքանակների համեմատության համար կարելի է օգտվել պաշտոնական օսմանյան և Անտանտի պետությունների տվյալներից: Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը՝ ներքին գործերի նախարար Թալեաթը, նշում է տեղահանված հայերի թիվը՝ 924158<sup>30</sup>: 1919 թ. օսմանյան պաշտոնական տվյալների համաձայն՝ հայերի կոտորատները կազմում են 800000<sup>31</sup>: Այս թիվը մոտ է նաև Չավեն Պատրիարքի՝ Անտանտի դաշնակիցներին ներկայացրած թվին՝ 850000: Անտանտի պետությունների տվյալներով՝ միայն սպանվածների թիվը կազմում է մոտ 600.000, փրկվել է իսլամացած ու թուրքացած մասը: Չոհվածների հիմնական մասը կազմում էր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների և հարակից շրջանների (Սվազ, Տրապիզոն) բնակչությունը:

Երկրորդ պատճառը, որ Արևմտյան Հայաստանի վիլայեթներից ավելի հեռու գտնվող շրջաններում տեղահանվածների նկատմամբ օսմանյան իշխանությունների վերաբերմունքը տարբերվում էր հայերի բուն օրրանում գործող իշխանությունների վերաբերմունքից, այն էր, որ Կոնիայի և հարակից վիլայեթների տեղահանված բնակչության մի մասը, ինչպես նաև կլիկիախախտության որոշ մասն օգտագործվեց Բեռլին-Բաղդադ երկաթգծի շինարարական աշխատանքներում:

<sup>29</sup> Տես *Генрих Фирбюхер*. Армения 1915 г. Что скрыло кайзеровское правительство от немецких подданных. Уничтожение Турцией культурного народа. Е., 1991, сс. 51–54:

<sup>30</sup> Տես *Մուրադ Բարդախչի*, Նշ. աշխ., էջ 77:

<sup>31</sup> Տես «800.000. Yalnız Taktıl Değil, Tehcir de Dahil. Cemal Beyefend'inin Beyanatı». «Alemdar», 17 Mart 1919:

Շատ քիչ վայրերում էր, որ տեղական իշխանություններն ընդդիմացան հայերի տեղահանման հրամանին, դրանք ևս հիմնականում գտնվում էին արևմտյան վիլայեթներում: Այսպես. Հալեայի վալի Ջելալ բեյը չկատարեց շրջանի հայերին տեղահանելու հրամանը, ինչի պատճառով նրան տեղափոխեցին Կոնիա: Կոնիայում, բացի տեղացի հայերից, Իզմիթի, Էսքիշեհիրի և Գարահիսարի շրջաններից եկած հայերի համար Ջելալ բեյը կարողացավ աշխատանք և Մուհաջիրների ֆոնդից աշխատավարձ ապահովել: Մինչև իր պաշտոնանկությունը Ջելալ բեյն ապահովեց, որ քաղաքում ապաստան գտնի մի շարք արևմտյան վիլայեթներից տեղահանված մոտ 30000 հայ: Մյուս օրինակը Կուֆահիա քաղաքի կառավարիչ Ֆահիլ Ալի օրինակն է: Նա ևս հրաժարվեց տեղահանման հրամանը կատարելուց, նույնիսկ շրջակա քաղաքների հայերին հավաքելով՝ նրանց համար աշխատատեղեր ստեղծեց, հայկական դպրոց հիմնադրեց: Թալեաթի կողմից Ստամբուլ կանչված Ֆախր Ալին հրաժարական ներկայացրեց, սակայն Թալեաթն այն չընդունեց և նրան վերադարձրեց իր պաշտոնին<sup>32</sup>:

Կարելի է հիշատակել նաև Դիարբեքիրի Լիջե շրջանի կառավարիչի օրինակը. նա փորձեց փրկել հայերին, բայց դրա համար վալի Մեհմեդ Ռեշիդն սպանեց նրան: Հայ բնակչության հանդեպ Վանի վալի Ջևդեթի և Դիարբեքիրի վալի Մեհմեդ Ռեշիդի դաժանությունը զարմացրել էր անգամ ժամանակակիցներին, նույնիսկ՝ Իթթիհատի բարձրաստիճան ղեկավարներից ոմանց: Թուրքական իշխանությունների ընտրովի վերաբերմունքը ևս վկայում է, որ Արևմտյան Հայաստանի բնակչության՝ որպես բնիկ, իր հայրենիքում ապրող զանգվածի նկատմամբ վերաբերմունքը տարբերվում էր իրենց բնօրրանից դուրս ապրող հայերի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքից:

Հայերի հայրենագրկման և փրկվածների՝ իրենց հայրենիք վերադարձը կանխելու հանգամանքները կարևոր դեր խաղացին 1919–1922 թթ. թուրքական ազգայնական շարժման համար, որի ընթացքում 1920 թ. հաստատութենական առումով ձևակերպվեցին թուրքական հայրենիքի սահմանները՝ Ազգային ՌԻխտի ընդունմամբ: Հայրենագրկման և հայերի ունեցվածքին տիրանալու հանգամանքը կարևոր նշանակություն ունեցավ նաև Մուսթաֆա Քեմալի կառավարությանը և չերքեզների աջակցության հարցում:

Հայերի հայրենագրկման իրավական ձևակերպումը դարձավ 1923 թ. Լոզանի պայմանագիրը, որի դրույթները արևմտահայությանը վերածեցին կրոնական փոքրամասնության:

<sup>32</sup> Stü Ahmed Emin Yalman, Yakin Tarihte Gördüklerimiz ve Geçirdiklerimiz, cilt 1888–1922 İstanbul 1997, s. 400:

ПРОГРАММА ЛИШЕНИЯ РОДИНЫ ЗАПАДНОГО АРМЯНСТВА  
В СТРАТЕГИИ МЛАДОТУРОК ПО СОЗДАНИЮ ТЕРРИТОРИИ  
С ОДНОРОДНЫМ ТУРЕЦКИМ НАСЕЛЕНИЕМ

*А. Г. АВАГЯН, доктор исторических наук, профессор, ученый-аналитик  
Аналитического центра ИИСИ МО РА*

РЕЗЮМЕ

До XIX века основой турецкого национализма была не этническая, а религиозная общность. Понятие родины подразумевало не «нацию-государство», а территорию, населенную мусульманами. Правящая верхушка Османской империи мыслила имперскими категориями, избегая слова «турок», имевшего отрицательную коннотацию, и предпочитала слово «османец». В конце XIX в. на фоне прогрессирующего упадка и намечающегося развала империи получила развитие идея о возрождении мощи империи путем создания «родины» – территории с гомогенным турецким населением, образованным посредством ассимиляции турками проживающих в тех же ареальных границах иных этносов.

Однако руководители младотурок уже в 1909 г. стали понимать, что все их законодательные инициативы в парламенте по «добровольной ассимиляции» народов империи обречены на провал из-за сопротивления христианских народов. На основании ряда фактов можно предположить, что Центральный комитет партии «Единение и прогресс» уже с 1909 года разрабатывал стратегию создания в Малой Азии (включая Армянское нагорье) «родины турок».

В 1914 – 1923 гг. младотурецкое и кемалистское правительства осуществили истребление и лишение родины тех народов, ареалы которых совпадали с границами проживания турок – геноцид армян и ассирийцев, массовую резню греков Понта и Малой Азии. Что касается курдов, лазов, черкезов и других нетюрских мусульманских меньшинств, проживавших на указанной территории, то с 1925 года в республиканской Турции начали проводить политику их насильственной ассимиляции и преследований.

В 1915 – 1916 гг. Геноцид армян был осуществлен последовательно и с особенной жестокостью в основном в Западной Армении (в шести армянских вилайетах), а в других местах (вне этой территории) отношение к армянскому населению было значительно мягче. Это объясняется тем, что Западная Армения входила в состав той территории, на которой планировалась создание «родины турок» и именно армянское население, проживавшее на своей исторической родине, представляло угрозу для планов младотурок. Армяне же, проживавшие на территориях вне Западной Армении (в первую очередь, в Киликии) подверглись резне и экспроприации имущества позднее – в 1918 – 1923 гг.

Лишение армян родины и недопущение возвращения выживших армян-автохтонов на места своего исторического проживания сыграли важную роль в турецком националистическом движении 1919 – 1922 гг., во время которого (в 1920 г.) принятием Национально-обетного институциональным образом оформились границы «турецкой родины». Юридическим оформлением лишения армян родины стал Лозаннский договор 1923 года, по которому западное армянство превратилось в религиозное меньшинство.

THE PROGRAM OF PATRIOCIDE TOWARDS  
WESTERN ARMENIANS IN THE YOUNG TURKS' STRATEGY  
FOR ESTABLISHING THE TERRITORY WITH HOMOGENEOUS  
TURKISH POPULATION

*A. G. AVAGYAN, Doctor of History, Professor, Research Fellow, Analytical Center,  
INSS, MOD, RA*

SUMMARY

The basis of Turkish nationalism had not been an ethnic but rather a religious community till the 19th century. The idea of homeland implied not a “nation – state”, but the territory inhabited with Muslims. The ruling clique of the Ottoman Empire thought in imperial categories refraining from the word «Turk», which had a negative connotation, instead it preferred the word «Ottomanian». At the end of the 19th century the idea of regaining the Empire's power by means of establishing a «homeland» – a territory with homogeneous Turkish population formed by the assimilation of other ethnic groups residing within the same areal boundaries by Turks – evolved against the background of progressive decline and outlined downfall of the Empire.

However, the Young Turks' leaders began already to realize that all their legislative initiatives on “voluntary assimilation” of the Empire's nations taken in the parliament were doomed to failure because of the Christian peoples' resistance. Based on a number of facts we can assume that the Central Committee of the “Unity and Progress” Party had been elaborating the strategy of creating “Turks' homeland” in Asia Minor (including the Armenian Highland) since 1909.

In 1914 – 1923 the Young Turk and Kemalist governments carried out the extermination and patriocide of those nations, the natural habitats of which coincided with the boundaries of Turks' habitation – i. e., the genocides of the Armenians and Assyrians, slaughter of the Greeks of Pontus and Asia Minor. As for the Kurds, Lazes, Circassians and other non-Turkic Muslim minorities residing in the mentioned territory, since 1925 the policy of their forced assimilation and persecution had been initiated in the republican Turkey.

In 1915 – 1916 the Armenian Genocide was committed consistently and with outrageous cruelty mainly in Western Armenia (in six Armenian vilayets), but in other places (beyond that territory) the attitude towards the Armenian population was considerably more temperate. This was due to the fact that Western Armenia was part of the territory in which the establishment of “Turks' homeland” was planned and it was the Armenian population living in his historic homeland that posed a threat to the Young Turks' plans. As for the Armenians living in the territories beyond Western Armenia (primarily in Cilicia), they were subjected to massacres and expropriation of property later – in 1918 – 1923.

The patriocide of the Armenians and forbidding the survived autochton Armenians from returning to the places of their historic residence did play a significant role in the 1919 – 1922 Turkish nationalist movement at the time of which the boundaries of “Turkish homeland” were formed by adopting institutionally the National Oath (National Pact) (1920). The 1923 Treaty of Lausanne became the legal execution of the Armenian patriocide. It turned Western Armenians into a religious minority.

## ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ա. Զ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան,  
ԵԱՀԿ-ում առաքելության ղեկավար



Թեև 1894–1896 թթ. և 1909 թ. հայկական կոտորածները ԱՄՆ-ում բարձրացրել էին գայրույթի մեծ ալիք, սակայն մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Միացյալ Նահանգների և Օսմանյան կայսրության պաշտոնական հարաբերությունները եղել են բարեկամական և որևէ լուրջ փորձության չեն ենթարկվել: Օգտվելով Եվրոպայի հարցերին չմիջամտելու՝ Նախագահ Ջեյմս Մոնրոյի դոկտրինի սկզբունքներից, ինչպես նաև Օսմանյան կայսրության և եվրոպական տերությունների միջև ձևավորված բարդ հարաբերություններից՝ ամերիկյան դիվանագիտությունը հաջողությամբ կարողացավ ապահովել ԱՄՆ-ի տնտեսական շահերի և միսիոներների գործունեության պաշտպանությունը<sup>1</sup>:

Եթե 19-րդ դարի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը սովորաբար անվանում են «ամերիկյան մայրցամաքայնության», «մեկուսացվածության» կամ «ռեալիստական» քաղաքականություն, ապա առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում այն դարձավ «իդեալիստական» ու ԱՄՆ-ի 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի\* անունով կոչվեց «վիլսոնյան»<sup>2</sup>: «Իդեալիստական ինտերնացիոնալիզմի» քաղաքականության այդ նոր ուղեգիծը նշանավորեց ԱՄՆ-ի մուտքը համաշխարհային քաղաքականություն՝ աշխարհում «խաղաղություն» հաստատելու և «ժողովրդավարություն» տարածելու նպատակով:

Վիլսոնի նախագահության տարիները (1913–1921 թթ.) համընկան հայ ժողովրդի համար մի ճակատագրական ժամանակաշրջանի հետ, երբ արևմտահայությունը ենթարկվեց ցեղասպանության, երբ առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած տերությունների անհետևողական ու անտարբեր քաղաքականության հետևանքով հայ ժողովուրդը գրկվեց իր պատմական հայրենիքում ապրելու, համախմբվելու և անկախ պետականությունը պահպանելու հնարավորությունից: Հողվածում փորձ է արված վերլուծելու Հայկական հարցում ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Վիլսոնի վարած քաղաքականությունը:

<sup>1</sup> Տե՛ս *Արման Կիրակոսյան*, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար – 1914 թ.): Ե., 2014:

\* Թոմաս Վուդրո Վիլսոն (1856–1924)՝ ամերիկյան պետական գործիչ, ԱՄՆ-ի 28-րդ Նախագահը (1913–1921 թթ.) դեմոկրատական կուսակցությունից: Փիլիսոփայության դոկտոր (1886), Փրինստոնի համալսարանի պրոֆեսոր (1890–1902 թթ.), «Տասնչորս կետեր» խաղաղության ծրագրի հեղինակ, Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1919):

<sup>2</sup> Տե՛ս *Richard Russell*. American Diplomatic Realism: A Tradition Practised and Preached by George F. Kennan. «Diplomacy and Statescraft», November, 2000, Vol. II, Issue 3, PP. 159–183:



1913 թ. ԱՄՆ-ի նորընտիր Նախագահն Օսմանյան կայսրությունում դեսպան նշանակեց ծագումով հրեա Հենրի Մորգենթաուին, որի՝ հայկական կոտորածների և տեղահանությունների վերաբերյալ ամերիկյան կառավարությանը ներկայացրած հեռագրերն ու նամակները համակրանքի և զայրույթի նոր ալիք բարձրացրին ոչ միայն հասարակական, այլև իշխանական շրջաններում<sup>3</sup>: Դեռ 1911 թ. Մորգենթաուն և ռաբբի Ստեֆեն Վայզը Նյու Ջերսիի նահանգապետ Վուդրո Վիլսոնին հրավիրել էին մասնակցելու Մանհեթենի սինագոգի հիմնադրման հորելյանին: Ծաշի ժամանակ Մորգենթաուն նստել էր Վիլսոնի կողքին և նրան առաջարկել իր «անկեղծ բարոյական և ֆինանսական աջակցությունը»: Մորգենթաուի համար այդ հանդիպումը շրջադարձային էր<sup>4</sup>: Նա դարձավ Վիլսոնի 1912 թ. նախագահական քարոզարշավի հիմնական հովանավորներից մեկը: Դեմոկրատական կուսակցությանն ու Վիլսոնի ընտրարշավին նրա նվիրվածությունը պատճառ դարձավ նրա նկատմամբ նոր Նախագահի «մեծ վստահության» համար:

Մորգենթաուն սկզբից հրաժարվեց դեսպանի պաշտոնից՝ պատասխանելով, որ «որևէ նշանակում չի կարող դիտարկվել որպես հրեական», և որ «հրեաներին դեսպանի պաշտոնում նշանակումները չպետք է սահմանափակվեն միայն Թուրքիայի ներկայացուցչությունում աշխատանքով»\*: Սակայն շուտով Մորգենթաուն համաձայնում է ընդունել Նախագահի առաջարկը՝ մեծապես ռաբբի Ստեֆեն Վայզի հորդորով<sup>5</sup>:

Արթուր Լինքի հրապարակած՝ «Վուդրո Վիլսոնի փաստաթղթերը» ժողովածուն վկայում է, որ դեսպան Մորգենթաուի տեղեկատվության շնորհիվ ԱՄՆ-ի Նախագահը քաջատեղյակ էր, թե ինչ է կատարվում հայերի հետ: Վիլսոնի նամակներն ու ելույթները ցույց են տալիս, որ նա համակրում էր հայերին և մտահոգություն էր հայտնում նրանց ճակատագրի վերաբերյալ<sup>6</sup>: 1915 թ. հայկական ջարդը Վիլսոնի համար «բարդ և չլուծված խնդիր էր»<sup>7</sup>: Թեև ԱՄՆ-ը չեզոք էր աշխարհամարտի առաջին տարիներին, սակայն Վիլսոնի վարչակազմը փորձ չկատարեց դադարեցնելու կոտորածները:

1915 թ. վերջին Վիլսոնի գլխավոր խորհրդական գնդապետ Էդվարդ Հաուզը Նախագահին խորհուրդ էր տալիս, որ ԱՄՆ-ի կառավարությունը պաշտոնապես

<sup>3</sup> Տես «United States Official Records on the Armenian Genocide, 1915–1917». Ed. by Ara Sarafian. Princeton and London: Gomidas Institute, 2004:

<sup>4</sup> Տես *Henry Morgenthau. Ambassador Morgenthau's Story*. Detroit: Wayne State University Press, 2003, P. 4:

\* Մորգենթաուն նկատի ուներ Թուրքիայում նախկին դեսպան, նույնպես ծագումով հրեա Օսկար Շարաուսին:

<sup>5</sup> *Արման Կիրակոսյան*, Նշ. աշխ., էջ 365:

<sup>6</sup> Տես «The Papers of Woodrow Wilson». Ed. by Arthur S. Link. Princeton, NJ: Princeton University Press, August 7–November 19, 1916, Vol. XXXVIII, P. 539:

<sup>7</sup> Տես *John Milton Cooper. A Friend in Power? Woodrow Wilson and Armenia. «America and the Armenian Genocide of 1915»*. Ed. by Jay Winter. Cambridge: Cambridge University Press, 2003, P. 104:

«բողոք հայանի հայկական կոտորածների կապակցությամբ»<sup>8</sup>: Սակայն հայերի նկատմամբ, բացի համակրանքի արտահայտություններից, որևէ քայլ այդպես էլ չկատարվեց: Նույն թվականի դեկտեմբերին Վիլսոնը Փրինստոնի իր ուսանողական ընկերոջը, որը միսիոներ էր Թուրքիայում, գրում էր, որ «հայերի հետ կապված իրավիճակն իրոք, որ ավելի քան զարհուրելի է: Դու պետք է վստահ լինես, որ մենք ամեն ինչ անում ենք, դիվանագիտական հնարավորությունների սահմաններում, այդ սուսկալի արարքը դադարեցնելու համար»<sup>9</sup>: Որոշ հեղինակներ նույնիսկ նշում են, որ Հայոց ցեղասպանության նկատմամբ Վիլսոնի նման մոտեցումը չի կարելի համեմատել երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Հրեական ողջակիզման նկատմամբ Ֆրանկլին Ռուզվելտի վերաբերմունքի հետ<sup>10</sup>:

Միևնույն ժամանակ, Վիլսոնի վարչակազմն իր օժանդակությունը բերեց արևմտահայության համար օգնության կազմակերպման գործին: 1915 թ. սեպտեմբերին Մորգենթաուն Պետդեսպարտամենտին ուղղված հեռագրում առաջարկեց ստեղծել հայերի համար ամերիկյան օգնության կազմակերպություն<sup>11</sup>: Միսիոներական առաքելությունների ամերիկյան խորհրդի քարտուղար Ջեյմս Բարտոնն անմիջապես դիմեց Վիլսոնի դասընկերոջը՝ հայտնի բարեգործ, Կոստանդնուպոլսի Ռոբերտ քոլեջի հոգաբարձուների խորհրդի անդամ, Բեյրութի համալսարանի հիմնադիրներից մեկին՝ Քլիվլենդ Դոջին, որն էլ իսկույն կեք հիմնադրեց Հայկական ջարդերի կոմիտե: Կոմիտեի աշխատանքներում որպես գանձապահ ընդգրկվեց նաև Չառլզ Քրեյնը, որը նույնպես Վիլսոնի մտերիմ ընկերներից էր<sup>12</sup>: 1916 թ. օգոստոսի 31-ին Վիլսոնը նույն թվականի հոկտեմբերի 21-ն ու հոկտեմբերի 22-ը հայտարարեց Միացյալ Նահանգների ժողովրդի համար միասնական օրեր՝ հայ վիրկավածներին օգնության համար նվիրատվություններ կատարելու համար<sup>13</sup>: Նույն տարվա ընթացքում՝ իր վերընտրական քարոզարշավի ժամանակ, նա խոսեց Հայաստանին օգնելու մասին: Մասնավորապես՝ հոկտեմբերի 26-ին Ֆինցինաստիում ունեցած ելույթում նա նշում էր. «Դուք լավ գիտեք մեր ազգի զգացմունքները պետականություն չունեցող այն ժողովուրդների նկատմամբ, որոնք քաղաքական դերակատարություն չունեն Եվրոպայում, ինչպես, օրինակ, հայերը, ինչպես Լեհաստանի ժողովուրդը, և ...մեր սիրտը ցավում է այդ անօգնական ժողովուրդների համար, որոնք ջախջախվել են, և որոնց մենք ցանկանում ենք փրկել»<sup>14</sup>:

<sup>8</sup> Տես նույն տեղում:

<sup>9</sup> Տես նույն տեղում:

<sup>10</sup> Տես նույն տեղում, էջ 103:

<sup>11</sup> Տես *James L. Barton. Story of Near East Relief (1915–1930)*. New York: Macmillan, 1930, P. 40:

<sup>12</sup> Տես *Peter Balakian. The Burning Tigris. The Armenian Genocide and America's Response*. New York: Harper Collins Publishers, 2003, PP. 279–280:

<sup>13</sup> Տես նույն տեղում, էջ 304:

<sup>14</sup> Տես «The Papers of Woodrow Wilson», August 7–November 19, 1916, Vol. XXXVIII, P. 539:

ԱՄՆ-ի Կոնգրեսը 1917 թ. ապրիլին պատերազմ հայտարարեց Գերմանիային և Ավստրո-Հունգարիային: Սակայն Վիլսոնը չէր ցանկանում պատերազմ հայտարարել նաև Օսմանյան կայսրությանը, քանի որ համոզված էր, որ Թուրքիան իր նախաձեռնությամբ չի մտել պատերազմի մեջ և եղել է ընդամենը Գերմանիայի գործիքը: Պատասխանելով Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի հարցապնդմանը՝ պետքարտուղար Ռոբերտ Լենսինգը գրեց, որ՝ առաջին. Միացյալ Նահանգները որևէ մտադրություն չունի ռազմական ուժ կիրառելու արևելյան ճակատում, երկրորդ. Թուրքիայի դեմ պատերազմը կարող է վտանգել ամերիկյան միսիոներության և կրթական հաստատությունների շահերը, և երրորդ. պատերազմը կարող է հրահրել քրիստոնյաների և հրեաների նոր կոտորածներ<sup>15</sup>:

Վիլսոնի դիրքորոշման վրա մեծ ազդեցություն ունեին նաև Օսմանյան կայսրությունում աշխատող ամերիկյան միսիոներները: Մի կողմից՝ երկու տասնամյակ շարունակ ԱՄՆ-ի հասարակական կարծիքը զայրացած էր թուրքերի վրա՝ հայերի հանդեպ իրագործած հանցագործությունների համար և պատերազմ էր պահանջում: Մյուս կողմից՝ միսիոներները գիտակցում էին, որ պատերազմը կարող է իրենց շահերի համար լինել կործանարար: Թեև կոտորածների ընթացքում միսիոներների ունեցվածքն առգրավվել էր և մասամբ ոչնչացվել, պատերազմ հայտարարելուց հետո այն կարող էր ընդհանրապես բռնագրավվել, իսկ միսիոներները՝ վտարվել Օսմանյան կայսրությունից՝ ապարդյուն դարձնելով շուրջ հարյուր տարվա իրենց աշխատանքը: Նույնիսկ Բարտոնը, որն այդքան կարևոր աշխատանք էր կատարում հայերին օժանդակելու գործում, այժմ դարձել էր Թուրքիայի դեմ պատերազմելու հիմնական հակառակորդը: Բարտոնն ու նրա կողմնակիցներն օգտագործում էին նաև այն փաստարկը, որ պատերազմի դեպքում թուրքական իշխանություններն ամբողջովին կոչնչացնեն հայերին, որոնք կգրկվեն իրենց միակ օգնականներից<sup>16</sup>:

Այս իրավիճակը օգտագործեց ԱՄՆ-ի նախկին Նախագահ Թեոդոր Ռուզվելտը, որը քննադատեց Վիլսոնի «թուլամորթ» չեզոքությունն ու հրաժարումը Հայաստանի համար «արդյունավետ գործողությունից»: Ռուզվելտը նաև նշեց, որ Թուրքիային պատերազմ հայտարարելու հարցում Վիլսոնի ձախողումը սահմանափակելու է ԱՄՆ-ի հնարավորությունները պատերազմից հետո Օսմանյան կայսրության հետ խաղաղության պայմանների մասին բանակցություններում<sup>17</sup>:

1918 թ. դեսպան Մորգենթաուն հրապարակեց իր հայտնի հուշերը<sup>18</sup>: Նույն թվականի հունիսին նա Նախագահ Վիլսոնին առաջարկեց իր գրքի հիման վրա նկարահանել հայկական կոտորածների և դրանց համար Գերմանիայի պատաս-

<sup>15</sup> Տես *Lloyd E. Ambrosius. Wilsonian Diplomacy and Armenia: the limits of power and ideology. «America and the Armenian Genocide of 1915»,* PP. 115–116; *Samantha Power. A Problem from Hell. America and the Age of Genocide.* New York: Basic Books, 2002, P. 13:

<sup>16</sup> Տես *Փիլիքի Բալաբյան, Նշ. աշխ., էջ 304–205:*

<sup>17</sup> Տես նույն տեղում, էջ 307–308:

<sup>18</sup> Տես *Henry Morgenthau. Ambassador Morgenthau's Story.* Garden City: Doubleday, Page and Company, 1918:

խանավորության մասին մի ֆիլմ, որն «ամերիկյան ժողովրդին ամբողջությամբ կցուցադրի գերմանական ագրեսիայի իրական պատկերը»<sup>19</sup>: Մի քանի օր անց Վիլսոնը մերժեց Մորգենթաուի գաղափարը՝ նշելով, որ ֆիլմերում ներկայացված սարսափները «ճիշտ վերաբերմունք» չեն ստեղծում, մանավանդ, երբ «մենք դեռևս իրական ոչինչ չենք կարող անել հայկական կոտորածների հարցում»<sup>20</sup>:

1918 թ. հունվարին Վիլսոնն առաջ քաշեց խաղաղության իր «Տասնչորս կետեր» ծրագիրը՝ նպատակաուղղված միջազգային հարաբերություններում ԱՄՆ-ի դերի մեծացմանը: Ծրագրի տասներկուերորդ կետում ասված էր. «Ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական հատվածներին պետք է տալ անվտանգ ինքնավարություն, իսկ մյուս ազգություններին, որոնք այժմ Թուրքիայի տիրապետության տակ են, պետք է տրամադրել կյանքի լիարժեք անվտանգություն և ինքնավար զարգացման բացարձակ հնարավորություն»<sup>21</sup>: Վիլսոնի խորհրդականներից մի քանիսը փորձում էին Նախագահին համոզել շեշտել Հայաստանին ինքնավարություն տրամադրելու անհրաժեշտությունը և նույնիսկ ներկայացրել էին հետևյալ բովանդակությամբ մի հուշագիր. «Անհրաժեշտ է Թուրքական կայսրության ենթակա ազգերին ազատել կեղեքումից և վատ կառավարումից: Դա ենթադրում է նվազագույնը՝ Հայաստանի համար ինքնավարություն»:

Սակայն Հաուզը կարողացավ Նախագահին համոզել դա չնշել ծրագրում: Ծրագրի սրբագրման ընթացքում Վիլսոնը կրկին ցանկություն հայտնեց տեքստում հիշատակելու Հայաստանը, Միջագետքն ու Սիրիան, սակայն Հաուզը դարձյալ համոզեց նրան պահպանել տասներկուերորդ կետի ընդհանուր ձևակերպումը<sup>22</sup>:

Գիտակցելով, որ հայության մման նոր ասպարեզ եկող ազգերը կարիք են ունենալու «խրատական անցումային շրջանի», Վիլսոնը համարում էր, որ նրանք Ազգերի լիգայի և մանդատային համակարգի միջոցով պետք է պաշտպանված լինեն նախկին կայսրությունների կամ մեծ տերության կողմից կրկին «կլանված» լինելու վտանգից<sup>23</sup>:

1918 թ. դեկտեմբերի 19-ին Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ, հանրապետական Հենրի Բեյբոտ Լոջը, որը Թ. Ռուզվելտի գաղափարակիցն էր և Վ. Վիլսոնի Ազգերի լիգայի գաղափարի ու այդ կազմա-

<sup>19</sup> Տես «Morgenthau to Wilson, 11 June 1918». «The Papers of Woodrow Wilson», March 13-May 12, 1918, Vol. XLVIII, P. 284:

<sup>20</sup> Տես «Wilson to Morgenthau, 14 June 1918». «The Papers of Woodrow Wilson», March 13-May 12, 1918, Vol. XLVIII, P. 311:

<sup>21</sup> «President Wilson Fourteen Points», Delivered in Joint Session, January 8, 1918 ([wwi.lib.byu.edu/index.php/President\\_Wilson's\\_Fourteen\\_Points](http://wwi.lib.byu.edu/index.php/President_Wilson's_Fourteen_Points)).

<sup>22</sup> Տես *Laurence Evans*. United States Policy and the Partition of Turkey, 1914-1924. Baltimore: Johns Hopkins University Press, 1965, P. 74; *Richard G. Hovannisian*. The Armenian Genocide and US Post-War Commissions. In: «America and the Armenian Genocide of 1915». Cambridge, UK: Cambridge University Press, 2003, P. 258; *Փոփոքր Բալարյան*, Նշ. աշխ., էջ 300:

<sup>23</sup> Տես *Herbert Hoover*. The Ordeal of Woodrow Wilson. Washington D.C.: The Woodrow Wilson Center Press, 1992, P. 222:

կերպությունում ԱՄՆ-ի մասնակցության հակառակորդը, Մեծատի քննարկմանը ներկայացրեց մի բանաձև, որում կոչ էր անում ստեղծելու Միջերկրականից մինչև Սև ծով ձգվող տարածքով անկախ Հայաստան: Այդ գաղափարին սատարում էին 1918 թ. վերջին ստեղծված Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն, որի հիմնադիր անդամներից էին Գերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջեյմս Ջերարդը և 1916 թ. նախագահական ընտրությունների թեկնածու, հանրապետական Չառլզ Էվանս Հյուզը, ինչպես նաև Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեն, որը Կոնգրեսի որոշմամբ դարձավ Մերձավոր Արևելքի օգնության կոմիտե: 1919 թ. փետրվարի 8-ին այդ կազմակերպությունները Նյու Յորքի «Պլազա» հյուրանոցում կազմակերպեցին անկախ Հայաստանի գաղափարին նվիրված գալա երեկո, որին ներկա էին շուրջ 400 հայտնի ամերիկացիներ: Այդ նախաձեռնությունն իրենց աջակցության հեռագրերով ողջունեցին Վ. Վիլսոնը Փարիզից, ինչպես նաև Թ. Ռուզվելտը<sup>24</sup>:

1919 թ. սկզբին Վիլսոնը համոզվել էր Հայաստանի համար գործելու անհրաժեշտության մեջ՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ պատերազմի ընթացքում ԱՄՆ-ը Օսմանյան կայսրության նկատմամբ հանդես էր բերել չեզոքություն, և գիտակցելով, որ Հայաստանի մանդատի ստանձնումը կարող է մարմնավորել նրա «Տասնչորս կետերի» ինքնորոշման և արդարության գաղափարները: «Ես կարծում եմ՝ Հայաստանի նման երկրների համար գոյություն ունի խոստումնալից սկիզբ», գրեց Վիլսոնը<sup>25</sup>:

Ազգային ինքնավարության գաղափարին Վիլսոնի նվիրումն նրա «համաշխարհային ժողովրդավարության» տեսլականի բաղադրիչն էր: 1919 թ. Փարիզի խաղաղության խորհրդածողովին նա ներկայացավ ժողովրդավարություն հաստատելու անհողող մտադրությամբ: Նա հավատացած էր, որ ազգերի միջև հարաբերությունների հիմքում պետք է դրված լինեն բարոյականությունը, «բարոյական չափանիշները»: Նրա համար աշխարհամարտը «ազատագրման պատերազմ էր»: Նրա համոզմամբ, փոքր ազգերի պարագայում պատերազմը պայքար էր «իրենց բախտը որոշելու, արդարություն պահանջելու համար»: Ըստ Վիլսոնի՝ Ազգերի լիգան պետք է որևէ կայացած պետության լիազորեր ստանձնելու ձևավորվող ազգի հովանավորն ու վարչարարը լինելու պատասխանատվությունը<sup>26</sup>:

Երբ Փարիզում խոսք էր բացվում Հայաստանի մասին, դաշնակիցները միևնույն ժամանակ և՛ մտահոգություն էին հայտնում, և՛ տատանողականություն: Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը պնդում էր, որ Հայաստանն այն երկրներից է, որոնք կարիք ունեն պաշտպանության և մանդատային համակարգի կիրառման, քանի որ կորցրել էր բնակչության մի զգալի մասը՝ ենթարկվելով կոտորածների, բռնությունների և թալանի: Սակայն Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան դժկամություն էին ցուցաբերում Հայաստանի մանդատն

<sup>24</sup> Տես *Փրիեր Բալաբյան*, Նշ. աշխ., էջ 310–311:

<sup>25</sup> Տես *Հերբերտ Հուլեր*, Նշ. աշխ., էջ 226:

<sup>26</sup> Տես *Woodrow Wilson. Self-Determination and the Rights of Small Nations*. Dublin: Candle Press, 1918, PP. 18–19:

ստանձնելու գործում, քանի որ, ըստ Լլոյդ Ջորջի, «նրանք արդեն ծանրաբեռնված էին այլ մանդատներով, որոնք պատրաստվում էին ստանձնել Միջագետքում, Պաղեստինում, Անատոլիայի այլ մասերում, Սիրիայում և Աֆրիկայում»<sup>27</sup>: Լլոյդ Ջորջը առաջարկում էր Վիլսոնին, որպեսզի ԱՄՆ-ը հանդես գա որպես «մանդատային տերություն առնվազն Հայաստանի և սևծովյան նեղուցների համար»<sup>28</sup>: Այդ ուղղությամբ Փարիզում գործունեություն էր ծավալել նաև հայկական պատվիրակությունը<sup>29</sup>: Վերջապես մարտի 7-ին Հաուզը հավաստիացրեց Լլոյդ Ջորջին և Ֆրանսիայի Նախագահ Ժորժ Կլեմանսոյին, որ «ԱՄՆ-ը, անշուշտ, կվերցնի մանդատը»: Սակայն մեկ շաբաթ անց՝ մարտի 14-ին, երբ Մեծ Քառյակը (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Իտալիա) քննարկում էր Հայաստանի հարցը, Վիլսոնը հայտարարեց, թե՛ քանի որ «Միացյալ Նահանգներն այնքան էլ տրամադրված չէ ռազմական պատասխանատվություն ստանձնելու Ասիայում», ինքը կհամաձայնվի մանդատը վերցնելու միայն ամերիկյան Սենատի համաձայնությամբ<sup>30</sup>:

Փարիզի խաղաղության խորհրդաժողովում դաշնակիցները համաձայնության եկան Հայաստանի անկախության հարցում: Այդ ծրագիրն իրագործելու համար նրանք որոշեցին ուսումնասիրության նպատակով Թուրքիա գործուղել միջազգային հանձնաժողով: Սակայն շուտով Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան որոշեցին այդ առաքելությունը թողնել ԱՄՆ-ին: 1919 թ. գարնանը, երբ Կոստանդնուպոլսում տեղի էին ունենում երիտթուրքերի դատավարություններ, իսկ Հայաստանի Հանրապետությունը փորձում էր պաշտպանվել Թուրքիայի հարձակումներից, Վիլսոնը որոշեց երկու փաստափաստաքառաքելություն ուղարկել Թուրքիա: Դրանց նպատակն էր մանդատային ծրագրի հնարավորությունները պարզելու համար ուսումնասիրել պատերազմում պարտություն կրած կայսրությունում տիրող սոցիալական և քաղաքական իրավիճակը: Առաջին հանձնաժողովը ղեկավարելու համար Վիլսոնն անձամբ ընտրեց Օբեռլինի քոլեջի նախագահ աստվածաբան Հենրի Քինգին և իր մտերիմ ընկեր, Հայկական ջարդերի կոմիտեի նախկին քարտուղար, Կոստանդնուպոլսի կանանց քոլեջի հոգաբարձուների խորհրդի նախագահ Չառլզ Քրեյնին<sup>31</sup>:

Քինգ-Քրեյնի հանձնաժողովի գեկուցագրում նշվում էր, որ «հայերին պետք է տրամադրվի որոշակի տարածք», որը պետք է ունենա «ելք դեպի Սև ծով» և կազմի «ինքնուրույն, անկախ պետություն»: Այդ պետությունը պետք է ձևավորվի Ռուսաստանի և Թուրքիայի նախկին տարածքներից և ընդգրկի Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի պատմական հայկական նահանգները<sup>32</sup>: Հանձնա-

<sup>27</sup> *Stu David Lloyd George. Memoirs of the Peace Conference. New Haven: Yale University Press, 1939, P. 810:*

<sup>28</sup> *Stu Margaret Macmillan. Paris 1919. Six Months that Changed the World. New York: Random House Trade Paperbacks, 2002, P. 375:*

<sup>29</sup> Տես նույն տեղում, էջ 377:

<sup>30</sup> Տես նույն տեղում, էջ 379:

<sup>31</sup> *Stu Harry N. Howard. The King-Crane Commission. Beirut: Khayats, 1963, PP. 38–39:*

<sup>32</sup> Տես «Papers Relating to the Foreign Relations of the United States: The Paris Peace

ժողովը 1919 թ. օգոստոսի 28-ին ներկայացրեց իր գեկուցագիրը Փարիզի խորհրդաժողովին: Թեև գեկուցագիրն ընթերցել էին Ֆրանսիայի և Բրիտանիայի պաշտոնյաները, սակայն այն այդպես էլ չհրապարակվեց և չշրջանառեց<sup>33</sup>:

1919 թ. ամռանը, երբ Քինգ-Քրեյնի հանձնաժողովը դեռ գտնվում էր Թուրքիայում, Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի անդամ Ջեյմս Ջերարդը դիմեց Նախագահ Վիլսոնին՝ Հայաստանի Հանրապետության համար խնդրելով ռազմական օգնություն, ինչպես նաև զինվորական ուժ՝ նոր հանրապետությունը թուրքերի հարձակումներից պաշտպանելու համար: Այդ օրերին նույնիսկ հանրապետականներ Լոջն ու Հյուզը, որոնք շուտով հանդես էին գալու Հայաստանի մանդատի դեմ, պաշտպանեցին այդ գաղափարը: Հուլիսի վերջին Վիլսոնի Հայաստան ուղարկած կոմիսար Ջոզեֆ Գրինը գրեց դաշնակիցներին Փարիզ, որ Հայաստանին անհրաժեշտ է ռազմական պաշտպանություն, քանի որ թուրքական առաջխաղացումը Հայաստանում հանգեցնելու է նոր «դժբախտության... շատ ավելի սարսափելի, քան 1915 թ. կոտորածները»<sup>34</sup>: Վիճակը կարող էր էլ ավելի ծանրանալ այն բանից հետո, երբ Մեծ Բրիտանիան որոշում կայացրեց դուրս բերել իր զորքերը Կովկասից: Այդ պայմաններում Վիլսոնը գեներալ Ջեյմս Հարբորդին նշանակեց Հայաստանում ամերիկյան ռազմական առաքելության ղեկավար: Առաքելությունն այցելեց Թուրքիա, Հայաստանի Հանրապետություն, Թիֆլիս, Բաթում և Բաքու: Հարբորդը 1919 թ. հոկտեմբերին ներկայացրեց պետքարտուղարին իր գեկուցագիրը, Սպիտակ տունն այն ստացավ հոկտեմբերի 16-ին:

Փարիզի Խաղաղության խորհրդաժողովը չանցավ այնպես, ինչպես կցանկանային Վիլսոնն ու նրա թիմը: ԱՄՆ-ի Նախագահն ամիսներով պայքարեց խաղաղության պայմաններն ապահովող համաձայնությունների և փոխզիջումների հասնելու համար: Երբ ֆիզիկապես և հոգեպես հոգնած Վիլսոնը հուլիսին վերադարձավ Փարիզից, նրան Վաշինգտոնում սպասում էին նոր փորձություններ: 1919 թ. հուլիսի 10-ին նա Սենատի քննարկմանը ներկայացրեց Խաղաղության պայմանագիրը՝ Ազգերի լիգա ստեղծելու պայմանով, որն ինքն անվանում էր «մարդկության պատմության ամենանշանավոր փաստաթղթերից մեկը»: Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Լոջը դարձավ Վիլսոնի և Ազգերի լիգայի գաղափարի գլխավոր թշնամին: Քննարկումների ընթացքում փաստաթուղթը ենթարկվեց բազմաթիվ փոփոխությունների, և օգոստոսի կեսերին Լոջն արդեն հույս էր հայտնում, որ շուտով ամբողջությամբ տապալելու է այն: Նման պայմաններում Վիլսոնը որոշեց այցելել տարբեր նահանգներ և փաստաթուղթը ներկայացնել ժողովրդի լայն շրջաններին (թեև հուլիսի կեսերին նա կաթված էր ստացել)<sup>35</sup>:

Conference, 1919, Vol. 12». Washington, D.C.: United States Government Printing Office, 1947, PP. 821–822:

<sup>33</sup> Տես *James B. Gidney*. A Mandate for Armenia. Oberlin, Ohio: Kent State University Press, 1967, P. 163:

<sup>34</sup> Տես նույն տեղում, էջ 170:

<sup>35</sup> Տես *Փիլիպ Բալաքյան*, Նշ. աշխ., էջ 302:

Արևմտյան կամ «հանրապետական» նահանգներ կատարած ուղևորության ընթացքում Վիլսոնի ելույթների հիմնական թեման Հայաստանն էր: Քանի որ Օսմանյան կայսրությունում հայերի վիճակն ու պատերազմի ժամանակ տեղի ունեցած ոճրագործությունները երկար ժամանակ արդեն հուզում էին ամերիկացիներին և «մոտ էին նրանց սրտին», Վիլսոնը համոզված էր, որ Հայաստանի ամերիկյան մանդատի հարցը կարող է նպաստել Մենատի կողմից պայմանագրի ընդունմանը: Կանգաա Սիթիում շուրջ 15 հազար հավաքվածների առջև Վիլսոնը հայտարարեց, որ Ամերիկյան պատասխանատվություն է կրում հայերին պաշտպանելու համար, հայերի, որոնք «բնաջնջվել են իրենց հայրենիքում»: Խոսելով Հայաստանի օրինակի մասին՝ Վիլսոնը համոզմունք էր հայտնում, որ «պայմանագիրը պաշտպանելու է խոցելի ժողովուրդներին»: Ելույթի ընթացքում Վիլսոնն ընդունում էր այն փաստը, որ իր վարչակազմը գործողություններ չի ձեռնարկել Թուրքիայի դեմ պատերազմի ընթացքում<sup>36</sup>:



Չախից աջ՝ Իտալիայի վարչապետ Վիտտորիո Օռլանդոն,  
Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջը,  
Ֆրանսիայի վարչապետ ժորժ Կլեմանսոն և ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնը,  
Փարիզ, 1919 թ.

Սույթ Լեյկ Սիթիի սեպտեմբերի 23-ի ելույթում Վիլսոնը կրկին բարձրացրեց Հայաստանի հարցում ԱՄՆ-ի պատասխանատվության խնդիրը: Նա խստորեն քննադատեց թուրքական կառավարությանը՝ Հայաստանի դեմ կատարած հանցագործությունների համար, որոնց ավելացել էր Թուրքիայի կողմից իր պատասխանատվության ժխտումը: Թուրքական կառավարությունը, ըստ Վիլսոնի, հայտարարում է, որ «անկարող էր կանխել սարսափելի ջարդերը, որոնք երկիրը վերածեցին գերեզմանատան»: Սակայն Հայաստանը, շարունակում էր Վիլսոնը, այլևս չի տառապելու, քանի որ «այն շրջաններից մեկն է, որոնք ընդգրկված են Ազգերի լիգայի խնամակալության տակ: Հայաստանը պետք է փրկվի»<sup>37</sup>:

Սեպտեմբերի 25-ին Կոլորադո նահանգի Պուերթո և Դենվեր քաղաքներում երկարաշունչ ելույթներից հետո Վիլսոնը երկրորդ կաթվածն ստացավ: Թեև առողջությունը խիստ վատթարացել էր, այդուհանդերձ նա մինչև իր պաշտոն-

<sup>36</sup> Տես «New York Times», 7 September 1919:

<sup>37</sup> Տես «New York Times», 24 September 1919:



նավարման վերջը շարունակեց պայքարը խաղաղության պայմանագրի, Ազգերի լիգայի և Հայաստանի մանդատի համար<sup>38</sup>:

1920 թ. սկզբին Միացյալ Նահանգների հասարակական կարծիքը ամերիկյան կառավարությունից և Կոնգրեսից պահանջում էր ընդունել Հայաստանի մանդատը: Այդ օրերին «Նյու Յորք թայմս» և «Նյու ռիպաբլիկ» օրաթերթերը մշտապես գրում էին մանդատն ստանձնելու անհրաժեշտության մասին, Կոնգրեսը բազմաթիվ խնդրագրեր էր ստանում ամերիկյան կազմակերպություններից, 16 նահանգների օրենսդիր մարմիններն ընդունել էին Հայաստանի մանդատի ստանձնմանը սատարող բանաձևեր: Հայաստանի մանդատն ընդունելու կողմնակիցները, մասնավորապես՝ Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն, այդ օրերին իրենց զայրույթն էին արտահայտում Թուրքահայաստանի նկատմամբ դաշնակիցների դրսևորած տարբեր մոտեցումների կապակցությամբ: Ֆրանսիացիները պահանջում էին Կիլիկիան և Սվազի ու Խարբերդի որոշ տարածքները, բրիտանացիներն առաջարկում էին, որ Վանի և Բիթլիսի հարավային շրջաններն անցնեն քրդերին՝ Բրիտանիայի մանդատի ներքո, իսկ Էրզրումն ու Տրապիզոնը պետք է մնային թուրքերին: Ըստ դաշնակիցների ծրագրերի՝ հայերին մնալու էին Երևանը, Կարսը և Վանի հյուսիսային տարածքը<sup>39</sup>: Մերձավոր Արևելքի ամերիկյան օգնության կոմիտեի նոր նախագահ Ջեյմս Բարտոնը 1920 թ. ապրիլին գրեց «Նյու Յորք թայմսում», որ Հարբերդի առաքելությունը դրական առաջարկ էր ներկայացրել Հայաստանի մանդատի մասին, և եթե Նախագահն ու արտաքին հարաբերությունների կոմիտեն այն մերժեն, Միացյալ Նահանգները ձեռք կբերի «Պիղատոսի կարգավիճակ»<sup>40</sup>:

Սակայն Հայաստանի մանդատի հարցում Կոնգրեսի տրամադրությունները զնալով ավելի էին սառչում: Նույնիսկ երբ 1920 թ. հունվարի վերջին Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Իտալիան ճանաչեցին Հայաստանի Հանրապետությունը, Մենատը հրաժարվում էր այդ անելուց, քանի որ հայկական սահմանները դեռ որոշված չէին: Մարտի 15-ին Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն Նյու Յորքի Քառնեգի Հոլում կազմակերպեց մեծ հավաք, որում ընդունվեց և Վիլսոնին փոխանցվեց հայտարարություն: Ապրիլի վերջին Սան Ռեմոյի խորհրդածրոյից հետո դաշնակիցները դիմեցին Վիլսոնին՝ առաջարկելով ընդունել Հայաստանի մանդատն ու անմիջապես որոշել Հայաստանի արևմտյան սահմանները:

1920 թ. գարունը շատ վճռորոշ շրջան էր սահմանը որոշելու և մանդատը ընդունելու առումով, քանի որ Քեմալը շարունակում էր զավթել Հայաստանի Հանրապետության արևմտյան տարածքները: Արդյոք Վիլսոնի առողջական վիճակն էր, թե «պրագմատիկ քաղաքականության և անպատեհ իդեալիզմի համակցությունը», որ հարցը չլուծելու պատճառ դարձան: Միևնույն ժամանակ, սրվել էին հակասությունները հանրապետականների և դեմոկրատների միջև: Լոջը հայտարարում էր, որ, բացի համակրանքի արտահայտումից, Մենատը որևէ այլ բան չի

<sup>38</sup> Տես *Փիլիպեր Բալաբյան*, Նշ. աշխ., էջ 303:

<sup>39</sup> Տես նույն տեղում, էջ 358–359:

<sup>40</sup> Տես «New York Times», 4 April 1920:

կարող անել, քանի որ Հայաստանի Հանրապետությունը որևէ բան չի կարող առաջարկել ամերիկյան շահերի համար<sup>41</sup>: Միայն մայիսի վերջին պարզ դարձավ, որ Վիլսոնը մտադիր է դիմել Սենատին՝ Հայաստանի մանդատի հարցով, թեև ակնհայտ էր, որ Սենատի մեծամասնությունը դեմ է այդ հարցին: Գիտակցելով դա՝ Հայաստանի անկախության կոմիտեն Վիլսոնին առաջարկում էր ժամանակավորապես մոռանալ մանդատի մասին և Սենատին դիմել Հայաստանին ռազմական օգնություն և հանդերձանք տրամադրելու հարցով: Ջերարդը նույնիսկ խնդրում էր Վիլսոնին Հայաստանի պաշտպանության հարցում օգտագործել իր գործադիր իշխանությունը, ինչպես որ դա 1912 թ. արեց Նախագահ Թաֆտը Չիլիի հարցում: Սակայն Վիլսոնը հրաժարվեց այդ առաջարկից, քանի որ կորցրել էր վստահությունը նույնիսկ իր իշխանության նկատմամբ<sup>42</sup>: 1920 թ. մայիսի 29-ին՝ Սենատի քվեարկությունից հինգ օր առաջ, Վիլսոնը դիմեց Կոնգրեսին՝ ասելով, որ չընդունելով մանդատը՝ ԱՄՆ-ը «խափանելու է քաղաքակրթության խոստումնալից գործընթացները»<sup>43</sup>:

Քվեարկությունից երկու օր առաջ տեղի ունեցավ Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի քվեարկությունը՝ 11 դեմ և 4 կողմ հարաբերությամբ: Այսպիսով՝ Լոջը ցանկանում էր ջախջախել Վիլսոնի հետ կապված ամեն ինչ: Սենատի քվեարկության արդյունքն էր 52 դեմ և 23 կողմ: Շատ և շատ պատմաբաններ այսօր հարց են տալիս, թե ինչու Վիլսոնը, որը շատ լավ կանխատեսում էր քվեարկության արդյունքները, հարցը դրեց քվեարկության և այլ միջոցներ չձեռնարկեց խնդիրը կարգավորելու համար: Արդյո՞ք նման քայլը նշանակում էր իր վրայից գցել չլուծվող հարցի պատասխանատվությունը, թե՞ դա Վիլսոնյան հերթական «իդեալիստական» ձեռնարկումն էր<sup>44</sup>:

Անտանտի տերությունների՝ Սան Ռեմոյի խորհրդաժողովի (1920 թ., ապրիլի 19–26) որոշմամբ և Սևրի հաշտության պայմանագրի (1920, օգոստոսի 10) պայմաններով ԱՄՆ-ի հայեցողությանն էր թողնվում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների որոշումը՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգների տարածքում, ինչպես նաև Հայաստանին դեպի ծով ելք տրամադրելու ԱՄՆ-ի առաջարկի իրագործումը: Այդ նպատակով Վիլսոնի հանձնարարությամբ պետքարտուղար Բեյնբրիջ Քոլբին նշանակեց մասնագետների խումբ, որը ղեկավարում էր 1919 թ. Խաղաղության մասին բանակցող ամերիկյան հանձնաժողովի Արևմտյան Ասիայի գծով մասնագետ, Վիսկոնսինի համալսարանի պրոֆեսոր Ուիլյամ Վեստերմանը: Խումբը 1920 թ. սեպտեմբերի 28-ին Պետքարտուղարություն ներկայացրեց սահմանների վերաբերյալ հանձնախմբի զեկուցագիր: Նախագահ Վիլսոնը նոյեմբերի 22-ին՝ գրեթե երկու ամիս ուշացումով, հաստատեց իր իրավարար որոշումը և այն ուղարկվեց Փարիզ՝ Անտանտի Գերագույն խորհրդի նախագահին<sup>45</sup>:

<sup>41</sup> Տես *Ջեյմս Բ. Գայդնեյ*, Նշ. աշխ., էջ 231:

<sup>42</sup> Տես նույն տեղում, էջ 240:

<sup>43</sup> Տես «Congressional Records», 66<sup>th</sup> Cong., 2<sup>nd</sup> Sess., Vol. 69, PP. 7533–7534:

<sup>44</sup> Տես *Փիլիքի Բալաքյան*, Նշ. աշխ., էջ 361–362:

<sup>45</sup> Տես *Լլոյդ Է. Անթրոսիոս*, Նշ. աշխ., էջ 142:

Համաձայն այդ փաստաթղթի՝ հայ-թուրքական սահմանն սկսվում էր Իրանին սահմանամերձ Կոտուր քաղաքից, անցնում Վանա լճի հարավարևմտյան մասով և Բիթլիս ու Մուշ քաղաքների հարավարևմտյան մասով (սահմանագծից դուրս էին մնում Վանի նահանգի մոտ կեսը և Սղերդի գավառը՝ գրեթե ամբողջությամբ): Այնուհետև սահմանը ձգվում էր դեպի հյուսիս, անցնում Երզնկայից ոչ հեռու, որոշվում ըստ բնական աշխարհագրական պատմեշի: Հայաստանին դեպի Սև ծով հարմար էլք ապահովելու համար սահմանն անցնում էր Գերսիմից հյուսիս: Արևմտյան Հայաստանի տարածքը կազմելու էր 40 հազար քառակուսի մղոն<sup>46</sup>:

Վիլսոնի իրավարար որոշումն այդպես էլ չիրագործվեց, քանի որ քեմալական Թուրքիան, հենվելով Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցության վրա և օգտվելով արևմտյան տերությունների հակասություններից և թողտվությունից, համառ պայքար ծավալեց և կարողացավ ձախողել Սևրի պայմանագրի դրույթների կատարումը: Նախագահ Վիլսոնն ու ամերիկյան դիվանագիտությունը հայտնվեցին անելանելի վիճակում: Ստեղծված իրավիճակում Վիլսոնի հայկական քաղաքականության «պատիվը փրկելու» առիթ դարձավ նոյեմբերի վերջին Ազգերի լիգայի ընդունած բանաձևը, որը ԱՄՆ-ի կառավարությանն առաջարկում էր «Հայաստանում պատերազմական գործողությունները դադարեցնելու նպատակով կատարել մարդասիրական առաջադրանք»: Պետքարտուղար Քոլբին Վիլսոնին խորհուրդ տվեց ընդունել Ազգերի լիգայի առաջարկը և ԱՄՆ-ի Նախագահի հատուկ ներկայացուցիչ նշանակել Մորգենթաուին: Քոլբին գրեց Վիլսոնին. «Գուրք կարող եք չհաջողել, և ձեր ներկայացուցիչը կարող է տապալվել, սակայն ես համոզված եմ, որ սա կլինի այնպիսի մի գործողություն, որը կողջունի աշխարհը և պատմությունն այն կվավերացնի»: Վիլսոնն ընդունեց առաջարկը, սակայն այդ նախաձեռնությունը նույնպես տապալվեց, քանի որ թուրք ազգայնականներն այդ ընթացքում արդեն գրավել էին «Վիլսոնյան Հայաստանը», իսկ Հայաստանի Հանրապետությունը դարձել էր խորհրդային: Ազգերի լիգան մեկ անգամ ևս դիմեց ԱՄՆ-ի կառավարությանը՝ միջամտելու խնդրանքով, սակայն այս անգամ Վիլսոնը պատասխանեց (1921 թ. հունվարի 18), որ պատրաստ է հրահանգել Մորգենթաուին՝ իրականացնել այդ առաքելությունը հետևյալ պայմանով. դաշնակիցները պետք է ստեղծեն բոլոր անհրաժեշտ պայմանները միջոցառման հաջողությունն ապահովելու համար: Սա փաստորեն հայերին օգնելու անկարողությունը հաստատող Վիլսոնի վերջին ինքնարդարացումն էր<sup>47</sup>:

Այսպիսով՝ ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Վիլսոնն անկարող գտնվեց Հայկական հարցի լուծման պարագայում կիրառելու իր նոր գաղափարախոսության սկզբունքները: Այս հանգամանքը հաստատեց այն ճշմարտությունը, որ տվյալ պատմական ժամանակաշրջանում Միացյալ Նահանգների միջազգային և ուժա-

<sup>46</sup> Տես «Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.». Под. Ред. Арман Киракосяна. Е.: Национальный архив Армении, 2010, сс. 144–152:

<sup>47</sup> Տես *Լլյոդ Է. Ամբոստիս*, Նշ. աշխ., էջ 142–143:

յին հնարավորությունները բավարար չէին, որպեսզի «վիլսոնյան» քաղաքականությունը կարողանար համընդհանուր հիմք դառնալ նոր աշխարհակարգ ստեղծելու համար:

## ВУДРО ВИЛЬСОН И АРМЯНСКИЙ ВОПРОС

*А. Дж. КИРАКОСЯН, доктор исторических наук, профессор,  
Чрезвычайный и полномочный посол РА, руководитель миссии при ОБСЕ*

### РЕЗЮМЕ

28-ой Президент США (1913–1921 гг.) Вудро Вильсон осуществил смену политического курса с провозглашенного доктриной Монро «континентализма» («Америка для Америки») на «идеалистический интернационализм», ознаменовавший вступление США в мировую политику в целях «установления мира» и «распространения демократии».

Годы президентства В. Вильсона совпали с судьбоносным этапом в жизни армянского народа, когда он в ходе Первой мировой войны подвергся геноциду и лишился исторической родины вследствие непоследовательной и равнодушной политики государств-победителей. Благодаря информации американского посла в Турции Генри Моргантау Президент США Вильсон был хорошо осведомлен о происходящем с армянами. Его письма и выступления свидетельствуют о его симпатии к армянам и обеспокоенности их судьбой. В то же время администрация Вильсона даже не пыталась препятствовать Геноциду армян, хотя она содействовала организации помощи западным армянам. 21 и 22 октября 1916 года Вильсон объявил днями единения народа США для оказания помощи спасшимся от геноцида армянам. Во время публичного выступления в Канзас-Сити в 1919 году Вильсон заявил, что Америка ответственна за защиту армян, которые «были истреблены на своей родине», а выступая в Солт-Лейк-Сити, обвинил Турцию в совершении преступлений против Армении и армян.

В январе 1918 года Вильсон предложил свою программу мира – известные «14 пунктов», нацеленные на повышение роли США в международных отношениях. 12-ый пункт Программы гласил: «Турецкие части Османской империи, в современном ее составе, должны получить обеспеченный и прочный суверенитет, но другие национальности, ныне находящиеся под властью турок, должны получить недвусмысленную гарантию существования и абсолютно нерушимые условия автономного развития». Некоторые из советников Вильсона пытались убедить Президента включить в этот пункт конкретное положение о необходимости предоставления суверенитета Армении. Однако республиканцам удалось убедить его не делать этого. Во время редактирования программы Вильсон вновь выразил намерение

упомануть в тексте Армению, Месопотамию и Сирию, однако снова удалось переубедить Президента, в результате чего сохранилась общая формулировка.

В начале 1920 года общественное мнение в Соединенных Штатах требовало от правительства и Конгресса принять мандат Армении, утвержденный Лигой Наций. Однако уже в начале июня Сенат проголосовал против этого (52–против, 23–за), несмотря на настоятельные попытки Президента убедить сенаторов в обратном.

Решением конференции в Сан-Ремо (19–26 апреля 1920 г.) и условиями Севрского мирного договора (10 августа 1920 г.) страны-участницы Антанты оставляли на усмотрение США демаркацию границы между Арменией и Турцией – с реализацией предложения США о предоставлении Армении выхода к морю. 22 ноября Президент Вильсон утвердил границы Армении. Площадь Западной Армении составляла 40 тысяч квадратных миль.

Арбитражное решение В. Вильсона так и не было осуществлено, потому что кемалистская Турция, получив военно-политическую помощь от Советской России и используя противоречия между западными державами, в результате упорной борьбы сумела сорвать выполнение положений Севрского договора.

Таким образом, Президент США В. Вильсон оказался неспособным применить принципы своей новой идеологии для решения Армянского вопроса.

## WOODROW WILSON AND THE ARMENIAN QUESTION

*A. J. KIRAKOSSIAN, Doctor of History, Professor, Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Republic of Armenia, Permanent Representative to the OSCE (Head of Mission)*

### SUMMARY

The 28th President of the United States (1913 – 1921) Woodrow Wilson made a turnaround from “continentalism” (“America for America”), propagated by the Monroe Doctrine, to “idealistic internationalism”, which marked the entry of the United States into world policy in order to “establish peace” and “spread democracy”.

Woodrow Wilson's presidency concurred with a fateful period in the life of the Armenian people, when it was subjected to genocide during the World War I and deprived of its historical homeland as a result of inconsistent and indifferent policy of the winner states. The US President Wilson was well-informed of what was going on with the Armenians through the reports of Henry Morgenthau, US Ambassador to Turkey. His letters and speeches testify to his sympathy for the

Armenians and concern for their fate. At the same time, the Wilson Administration did not even try to prevent the Armenian Genocide, though it assisted the relief effort for the Western Armenians. Wilson declared 21 and 22 October 1916 solidarity days of the American people to help the Armenian Genocide survivors. According to Wilson's public appearance in Kansas City in 1919, America was responsible for the protection of the Armenians, who “were extinguished in their homeland”. Then speaking in Salt Lake City Wilson condemned Turkey for committing crimes against Armenia and the Armenians.

In January 1918, Wilson proposed his peace programme – the famous “Fourteen Points”, targeted at enhancing the US role in international relations. The 12th point of the Programme run: “The Turkish portion of the present Ottoman Empire should be assured a secure sovereignty, but the other nationalities which are now under Turkish rule should be assured an undoubted security of life and an absolutely unmolested opportunity of autonomous development...”. Some of Wilson's advisors tried to convince the President to include in this point the concrete provision on the necessity of granting Armenia sovereignty. However, the Republicans managed to persuade him out of doing it. When editing the Programme Wilson reiterated his intention to mention Armenia, Mesopotamia and Syria in the text, but was again made to change his mind, and the general formulation was preserved hereat.

In the early 1920, the public opinion in the United States demanded that the Government and the Congress adopt the mandate for Armenia, approved by the League of Nations. However, in the early June, the Senate voted against it (52 – against, 23 – for), despite the President's persistent attempts to persuade the Senators to do the contrary.

By the Decree of San Remo Conference (19 – 26 April 1920) and the terms of the Treaty of Sèvres (10 August 1920) member countries of the Entente left the demarcation of the border between Armenia and Turkey at the discretion of the United States – with the implementation of the US proposal to secure Armenia access to the sea. On 22 November, President Wilson fixed Armenia's borders. The area of Western Armenia was 40 thousand square miles.

The arbitral decision resolution of Woodrow Wilson was never carried out because Kemalist Turkey, having got military and political support from Soviet Russia and making use of the conflicting views between the Western powers, managed to circumvent the implementation of the provisions of the Treaty of Sèvres in consequence of stubborn struggle.

Thus, the US President Woodrow Wilson was unable to apply the principles of his new ideology to solve the Armenian question.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱՆԱՏՈԼԻԱՅԻ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՈՒՐԹԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՆԱԳՐԱՎՈՒՄԸ

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀՀ ԳԱՄ Արևելագիտության ինստիտուտի  
Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող



Թուրք պատմաբան Թաներ Աքչամը արդարացիորեն համարում է, որ Թուրքիայի Հանրապետությունը հիմնված է 1915 թ. Հայոց ցեղասպանության վրա<sup>1</sup>: Սույն հոդվածում մենք կփորձենք հայերի ցեղասպանությունը դիտարկել որպես ապակազմավորման և կազմավորման համաժամանակյա գործընթաց, այսինքն՝ թե ինչպես է մի խմբի ոչնչացման հաշվին, ստեղծվել մեկ ուրիշը՝ նոր թուրքական ինքնությունը: «Նոր ինքնության կազմավորման», կամ Անատոլիայի «միատարրացման» (ըստ էության՝ նրա թուրքացման), այդ գործընթացի հետևանքը եղան հայերի ցեղասպանությունն ու հայրենագրկումը՝ պատրիոցիդը (հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից, գրկումը): Բռնի տեղահանումն ու ջարդը ուղեկցվում էին հայերի ունեցվածքի թալանով և մշակութային արժեքների ոչնչացմամբ<sup>2</sup>: Ընդհանուր առմամբ, փորձագետներն այդ գործողությունները որակում են որպես Օսմանյան կայսրության հայ բնակչության անհատական և կոլեկտիվ ունեցվածքը նորահայտ թուրքական և քրդական (մահմեդական) «սեփականատերերին» ապօրինաբար փոխանցելու պլանավորված ձեռնարկում:

Թեև կատարվել են մի շարք հետազոտություններ, դեռևս դժվար է ամբողջական պատկերացում կազմել Օսմանյան կայսրությունում «հայկական կապիտալի» մեծության մասին: Արխիվային նյութերի մի հսկայական մասը դեռ ուսումնասիրված չէ (դրանք Թուրքիայում են՝ արգելանքի տակ), մի մասն էլ ոչնչացվել է հայերի ցեղասպանության ժամանակ: Այդուհանդերձ հայտնի է, որ առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց առաջ հայերը Օսմանյան կայսրության տնտեսության մեջ խաղում էին կարևոր դեր, և նույնիսկ բռնապետության և կամայականությունների պայմաններում էլ ունեին մեծ կապիտալ: Հայ վաճառականներն ու գործարանատերերը նշանակալի դեր էին խաղում երեք աշխարհագրական մակարդակներում. կենտրոնական քաղաքներում (Ստամբուլ, Անկարա, Տրապիզոն), նահանգային քաղաքներում (Կեսարիա, Խարբերդ, Թորքատ) և միջազգային քաղաքներում (Լոնդոն, Մանչեստր):

<sup>1</sup> Stü Taner Akçam. From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide. London: Zed Books, 2004; *նույնի՝* A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility. New York: Metropolitan Books, 2006:

<sup>2</sup> Տես *Անուշ Ռ. Հովհաննիսյան*, Հայասպանությունը՝ մշակութային ցեղասպանության համատեքստում: «ՎԷՄ» համահայկական հանդես: Ե., 2010, թիվ 2:

Այսպես. 20-րդ դարի առաջին տասնամյակում Մերաստիայում, որի բնակչությունը 35 %-ը հայեր էին, 166 ներմուծող վաճառականներից 141-ը, 150 արտահանողներից 127-ը, 9800 մանր առևտրականներից և արհեստավորներից 6800-ը հայեր էին: 150 ձեռնարկություններից 130-ը պատկանում էին հայերին, 20-ը թուրքական էին կամ խառը կապիտալով, 17700 աշխատավորներից 14000-ը հայեր էին: Այսպիսով՝ առևտրականների 85 %-ը, արհեստավորների 70 %-ը, ձեռնարկատերերի 85 %-ը, աշխատավորների 80 %-ը հայեր էին: Ամբողջ երկրի մասշտաբով հայերը վերահսկում էին ներմուծման 60 %-ը, արտահանման 40 %-ը և ներքին առևտրի 80 %-ը<sup>3</sup>:

Օսմանյան կայսրության բոլոր կառավարիչները և երիտթուրքերի կառավարությունը ամենից շատ վախենում էին, որ քրիստոնեական փոքրամասնությունները երբևէ կտիրեն Անատոլիային<sup>\*</sup>: Օրինակ՝ Ջելալ Բայարի հուշագրություններից ակնհայտ է դառնում, որ երիտթուրքերը կազմել են Անատոլիայի էթնիկական գտման և թուրքացման եղանակների մասին մանրամասն գեկույցներ: Երկիրը քրիստոնյաներից «մաքրելու» այդ ծրագրերը չէին սահմանափակվում միայն հայերով և իրագործվում էին դեռ առաջին համաշխարհային պատերազմից առաջ, իսկ Անատոլիայի թուրքացումը, հատկապես՝ Բալկանյան պատերազմներից (1912–1913 թթ.) հետո, դարձավ կառավարության հիմնական քաղաքականությունը<sup>4</sup>: Երբ սկսվեց համաշխարհային պատերազմը, բարեփոխումների պահանջի պատրվակով արտաքին միջամտության սպառնալիքը վերացավ, և այդ պայմաններում ավելի հեշտ ու հանգիստ հնարավոր դարձավ ավարտել Անատոլիայի թուրքացումը: Իզուր չէ, որ երիտթուրքերի գաղափարախոսներն ամեն առիթով պնդում էին, թե «ժամանակակից պետության ստեղծումը հնարավոր է միայն միասնական էթնիկական ընդհանրության պայմաններում»<sup>5</sup>:

Հայերի ցեղասպանության բնութագրական առանձնահատկությունն էր քաղաքացիական բնակչության մասնակցությունը, ընդամենը պետության ոճրագործությանը մեղսակցումը կատարվում էր անձնական շահերի՝ հայերի ունեցվածքի թալանի հիմքի վրա: Դրանով պետությունը ոչ միայն պատասխանատվության մի մասը բարդում էր շարքային մահմեդականների վրա, այլև ինչ-որ չափով ապահովում էր զանգվածների աջակցությունն իր գործողություններին:

<sup>3</sup> Տես *Օ. Գ. Инджукян. Буржуазия Османской империи. Е., 1977; Bedross Der Matossian. The Armenian Commercial Houses and Merchant Networks in the 19th Century Ottoman Empire. «TURCICA», Fall 2007, Vol. 39, PP. 147–174:*

<sup>\*</sup> Երիտթուրքերի այդ «վախերի» մասին գրել է և Գրիգոր Չոբրապը: 1913 թ. իր հոդվածներից մեկում նա կանխատեսել է, որ ազգային կապիտալի ստեղծման համար իրապետական իշխանությունները կփորձեն հարկադրանքի միջոցով տնտեսական ասպարեզից հեռացնել մրցակից քրիստոնյաներին՝ հետագայում նրանց մասնավոր շարժական և անշարժ գույքը յուրացնելու համար (տես *Գ. Չոբրապ, Հայկական հարցը փաստաթուղթերու լույսին տակ: «Երկրի ժողովածու», հ. Գ: Ե., 2002, էջ 531–532*):

<sup>4</sup> Տես *Celal Bayar. Tirnak içindeki tüm ifadeler. «Ben de Yazdım», c. 5. Istanbul, 1967, s. 1573:*

<sup>5</sup> Տես, օրինակ, *Ziya Gökalp. Millet Nedir, Milli İktisat Neden İbaretir. Zafer Toprak. Türkiye'de Milli İktisat 1908-1918. Ankara, 1982, s. 32; Zafer Toprak. Türkiye'de Ekonomi ve Toplum (1908–1950) İttihat-Terakki ve Devletçilik. Istanbul, 1995:*



Այսպես կոչված «ազատագրական» պատերազմ սկսած Աբաթյուրքը ևս հենվում էր հայերի ու հույների վրեժխնդրությունից վախեցող՝ անատոլիական ազնվականության վերնախավի (հիշենք թուրք-քրդական համագործակցությունը), ինչպես նաև երիտթուրքերի կուսակցության՝ հայերի ու հույների զանգվածային կոտորածի կազմակերպման համար օսմանյան օրենքով հետապնդվող անդամների աջակցության վրա: Ուխտի «հայերի ցեղասպանության» ժխտումը համապատասխանում էր արևելյան վիլայեթների մահմեդական բնակչության բոլոր խավերի կենսական շահերին: Հենց այդ հանգամանքը դարձավ տեղի ազնվականության վերնախավի նախաձեռնությամբ «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերության» ստեղծման հիմնական պատճառներից մեկը: «Իթթիհատականների հանցագործություններին և երկրորդ սահմանադրության հռչակումից հետո բռնի տեղահանված հայերի ունեցվածքի յուրացմանը մեղսակցումը վախեցրեց այդ խավի ներկայացուցիչներին և դարձավ Անկարայի կառավարության հետ նրանց մերձեցման գլխավոր պատճառը», պնդում է թուրք պատմաբան Բասքին Օրանը<sup>6</sup>:

Հայերի բռնի տեղահանումն սկսվեց 1915 թ. փետրվարին: «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեին անհրաժեշտ էր օրինականացնել այդ տեղահանությունները, ուստի 1915 թ. մայիսի 27-ին Օսմանյան կայսրության իշխանություններն ընդունեցին մի ժամանակավոր օրենք, որը «իրավական» քող ծառայեց հայ ժողովրդի կանխամտածված զանգվածային տեղահանության և ոչնչացման՝ ցեղասպանության համար: Օրենքը վերնագրված էր հետևյալ կերպ՝ «Պատերազմի ժամանակ կառավարության գործողությունների դեմ հանդես եկողների նկատմամբ ռազմական տեսանկյունից իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ ժամանակավոր օրենք»: Թուրքական պատմագրության մեջ ընդունված է այն անվանել «*Tehcir kanunu*» («Տեղահանության օրենք») կամ էլ՝ «*Sevkiyat kanunu*» («Տարահանման մասին օրենք»): Մի քանի օր անց՝ 1915 թ. հունիսի 1-ին, կառավարությունը հրապարակեց օրենքը «Թաքվիմի վաքայի» պաշտոնաթերթի առաջին էջում\*: Համաձայն

<sup>6</sup> Տես *Baskin Oran*. Atatürk Milliyetçiliği, Resmî İdeoloji Dışı Bir İnceleme. Ankara, Bilgi Yayinevi, 1999, s. 74:

\* Ինչպես նշում է հայ թուրքագետ Ռ. Ա. Սաֆրաստյանը, ցայսօր այդ օրենքի և՛ բովանդակության, և՛ հրապարակման առանձնահատկությունների հետ կապված շատ հանգամանքներ ինչպես մեզանում, այնպես էլ արտերկրում մնում են չպարզաբանված՝ նպաստելով իրարամերժ մտտեցումների դրսևորմանը:

Վիճահարույց խնդիրներից է, օրինակ, օրենքի ընդունման և հրապարակման ամսաթվերի հարցը: Որոշ աշխատություններում, օրինակ, նշված է 1915 թ. մայիսի 26-ը: Այլ գրքերում կարող ենք կարդալ, որ այդ օրենքը մամուլում հրապարակվել է 1915 թ. մայիսի 27-ին: Մինչդեռ թուրքական պաշտոնական վավերագրերը փաստում են, որ առաջին ամսաթիվը վերաբերում է ներքին գործերի նախարար Թալեաթի գաղտնի զեկուցագրին, որով նա դիմել է կառավարությանը և պահանջել, որ ընդունվի հայերի տեղահանության մասին օրենք, իսկ երկրորդը՝ օրենքի ընդունման ամսաթիվն է, այլ ոչ մամուլում հրապարակման, որ տեղի է ունեցել հինգ օր հետո՝ 1915 թ. հունիսի 1-ին:

Ակնհայտ է, որ նույնացվում են «Տեղահանության օրենքը» և հայերի տեղահանությունն սկսելու վերաբերյալ կառավարության որոշումը, ինչը սխալ է: Կառավարության «Տեղահանութ-

օրենքի 3-րդ հոդվածի՝ այն գործողության մեջ պիտի մտներ հրապարակման օրից, սակայն գործում էր հետին թվով: Այդ օրենքում հայերն ուղղակիորեն չէին հիշատակվում: Կառավարությունն ընտրել էր քողարկված ձևակերպումներ՝ «բանակների և առանձին զորաբանակների ու դիվիզիաների հրամանատարները ռազմական հատուկ օրենքների վրա հիմնվելով՝ լրտեսություն կամ դավաճանություն կանխագգալով կարող են գյուղերի և գյուղաքաղաքների բնակիչներին առանձին-առանձին կամ զանգվածաբար այլ բնակատեղիներ ուղարկել ու բնակեցնել»: Օրենքը չէր ներառում դրույթ հայերի սեփականության մասին: 1915 թ. հունիսի 10-ին ընդունվեց «Հայերի գույքի մասին» հրահանգը, որը մնաց ուժի մեջ մինչև 1918 թ. նոյեմբերի 4-ը: Մյուս որոշումը՝ 1331 (1915 թ.) սեպտեմբերի 13/26-ի «Լքված գույքի մասին օրենքը»\* (*Emval-i Metruke Kanunu*), նպատակաուղղված էր հայերի բռնի տեղահանությանը, որոնք, ինչպես ասված էր, «զբաղվում են այնպիսի վտանգավոր գործունեությամբ, ինչպիսին է թշնամու հետ համագործակցությունը, սպանում են անմեղ մարդկանց և ապստամբություն են հրահրում»: Ի տարբերություն նախորդ օրենքից՝ դրա մեջ ներառվեցին նաև ունեցվածքի մասին հոդվածներ: Դրանցում կային դրույթներ՝ ուղղված «լքված սեփականության պաշտպանությանը», «սեփականատերերի վերադառնալուն պես այդ սեփականության անվանական արժեքը նրանց վերադարձնելուն»: Բացի այդ, տվյալ օրենքով նախատեսվում էր անշարժ գույքի օբյեկտների և հողատարածքների տեսակների, արժեքի ու քանակի որոշում: Դրանից հետո անշարժ գույքը, այդ թվում՝ հողերն ու ունեցվածքը, հանձնվեցին Բալկաններից և Կովկասից գաղթածների (մուհաջիրների) տնօրինությանը: Այլ կերպ ասած, կառավարությունը այդ օրենքն օգտագործեց գաղթական-մահմեդականների հետ կապված խնդիրների կարգավորման համար՝ նրանց տրամադրելով բռնի տեղահանված հայերի տները: Մնացած ամբողջ ունեցվածքը, ներառյալ՝ ձիթենու, թթի, խաղողի, նարնջի այգիները, արհեստանոցները, առևտրի կրպակները, գործարաններն ու խանութները աճուրդի հանվեցին: Աճուրդից ստացված գումարները պետք է իբր տրվեին ի պահ «ֆինանսական մարմիններին», որպեսզի հետագայում «վերադարձվեին սեփականատերերին»: Օրենքով նաև նախատեսվում էր ստեղծել այսպես կոչված կառավարման հանձնաժողովներ (*idare komisyonlar*), որոնց նպատակը պետք է լիներ «լքված ունեցվածքի» պաշտպանությունը, վերահսկումն ու տնօրինումը<sup>7</sup>:

յան որոշումը» ընդունվել է Նախարարների խորհրդի (*Meclis-i Vükelâ*) մայիսի 30-ին տեղի ունեցած նիստում, այսինքն՝ «Տեղահանության օրենքի» ընդունումից երեք օր անց (տես *Ռուբինի Սաֆրասարյան*, Օսմանյան կայսրության 1915 թ. «Տեղահանության օրենքը»: «Պատմաբանասիրական հանդես», 2007, հմ. 2):

\* «Թողնված», «լքված» կամ «տիրագուրկ գույք» (*emvâl-i metrike*), տերմինը կիրառվել է Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության օրենսդրության մեջ, որում, սակայն, չկա կոնկրետ նշում, թե ով է հրաժարվել այդ սեփականությունից:

<sup>7</sup> Հիշատակված օրենքների, շրջաբերականների, ինչպես նաև դրանց իրագործման վերաբերյալ զաղտնի հրամանների տեքստերը տես *Nevzat Onaran*. *Emvâl-i Metruke olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum malların Türkleştirilmesi*. İstanbul, Belge Yayınları, 2010:

1915 թ. սեպտեմբերի 27-ի նոր՝ «Այլ վայրերում վերաբնակեցված (աքսորված. – Ա Հ.) անձանց լքված տների, պարտքերի և վարկերի մասին» երկար անվանումով «ժամանակավոր օրենքը» չեղյալ հայտարարեց ունեցվածքի հետ կապված բոլոր գործարքները, այդ թվում՝ ունեցվածքի զիջումը կամ փոխանցումը այլ մարդկանց (*feragal*): Դա պետք է կանխեր ապագա զոհերի համար շինծու գործարքների հնարավորությունը, այսինքն՝ պետությունը փաստորեն քաղաքացիներից խլում էր իրենց սեփական ունեցվածքը տնօրինելու իրավունքը (ինչը հակասում էր օսմանյան օրենքներին)\*:

Հայկական համայնքային բարեգործական հիմնադրամների և ընկերությունների սեփականությունը փոխանցվել էր Բարեգործական ֆոնդերի վարչության (այսպես կոչված վակուֆային գերատեսչության) հաշվեկշիռին, իսկ դպրոցների և վանքերի նյութական արժեքների օգտագործման իրավունքները հանձնվել էին կրթության նախարարությանը:

1915 թ. նոյեմբերի 8-ին ընդունվեց նոր որոշում՝ բոլոր տվյալները հատուկ գրանցման գրքերում (*defter*) գրառելու անհրաժեշտության մասին: Տվյալ գրքերում ըստ ընդհանուր ձևանմուշի գրանցվում էին լքված ունեցվածքի տեսակները, ներառյալ՝ փողը, շարժական և անշարժ գույքը, պարտքերն ու վարկերը:

Այդ բոլոր ժամանակավոր օրենքները, որոշումները, գաղտնի շրջաբերականներն ու կարգադրությունները հետապնդում էին երկու հիմնական նպատակ.

1. հայերի ունեցվածքի բռնագրավում մինչև վերջին մանրուքը,

2. հանուն պետության տնտեսական շահերի ձեռնարկված բռնագրավման ու սեփականագրկման ընթացքի լիովին վերահսկման ապահովում և զոհն ինչ-որ կերպ պետական պաշտոնյաների ու տեղական խաժամուժի կաշառակերության ու գողության կանխում և զսպում:

Գերմանացի գիտնական իրավաբաններն ու Ստամբուլի գործարար շրջանների ներկայացուցիչներն այդ օրենքներն անվանեցին «թալանի օրինականացում» (*Legalisierung Des Raubes*)<sup>8</sup>:

«Լքված գույքի» մասին օրենքում մինչև 1918 թ. ընդունվել է միայն մեկ ուղղում, համապատասխան որի՝ հայերի բռնի տեղահանումն իրականացվում էր իրենց իսկ հաշվին:

Թուրքիայում այսօր էլ գործածվում է «*Gâvur mali*» («գյավուրների ունեցվածք»), այսինքն՝ ունեցվածք, որը կարելի է հեշտությամբ վերցնել, յուրացնել) արտահայտությունը, որն առաջացել է այդ ձեռնարկումների ազդեցությամբ: Այս-

\* «Լքված գույքի մասին» օրենքի ընդունման ժամանակ Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Ահմեդ Ռ-գան, որը «Իթքիհատ» կուսակցության հիմնադիրներից մեկն էր, անգամ վրդովվել է. «Օրենքում տրված սահմանումը, որն է՝ «լքված գույք», ինքնին հակաօրինական է: Որովհետև հայերը, որոնք այդ ունեցվածքի սեփականատերերն էին, իրենց կամքով չեն թողել այն: Եթե ես համաձայն չեմ իմ սեփականությունը վաճառելու, ոչ ոք չի կարող այն վաճառել բռնությամբ: Հիմնական օրենքի 21-րդ հոդվածն արգելում է դա: Եթե այս երկրում Հիմնական օրենք և Սահմանադրություն կա, ապա դա անհնար է» (տես *Yusuf Hikmet Bayur. Türk İnkilâbı Tarihi*, c. III. Ankara, Türk Tarih Kurumu, 1983, s. 48):

<sup>8</sup> *Stu Uğur Ümit Üngör and Mehmet Polatel. Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property. London/New York: Continuum, 2011, PP. 41–59:*

պիստով՝ հայերի ունեցվածքի վերաբաշխումը համապատասխանում էր օսմանյան հասարակության լայն շրջանների տնտեսական շահերին և հնարավորություն էր տալիս «բաժին ստանալու» այդ յուրօրինակ բուրգի տարբեր մակարդակներում. պետության տնտեսական շահեր, բարձրագույն վերնախավի տնտեսական շահեր, տեղի վերնախավի տնտեսական շահեր, նյութական շարժառիթավորում-քաղաքացիական բնակչության աջակցություն:

Վերջին հաշվով հայերի ունեցվածքը ծառայեց մի քանի նպատակի. օգտագործվեց փախստական-մահմեդականների պահանջմունքները բավարարելու, մահմեդական բուրժուական դաս ստեղծելու, տարբեր ռազմական կարիքներ բավարարելու, հայերի բռնի տեղահանության հետ կապված կառավարական ծախսերը փակելու, կառավարության ծախսերն ու պարտքերը ծածկելու, և, վերջապես, քեմալական շարժման ժամանակ աշխարհագր կազմավորելու համար<sup>9</sup>:

Թեև Օսմանյան կայսրությունն ուներ հսկայական արտաքին պարտք և մասնակցում էր պատերազմին, սակայն դրա ավարտին նրա բյուջեն ունեցավ պատերազմող երկրի համար աննախադեպ աճ, իսկ 1918 թ. երկրում առաջին անգամ թողարկվեցին 19 մլն լիր ընդհանուր արժողությամբ արժեթղթեր<sup>10</sup>: Փորձագետների կարծիքով՝ բյուջեն համալրվեց «լքված ունեցվածքի իրացման» հաշվին: Ներքին գործերի նախարար Թալեթ փաշան իր «Սև տետրում» (փաշայի օրագիրը նրա այրին փոխանցել էր թուրք պատմաբան Մուրադ Բարդակչիին, որն էլ այն հրատարակեց 2008 թ.)<sup>11</sup> նշում է, որ միայն 1915 թ. հայերից խլված ակտիվներից մահմեդական նորաբնակներին հատկացվել է 20545 շենք, 267536 ակր հողատարածություն, 76942 ակր խաղողի, 703941 ակր ձիթենու և 4573 ակր թթի այգի: Եթե հիմնվենք այն փաստի վրա, որ հայ բնակչության թիվը նվազել էր 1,5 միլիոնով, իսկ ընտանիքում եղել է միջինը 10 մարդ, ապա հայերի կորցրած տների թիվը կկազմի նվազագույնը 150000: Լիովին ամայացել էին 2900 հայկական բնակավայրեր, որոնցում կային 2300 եկեղեցի ու վանք և 700 դպրոց՝ ենթակա Ստամբուլի Հայոց (Հայ Առաքելական Եկեղեցու) պատրիարքության տնօրինությանը: Եթե այդ թվին ավելացնենք հայկական կաթոլիկ և բողոքական եկեղեցիներն ու դպրոցները, ապա դրանց թիվը կգերազանցի 4000-ը<sup>12</sup>: Այդ եկեղեցիների և դպրոցների մեծ մասն ուներ իր բարեգործական հիմնադրամը՝ պահպանման և սպասարկման համար շահույթ ստանալու նպատակով:

Բոլոր այդ ակտիվները, բացառությամբ Ստամբուլի երկու հիվանդանոցի և մի քանի հայկական եկեղեցիների ու դպրոցների, 1915 թ. հետո անհետացան:

<sup>9</sup> Տես «Թաներ Աքչան. «Լքյալ գույքի մասին բոլոր օրենքներում թե՛ օսմանյան և թե՛ հանրապետական կառավարություններն անընդհատ կրկնել են այն դրույթը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են», 25.11.2012 (<http://akunq.net/am/?p=26815>):

<sup>10</sup> Տես *Ս. Ասրոյան*, Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում (1914–1923 թթ.), էջ 32 ([hpj.asj-oa.am/5889/1/3.\\_Anahit\\_Astoyan.pdf](http://hpj.asj-oa.am/5889/1/3._Anahit_Astoyan.pdf)):

<sup>11</sup> Տես *Murat Bardakçı*. Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi. Istanbul: Everest, 2008, s. 95:

<sup>12</sup> Տես *Dicran Kouyoumjian*. Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process. «Anatomy of Genocide: State-Sponsored Mass-Killings in the Twentieth Century». Ed. by Alexandre Kimenyi and Otis L. Scott. Lewiston, N.Y.: Edwin Mellen Press, 2001, pp. 307–319:

Կան տվյալներ, որ բռնագրավված հայկական փողերի մի մասը թուրքական կառավարության կողմից ավանդադրվել է Գերմանիայի և Ավստրիայի բանկերում, իսկ պատերազմում նրանց կրած պարտությունից հետո դրանք հանձնվել են Անտանտի տերությունների տնօրինմանը: Այսպես. Հերբերտ Ասկվիտը և Ստենլի Բոլդուինը, որոնք տարբեր ժամանակներում Մեծ Բրիտանիայում զբաղեցրել են վարչապետի պաշտոն, 1924 թ. սեպտեմբերին վարչապետ Ռամսեյ Մակդոնալդին ուղղված հուշագրում նշում էին, որ «1916 թ. Թուրքիայի կառավարության կողմից Բեռլին փոխանցված և զինադադարի կնքումից հետո դաշնային տերությունների զավթած 5 մլն ֆունտ ստեռլինգի (թուրքական ոսկով, ինչը համարժեք է 30000 կգ ոսկուն) մեծ մասը (հնարավոր է և ամբողջը) հայկական փողեր էին»: Գերմանացի հետազոտողների հաշվարկումներով՝ 1916 թ. փոխանցված գումարը կազմում էր 100 մլն ոսկե մարկ: Ենթադրվում է, որ զինադադարի կնքումից հետո այդ ոսկին բռնագրավվել էր հոգուտ հաղթանակած Անտանտի<sup>13</sup>:

«Հայկական կապիտալի» բռնագրավման գործընթացը կարևոր դեր է խաղում այն հաստատութենական ժառանգորդության ըմբռնման մեջ, որով նշանավորվեց անցումը կայսրությունից հանրապետության: Այդ ժառանգորդությունն ակնհայտ է, քանի որ այն սկսվում է Օսմանյան կայսրության շրջանում (բռնագրավում) և ավարտվում Թուրքիայի Հանրապետության ժամանակներում (յուրացում):

«Լքված գույքի» հարցը դրվել է Օսմանյան կայսրության հետպատերազմյան խորհրդարանի, ինչպես նաև Օսմանյան ռազմական տրիբունալների օրակարգում դեռ մինչև Թուրքիայի Հանրապետության հռչակումը<sup>14</sup>: Այսպիսով՝ պատերազմի ավարտից մինչև Թուրքիայի Հանրապետության ստեղծումը տևած փուլը բացառիկ կարևոր է հասկանալու համար, թե ինչպես տարբեր մրցակցող ուժեր (կենտրոնն Ստամբուլում՝ սուլթանի գլխավորությամբ և կենտրոնն Անկարայում՝ Աթաթյուրքի գլխավորությամբ) վերաբերվեցին հայերի «լքված գույքի» ճակատագրին: ՌՒսումնասիրելով 1918 թ. օսմանյան խորհրդարանում տեղի ունեցած քննարկումները՝ թուրք պատմաբան Այհան Աքթարը շեշտում է, որ այն ժամանակ պատգամավորներից ոչ մեկը կասկած անգամ չի հայտնել հայերի զանգվածային կոտորածի կազմակերպման հարցում՝ այն անվանելով «մարդկության դեմ ուղղված հանցագործություն», ինչպես նաև նրանց ունեցվածքի բռնագրավման անօրինականության վերաբերյալ<sup>15</sup>:

1920 թ. հունվարի 8-ի որոշմամբ Ստամբուլում օսմանյան խորհրդարանը (պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո) չեղյալ հայտարարեց «բնակության այլ վայրեր արտաքսված»՝ տեղահանված, մարդկանց ունեցվածքի բռնագրավման մասին երիտթուրքերի կառավարության ընդունած օրենքը: Ընդ որում, ոչ միայն չեղյալ էին հայտարարվում բռնագրավման գործո-

<sup>13</sup> Տես *Յուրի Բարսեղով*, Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը (ռեպարացիայի և փոխհատուցման խնդիրներ): Ե., 1999, էջ 15:

<sup>14</sup> Տես *Taner Akçam, Vahakn N. Dadrian*. «Tehcir ve Taktik»: Divan-ı Harb-i Örfi Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922. İstanbul: Bilgi Univesitesi Yayınları 2008:

<sup>15</sup> Տես *Ayhan Aktar*. Son Osmanlı Meclisi ve Ermeni Meselesi: kasım-aralık 1918. «Toplum ve Bilim», Kış 2001–2002, N 91, ss. 142–165:

դուրյունները, այլև հայտարարվում էր, որ մշակվում են օրինական տերերին բռնագրավված ունեցվածքի վերադարձման համար անհրաժեշտ միջոցներ:

Անկարայում մեջլիսն սկսեց գործել ապրիլի 23-ին, և նորընտիր մեջլիսի գործադիր կոմիտեն իր առաջին որոշմամբ (1920 թ.) արգելեց հայերի ազատ տեղաշարժը. նման որոշում ընդունելու կարևորագույն շարժառիթը հրաշքով փրկված հայերին իրենց տները վերադառնալու և կորցրած սեփականությունը հետ պահանջելու հնարավորությունից զրկելն էր: Արդեն 1922 թ. սեպտեմբերի 14-ին քեմալականները հայտարարեցին, թե չեն ճանաչում սուլթանական կառավարության կողմից ընդունված՝ «լքված գույքի» մասին ժամանակավոր օրենքը անվավեր համարելու ակտը, իսկ 1923 թ. ապրիլի 15-ին Լոզանի խաղաղության պայմանագրի կնքումից անմիջապես առաջ ուղղումներով վերականգնվեց նշված իթթիհատական օրենքը, ըստ որի՝ հայերի ամբողջ ունեցվածքը բռնագրավվում էր՝ անկախ այն բանից, թե երբ, ինչու և ինչ հանգամանքներում են նրանք լքել երկիրը<sup>16</sup>: Հիմնվելով այդ օրենքի դրույթների վրա՝ թուրքական կառավարությունը հավակնություն ներկայացրեց թուրքական բանկերում և արտասահմանյան բանկերի բաժանմունքներում հայերի ավանդների, ինչպես նաև այդ մասնաճյուղերի կողմից Եվրոպա փոխանցված ավանդների նկատմամբ, և այդպիսով խոչընդոտեց իրենց օրինական տերերին տվյալ գումարների վերադարձմանը:

1923 թ. ապրիլին (քեմալական շրջան) բռնի տարահանված անձանց ոչ միայն շարժական, այլև անշարժ գույքի վերջնական բռնագրավման նպատակով Թուրքիայի Սեմ ազգային ժողովը օրենքի սկզբնական տեքստում որոշակի փոփոխություններ մտցրեց՝ այն վերանվանելով «Լուծարման մասին օրենք» (*Tasfiye Kanunu*): Այդ անվանումով այն գործում էր մինչև 1988 թ. նոյեմբերը<sup>17</sup>:

2005 թ., երբ թվայնացվում էր օսմանյան կադաստրային արխիվը և այն փոխանցվում էր Պետական արխիվ, տեղի ունեցավ որոշ փաստաթղթերի թաքուցում: Ազգային անվտանգության խորհրդից ստացվեց հետևյալ բովանդակությամբ ծանուցում. այդ փաստաթղթերը պահել կադաստրային գերատեսչությունում և սահմանափակել դրանք օգտագործելու իրավունքը, քանի որ փաստաթղթերը կարող են դառնալ «այսպես կոչված ցեղասպանության մասին անհիմն պնդումների և սեփականության վերաբերյալ նյութական հավակնությունների առիթ...»<sup>18</sup>:

Այսպիսով՝ ըստ քեմալական տեսլականի՝ նոր թուրքական ազգային պետության ստեղծման նախագիծը, հանրապետության տնտեսական հզորության հենքային բաղադրամասերի ստեղծումը, ձևավորվող խոշոր մասնեղական/թուրքական բուրժուազիայի ձեռքում կապիտալի նախնական կուտակումը (այսինքն՝ «ազգային տնտեսության» վերաբերյալ պանթուրքական գաղափարի մարմ-

<sup>16</sup> Տես *Անուշ Ռ. Հովհաննիսյան*, Քեմալ Աթաթյուրքը և հայերի ունեզրկման գործընթացը: «ՎԷՄ» համահայկական հանդես: 2011 հունվար–մարտ, հմ. 1:

<sup>17</sup> Տես *Նեզար Օնարան*, Նշ. աշխ., էջ 30–31:

<sup>18</sup> Տես «Hürriyet», 19 Eylül 2006:

նացումը՝ «*Milli İktisad*») նշանակալի չափով իրականացան հայերի, հույների, ասորիների, ալախիքնի՝ թուրքերի համաքաղաքացի քրիստոնյաների՝ ցեղասպանության, արքայի և ունեցվածքի յուրացման միջոցով:

## ГЕНОЦИД АРМЯН: ПРОЕКТ ЭКОНОМИЧЕСКОЙ ТУРКИЗАЦИИ АНАТОЛИИ И КОНФИСКАЦИЯ АРМЯНСКОЙ СОБСТВЕННОСТИ

*А. Р. ОГАНЕСЯН, старший научный сотрудник отдела Турции Института востоковедения НАН РА*

### РЕЗЮМЕ

Геноцид армян следует рассматривать как одновременный процесс деструкции и конструкции, а именно: за счет уничтожения одной этнической группы (армян) конструирование новой турецкой идентичности. Результатом процесса «конструирования новой идентичности», или «гомогенизации» Анатолии (а по сути, ее «туркизации»), стали Геноцид армян и их лишение родины (Западной Армении). Депортация и резня сопровождались грабежом их имущества и уничтожением культурных ценностей. Характерной особенностью Геноцида армян является участие в нем гражданского населения: соучастие в преступлении государства осуществлялось на почве личных интересов – обогащения путем грабежа имущества армян. Этим государство не только возлагало часть ответственности на плечи рядовых мусульман, но и в какой-то мере обеспечивало массовую поддержку своим преступным действиям.

Депортация армян началась еще в феврале 1915 года. С мая по ноябрь 1915 г. в Турции были приняты многочисленные временные законы, решения, секретные циркуляры и предписания, которые преследовали две основные цели: 1) охватить конфискацией практически все имущество армян, вплоть до мелочей; 2) попытаться полностью проконтролировать процесс конфискации и экспроприации и хоть как-то предотвратить коррупцию и воровство чиновников и местной черни. Немецкие ученые-юристы и стамбульские деловые круги назвали эти законы «легализацией грабежа».

В итоге, имущество армян служило нескольким целям: оно было использовано для удовлетворения потребностей беженцев-мусульман; для создания мусульманской буржуазии; для различных военных нужд; для покрытия расходов на депортацию армян, долгов и трат правительства; для создания ополчения во время кемалистского движения. Имеются данные, что часть реквизированных финансовых средств армян была депонирована турецким правительством в банках Германии и Австрии, а после их поражения в войне перешла в распоряжение держав Антанты.

В апреле 1923 г. (в кемалистский период) с целью окончательной конфискации не только движимого, но и недвижимого имущества депорти-

рованных лиц Великое национальное собрание Турции приняло «Закон о ликвидации», находившийся в обращении до ноября 1988 г.

Таким образом, проект по созданию нового турецкого национального государства в кемалистском видении, закладка базовых компонентов экономики республики, первоначальное накопление капитала в руках зарождающегося класса крупной мусульманской/турецкой буржуазии (т. е. воплощение пантюкистской идеи о «национальной экономике») в значительной степени были осуществлены за счет геноцида, изгнания и присвоения имущества армян, греков, ассирийцев, т. е. своих же сограждан-христиан.

## ARMENIAN GENOCIDE: A SCHEME FOR ECONOMIC TURKIFICATION OF ANATOLIA AND THE SEIZURE OF THE ARMENIAN PROPERTY

*A. R. HOVHANNISYAN, Senior Research Fellow, Division of Turkey,  
Institute of Oriental Studies, NAS, RA*

### SUMMARY

The Armenian Genocide should be considered as a simultaneous process of destruction and construction, namely, the process of shaping a new Turkish identity exterminating an ethnic group (Armenians). The result of such a process of "constructing a new identity" or "homogenization" of Anatolia (but in fact, its "Turkification") were the Armenian Genocide and deprivation of their homeland (Western Armenia). Deportation and massacres were accompanied by plundering them and destroying their cultural values. A characteristic feature of the Armenian Genocide is the involvement of civilians in it: complicity in the state crime was based on private interests – enrichment through plundering the Armenians' property. Thereby the state not only laid part of the responsibility upon ordinary Muslims, but to some extent ensured mass support to its criminal acts.

The deportation of the Armenians began as far back as in February 1915. Numerous temporary laws, resolutions, secret circulars and orders had been adopted from May up to November 1915, which pursued two main objectives: 1) to seize almost all the property of the Armenians, down the last detail; 2) to try to fully control the seizure and expropriation and somehow prevent the corruption and pillage of the government officials and local common people. German legal scholars and the business community of Istanbul called these laws "the legalization of pillage."

Eventually, property of the Armenians served several purposes: it was used to meet the needs of Muslim refugees to form a Muslim bourgeoisie; to suit various military needs; to cover the expenses for deporting the Armenians, to clear debts and expenditures of the government; to establish volunteer militia



during the Kemalist movement. There is information that a part of seized financial resources of the Armenians was deposited by the Turkish government in the banks of Germany and Austria, but it passed into the disposal of the Entente powers after their defeat in the war.

In April 1923 (in the Kemalist period) the Grand National Assembly of Turkey adopted the "Liquidation Law" with the view of the conclusive seizure of not only personal, but also real estates of the deportees. It was in force up to November 1988.

Thus, the project on creating a new Turkish national State in the Kemalist vision, the laying of the economic basic components of the republic, the primary accumulation of capital in the hands of the Muslim/Turkish rising upper middle class (i. e. the embodiment of pan-Turkic idea of "national economy") – all this was largely implemented through genocide, exiles and expropriation of the property of the Armenians, Greeks, Assyrians, i. e. of their Christian fellow citizens.

## ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

*Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան*

Թուրքական պետության ծրագրված ցեղասպանական քաղաքականությանը հայ ժողովուրդը մի շարք վայրերում հակադրեց իր դարավոր դիմադրական ոգին և, ընտրելով գիտակցված մահը, ինքնապաշտպանական դյուցազնամարտ մղեց անարգ թշնամու դեմ՝ Տարոն աշխարհից, Մուշից ու Մասունից մինչև Վան, Մուսա լեռից մինչև ՌԻՐֆա, Տրապիզոն ու Շապին Գարահիսար: Դրանք հայոց դյուցազներգության նոր էջեր էին, գիտակցված ընտրություն պատվավոր մահվան և տարագրության ճանապարհներին ոչնչացման միջև:



Հաճախ հարց է ծագում. ինչպե՞ս եղավ, որ 1915 թ. հայկական որոշ շրջաններ ինքնապաշտպանության դրոշ պարզեցին և գիտակցված մահվան գնացին, իսկ այլ շրջաններ անձնատուր եղան թուրքական յաթաղանին: Ինչո՞ւ հնարավոր չեղավ համակարգել և փոխօգնության կապ հաստատել ինքնապաշտպանության դիմած տարբեր շրջանների միջև: Փաստորեն, 1915 թ. արևմտահայությունը չուներ ինքնապաշտպանության կամ ապստամբության ինքնուրույն ծրագիր: Կազմակերպական թերությունների պատճառը հենց ինքնապաշտպանության ինքնաբերական բնույթն էր: Ակնհայտ է, որ հայերը ինքնապաշտպանության են դիմել՝ մեծ մասամբ հապճեպ արձագանքելով իրադարձություններին, և նրանց գործողությունները թելադրված են եղել իրադրության սրությամբ:

Այս ցավալի իրողությունը, միևնույն ժամանակ, ապացուցում է հայերի հասցեին թուրքական պաշտոնական քարոզչությամբ տարածվող այն մեղադրանքի անհիմն լինելը, թե իբր հայերն «անհուսալի տարր էին՝ խռովարար, ապստամբ, թիկունքից հարված հասցնելու ընդունակ»: Եթե այդ մեղադրանքը համապատասխաներ իրականությանը, ապա, նախ, հայերի ինքնապաշտպանությունը կլիներ ոչ թե օջախային, այլ՝ զանգվածային, երկրորդ, այն ավելի մեծ թվով դեպքերում հաջող ելք կունենար և չէր ավարտվի քաջամարտիկների եղեռնական կոտորածով կամ հերոսական ինքնասպանությամբ, ինչով ավարտվեցին, օրինակ, Շապին Գարահիսարի և ՌԻՐֆայի հերոսամարտերը: Եվ երրորդ, եթե Օսմանյան կայսրության հայ բնակչությունը պատրաստ լիներ և մտադրություն ունենար «թիկունքից հարված հասցնելու», ապա զենքի և պարտիզանական պայքարի մարտավարության հիմունքներին տիրապետող տղամարդկանց պակաս, ցավոք, չէր զգացվի, և թուրքական կառավարությունն էլ այդքան հեշտությամբ չէր կարողանա եղած առաջնորդներին մի հրամանով հավաքել, աքսորել կամ կոտորել՝ չհանդիպելով ոչ մի դիմադրության: Հայերի ինքնապաշտպանության պատմությունը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ հայերը մնացել են առանց առաջնորդի, որտեղ չեն եղել պայքարի կոչող և պայքար կազմակերպող անհատներ (ցավոք,

մեծ մասամբ այդպես է եղել), բնակչությունը կոտորվել է գրեթե առանց դիմադրության:

Հայերի ինքնապաշտպանության կազմակերպման հարցում նաև ապակողմնորոշող դեր խաղաց 1908 թ. սահմանադրությունը, որը ջլատեց արևմտահայության մարտական ու քաղաքական ուժերը: Բացի այդ, կարևոր բացասական դեր խաղացին նաև հայ հասարակական-քաղաքական որոշ ղեկավար շրջանների դրսևորած անհեռատեսությունը, հասարակության տարբեր շերտերի միջև գոյություն ունեցող հակասություններն ու անմիաբանությունը:

### ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Առաջին ինքնապաշտպանական կռիվները տեղի ունեցան Վանի նահանգում:

Տագնապալի այդ օրերին, երբ օսմանյան զորքերը Կովկասյան ռազմաճակատում կրում էին պարտություն պարտության հետևից, Վանի կուսակալ Ջևդեթ փաշային հրահանգված էր արագ հաշվեհարդար տեսնել Վասպուրականի հայության հետ<sup>1</sup>: Գավառներում հրահրվում էին հայ-քրդական ընդհարումներ, որոնց հետևում էին հայ ազգային-հասարակական գործիչների ձեռքակալություններն ու սպանությունները: Ամենուրեք զգացվում էր, որ պատրաստվում են հայ բնակչության զանգվածային ջարդեր ու ոչնչացում: Գավառներից փախած և Վան-Այգեստանի շրջանում ապաստանած գաղթականությունը պատմում էր Հայոց ձորում, Գավաշում, Մոկսում, Կարկառում, Բերկրիում և այլ շրջաններում սկսված զանգվածային ջարդերի մասին<sup>2</sup>: Մակայն այդ ճակատագրական օրերին, ինչպես մեր պատմության բոլոր նման պարագաներում, գտնվեցին անձինք, որոնք կարողացան կազմակերպել զանգվածների հերոսական գոյամարտը՝ հաղթական ավարտին հասցնելով այն:

1914 թ. նոյեմբերի վերջերին Ոստանի կայմական Շուքրի բեյը հարձակվեց Գավաշ և Կարճկան գավառների սահմանագծում գտնվող հայաբնակ Բելու գյուղի վրա: Հայերը մի քանի օր դիմադրեցին և նոր միայն դրանից հետո լքեցին գյուղը: 1915 թ. փետրվարի սկզբին արյունալի ընդհարումներ տեղի ունեցան 18 հայաբնակ գյուղեր ունեցող Կարկառ գավառակում: Հայերի դիմադրությունը գլխավորում էր ծկորցի Գալուստ Պողոսյանը (Վուշիկ Գալո): Մի քանի օր հատկապես կատաղի մարտեր տեղի ունեցան Հարկենց գյուղի մոտ: Չոհեր տալով՝ հայ բնակչությունը քաշվեց դեպի Մոկս ու Գավաշ: Թուրքերը ցցի հանեցին զոհված Վուշիկ Գալոյի գլուխը<sup>3</sup>:

1915 թ. փետրվարին քրդերը Ամարե Չաթոյի գլխավորությամբ հարձակվեցին Ալջավազ գավառի վրա, որն ուներ 21 հայկական գյուղ՝ 6000 բնակչությամբ: Հայերը դիմեցին ինքնապաշտպանության՝ արճրացի Օհան Դարբինյանի և կարաքեշիշցի Մկոյի գլխավորությամբ: Առեն գյուղում հայերը պարտության մատնե-

<sup>1</sup> Տես Ա.Դո, Մեծ դեպքեր Վասպուրականում 1914–1915 թվականներին, Ե., 1917, էջ 12:

<sup>2</sup> Տես «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», փաստաթղթերի ժողովածու, հ. 1, Վանի նահանգ: Ե., 2012, էջ 147–384:

<sup>3</sup> Տես «Վան-Վասպուրականի հերոսամարտը»: Ե., 1990, էջ 92–93:

ցին քրդերին: Այդ մարտում սպանվեց Ամարե Չաթոն: Սակայն վրա հասած թուրքական զորքը՝ սպառազինված թնդանոթներով, արյունահեղ դատաստան տեսավ հայերի հետ<sup>4</sup>:

Թուրք-քրդական ուժերի հարձակումից պաշտպանվելու համար Վանից դեպի հյուսիս-արևելք գտնվող Արճակ գավառի Արճակ ու Խառակոնիս գյուղերի բնակիչները Շիրին Հակոբյանի գլխավորությամբ զենք վերցրին և, ճնշելով թուրքերին՝ քաշվեցին Կզլջա լեռը, որտեղ նրանց միացան նաև շրջակա այլ գյուղերի բազմաթիվ բնակիչներ: Այստեղից շուրջ 8000 հայեր, հետ մղելով թուրքերի գրոհը, իջան Ավերակ գյուղը: Շուտով գյուղը պաշարեց թուրքական զորքը: Հայերը 100 կյանքի գնով ճեղքեցին պաշարումը և շարժվեցին դեպի Վան<sup>5</sup>:

Թուրքերը լուրջ դիմադրության հանդիպեցին նաև Լիմ, Ջարանց, Սևան, Պախեղիկ, Ոսկեբակ և այլ գյուղերում, որտեղից 3000 հայեր նույնպես քաշվեցին դեպի Վարազա լեռը<sup>6</sup>:

Ուժեղ դիմադրություն կազմակերպվեց Հայոց ձոր գավառում, որը գտնվում է Վանից դեպի հարավ: Գավառի միջով հոսող Խոշաբ գետի ափերին կային 35 հայկական գյուղեր: Երբ ապրիլի 6-ին թուրքերը ոստիկանապետ Էդիեմ բեյի գլխավորությամբ հարձակվեցին հայկական գյուղերի վրա, հայերը քաշվեցին Քերձ գյուղի լեռը և դիմեցին ինքնապաշտպանության: Նրանց օրինակին հետևեցին նաև հարևան գյուղերի հայերը<sup>7</sup>:

Ապրիլի 7-ին զենքի դիմեցին և ինքնապաշտպանության անցան Կեմ և Անգղ գյուղերի բնակիչները, որոնք տվեցին շուրջ 700 զոհ, սակայն նրանց մի մասը փրկվեց՝ ապաստան գտնելով Վանում: Իշխանի գոմ գյուղում 1000 թուրքերի ու քրդերի դեմ ելան 100 հայեր, որոնք արյունալի մարտերով շարժվեցին դեպի Վարազա լեռ, որտեղ ամրացել էին նախկինում Քերձ լեռան վրա ապաստանած 2000 հայեր: Դրանով էլ ավարտվեց Հայոց ձորի ինքնապաշտպանությունը<sup>8</sup>:

<sup>4</sup> Տես նույն տեղում, էջ 61 – 62, *ևսև*՝ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», հ. 1, Վանի նահանգ, էջ 260 – 306:

<sup>5</sup> Տես «Վերապրած Խաչատուր Ամիրյանի վկայությունը Վանի գավառի Արճակ գյուղի մղած դիմադրության և տված զոհերի մասին»: «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», հ. 1, Վանի նահանգ, էջ 85 – 86, *ևսև*՝ «Վերապրած Ասպատուր Մուրադյանի վկայությունը Խառակոնիս գյուղի մղած դիմադրության և զոհերի մասին»: Նույն տեղում, 101–102:

<sup>6</sup> Տես «Վերապրած Մլրտիչ Գրիգորյանի վկայությունը Վանի գավառի, Վանի գավառակի Ոսկեբակ գյուղի ինքնապաշտպանության մասին»: Նույն տեղում, էջ 48–49, «Վերապրած Պողոս Ավետիսյանի վկայությունը Վանի գավառի, Վանի գավառակի Արճակի Սևան գյուղի կոտորածի մասին»: Նույն տեղում, էջ 85–91, «Վերապրած Սեդրակ Գասպարյանի վկայությունը Վանի գավառի, Վանի գավառակի Արճակի Ջարանց գյուղի կոտորածի մասին»: Նույն տեղում, էջ 106–108:

<sup>7</sup> Տես «Վերապրած քահանա Տեր-Աբրահամյանի և այլոց վկայությունը Վանի գավառի Հայոց ձորի գյուղերի կոտորածների մասին»: Նույն տեղում, էջ 147–163:

<sup>8</sup> Տես «Վերապրած Գարեգին Միրզիկյանի վկայությունը Վանի գավառի, Վանի գավառակի, Հայոց Ձորի Անգղ գյուղի կոտորածի մասին»: Նույն տեղում, էջ 152–153, «Վերապրած Դազար Մանուկյանի վկայությունը Հայոց ձորի Կեմ գյուղի կոտորածի մասին»: Նույն տեղում,

Ինքնապաշտպանություն կազմակերպվեց նաև Թիմար գավառում, որի 50 գյուղերից 30-ը հայկական էին: Ապրիլի 8-ին քուրդ ցեղապետ Արիֆի ելուզակները պաշարեցին Տիրամեր գյուղը՝ միաժամանակ հարձակվելով հարևան Ջանիկ գյուղի վրա: Այդ և շրջակա գյուղերի բնակիչները կոչվեցին մղելով՝ շարժվեցին դեպի Լիմ մինչև բանակի օգնության հասնելը: Ահեղ կոչվեց տեղի ունեցան հատկապես լճափին, ինչից հետո 12000 հայեր տեղափոխվեցին Լիմ կղզի<sup>9</sup>, որտեղ մնացին մինչև կամավորական բանակի հասնելը:

Ապրիլի 12-ին թուրքական զորքն ու քրդական խումանը հարձակվեցին Ալյուր մեծ գյուղի վրա: Այստեղ ինքնապաշտպանությունը գլխավորեցին Աբիսողոմ և Սարգիս Մարդոյանները: Նրանք կարողացան հետ մղել թշնամու մեծաքանակ ուժերի հարձակումները: Սակայն թշնամին, նոր համալրում ստանալով, խաբեությամբ մտավ գյուղ և կոտորեց ամբողջ բնակչությանը<sup>10</sup>:

1915 թ. փետրվարի 17-ին պարսկական սահմանում ռուսներից կրած պարտությունից հետո 600 չերքեզ զինվորներով Վան վերադարձավ Ջևղեթը: Նա չերքեզներին տեղավորեց հայկական թաղում գտնվող Համուդ աղայի գորանցում և կարգադրեց, որ հայ տղամարդիկ երեք օրվա ընթացքում ներկայանան զինվորագրման: 1915 թ. ապրիլի 25-ին Ջևղեթը 1500 հոգանոց զորքով շարժվեց Վասպուրականի արծվաբույն Վարագի վրա: Կատաղի մարտեր մղվեցին Շուշանց գյուղի մոտ: Սակայն ուժերն անհավասար էին: Գյուղի պաշտպանները, դիմադրելով թշնամուն, զիջեցին անցան Վան:

Քառասուներկուօրյա հերոսական ու հաղթական ինքնապաշտպանական կոչվեցին Շատախի հայերը: Շատախի գավառը (հայտնի է նաև Ջերմածոր անունով) բարձրաբերձ լեռների, անդնդախոր ձորերի և հորձանուտ գետերի մի ուրույն լեռնաշխարհ է, որը գտնվում է Վանա լճի հարավում:

Շատախի 110 գյուղերից 50-ը հայաբնակ էին, մնացածը՝ քրդաբնակ, իսկ թուրքեր առհասարակ չկային: Գավառի կենտրոնը Թաղ գյուղն էր, որը դարձավ ապրիլյան կոչվեցների հենակետ: Երկու հարյուր տուն ունեցող գյուղը զուտ հայաբնակ էր և գտնվում էր երեք ամեհի ձորերի միացման տեղում: Ջեմըր շատախցի հայերից միշտ անբաժան էր, և նրանցից սարսափում էին ոչ միայն քրդերը, այլև տեղական թուրքական իշխանությունները: Այդ պատճառով էլ Ջևղեթը որոշեց առաջինը քանդել այդ վտանգավոր բույնը: Դեռ 1904 թվականից Շատախում գործում էին դաշնակցական հայտնի գործիչներ Իշխանը (Նիկողայոս Պողոսյան), Արամը (Արամ Մանուկյան), Սարգիսը, Նիկոլը, Վ. Փափագյանը (Կոմս) և ուրիշներ: 1904–1914 թթ. Շատախի 10000 գյուղացիությունը 7000 օսմանյան ոսկի

էջ 156–161, «Վերապրած Ջարուհի Հյուսյանի վկայությունը Հայոց ձորի Իշխանի գոմ գյուղի կոտորածի մասին»: Նույն տեղում, էջ 164–166:

<sup>9</sup> Տես «Վերապրած Արմենակ Միրոյանի վկայությունը Վանի գավառի, Վանի գավառակի Թիմարի Ջանիկ գյուղի կոտորածի մասին»: Նույն տեղում, էջ 142–147, *ևսև*՝ վերապրածների վկայությունը՝ նույն տեղում, էջ 103–146:

<sup>10</sup> Տես «Վերապրած Վարդան Ջանոյանի վկայությունը Վանի գավառի, Վանի գավառակի Թիմարի Ալյուր գյուղի կոտորածի մասին»: Նույն տեղում, էջ 117–119:

էր տրամադրել ինքնապաշտպանության գործին<sup>11</sup>: 1912 թ. դաշնակցության Վասպուրականի շրջանային ժողովը, հաշվի առնելով հայ ժողովրդի նկատմամբ իթթի-հատականների թշնամական վերաբերմունքը, որոշել էր պատրաստ լինել ամեն տեսակի անակնկալի և կազմակերպել ինքնապաշտպանություն: Այդ որոշման հիման վրա գավառներում ստեղծվեցին ինքնապաշտպանության հատուկ զինվորական մարմիններ: Նույն թվականի հոկտեմբերին Արամի մասնակցությամբ Շատախի շրջանային ժողովն ընտրեց «Անտառի» Ձինվորական մարմին, որի կազմի մեջ մտան Հովսեփ Չոլոյանը, Միհրան Տեր-Մարգարյանը և Սամվել Մեսրոպյանը: Ձինվորական մարմինը կազմեց ամբողջ գավառի ինքնապաշտպանության տեղադրությունը, տնտեսության վիճակագրությունը: Հերոսամարտի նախօրյակին Շատախն ուներ 120 նոր տիպի հրացան, 70 տասանոց մաուզեր ատրճանակ, 50-ից ավելի զանազան ատրճանակներ, 100-ից ավելի հին տիպի հրացան, մեծ քանակությամբ վառոդ, կապար, փամփուշտ: Ձենքն ու զինամթերքը պահեստավորվեցին գյուղերից դուրս՝ ապահով տեղերում<sup>12</sup>:

Մշակվեց ինքնապաշտպանական կռվի մի նախագիծ, որի համաձայն՝ կռվի ընթացքում հնարավոր էր ամբողջ շրջանի հայկական գյուղերը միացնել իրար: 1915 թ. հունվարի 7-ին բազմաթիվ հայ գործիչների ու մտավորականների սպանություններից հետո Ձինվորական մարմինը Թաղում հրավիրեց խորհրդակցություն, որտեղ որոշվեցին կարևոր ռազմական նշանակություն ունեցող վայրերը և պատասխանատու ղեկավարները: Ինքնապաշտպանության ճակատը մոտավորապես 50 կիլոմետր երկարությամբ մի գիծ էր:

1915 թ. փետրվարի կեսերին խումարցի Պետրոսի սպանությամբ Շատախում դեպքերն ստացան «կայծակնային» ընթացք: Մարտի 25-ին ձերբակալվեց զինվորական մարմնի անդամ Հովսեփ Չոլոյանը: Նրան ազատելու փորձերը հաջողություն չունեցան<sup>13</sup>: Կազմվեց նոր զինվորական մարմին, որի մեջ մտան Սամվել Մեսրոպյանը, Ազատ Սիմոնյանը և Տիգրան Բաղդասարյանը: Ձինվորական ջոկի հրամանատարներն ստանձնեցին իրենց վստահված դիրքերի պաշտպանությունը. դրանք յոթն էին<sup>14</sup>:

Կռիվների սկզբում հայ մարտիկներին հաջողվեց հնարամտորեն հարկադրել անձնատուր լինել Սիվտկին գյուղի 20 հոգուց բաղկացած թուրքական ջոկատին, ինչպես նաև վերացնել Շահրուրի բերդի շրջակայքում գտնվող Խանի և Գոմերի թուրքական պահակախմբերը: Հայ մարտիկները ոչնչացնում են նաև Սակ գյուղում գտնվող 14 թուրք ոստիկանների՝ տալով երեք զոհ: Ապրիլի 4-ին Թաղի թուրքական վարչության և հայերի միջև բանակցություններ են սկսվում, որոնք, սակայն, անարդյունք էին:

<sup>11</sup> Տես «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 74:

<sup>12</sup> Տես նույն տեղում, էջ 75:

<sup>13</sup> Տես նույն տեղում, էջ 77:

<sup>14</sup> Տես նույն տեղում, էջ 80–81, *lisuli*՝ «Վերապրած Լուսաբեր Թովմասյանի վկայությունները Վանի Շատախ գավառակի կռիվների մասին», «Մի խումբ վերապրածների վկայություններ Շատախ գյուղաքաղաքի և Փեսանդաշտի գյուղախմբի ինքնապաշտպանության մասին»: «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», հ. 1, Վանի նահանգ, էջ 384–388:

Ինքնապաշտպանության աշխատանքներին լծվում են նաև կանայք, որոնք պարեն են պատրաստում, հեռու վայրերից քար են կրում՝ դիրքերն ամրացնելու նպատակով: Նույն օրն էլ պայթեց առաջին գնդակը, և սկսվեց կռիվը: Այսպիսով՝ 1915 թ. դարավոր ստրկության և գերության շղթաները փշրելու առաջին քայլը կատարվում է Վասպուրական աշխարհի Շատախ գավառի կենտրոն թաղ ավանում:

Ապրիլի 4–22-ը թաղում և ամբողջ գավառում ընթացան թեժ մարտեր: Առաջին օրը հայերն այրեցին Ներքին թաղի ոստիկանատունը, ձերբակալեցին մի ոստիկանի ու գրավեցին 240 փամփուշտ և այլ զինվորական զույժ<sup>15</sup>: Ապրիլի 7-ին հայերն այրեցին ջրաղացի կամուրջը և կտրեցին թուրքերի հաղորդակցության ճանապարհները: Ապրիլի 17-ին Հայոց եկեղեցին վերածվեց զինագործական դարբնոցի: Այստեղ կենտրոնացվեցին ուռկանների վրայից հանված կապարը, կշռաքարերը և այլ մետաղյա իրեր, սկսվեց վառողի պատրաստումը, շարքից դուրս եկած զենքերի նորոգումը և փամփուշտների լցումը: Ապրիլի 18-ին թուրք ոստիկանները փորձեցին անցնել Հաշկանից կամուրջը, սակայն հինգ զոհ տալով՝ նահանջեցին: Ապրիլի 20-ին գործի դրվեց հայերի պատրաստած թնդանոթը<sup>16</sup>: Մինչ Շատախի կայմակամը դիմում էր կուսակալին և գումարտակի հրամանատարին՝ պահանջելով ռազմամթերք, թնդանոթներ և լրացուցիչ զորամասեր, շատախցիները ամուր փակեցին հաղորդակցության ուղիները, և թուրքերը դրսի հետ հաղորդակցվում էին միայն Մուսկավա գյուղի լեռնային անանցանելի կածաններով: Ապրիլի 28-ի առավոտյան թաղի պաշտպանները հեռվում նկատեցին ոչ թե սպիտակ դրոշ, որին սպասում էին, այլ՝ կարմիր, ինչը նշանակում էր, որ թշնամին մոտենում է: Դրությունը անհուսալի էր: Անհրաժեշտ էր սուրհանդակ ուղարկել, բայց ով կհամարձակվեր ստանձնել այդ պարտականությունը: Եվ առաջ եկավ Մրբուհի (Մրբո) անունով 12 տարեկան մի աղջնակ<sup>17</sup>: Փոքրիկ հերոսուհին վերցրեց նամակը, տեղ հասավ և պատվով կատարեց իր պարտականությունը: Բայց թաղն ընկավ պաշարման մեջ, և անհրաժեշտ էր աշխուժացնել կապը դրսի ուժերի հետ: Այս անգամ սուրհանդակի պարտականությունը հանձն առավ չորս գավակների մայր Ամարը, որը, անցնելով թշնամու շղթայի միջով 10 կմ ճանապարհ, Չինվորական մարմնի նամակը հասցրեց Ագատին ու վերադարձավ:

Մինչև մայիսի 4-ը պաշարված թաղեցիները վարեցին դիրքային կռիվներ, երբ Բագիկը 10 մարտիկներով ճեղքեց թշնամու օղակը և մտավ թաղ: Թաղի եկեղեցու 38 օր լռած զանգերը կրկին ղողանջեցին: Սողվան գյուղը վերագրավվեց, և նրա վրա կրկին ծածանվեց հայկական դրոշը: Հայտնի դարձավ, որ ռուսական բանակի կազմում գործող հայ կամավորական գնդերը մտել են Վան, և Արամը թաղեցիներին ուղարկել է երկու արկղ փամփուշտ և երկու հրացան:

Մայիսի 11-ին քրդերը նույնպես լքեցին թաղի շրջակայքի իրենց դիրքերը և դիմեցին փախուստի: Այսպես Շատախի 42-օրյա հերոսամարտը ավարտվեց

<sup>15</sup> Տես Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 227, ց. 1, գ. 468, թ. 22–23:

<sup>16</sup> Տես նույն տեղում, ֆ. 227, ց. 1, գ. 449, թ. 13–16:

<sup>17</sup> Տես «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 87:

փայլուն հաղթանակով: Մայիսի 12-ին Թաղը շուրջով ու մեծարանքով ընդունեց Դրոյին, իսկ վերջինս հիացմունքի ու դրվատանքի խոսքերով ողջունեց ռազմիկ շատախցիներին<sup>18</sup>:

1915 թ. ապրիլի սկզբներին Լևոն Շաղոյանի ղեկավարությամբ ինքնապաշտպանական կռիվներ տեղի ունեցան նաև Ռշտունիքում, կամ Գավաշ գավառում: Երբ Ռստանի կայմակամը գեներալ պահանջեց Գավաշի ժողովրդից և ապա հարձակում ձեռնարկեց հայկական Փայխներ, Մոխրաբերդ և այլ գյուղերի վրա, գավաշցիները մարտերով հեռացան և ապաստանեցին սահմանակից Փեսանդաշտում: Այստեղ պատսպարվեց մոտ 6000 մարդ<sup>19</sup>, որոնք զինված էին 150 հրացանով և 70 ատրճանակով:

Ապրիլի 14 – 16-ը թուրքերը ուժգին հարձակումներ ձեռնարկեցին հատկապես Բարադոտիկի ուղղությամբ, որի ինքնապաշտպանությունը անձամբ ղեկավարում էր Լևոն Շաղոյանը՝ իր տրամադրության տակ ունենալով 80 հրացանավորներ և 40 ատրճանակավորներ: Թշնամու գրոհներն ուղեկցվում էին լեռնային թնդանոթի կատաղի հրաձգությամբ: Սակայն այդ բոլոր գրոհներն ավարտվում էին անհաջողությամբ և թշնամու մարդկային կորուստներով: Ապրիլի 17-ին թուրքերը ձեռնարկեցին վերջին հարձակումը՝ փորձելով Արտուս լեռան գագաթով անցնել փեսանդաշտցիների թիկունք: Սակայն Լևոն Շաղոյանի հմուտ գործողությունների շնորհիվ թուրք ոստիկանները ծուղակի մեջ ընկան և, թողնելով հինգ սպանված ու մեծ թվով վիրավորներ, դիմեցին փախուստի: Մայիսի 10-ին Փեսանդաշտ մտան հայ կամավորական զնդերը:

#### ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

1915 թվականի հայերի ինքնապաշտպանության փառապասկը դարձավ Վանի հերոսամարտը:

Վանը կազմված էր երկու մասից. արևմտյան մասը Քաղաքն էր, կամ Քաղաքամեջը՝ հինավուրց բերդով, պետական հիմնարկներով, զինապահեստով, շուկայով, իսկ արևելյան մասը Այգեստանն էր: Դրանք միանում էին յոթ կիլոմետր երկարությամբ մի փողոցով՝ Մղգայի ջարդանով, որի կենտրոնում գտնվում էր Խաչփողանի հրապարակը: Վանն ուներ 41000 բնակիչ, որից 23000-ը հայեր էին, 18000-ը՝ մահմեդականներ: Քաղաքամեջում ապրում էր 4000 մարդ, որից 3000-ը՝ հայեր<sup>20</sup>: Մնացած բնակչությունն ապրում էր Այգեստանում, որի հայաբնակ թաղերն էին Արաբքը, Նորաշենը, Հանկույսները: Քաղաքի և Այգեստանի միջև ձգվում էր մի ամայի տարածություն, որտեղ առաջներում գտնվում էր այդ ժամանակ արդեն դատարկված Հայկավանք թաղը: Քաղաքից դեպի հարավ-արևելք գտնվում էր թրքաբնակ Շամիրամի թաղը, իսկ հարավային Կոլր-դար թաղն ուներ խառը բնակչություն: Թուրքերը հայկական թաղերի թիկունքում ստեղծել էին զորանոցներ՝ Հաջի-բեքիրի, Թոփրակ-կալեի, Համուդ-աղայի: Եթե

<sup>18</sup> Տես նույն տեղում, էջ 88–89:

<sup>19</sup> Տես նույն տեղում, էջ 90–91:

<sup>20</sup> Տես *Մ. Մ. Կարապետյան*, Հայաստանը 1912 – 1920 թթ.: Ե., 2003, էջ 105:



Քաղաքամեջը պարսպապատ էր ու հենված Շամիրամի ժայռերին, ապա Այգեստանը գրեթե գուրկ էր բնական ամրություններից ու շրջապատված էր այգիներով:

Պատերազմն սկսվելուց հետո Վան եկան շուրջ 70000 գաղթականներ, ինչի հետևանքով, մի կողմից, դժվարանում էր պարենավորման գործը, իսկ մյուս կողմից՝ նրանք ծառայում էին որպես զինվորական ուժի աղբյուր:

Հայերին բնաջնջելու մտադրությամբ կանոնավոր մեծաքանակ զինվորական ուժերով դեսպի Վան շտապեց կուսակալ Ջևդեթը: Նախ նա տեսակցություն ունեցավ դաշնակցական գործիչներ օսմանյան խորհրդարանի Վանի պատգամավոր Վռամյանի (Օսմիկ Դերձակյան) ու Արամ Մանուկյանի հետ և աշխատեց կեղծ հավաստիացումներով ու խոստումներով բթացնել նրանց զգոնությունը, ապա պահանջեց, որ Վանի երիտասարդությունը գորակոչվի: 1915 թ. ապրիլի 1-ին Այգեստանի Նորաշեն եկեղեցում գումարված խորհրդակցությունը Վռամյանի և Մանուկյանի հորդորներով հավանություն տվեց Ջևդեթի պահանջին: Արդեն ապրիլի 2-ին Վանի առաջնորդական փոխանորդ Եզնիկ վարդապետ Ներկարարյանի անունից հրապարակվեց մի կոչ՝ քաղաքացիական պարտականությունը կատարելու մասին: Սակայն այդ ամենը առաջացրեց Վանի հայ ազգաբնակչության զայրույթը, քանի որ նա կանխագգում էր նախապատրաստվող անավոր սպանողը:

Մթնոլորտն ավելի շիկացավ, երբ Ջևդեթը Շատախի դեսպերը քննելու համար այնտեղ ուղարկեց հաշտարար հանձնաժողով՝ դաշնակցական գործիչ Վանա Իշխանի գլխավորությամբ, սակայն ճանապարհին՝ ապրիլի 4-ին, Հիրճ գյուղում կազմակերպվեց նրա տմարդի սպանությունը<sup>21</sup>: Նույնպիսի խարդախ ճանապարհով սպանվեց նաև Վռամյանը, իսկ Արամը վերջին պահին կարողացավ խուսափել թակարդից\*:

Ջևդեթը արագորեն համարեց իր գորքերը, բերել տվեց թնդանոթներ և նախապատրաստվեց հարձակման: Ընդհատվեց կապը Քաղաքամեջի ու Այգեստանի միջև: Երբ դանակն արդեն ոսկորին էր հասել, Վանի հայությունը փրկությունը տեսավ միայն ինքնապաշտպանության մեջ: Խաղաղ ժամանակ վանեցիները պառակտված էին Դաշնակցություն, Հնչակյան և Ռամկավար կուսակցությունների միջև: Սակայն ազգային դժբախտության ծանր պահին, նրանք հասկացան այդ գործելակերպի կորստաբերությունը և, մի կողմ թողնելով կուսակցական տարածայնությունները, ելան թուրք ջարդարարների դեմ միասնական մարտի<sup>22</sup>: Վանի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար ստեղծվեց Վանի Հայ ինքնապաշտպանության Ջինվորական մարմին՝ ռամկավար Արմենակ Եկարյանի նախագահությամբ: Նրա մեջ մտան դաշնակցականներ Կայծակ Առաքելը և

<sup>21</sup> Տես «Վերապրած Եզնիկ վարդապետ Ներկարարյանի վկայությունը Վանի ինքնապաշտպանության սկզբի մասին»: «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», հ. 1, Վանի նահանգ, էջ 29–31:

\* Վանի կուսակցական-ռազմական գործիչների դավադրական սպանությունների մասին հանգամանորեն տես սույն համարում հրապարակվող՝ Ա. Հ. Հարությունյան, Վանի նահանգի ռազմական-կուսակցական գործիչների և մտավորականության ոչնչացումը: Հիրճի կոտորածը, էջ 164–175:–*Խոնք*:

<sup>22</sup> Տես Օ. Միսիրյան, Վանի հերոսամարտը: Սոֆիա, 1930:

Բուլղարացի Գ-րիգորը, ինչպես նաև խորհրդականներ՝ դաշնակցական Արամ Մանուկյանը, ռամկավար Գաբրիել Մեմերճյանը, հնչակյան Հրանտ Գալիկյանը, նախկին արմենական, անկուսակցական նկարիչ Փանոս Թերլեմեզյանը: Ստեղծվեցին նաև պարենավորման, զինբաշխ, հայթայթիչ, Կարմիր խաչի, տեղեկատու և այլ մարմիններ<sup>23</sup>: Հայերն ունեին շուրջ 1500 մարտիկ և նույնքան էլ հրացան ու մատուցեր, բայց սահմանափակ թվով փամփուշտ: Այս փոքրաթիվ ուժերի դեմ կանգնած էր թուրքական կանոնավոր 10-12 հազարանոց բանակը՝ 12 թնդանոթով: Թուրքական զորքը դեկավարում էին փորձված գերմանացի սպաներ:



Վանի ինքնապաշտպանություն, 1915 թ.

Հայերը ցուցաբերեցին մեծագույն կազմակերպվածություն և խիզախություն: Այգեստանը բաժանվեց հինգ պաշտպանական շրջանների՝ 73 դիրքերով, ուր ամրացան 1053 զինվոր՝ 505 հրացանով, 75 հազար փամփուշտով, 549 մատուցերով ու 40 հազար փամփուշտով<sup>24</sup>: Ջինվորական մարմինը անհրաժեշտ հրահանգներ մշակեց կռվողների համար: Գ-րանցում հաջողության գրավական էին համարվում կարգապահությունն ու կազմակերպվածությունը, հրամանների ճշգրիտ կատարումը, գնդակների խնայողական ու նպատակային ծախսումը, աչալրջությունը և այլն<sup>25</sup>: 1915 թ. ապրիլի 7-ի առավոտյան թուրքերն սկսեցին հարձակումը: Հարձակվում էին թուրքական թաղերից և, հատկապես՝ զորանոցներից, իսկ թնդանոթային համազարկերը ավերածություն էին առաջացնում շուրջբոլորը: Հայերը կռվում էին չտեսնված համառությամբ ու կազմակերպվածությամբ՝ ամուր պահպանելով իրենց դիրքերը: Ավելին. կռվի հենց առաջին օրը հայերին հաջողվեց

<sup>23</sup> Տես «Մեծ եղեռնի հերոսապատում. 1915 թ. ինքնապաշտպանական հերոսամարտերը»: Թեհրան, 1982, էջ 274, *ևսև*՝ R. de Nogales. Four Years Beneath the Crescent. Transl. from the Spanish by M. Lee. With an introd. by Lieut.-Colonel E. Davis. N. Y., London, 1926, P. 27:

<sup>24</sup> Տես «Մեծ եղեռնի հերոսապատում. ...», էջ 275, *ևսև*՝ Հ. Կոստյան, Վան բերդաքաղաքի ժողովրդային հերոսամարտը: Թեհրան, 1966, էջ 57–59, J. Bryce. The Treatment of Armenians in Ottoman Empire, 1915–1916. London, 1916, P. 35:

<sup>25</sup> Տես «Մեծ եղեռնի հերոսապատում. ...», էջ 275, *ևսև*՝ Ե. Բուրակյան, Իմ անցյալի հուշերից, Վասպուրականի ողբերգությունը: Ե., 2013, էջ 63:

գրավել Խաչփողանում գտնվող թուրքական դիրքը՝ հեռագրատունը, և պաշարել Համուդ աղայի գորանոցը: Այդ գորանոցի գրավումն ուներ կարևոր նշանակություն, որովհետև այն գտնվում էր հայկական թաղերի կենտրոնում, որտեղի թուրքերն ուժեղ կրակ էին տեղում շրջակայքի վրա: Ճիշտ է, ապրիլի 8-ին հայ մարտիկներն ստիպված էին թողնել Հանկույսների եկեղեցու դիմաց գտնվող Շահբենդեդյանի դիրքը, բայց դրա փոխարեն հաջողվեց հրդեհել անգլիական հյուպատոսարանի շենքը, որտեղ դիրքավորվել էին մի քանի տասնյակ թուրք ոստիկաններ<sup>26</sup>: Հերոսամարտի երրորդ օրը՝ ապրիլի 9-ին, վանեցիները գրավեցին Համուդ աղայի գորանոցը. Բուղարացի Գրիգորի առաջարկով այն պայթեցվեց:

Չորանոցի ոչնչացման հաջորդ օրը՝ ապրիլի 10-ին, այգեստանցիները կարողացան հետ գրավել Շահբենդեդյանի դիրքը: Այդ գործում կարևոր դեր կատարեց Սևոն՝ 19-ամյա Իսկուհի Համբարձումյանը, որը, կյանքը վտանգելով, հետախուզեց դիրքը և այնտեղ առաջնորդեց մարտիկներին: Քաջարի աղջիկը պարզևատրվեց Ձինվորական մարմնի սահմանած «Պատվո խաչ» շքանշանով<sup>27</sup>:

Ապրիլի 10-ին Ձինվորական մարմինը հրապարակեց մի կոչ, որում նշվում էր Վանը 24 ժամվա ընթացքում ծնկի բերելու Ձևդեթի ծրագրի ձախողման փաստը և շեշտվում էր, որ այս կոչիվը ոչ միայն գոյության կռիվ, այլև կռիվ է հանուն ճշմարտության և արդարության, ցույց տալու համար, որ հայը գիտի կռվել և մեռնել զենքը ձեռքին:

Մարտերը գնալով ավելի էին թեժանում, և Այգեստանի հայերը նորանոր սխարանքներ էին գործում: Ապրիլի 15-ին Տիգրան վարժապետ Այիճյանը, ռիսկի ենթարկելով կյանքը, հրկիզեց Արարուց հրապարակում գտնվող և լուրջ վտանգներկայացնող թուրքական ոստիկանատունը:

Ինքնապաշտպանությունը բարձր մակարդակի կազմակերպվածությամբ սկսվեց նաև Քաղաքամեջում, որը կարված էր Այգեստանից: Հյուսիսից այն պաշտպանված էր Շամիրամի բերդով ու գահավեժ լեռներով, իսկ մյուս երեք կողմերից շրջապատված էր սեպածև պարիսպներով: Այստեղ էին գտնվում պետական հիմնարկները և Հայոց առաջնորդարանը: Այստեղ ևս կազմվեց Ձինվորական մարմին՝ Հիսուսյան վարժարանի տեսուչ Հայկակ Կոստյանի ղեկավարությամբ: Անդամներն էին Լևոն Գալջյանը, Սիհրան Թորամանյանը, Գավիթ Սարգսյանը, Սիհրդատ Սիրգախանյանը, Հարություն Ներկարարյանը, Սարգիս Շահինյանը: Ստեղծվեցին նաև մատակարարման, Կարմիր խաչի և այլ մարմիններ<sup>28</sup>:

Ինքնապաշտպանության՝ երկու վերստ ձգվող շրթան բաժանված էր 4 շրջանների և բազմաթիվ դիրքերի: Սակայն զենքը քիչ էր՝ 100 հրացան, 210 ատրճանակ, 60 հազար փամփուշտ, մինչդեռ հայերի դիրքերը գտնվում էին թուրքերի օղակի մեջ<sup>29</sup>:

<sup>26</sup> Տես «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 38:

<sup>27</sup> Տես նույն տեղում, էջ 39–40:

<sup>28</sup> Տես Մ. Ս. Կարասիդյան, Նշ. աշխ., էջ 109:

<sup>29</sup> Տես նույն տեղում:

1915 թ. ապրիլի 7-ի առավոտյան ժամը 9-ին Այգեստանի վրա հարձակվելուց երեք ժամ հետո թուրքերը այստեղ էլ անցան գրոհի: Հայերը ոչ միայն քաջաբար պաշտպանվեցին, այլև հենց առաջին օրը հրդեհեցին փոստ-հեռագրատունը, ոստիկանատունը և դատարանը, որոնք թուրքերի համար դարձել էին ամուր դիրքեր: Այդ գործողությունների ժամանակ աչքի ընկան 16-ամյա Արամ Կապարուկյանը և Աղավնի Վարպետյանը: Երկրորդ օրը՝ ապրիլի 8-ին, հայերը կարողացան ոչնչացնել կառավարական նոր փոստատունը և զինարանը<sup>30</sup>:

Ապրիլի 19-ին թուրքերի ձեռնարկած կատաղի հարձակումը ոչ մի արդյունք չտվեց. նրանք կրեցին մեծ կորուստներ ու նահանջեցին ելման դիրքեր: Ձենքով ու զինամթերքով իրենց ապահովելու համար վանեցիներն ստեղծեցին զինարան, փամփշտարան և վառոդարան, որտեղ աշխատում էին համապատասխան մասնագետներ՝ Վանի վարժապետանոցի տնօրեն, քիմիայի պրոֆեսոր Միքայել Մինասյանի ղեկավարությամբ: Նրա օգնականներն էին Վարդան Պապիկյանը և Հարություն Կաքավյանը: Այստեղ արագ նորոգվում էին վնասված զենքերը, պատրաստվում էր վառոդ, նույնիսկ ձուլվեց երկու թնդանոթ<sup>31</sup>:

Կենսականորեն կարևոր դեր խաղաց 500 արհեստավորներից կազմված «Ամրաշենների խումբը», որոնք արագ հասնում էին ճակատի առավել վտանգված տեղամասերը և անմիջապես վերականգնում թնդանոթային կրակով կատարված ավերածությունները, թշնամու դիրքերի տակ ստորերկրյա անցքեր էին բացում, որտեղ ռուսների պայթեցմամբ քարուքանդ էին անում թշնամու դիրքերը: Խմբի զինվորների շարքում էին Շավարշ Հովիվյանը, Ազատ Խորենյանը և Գրիգոր Պաջիրյանը<sup>32</sup>:

Անգնահատելի էր Հովհաննես Բուճիկանյանի ղեկավարած «Ֆանֆառ» նվագախմբի դերը, որ կազմված էր վարժապետանոցի մի խումբ աշակերտներից: Նվագախումբը հասնում էր ամենավտանգավոր դիրքերը և իր աշխույժ նվագով ոչ միայն ոգևորում էր հայ մարտիկներին, այլև նյարդայնացնում ու խուճապի մատնում թուրքերին: Նվագախմբի ղեկավարն էր Մարգար Փախչոյանը:

Վանեցիների դիմադրողական ուժը ոչ միայն չէր թուլանում, այլև աճում էր, որովհետև նրանք ձեռք էին բերում մարտնչելու փորձ, և, բացի այդ, նրանց հույս էր ներշնչում ռուսական զորքերի առաջխաղացումը դեպի Վան: Իսկ ռուսական զորքը և Անդրանիկի գլխավորած հայ կամավորների 1-ին գունդը 1915 թ. ապրիլի 20-ին Դիլմանի ճակատամարտում ջախջախելով Հալիլ բեյի թուրքական բանակը՝ առաջ էին շարժվում դեպի Վան: Ռուսական մեկ այլ զորաբանակ էլ, որի առաջապահն էր Դրոյի գլխավորած հայ կամավորների 2-րդ գունդը, Վանին էր մոտենում Իգդիր-Բերկրի գծով: Ռուսական զորքերի և հայ կամավորների մոտենալուց ահաբեկված Ջևդեթը ապրիլի 21-ին ձեռնարկեց նոր հարձակում: Ուժեղ

<sup>30</sup> Տես «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 52:

<sup>31</sup> Տես նույն տեղում, էջ 33, *նաև՝* Ա. Օ. Սահակյան, Վան քաղաքի հայության ինքնապաշտպանությունը 1915 թվականին: «ՀԲ», 1996, հմ. 1, Շ. D. Ussher, G. H. Knapp. An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War. Boston and N. Y., 1917, PP. 252–253:

<sup>32</sup> Տես «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 34:

նմբակոծությունից Վանը կորավ հրի ու ծխի մեջ, սակայն վանեցիները, մեծ ու փոքր, անձնուրաց կռվի ելան ատելի ոսոխի դեմ: Չտեսնված համարձակությամբ աչքի էին ընկնում պատանի վանեցիները: Նրանք ոչ միայն կապավորների դեր էին կատարում, փամփուշտ ու պարեն հասցնում դիրքերը, այլև, արհամարհելով մահը, թաց լաթերով հանգցնում էին թուրքական պատրույգավոր ռումբերը, վնասագերծում դրանք և վառողը հասցնում փամփուշտ լցնողներին: Այդ խիստ վտանգավոր գործում աչքի ընկան 12–14-ամյա պատանիներ Ասլանը, Բարկենը, Արտաշեսը, Ոստանիկը, Մարտիրոսը և ուրիշներ, որոնց մի մասը գոհվեց՝ չհասցնելով կտրել ռումբի վառվող պատրույգը: Այդ խիզախ պատանիների մեջ էր նաև Արամ Թովմասյանը՝ ապագա շնորհաշատ երգիծաբան Լեռ Կամասարը: Հայ կաթոլիկների դպրոցի սան Կիրակոս Կիրակոսյանն անցավ թշնամու դիրքերը, սպանեց երկու թուրք զինվորների և նրանց զենքերը շալակած վերադարձավ՝ արժանանալով Պատվո խաչի<sup>33</sup>:

Կռիվները վերսկսվեցին ապրիլի 24-ին և զնալով ավելի սաստկացան: Ապրիլի 28-ին Ջևղեթը ձեռնարկեց, կարելի է ասել, վերջին մեծ հարձակումը, և այդ օրը տեղի ունեցան ամենակատաղի կռիվները, սակայն վանեցիները ոչ մի թիզ հող չզիջեցին: Ապրիլի 30-ին հայերը գրավեցին Խաչփողանի կարևոր կետերը: Թուրքերը շարունակեցին կռիվը մինչև մայիսի 3-ը՝ գլխավորապես ռմբակոծելով քաղաքը: Սակայն մոտեցող ռուսական բանակի, հայ կամավորների և Վանի հայության հուժկու հարվածների տակ թշնամին խուճապահար փախուստի դիմեց: Մայիսի 3-ին հայ մարտիկները լիովին ազատագրեցին քաղաքը, հրդեհեցին թուրքական բռնապետության ամրոց Հաջի-Բեքիրի գորանոցը և ապա Վանի բերդի վրա բարձրացրին հայոց դրոշը: Այգեստանցիները և Քաղաքամեջի պաշտպանները բոլոր ցավերն ու տառապանքները մոռացած՝ ցնծությամբ դիմավորեցին միմյանց և ջերմորեն գրկախառնվեցին:

Մայիսի 5-ին երկու թևերից Վան մտան հայ կամավորների երկու խմբեր՝ Ներքին Թիմարից Դրոն և Համազասպը, Վերին Թիմարից՝ Արճակի վրայով, Քեռին ու Վարդանը (ըստ Հ. Կոտոյանի՝ հայ կամավորները և ռուսական բանակը Վան են մտել մայիսի 7-ին<sup>34</sup>, իսկ ավելի շուտ, ըստ Հ. Գորգյանի, Վան էր մտել Դրոյի գորախմբի առաջապահ ջոկատը՝ Դաշնակցական Խեչոյի և Դալի Դազարի գլխավորությամբ, ապա մայիսի 6-ին Վան մտավ բուն ռուսական բանակը՝ զեներալ Նիկոլանի հրամանատարությամբ:

Այդպես ավարտվեց Վանի 30-օրյա հերոսամարտը, որի ընթացքում հայերի կորուստը 200 սպանված և վիրավոր էր: Դա հայոց ազատամարտի փայլուն դրվագներից է և պատիվ է բերում հայ ժողովրդին: Վանի հռչակված արիեստավորությունը երևան բերեց միջնադարյան համաքարական քաղաքապաշտպանության կազմակերպական հատկանիշներ, դրսևորեց գերազանց ռազմունակություն ու կարգապահություն: Նրա շարքերից դուրս եկան ռազմավարական բնատուր ընդունակությունների տեր այնպիսի ռազմիկներ, ինչպիսիք էին շրջանների պետեր Նշան Նալբանդյանը, Ռաֆայել Տեր-Խաչատրյանը, Հովհաննես Մանուկ-

<sup>33</sup> Տես նույն տեղում, էջ 40 – 41:

<sup>34</sup> Տես Հ. Կոտոյան, Վան-Քաղաքամեջի ապրիլյան կռիվները: Ե., 1992, էջ 130:

յանը, Փանոս Ժամհարյանը, Ալես Պարսամյանը և ուրիշներ, որոնց հրամանատարության ներքո ընդամենը 1054 հրացանով ու մատուցելով զինված անվեհեր մարտիկները հետ էին մղում 10000-ից ավելի զինվորների, տասնյակ թնդանոթներ և անսպառ ռազմամթերք ունեցող թուրքական կանոնավոր բանակի ու նրան միացած մոլեռանդ ամբոխի կատաղի գրոհները:

Իսկ թե որքան խելամտորեն և ռազմագիտական հմտությամբ էր կազմակերպված ինքնապաշտպանությունը, երևում է այն փաստից, որ ցարական բանակի շտաբի զինվորականությունը, մանրամասնորեն ուսումնասիրելով պաշտպանական համակարգը, կազմեց մի ընդարձակ քարտեզ և ներկայացրեց գլխավոր հրամանատարությանը՝ որպես ռազմագիտական սկզբունքներով չնախատեսված մի երևույթ: Գեներալ Նազարբեկովը, լսելով վանեցիների գոյամարտի մանրամասները, խոնավացած աչքերով ասել էր. «Տեսնելով ձեզ, ձեր երկիրը և մեր ժողովուրդը, ես հայարտ եմ, որ հայ եմ»<sup>35</sup>:

Մայիսի 6 (19)-ին՝ հայ կամավորական զնդերի և ռուսական բանակի մուտքից հետո, Վանի և ազատագրված շրջանների ժամանակավոր նահանգապետ նշանակվեց Արամ Մանուկյանը: Նրա գլխավորությամբ Վանում ստեղծված հայկական իշխանությունը ազատագրական պայքարի առաջին քաղաքական ձեռքբերումն էր, որը, ցավոք, կարճ տևեց՝ մինչև հուլիսի 2-ը, երբ ռուսական զորքի նահանջի պատճառով Վանի հայկական իշխանությունը դադարեց գործելուց: Այն խորհրդանշում էր մեր պետականության օրրան Պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի՝ շուրջ 800-ամյա օտար լծից ազատված հողի վրա նոր հայկական իշխանության ծնունդը:

## ՄՈՒՇԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

1915 թ. նախօրյակին Մուշի հոգևոր առաջնորդն էր Ներսես եպիսկոպոս Խարախանյանը: Այստեղ գործում էր ՀՀԴ «Դուրան-Բարձրավանդակի» Կենտրոնական կոմիտեն, որի անդամներից էին մշեցի Մճո Պոլեյանը, Կորյունը (Գոմսա Իսո), Վարդան վարդապետը, Մշո Գեղամը, Ռուբենը (Ռ. Տեր-Միհայայան), սեմալցի Քեաթիպ Մանուկը, օսմանյան խորհրդարանի հայ պատգամավոր Վահան Փավագյանը (Կոմս) և ուրիշներ:

Տարոն-Տուրուբերանը մտնում էր Բիթլիսի (Բաղեշի) նահանգի մեջ, որի նահանգապետն էր իթթիհատական գործիչ Մուստաֆա Աբդուլ Հալիգը: Բիթլիսի նահանգը բաժանված էր չորս գավառների՝ Բաղեշի, Մուշի, Գենջի և Սղերդի: Մուշի գավառապետը մոլի իթթիհատական Սերվեթ բեյն էր: Սասունի լեռնաշխարհը բաժանված էր նշված չորս գավառների միջև:

Պատերազմի հենց սկզբից Մուշը դարձավ զինվորական պահեստային ուժերի կենտրոնատեղի: Թուրքական կառավարությանը հաջողվեց դեռ 1914 թ. հուլիսի 21-ին հայտարարված գորահավաքի միջոցով մեկ ամսվա ընթացքում Տարոնի հայկական գյուղերը մեծ մասամբ դատարկել տղամարդկանցից և ունեցվածքից: Սակայն Սասունի, Ծովասարի, Շատախի և Տավորիկի շրջանները գրեթե

<sup>35</sup> Տես «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 5:

զինվոր չտվեցին: Ջորակոչվեց միայն Խիանքի, Խուլքի և Բսանքի հայ երիտասարդության մի հատվածը, որի մեծ մասը, սակայն, հետագայում փախուստի դիմեց և վերադարձավ իր լեռները: Փաստորեն 1915 թ. հունվարից Սասունի շրջանները ինքնապաշտպանության վիճակում էին, քանի որ շրջապատված էին քրդական ցեղախմբերով և թուրքական զորամասերով<sup>36</sup>:

Այնուամենայնիվ, 1915 թ. հունվարի սկզբին ՀՀԴ Դուրան-Բարձրավանդակի Կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ Մուշում հրավիրվեց ինքնապաշտպանության կազմակերպման հարցով խորհրդակցական ժողով: Նկատի ունենալով Տարոնի հայության պաշարված վիճակը՝ ժողովը որոշեց ամբողջ Տարոնը բաժանել ութ ինքնապաշտպանական շրջանների: Ժողովի որոշմամբ Ռուբենը և Կորյունը պետք է շրջեին Մշո դաշտի գյուղերով՝ ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար<sup>37</sup>:

Առաջին բախումը տեղի ունեցավ 1915 թ. հունվարի 25-ին Մշո դաշտի Յրոնք գյուղում: Կառավարությունն այստեղ էր ուղարկել 500 զինվորներից կազմված մի ջոկատ՝ հարյուրապետ Իսմայիլի գլխավորությամբ՝ փախստական զինվորներ փնտրելու պատրվակով: Կարճատև մարտից հետո ցրոնքցիների ինքնապաշտպանական խմբերը քաշվեցին լեռները: Թուրք զինվորները հրի մատնեցին գյուղի 150 տները: Փետրվարի 6-ին բախում տեղի ունեցավ Գոմս գյուղում, որի ինքնապաշտպանության պատասխանատուն էր Կորյունը: Այդ օրը հարկ հավաքելու պատրվակով գյուղ եկավ իթքիհատական Շեյխ Սեհմեդ էմինը՝ 15 ոստիկաններով և իջևանեց Կորյունի տանը: Նա գաղտնի հրահանգ ուներ դավադրաբար սպանելու այդ պահին Գոմսում գտնվող Ռուբենին և Կորյունին: Սակայն Կորյունին հավատարիմ մի քուրդ նրան տեղեկացրեց դավադրության մասին: Կորյունը հրդեհեց իր տունը, իսկ հայ մարտիկները ոչնչացրին փախչող ոստիկաններին:

Շենիկ գյուղում փետրվարի 10-ին Ռուբենը հրավիրեց Սասունի խմբապետների ժողով, որին մասնակցում էին Կորյունը, Մշոն, Փեթարա Մանուկը, սեմալցի Իշխանը (Մանուկ), գելիեզուզանցի Կիրակոսը, շենիկցի Ղազարը, Չոլոն, ահաբոնքցի Գալուստը և սասունցի Մուշեղը: Ռուբենի զեկուցումից հետո ծրագրվեց Սասունի ինքնապաշտպանությունը, ճշտվեցին շրջաններն ու դրանց պատասխանատուները: Սասունի ընդհանուր ճակատը բաժանվեց պաշտպանության յոթ գլխավոր հատվածների, որոնց ղեկավարներն էին փորձառու ֆիդայիներ Մուշեղը, Կորյունը, Մշոն, Չոլոն, Ադամը, շենիկցի Իշխան Մանուկը, Ղազարը, Պողոսը և ուրիշներ<sup>38</sup>:

Երբ Սասունն սկսել էր պատրաստվել ինքնապաշտպանության, Մուշ քաղաքը և Մշո դաշտը սպասողական դրության մեջ էին: Նախկին ֆիդայիների մեջ

<sup>36</sup> Տես «Գրիգոր քահանա Տեր-Գրիգորյանի կազմած տեղեկագիրը՝ Մշո դաշտի և Սասունի կոտորածների մասին», «Վերապրած Հովհաննես Աբրահամյանի վկայությունը՝ Մուշի և Սասունի ինքնապաշտպանության ու գաղթի մասին»: «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», փաստաթղթերի ժողովածու, հ. 2, Բիթլիսի նահանգ: Ե., 2012, էջ 15–35:

<sup>37</sup> Տես «Հերոսապատում մեծ եղեռնի»: Պէյրոպ: 1978, էջ 205:

<sup>38</sup> Տես Մ. Ս. Կարապետյան, Նշ. աշխ., էջ 129:

ուժեղ էր Սասունին ապավինելու տրամադրությունը: Դրա արտահայտությունը եղավ հռչակավոր ֆիդայի, ՀՀԳ Գուրան-Բարձրավանդակի Կենտրոնական կոմիտեի գլխավոր դեմքերից մեկի՝ Սկրտիչ Պոլեյանի (Մճո)՝ առանց ընդհանուր որոշման իր 30 կովող ուժերով Առաքելոց վանք բարձրանալը, որից հետո խումբը մեկնեց Սասուն:

Թուրքական ուժերը քրդերի հետ 1915 թ. մայիսի 1-ին հարձակվեցին Մշո դաշտի հյուսիսում գտնվող Խնուսի շրջանի վրա: Խնուս գավառի հայությունը Տարոնի մյուս շրջանների մեծ սպասում էր ռուսական բանակին: Այդ իսկ պատճառով խնուսցիները ևս ոչինչ չէին անում ինքնապաշտպանությանը նախապատրաստվելու համար: Խնուսցի մի քանի ազդեցիկ քուրդ ցեղապետեր նրանց հավաստիացրել էին, որ եթե իշխանությունները ձեռնարկեն հայերի կոտորած, ապա իրենք պարտավորվում են պաշտպանել նրանց: Հայերը ևս պարտավորվեցին պաշտպանել քրդերին, երբ ռուսները գրավեն Խնուսը<sup>39</sup>:

Սակայն ռուսական հրամանատարությունը դադարեցրեց իր զորքերի առաջխաղացումը, և իրադրությունը կտրուկ փոխվեց: Հայերին «պաշտպանող» քուրդ ցեղապետերը, օգտվելով առիթից, փոխեցին իրենց որոշումը և սկսեցին համագործակցել իշխանությունների հետ՝ նպատակ ունենալով մասնակցել տեղի հայ բնակչության կոտորածին և ունեցվածքի թալանին:

Խնուսում հայերի դիմադրությունը կանխելու նպատակով երիտթուրքական իշխանությունները ձերբակալեցին տեղի հայության շրջանում հեղինակություն վայելող առավել նշանավոր 150 անձանց: Նրանց սպանեցին Դերջանի և Երզնկայի միջև գտնվող Շողալարի ձորում<sup>40</sup>: Ապա նրանք կարողացան քաղաքում գրեթե առանց որևէ դժվարության իրագործել իրենց ոճրագործ ծրագրերը: Սակայն գավառի մի շարք հայկական գյուղեր դիմադրեցին ջարդարարներին:

1915 թ. մայիսի 1-ին Գովանդուկ (Կովանտուկ) գյուղ ներխուժեցին քրդական հեծյալ ջոկատը և շրջակա քրդական գյուղերի խուժանը: Սի խումբ հայ գյուղացիներ, դիրքեր գրավելով, պաշտպանեցին գյուղը հրոսակներից: Ինքնապաշտպանության հաջող կազմակերպմանը նպաստեց այն հանգամանքը, որ Գովանդուկի բնակիչներից դաշնակցական Միերը, Դավիթը, Համազասպ Մալխասյանը և հնչակյան Մալխասը փորձառու հայդուկներ էին: Նրանք կարողացան թնամուն հետ պահել այնքան ժամանակ, մինչև գյուղի բնակիչներն անցան Գարաչորան գյուղ<sup>41</sup>:

Հայ մարտիկները հակառակորդին դիմադրեցին մինչև ուշ երեկո, ապա նահանջեցին և բարձրացան Գոզալ Պապա կոչվող սարը: Այստեղ իրենց միացած հայրենակիցների հետ նրանք որոշեցին անցնել ռազմաճակատի գիծը<sup>42</sup>: Նույն օրը քրդական հեծելազնդի հարձակմանը ենթարկվեց Սավորի հայկական գյուղը: Այստեղ ևս մի խումբ հայեր դիմագրավեցին հակառակորդին այնքան ժա-

<sup>39</sup> Տես Կ. Սասունի, Պատմություն Տարոնի աշխարհի: Անթիլիաս, 2013, էջ 736:

<sup>40</sup> Տես նույն տեղում, էջ 736, 738–739:

<sup>41</sup> Տես Եղիշէ Յ. Մելիքեան, Հարք-Խնուս: Անթիլիաս, 1964, էջ 275:

<sup>42</sup> Տես նույն տեղում:



մանակ, մինչև բնակչությունը կարողացավ հեռանալ Գարաշոբան: Միայն դրանից հետո նրանք ևս նահանջեցին, իսկ գյուղը ենթարկվեց թալանի<sup>43</sup>:

Մայիսի 2-ին նույն բախտին արժանացավ Խրըմխայա գյուղը, որի բնակիչները նույնպես ապաստանեցին Գարաշոբանում: Այստեղ տեղի ունեցան առավել ծանր դիմադրական մարտերը: Երիտթուրքական իշխանությունները, հաշվի առնելով այստեղ ապաստանած հայերի թվաքանակն ու հնարավոր ուժեղ դիմադրությունը, նրանց դեմ կենտրոնացրեցին մեծ ուժեր: Առաջին գրոհը հայերը հետ մղեցին՝ թշնամուն պատճառելով ծանր կորուստներ: Ոչնչացվեց 59 հոգի: Միայն Սիմոն Տեր-Հովհաննիսյանը իր 25 հոգանոց խմբով սպանեց 25-ից ավելի քրդերի և թշնամուց խլեց 5 հրացան: Թուրքերի և քրդերի երկրորդ գրոհը ևս հետ մղվեց: Սակայն զենքի և զինամթերքի սակավությունը հայերին հարկադրեց նահանջել: Բնակչությունն ապաստանեց Գոզալ Պապա սարում: Ինչպես մնացած դեպքերում, այս անգամ ևս Գարաշոբանի հայության շարժական և անշարժ գույքը թալանվեց<sup>44</sup>:

1915 թ. մայիսի 4-ին և 6-ին ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան Գարաքյոփրու, Խոզլու, Ելպիս, Չավուրմա, Գաբրիելի Գոմ, Արոս և այլ հայկական գյուղերում<sup>45</sup>: Ինքնապաշտպանները դիմադրում էին այնքան ժամանակ, մինչև բնակչությունը կարողանում էր հեռանալ որևէ անվտանգ վայր: Դիմադրություն տեղի չունեցավ գավառի Տուման, Մարուֆ, Շապատին, Խալչաուշ, Քաղքիկ և այլ հայկական գյուղերում: Այդ գյուղերի բնակիչները, վստահելով հարևան քրդերին, տեղափոխվեցին նրանց մոտ՝ հավատալով, որ նրանք կպաշտպանեն իրենց: Սակայն խաբվեցին: Քուրդ ելուզակները կոտորեցին հայերին, իսկ նրանց ունեցվածքը յուրացրին: Արձանագրվեցին միայն եզակի դեպքեր, երբ հայերն իսկապես պաշտպանություն ստացան քրդերից:

Խնուս գավառում ավելի կազմակերպված և համառ դիմադրություն ցույց տվեց Հարամիկ գյուղի բնակչությունը: Այստեղ 1915 թ. սկզբներից Տիգրան Մարտոյանի գլխավորությամբ աշխատանքներ տարվեցին գյուղի ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ: Տ. Մարտոյանը փորձեց ինքնապաշտպանական խմբեր ստեղծել մաս հարևան հայկական գյուղերում, սակայն հաջողություն չունեցավ: Նա ինքը զոհ գնաց գավառի երիտթուրքական իշխանությունների խարդավանքներին և խնուսցի 150 երևելիների հետ ձերբակալվեց ու հետագայում սպանվեց<sup>46</sup>:

<sup>43</sup> Տես «Վերապրած Եղիշե Մելիքյանի վկայությունը Կարինի գավառի Խնուս գավառակի տեղահանության և կոտորածների մասին»: «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», փաստաթղթերի ժողովածու, հ. 3, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Մեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք: Ե., 2012, էջ 113–115, ՀԱԱ, ֆ. 57, ց. 5 գ. 85, ք. 1.3:

<sup>44</sup> Տես «Վերապրած Կարապետ քահ. Տեր-Հովհաննիսյանի վկայությունը Կարինի գավառի Խնուս գավառակի Գարաշոբան գյուղի հայության տեղահանության և կոտորածների մասին»: «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», հ. 3, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Մեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, էջ 115–119:

<sup>45</sup> Տես *Եղիշե Յ. Մելիքյան*, Նշ. աշխ., էջ 277–284:

<sup>46</sup> Տես *Կ. Սաւունի*, Նշ. աշխ., էջ 748–752:

Երբ գավառում ծայր առան հայ բնակչության զանգվածային կոտորածներ, Հարամիկում բնակվող թուրքերը հայերին խոստացան սատար կանգնել նրանց այնպես, ինչպես սուլթան Աբդուլ Համիդ 2-ի կազմակերպած ջարդերի ժամանակ: Թուրքերը համագյուղացիներին խոստանում են պաշտպանել քրդերի հարձակումից այն պայմանով, որ հայերը ռուսների գալուց հետո նույն կերպ վարվեն իրենց հետ:

Փոխադարձ համաձայնության գալուց հետո 150 հայ ընտանիքներ տեղափոխվեցին թուրք համագյուղացիների տները: Սակայն մի խումբ հայեր Հակոբ Մուրադյանի գլխավորությամբ, չվատահելով թուրքերին, ամրացան Հակոբի քարաշեն տանը: Նա, լինելով 1890-ական թվականների հայերի ջարդերի ականատեսը, իր տունը կառուցել էր մի փոքրիկ ամրոցի նմանությամբ:

Դիմադրության ղեկավարությունն ստանձնեցին Ջապփա Միսակը, Հայկազուն Մուրադյանը, Գարեգին Տեր-Սողոմոնյանը և Խչե-Ավոյի Մեսրոն: Հայերի նախապատրաստությունները դուր չեկան թուրքերին, որոնք հատուկ պատվիրակություն ուղարկեցին հայ ինքնապաշտպանների մոտ և առաջարկեցին հանձնել զենքը՝ շեշտելով, որ միայն այդ դեպքում իրենք կպաշտպանեն հայերին: Երկարատև վիճաբանություններից հետո հայ ինքնապաշտպանները համաձայնվեցին հաջորդ օրը հանձնել զենքը: Սակայն լուր ստանալով դեպի Հարամիկ շարժվող քրդական ուժերի մասին՝ հրաժարվեցին այդ մտադրությունից<sup>47</sup>:

Հայ մարտիկներից վեց հոգի ամրացան գերեզմանոցում և թշնամու մոտենալուն պես կրակ բացեցին: Նրանց աջակցեցին քարաշեն տանն ամրացած հայերը: Իր դիպուկ նշանառությամբ հատկապես աչքի ընկավ Խչե-Ավոյի Մեսրոն<sup>48</sup>: Հայերին միացան նաև գյուղի թուրքերը: Նման բուռն դիմադրության հանդիպելուց հետո քրդերը հարկադրված նահանջեցին:

Քրդական հաջորդ գրոհի ժամանակ հայերին պաշտպանող թուրքերը որոշեցին չվտանգել իրենց և, միանալով քրդերին, սկսեցին կոտորել իրենց տներում ապաստանած հայ համագյուղացիներին՝ մինչև նրան ժամանակ յուրացնելով նրանց ունեցվածքը: Սակայն ոչ բոլոր թուրքերը վարվեցին այդ կերպ: Նրանցից մեկը հրաժարվեց գյուղ մտած քրդերի առջև դուռը բացելուց և հայերին հանձնելուց:

Հայերից մեկը՝ Միրագի Հովսեփը, դիպուկ կրակոցով գետնին տապալեց տուն ներխուժած քրդերից մեկին: Չկարողանալով տուն մտնել՝ քրդերը հրդեհեցին այն: Քչերին հաջողվեց փրկվել:

Քուրդ ելուզակները, մեծ ուժեր կենտրոնացնելով, գրոհ ձեռնարկեցին Հ. Մուրադյանի տանն ամրացած հայ մարտիկների դիմադրությունը կոտորելու համար: Կրկին իր դիպուկ նշանառությամբ աչքի ընկնալով Խչե-Ավոյի Մեսրոն՝ ոչնչացնելով 10 ելուզակի: Եվ կրկին քրդերը հարկադրված նահանջեցին՝ իրենց հետ տանելով սպանվածներին ու վիրավորներին:

Հասկանալով, որ այդ տանը երկար ժամանակ հնարավոր չէ դիմագրավել

<sup>47</sup> Տես *Շոիշե Յ. Մեյիքյան*, Նշ. աշխ., էջ, 287–288:

<sup>48</sup> Տես նույն տեղում, էջ 289–290:

թշնամուն, հայ մարտիկները դուրս եկան այնտեղից և ցրվեցին զանազան ուղղություններով: 60 հոգի՝ զինված 15 հրացանով և մի քանի ատրճառակով, ամրացան Խոզլու գյուղի ջրաղացում: Այստեղ քրդերը պաշարեցին նրանց: Հայերը փորձեցին ճեղքել թշնամու օղակը, սակայն 10 զոհ տալով՝ հարկադրված վերադարձան ջրաղաց<sup>49</sup>:

Չկարողանալով ճնշել հայերի դիմադրությունը՝ քրդերը դիմեցին խորամանկության: Նրանք հայերին առաջարկեցին հանձնվել՝ խոստանալով անվնաս հասցնել Խնուս և հանձնել գավառական իշխանություններին: Հայերն էլ իրենց հերթին պահանջ դրին, որ իրենցից երեք հոգի զինված լինի: Երկար բանակցություններից հետո քրդերը համաձայնվեցին: Եվ երբ ըստ պայմանավորվածության երեք զինված հայեր դուրս եկան ջրաղացից, քրդերը, դրժելով իրենց խոստումը, կրակ բացեցին և սպանեցին նրանց: Ապա չթողնելով, որ ներսում գտնվողները ուշքի գան, միանգամից ներխուժեցին ջրաղաց և սպանեցին այնտեղ գտնվողների մեծ մասին: Միայն մի քանի հոգու հաջողվեց հրաշքով ազատվել<sup>50</sup>:

Կազմակերպված ու տևական դիմադրություն ցույց տվեցին նաև Արոս գյուղի պաշտպանները՝ տեղի քահանայի գլխավորությամբ ամրանալով գյուղի իշխող բարձունքներում, որտեղից ապահովեցին ժողովրդի նահանջը: Ապա դիրքավորվեցին քարայրներում և տևական պարտիզանական կռիվների ընթացքում մեկիկ-մեկիկ զոհվեցին: Միայն քչերը դիմացան մինչև ռուսների գալը:

Մայիսի 10-ին Խնուսի դաշտի գյուղերն ավերելուց ու բնակիչներին կոտորելուց հետո համիդիներն ու քուրդ խուժանը գրոհեցին Խնուս բերդաքաղաքի վրա: Բայց տեղի պաշտոնյաները, ոստիկանությունն ու թուրք երևելիները վճռականորեն կանգնեցրին նրանց, որպեսզի իրենք թալանեն հայերի ունեցվածքը: Շուտով եկավ տեղահանության օրը, երբ նրանք կարող էին իրագործել իրենց նպատակները:

Փրկվածները պատմում են, որ Եղիշե Սիմոնյանի ղեկավարությամբ մի խումբ զինված երիտասարդներ բերդի ձորաբերանի քարանձավներից մեկում մի քանի օր հերոսական կռիվ մղեցին և ընկան միայն մեծ թվով թուրքերի սպանելուց հետո: Բերդաքաղաքի Չորի թաղում 7 երիտասարդներ, ամրանալով մի տան մեջ, դարձյալ օրերով կռվեցին և, զինամթերքն սպառվելու պատճառով, դեպի Պաղչա հին բերդը նահանջելիս զոհվեցին<sup>51</sup>:

Յավոք, մինչև 1915 թ. հուլիսի 10-ը Մուշի հայությունը մնաց սպասողական անորոշ դրության մեջ և զենք բարձրացրեց միայն այն ժամանակ, երբ քաղաքը կտրվել էր դաշտի գյուղերից, իսկ թշնամին արդեն շրջապատել էր քաղաքը: Հետևանքը եղավ այն, որ Մուշի դիմադրությանը բոլորը չէ, որ մասնակցեցին, որովհետև մի զգալի մասը հեռացել էր Սասուն: Բացի այդ, դիմադրությունը անհրաժեշտ կազմակերպվածություն չունեցավ: Թեև այն հերոսական էր, բայց կարճատև՝ ընդամենը 5 օր: Հուլիսի սկզբին ռուսական բանակի անակնկալ նա-

<sup>49</sup> Տես նույն տեղում, էջ 295:

<sup>50</sup> Տես նույն տեղում, էջ 296:

<sup>51</sup> Տես նույն տեղում:

հանջը երիտթուրքերին հնարավորություն տվեց նշանակալի ուժեր կենտրոնացնելու և իրականացնելու Տարոնի հայության կոտորածը:

Առանց դիմադրության հանդիպելու թուրք-քրդական ուժերը գրավեցին Մուշի շրջակա բարձունքները և այնտեղ թնդանոթներ տեղադրեցին: Մուշի հին ու փորձառու մարտիկներ Հաջի Հակոբը, Մուխսի Ֆարհադի Արոն, Լևոն Ասլանյանը և Տիգրան Սկրտչյանը որոշեցին բաժանվել երկու խմբի և բարձրանալ Սասուն: Ֆարհադի Արոյի խմբին հաջողվեց ճեղքել թուրքական շղթան և մտնել Սասուն, իսկ մյուս խումբը վերադարձավ քաղաք: Հակոբ Կոտոյանի գլխավորած Ձորի թաղի խումբը մնաց քաղաքում անգամ փորձ չարեց անցնելու Սասուն:

Մուշի դիմադրողական ուժերը տեղաբաշխված էին իրարից բավական հեռու գտնվող Մուրթ Մարինեի, Ձորի և Վերին թաղերում: Նշված երեք թաղերի մարտիկների խորհրդակցության ժամանակ որոշվեցին դիմադրության կետերը և դրանց ղեկավարները: Հերոսամարտի ընդհանուր ղեկավար նշանակվեց Հաջի Հակոբ Կոտոյանը, օգնական՝ Տիգրան Սկրտչյանը<sup>52</sup>:

Հուլիսի 11-ի առավոտյան ոստիկանների ուղեկցությամբ Վերին թաղ մտավ մի ոստիկանական ջոկատ: Հանդիպելով դիմադրության՝ թուրքերն սկսեցին հրդեհել հայկական թաղերը: Հաջորդ օրը՝ հուլիսի 12-ին, կռիվը վերածվեց գոտեմարտի: Ամբողջ գիշերը թուրքական թնդանոթները ռմբակոծեցին Վերին թաղի դիրքերը: Սակայն թաղի պաշտպանները վերականգնում էին քանդված դիրքերը, ամրացնում նորերը: Կանայք հաց ու ջուր էին հասցնում կռվողներին: Սակայն ռումբերի տարափը գնալով ուժգնանում էր՝ դիմադրությունը դարձնելով անհնար:

Լևոն Ասլանյանը և Հակոբ Կոտոյանը որոշեցին վերջին ճակատամարտը տալ Ձորի թաղում: Հուլիսի 13-ի առավոտյան Ձորի թաղ անցան Վերին թաղի բոլոր պաշտպանները: Հաջի Հակոբի կարգադրությամբ նշանառու Չախչախենց Հուսիկը շարքից հանեց երկու թուրք թնդանոթածիզների, բայց ինքն էլ զոհվեց: Վիրավոր Հաջի Հակոբը շրջում էր դիրքերում, ոգևորում մարտիկներին: Գիշերը տեղի ունեցավ վերջին խորհրդակցությունը: Դիմադրության ղեկավարները խոստովանեցին, որ կռիվն անհույս է: Հաջի Հակոբը պահանջեց, որ կռվող խմբերը պաշտպանության տակ առնելով անզեն ժողովրդին՝ ճեղքեն պաշարման օղակը և անցնեն մոտակա լեռները, իսկ ինքը որոշեց մնալ և կռվել մինչև վերջին շունչը:

Կեսգիշերին մարտիկները և ժողովուրդը խումբ առ խումբ կռվելով սկսեցին հեռանալ, սակայն քաղաքից դուրս գալ հաջողվեց ընդամենը 700 հոգու: Մնացածները Հաջի Հակոբի գլխավորությամբ հուլիսի 13-14-ին մղեցին Մուշի «մահվան ճակատամարտը»<sup>53</sup>: Այդ կռիվներին Հաջի Հակոբի հետ մասնակցում էին Մամիկոն Պետրոսյանը և Միսակ Կոնջոյանը: Պատմությունը չի արձանագրել

<sup>52</sup> Տես «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», հ. 3, Էրզրումի, Խարբեթի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք: Ե., 2012, էջ 130:

<sup>53</sup> Տես «Վերապրած Շուշան Աջամյանի վկայությունը Մուշ գավառի Մուշ քաղաքի կոտորածների մասին»: Նույն տեղում, հ. 2, Բիթլիսի նահանգ, էջ 248–249:

Հաջի Հակոբի շուրջ խմբված ժողովրդի թիվը, որովհետև այդ կռիվներից վկա չմնաց: Հայտնի է միայն, որ Հաջի Հակոբն այդ երկու օրը մնաց իր դիրքերում և քաջությամբ դիմավորեց մահը<sup>54</sup>:

Հուլիսի 13-ի կեսգիշերին քաղաքից դուրս եկած խմբերից Շահկա Արոն շուրջ 100 քաջերով, որոնց կեսն անզեն էր, հանդուգն հարձակմամբ ճեղքեց թուրքական զորաշրջան և հասավ Հավատորիկ: Մեկ ուրիշ խումբ խիզախ Չաքարիայի գլխավորությամբ կռվով հասավ Մշո այգիներ, որտեղ 4-ժամյա մարտերից հետո բոլորը նահատակվեցին:

Տեր Եղիշեի հետ մոտ 200 հոգի, մեծ մասամբ անզեն պատանիներ ու երեխաներ, հասան Մոկունքի այգիներ: Այս ու այն կողմից այստեղ հասան նաև Սարո Իսպանդարյանի, Հրանտ Հալլաթյանի, Տիգրան Սկրտչյանի զինյալները: Մոկունքի այգիներում ապաստանածները մտադրվեցին անցնել Քանա լեռները, բայց լույսը բացվեց, և անցումը դարձավ անհնար: Տիգրան Սկրտչյանն ստիպված եղավ կրակ բացել առաջ շարժվող թշնամու վրա, և կռիվն սկսվեց: Առաքելոց վանքի կողմից թուրքական զորքերը և չեթները կրակ էին թափում պաշտպանվող հայերի վրա, բայց սրանք մնացին իրենց դիրքերում անսասան և քիչ զոհեր տվեցին: Մութն ընկնելուն պես ողջ մնացածները անցան Բերդակ գյուղով, բարձրացան Քանա լեռները<sup>55</sup>: Դա Մուշ քաղաքի հերոսամարտի ավարտն էր:

Ի տարբերություն Մուշից, որի հերոսամարտը կարճ տևեց, Մշո դաշտի կռիվները շարունակվեցին մի քանի ամիս: 1915 թ. մայիսից դաշտի գյուղերը շրջապատեցին քրդական զինված հորդաներն ու թուրք ոստիկանները: Հունիսի վերջին ընդհատվեց հայկական գյուղերի միջև կապը: Մինչ Մուշ քաղաքում և Սասունում մտածում էին, թե իրենք պիտի լինեն հարվածի ծանրության կենտրոնը, դաշտի կռիվների մի մասը Սասուն բարձրացավ: Կառավարությունը պատրաստվեց առաջին հարվածը հասցնելու Մշո դաշտի գյուղերին: Սակայն դաշտը լավ զինված չէր: Ջրկվելով Սասուն բարձրացած իր ղեկավար մարտիկներից և լավ զենքերից՝ Մշո դաշտը կարող էր ցույց տալ միայն թույլ դիմադրություն: Նման պայմաններում դաշտի գյուղերի պաշտպանների մեծ մասը չկարողացավ դիմադրել և մի քանի օրվա ընթացքում կոտորվեց: Այդուհանդերձ, գտնվեցին գյուղեր, որոնք հերոսաբար պայքարեցին թշնամու դեմ՝ Կառնենը, Ս. Կարապետ վանքի շրջանը, Ավրանը, Ալիջանը, Վարդենիսի շրջանը:

Կառնեն գյուղը գտնվում էր Մուշ քաղաքից երկու կիլոմետր դեպի արևմուտք: Գյուղի ինքնապաշտպանությունն սկսվեց Մուշ քաղաքի հերոսամարտին զուգահեռաբար: Այն գլխավորում էր փորձառու ֆիդայի կառնենցի Սկրտիչը: Կառնենցիների դիմադրությունը տևեց մեկ ամբողջ օր՝ մինչև հուլիսի 12-ի ուշ գիշերը, երբ զինամթերքի սպառման պատճառով բոլորը հերոսաբար նահատակվեցին իրենց դարավոր գյուղի խորտակված պատերի տակ<sup>56</sup>:

Մուշ քաղաքի հյուսիս-արևելքում գտնվում էր Ալիջան գյուղը: Դեռ մարտին

<sup>54</sup> Տես նույն տեղում:

<sup>55</sup> Տես «Մեծ եղեռնի հերոսապատում. ...», էջ 405 – 406, 416 – 417:

<sup>56</sup> Տես նույն տեղում, էջ 422 – 423:

Ալիջանցի Տիգրանը մի քանի ընկերներով բախվեց թուրք ոստիկանների հետ, բարձրացավ Սասուն ու միացավ Ռուբենին ու Կորյունին: Ալիջանի ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար հուլիսի սկզբին այստեղ եկավ Հայկ Միրջանյանը: Նրա տանը տեղի ունեցավ խորհրդակցություն, որտեղ որոշվեց գեներլի դիմել: Ալիջանցիները զինաթափեցին գյուղ մտած ոստիկաններին: Դիմադրությունը ղեկավարեցին Հայկ, Մխիթար և Միսակ Միրջանյանները: Կռվին մասնակցեցին նաև կանայք: Սասուն բարձրացած Տիգրանին փոխարինեց տղամարդու զգեստ հագած նրա քույրը: Ալիջանի հերոսամարտը տևեց չորս օր: Թշնամին կրեց մեծ կորուստներ: Չորս օր անց ալիջանցիներն ստիպված եղան բարձրանալ Քանա լեռը<sup>57</sup>:

Ավրան գյուղը Գևորգյան ճեմարանի շրջանավարտ Հայկ Տեր-Վարդանյանի և Մակար Խարախանյանի գլխավորությամբ դիմադրեց մեկ օր, իսկ շրջակա անտառներին ու լեռներին ապավինած ավրանցիները կռվեցին ևս 12 օր ու բոլորն էլ նահատակվեցին:

Վարդենիս գյուղը բավական հեռու էր Մուշից. այն գտնվում էր Մշո դաշտի արևելյան ծայրագավառ Չխուրի շրջանում: Շրջանի ապավենը Շամբ կոչվող ծանծաղ լիճն էր՝ շրջապատված եղեգնուտով: Լճի ափերին կային մի քանի գյուղեր: Վարդենիսցիները ծրագրել էին պատսպարվել ու կռվել հենց այդ եղեգնուտներում: Կոտորածից առաջ Շամբի եղեգնուտներ էր տեղափոխվել Վարդենիս, Արտոնք, Դարս և այլ գյուղերի անգե՛ն բնակչությունը՝ մթերապաշարով և անհրաժեշտ իրերով:

Վարդենիսի և շրջակա գյուղերի ինքնապաշտպանությունը տևեց 15 օր, որից հետո եղեգնուտներին ապավինած ժողովրդի համար արշալույս բացվեց. թշնամին սկսեց լեղապատառ փախչել՝ առնելով ռուսական զորքերի մոտենալու լուրը: Այդպիսով Վարդենիսի շրջանից մոտ վեց հազար մարդ փրկվեց և հայկական կամավորական զորքերի պաշտպանությամբ ու ռուսական զորքերի հետ նահանջեց ու հասավ Արարատյան դաշտ<sup>58</sup>:

Մարտ ամսից կառավարությունը թուրքական զորքեր էր կենտրոնացրել Ս. Կարապետ վանքում և նրա շուրջը: Երբ հուլիսի 7-ին ջարդի ազդանշան տրվեց, անմիջապես ձեռնարկվեցին Բաղլուի, Մեշտիի, Ջիարեթի և Սորտարի պաշարումն ու կոտորածը: Նույնքան արագ էլ կատարվեց նշված գյուղերի ժողովրդի մեծ մասի և զինված խմբերի նահանջը դեպի Ս. Կարապետի լեռն ու անտառը, որտեղ պիտի մղվեին ինքնապաշտպանական կռիվներ<sup>59</sup>: Ինքնապաշտպանությունը ղեկավարում էին առասպելական քաջի համբավ վայելող Սորտարցի Արամը, Բաղլուի Հովոն, Գոմսա Մոսոն և Մելիքը, ուսուցիչ Սկրտիչ Տեր-Սկրտչյանը և մի քանի խմբապետներ: Այստեղ էր կուտակվել 15-20 հազար հալածական ու սոված ժողովուրդ: Դիմադրողական ուժերն ունեին աղքատիկ զինամթերք. ընդամենը հարյուր մարտական հրացան, մի այրքան էլ ատրճանակ ու որսորդական հրացաններ: Սակայն Ս. Կարապետի շրջանի ինքնապաշտպանությունը այնքան

<sup>57</sup> Տես նույն տեղում, էջ 423 – 424, 427:

<sup>58</sup> Տես նույն տեղում:

<sup>59</sup> Տես նույն տեղում, էջ 431:

ուժեղ էր, որ թշնամուն թվում էր, թե այնտեղ կան ֆիդայական զորավոր ուժեր: Կռիվները երկար տևեցին, սակայն վրա հասան սովն ու զինամթերքի պակասը: Այդ պատճառով շատերը փորձեցին ճեղքել թշնամու օղակը և բարձրանալ Մասուն, կամ միանալ ռուսական զորքերին: Ոմանց դա հաջողվեց, ոմանք էլ գոհվեցին: Հակառակորդին մոլորեցնելու համար կռիվը շարունակողները սորտարցի Արամի գլխավորությամբ անընդհատ տեղից տեղ փոխադրվեցին: Հերոս հայորդին կռվեց մինչև 1916 թ. հունվարը, երբ մի քանի ընկերներով փորձեց անցնել Մուլուխի կամուրջը և հասնել ռուսական զորքերին, բայց նահատակվեց ճիշտ այնտեղ, որտեղ ընկել էր Գևորգ Չաուշը: Արամի պաշտպանած ժողովրդի բեկորներին հաջողվեց ազատվել և անցնել Արևելյան Հայաստան<sup>60</sup>:

Տարոնի ինքնապաշտպանության հերոսական դրվագներից են Նեմրուքի եռամսյա կռիվները: Երբ 1915 թ. ապրիլին սկսվեց Վանի ինքնապաշտպանությունը, Վանի շրջանի մի շարք գյուղերի բնակիչներ գաղթեցին Ախլաթ: Արամ Մանուկյանը նամակով շրջանի ղեկավարներից մեկին՝ ֆիդայի Փալապելի Կարապետին, հրահանգեց զինյալ ուժերը հավաքել ու լեռ բարձրանալ: Ապրիլի վերջերին Նեմրուք բարձրացավ շուրջ երեք հարյուր կռվող՝ մեծ մասամբ անզեն: Դիմադրությունը ղեկավարում էին Մողոյի եղբայր շամիրամցի Արամը, նրա համագյուղացի Մուշեղը, Կծակ գյուղից ֆիդայի Այվազ Գևորգյանը, Տափավանք գյուղից Հարություն Տերոյանը<sup>61</sup>: Նեմրուքի հերոսամարտն սկսվեց ապրիլի 15-20-ին և շարունակվեց մինչև հուլիսի 15-ը՝ երեք ամիս, որից հետո Նեմրուքի հերոսները միացան դեպի Դատվան ու Ախլաթ շարժվող ռուսական բանակին և համալրեցին հայ կամավորական զնդերը:

## ՍԱՍՈՒՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Հայ ազատագրական շարժման միջնաբերդ Մասունը ևս պատրաստվում էր ինքնապաշտպանության: Ռուբենն ու Կորյունը Մասուն էին անցել 1915 թ. փետրվարին և հրավիրել Շենիկի խորհրդակցությունը: Սի քանի շաբաթ անց նրանց միացավ Մճոն:

Թշնամին ուներ Մասուն ներխուժելու երկու ճանապարհ: Առաջինը Խուլբի ճանապարհն էր՝ դեպի Տալվորիկ և Անդոկ (Անտոկ), երկրորդը՝ Հավետունի շրջանից դեպի Բսանք: Այս ուղղության վրա կային բազմաթիվ քրդական աշիրեթներ: Առավել կարևորը Խուլբի ճանապարհն էր, որին էլ կառավարությունն ուղղեց առաջին հարվածը:

1915 թ. ապրիլի սկզբներին թուրքական կառավարական զորքերը, չեթեներն ու քրդերը հարձակվեցին Աիրոնք գյուղի վրա. դրանով էլ սկսվեցին կռիվները: Շրջանի պաշտպանական ուժերը բաժանվեցին մի քանի խմբերի: Աիրոնքի մի խումբ երիտասարդներ ամրացան գյուղի անտառներում, ժայռերի վրա և կռիվ սկսեցին հարավից հարձակվող քրդերի դեմ: Խումբը ղեկավարում էին Մանոն, Հրայրի հորեղբորորդի Հովհաննես Տեր-Մամբրեյանը, Կիբոն և Խաչոն: Մեկ այլ

<sup>60</sup> Տես նույն տեղում, էջ 433:

<sup>61</sup> Տես նույն տեղում, էջ 435:

խումբ գործեց Ընծաբարի անտառներում ու կիրճերում: Երրորդ խումբը դիրքավորվեց Անդոկի հարավային փեշերին՝ Իշխանաձորից մինչև Ահրոնք:

Շուտով հարձակվողներին Սասունի հարավից միացան մաս Խիանքի քրդերը, որոնք շարժվեցին դեպի Սպիտակ լեռ ու Տավորիկ: Այս երկու շրջաններում կռիվները տևեցին ապրիլից մինչև հունիսի վերջերը, երբ Խուլբի և Խիանքի հայությունը երիտասարդ կռիվողների հետ քաշվեց Անդոկ՝ Սասնա վճռական քսանօրյա ճակատամարտին մասնակցելու համար<sup>62</sup>: Կառավարությունը երկու վաշտ ուղարկեց՝ Կուրտիկի ամբողջ լեռնաշղթան գրավելու համար: Ռուբենը և Կորյունը դա չհանդուրժեցին, ուստի սկսվեց դիրքային կռիվ, որը տևեց շուրջ երեք ամիս: Թուրքերի հենարանը Ս. Հովհաննեսի վանքն էր: Առաջին օրերի գրոհների ձախողումից հետո թուրքերն ստիպված եղան հրաժարվել Կուրտիկի բարձունքներին տիրելու ծրագրից և ամրացան լեռնաշղթայի հյուսիսային լանջերին: Նրանց միակ նպատակն էր՝ սպառել հայերի զինամթերքը, որովհետև Սասուն մտնելու հրահանգ դեռևս չունեին:

Կուրտիկի կռիվների ընդհանուր ղեկավարն էր Փեթարա Մանուկը, որը փորձառու ֆիդայի էր, Գևորգ Չաուշի մարտական զինակիցը դեռ 1904–1907 թթ.: Նրա հետ էին Փեթարի հին ֆիդայիներ Ախոն, Իսրոն, Կիրակոսը, Թադոն, Գոմերը<sup>63</sup>: Սասունի հարավում ու հարավ-արևմուտքում սկսված մարտական գործողությունները ապրիլի երկրորդ շաբաթվա ընթացքում տարածվեցին մինչև Սպիտակ լեռ: Գրավելով Սպիտակ լեռը՝ քրդերը պատրաստվեցին շարժվել դեպի Տավորիկ, սակայն Գեբինի և Տավորիկի հայ մարտիկները փակեցին Սպիտակ լեռան լեռնանցքը: Այդ ճակատի հրամանատարն էր խմբապետ Մուշեղը:

Այսպիսով՝ ապրիլից սկսած Սասունը չորս կողմից պաշարված էր, և այդ վիճակը տևեց մինչև հուլիս: Մինչև հունիս բոլոր ճակատներում սասունցիները հերոսաբար դիմադրեցին հարձակումներին: Բայց ռուսական բանակի առաջխաղացումն ուշանում էր, և հետզհետե ավելի սուր զգացվեց զինամթերքի ու պարենի պակասը: Քրդերի ձեռքն անցան Խիանքը, Խուլբի մեծ մասը և Բսանքը: Հունիսի կեսերին պաշարման օղակն ավելի նեղացավ: Դիմադրողական կռիվները հետըզհետե փոխադրվեցին Անդոկ, որը կենտրոնական դիրք էր գրավում: Հարավային շրջանների ժողովուրդն ու կռիվողները տեղաբաշխված էին Տավորիկի, Անդոկի և Գեբինի լեռներում ու անտառներում: Տավորիկից մինչև Կուրտիկ և Ծովասարի ստորոտից մինչև Անդոկի հարավային փեշերը՝ 1200 քառ. կմ տարածությամբ այդ շրջանում, հավաքվեցին ոչ միայն Սասունի ժողովուրդն իր մարտիկներով հանդերձ, այլև Մշո դաշտից և ուրիշ վայրերից այստեղ հասած գաղթականները<sup>64</sup>: Այդ բազմությամբ կերակրելու հարցը դարձավ մեծ հոգա: Միակ լուծումը մոտակա քրդական գյուղերի վրա հարձակվելն էր, ինչը կունենար մաս ռազմավարական նշանակություն: Այդ նպատակով կազմվեցին հարվածող խմբեր՝ փորձառու ֆիդայիներ Չոլոյի և շենիկցի Ղազարի գլխավորությամբ: Այդ խմբերը հու-

<sup>62</sup> Տես նույն տեղում, էջ 439:

<sup>63</sup> Տես նույն տեղում, էջ 442:

<sup>64</sup> Տես նույն տեղում, էջ 446:



նիսի վերջին երկու շաբաթվա ընթացքում շեշտակի հարձակումներ գործեցին քրդերի վրա և ձեռք բերեցին զգալի բանակությամբ մթերապաշար: Միևնույն ժամանակ, այդ հարձակումների շնորհիվ քրդերը խուճապի մատնվեցին և 25 կմ հետքաշվեցին Անդոկի ճակատից:

Թնդանոթներով զինված թուրքական զորամասերը Կուրտիկով ուղղվեցին դեպի Շենիկ և Մեմալ, որոնք հերոսական Սասունի առաջին դարպասներն էին: Թուրքերի հիմնական նպատակն էր ոչնչացնել Մուշից և Մշո դաշտից ազատված հայ մարտիկներին, որոնք Կոմսի և Մատթեսի գլխավորությամբ դիրքեր էին գրավել Հավատորիկի և Մառնիկի բարձունքներում: Այդ դիրքերում հայ մարտիկները կռվեցին երեք ամսից ավելի, ուստի և ուժասպառ եղան: Փոքրաքանակ սասունցիները երկու օր համառորեն դիմադրեցին, բայց ի վերջո թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ տեղի տվեցին և անցան Շենիկ ու Մեմալ<sup>65</sup>:

Հուլիսի 19-ին թուրքական հախուռն հարձակումը վերաձվեց կանոնավոր ճակատամարտի: Նման պայմաններում Ռուբենը, Կորյունը և Մճոն վերադասավորեցին ուժերը և դիմադրությունը կենտրոնացրին վեց ճակատներում: Տավորիկի և Խիանքի ճակատը ղեկավարեց խմբապետ Մուշեղը, որի օգնականներն էին ալիջանցի Տիգրանը և բասնցի Դավիթ Երիցյանը: Շենիկ-Մեմալի ճակատի ղեկավարությունը հանձնվեց Չոլոյին, Շենիկցի Ղազարին, Մեմալցի Քյաթիպ Մանուկին և Աղամին<sup>66</sup>: Մարտական ղեկավարներն էին Մորուք Կարոն, Ղազար Պետոյանը, Սրգոյի Հովսեփը, Քյաթիպ Կիրակոսը, Մարգեն, Տեր Քաջի Աղամը, Ղազար Ֆահրատյանը և Գարոյի Պետրոսը: Կենտրոնը ղեկավարեց Ռուբենը, որի կողքին էին Մուխսի Ֆարհատի Արոն, Պզտիկ Արամը, Ավրանի Արամը և Հրայրի եղբայր Մանոն՝ իրենց պահեստային խմբերով<sup>67</sup>:

Սասունի պաշարված շրջաններում հավաքվեց շուրջ 15 հազար մարդ, բոլորն էլ կորովի ու կռվի ընդունակ, և բոլորն էլ ձգտեցին կրկնելու 1894 և 1904 թվականների հերոսամարտերը՝ այս անգամ ավելի մեծ մասշտաբով:

Շենիկի ուղղությամբ թուրքական բանակին հաջողվեց գրավել Մերկե-Մոզանի բարձունքները: Հայ մարտիկները նահանջեցին և ամրացան Մեմալի, Շենիկի ու Կուրտիկի գծի վրա: Նույն օրը քրդերը հարավից Տավորիկի և Իշխանաձորի ուղղությամբ ձեռնարկեցին բռուն հարձակում, սակայն Սպիտակ լեռան կիրճերում հանդիպեցին ուժեղ դիմադրության: Երեկոյան քրդերը զինադադար առաջարկեցին, որը և ընդունվեց:

Շենիկի ճակատում Ռուբենը, Կորյունը և Մճոն որոշեցին ձեռնարկել գիշերային կայծակնային հակահարձակում թուրքական թնդանոթների վրա, որոնք բարձր դիրքերից 15-20 կմ տարածության վրա կրակային փոթորիկ էին տեղում: Հայ մարտիկներն արագորեն ոչնչացրին թնդանոթաձիգներին և գրավեցին երեք թնդանոթները: Այնուհետև այդ նպաստավոր դիրքերից նրանք մրկկածուփ կրակ

<sup>65</sup> Տես «Վերապրած Կիրակոս Տեր-Տոնապետի Երիցյանի վկայությունը Մուշի գավառի, Մուշի գավառակի Շենիկ գյուղի կոտորածների մասին»: «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», հ. 2, Բիթլիսի նահանգ, էջ 249–252:

<sup>66</sup> Տես նույն տեղում, էջ 452:

<sup>67</sup> Տես նույն տեղում:

տեղացին մոտակա դիրքերում գտնվող թուրքական զորամասերի վրա՝ դրանց պատճառելով մեծ կորուստներ, մինչդեռ կենդանի մնացածները դիմեցին խուճապահար փախուստի: Շենիկը վերագրավվեց<sup>68</sup>:

Հյուծված զորամասերը համալրելով նոր ուժերով ու թնդանոթներով՝ թուրքերը հուլիսի 23-ին սկսեցին ավելի լայնածավալ հարձակում, որը տևեց մինչև օգոստոսի 2-ը: Անդոկի շրջանում դիրքերը ձեռքից ձեռք էին անցնում: Թեև թուրքերն ունեին բացահայտ առավելություն, սակայն նրանք օրական առաջ էին շարժվում հազիվ մեկ կիլոմետր: Իսկ օգոստոսի 2-ին տեղի ունեցավ Սասունի հերոսամարտի վերջին արարը: Թշնամուն հաջողվեց Շենիկի ճակատից ճեղքել դիմադրության կուռ շղթան՝ խլելով Կորյունի ու նրա նման հերոսների կյանքը, հերոսներ, որոնք այլևս նահանջելու տեղ չունեին, որովհետև նահանջել կնշանակեր Սասունի բնակչությանը դատապարտել կոտորածի:

Տասնօրյա հերոսամարտից և Շենիկի անկումից հետո հրավիրվեց վերջին խորհրդակցությունը, որտեղ մարտական խմբերի ղեկավարները որոշեցին տարբեր ուղղություններով հարձակվել թշնամու վրա և ամբողջ ժողովրդի հետ ճեղքել պաշարման շղթան: Այդ ծրագիրն իրագործվեց օգոստոսի 3-ի գիշերը<sup>69</sup>: Կռվող խմբերին ու ժողովրդին հաջողվեց ապաստանել անառիկ լեռների ապահով վայրերում: Մարտիկներին՝ Ռուբենի, Վահան Փափազյանի (Կոմս), Մարտիրոսի և այլ խմբապետների ղեկավարությամբ, հաջողվեց ուղղություն վերցնել դեպի հյուսիս-արևելք և օգոստոսի վերջերին հասնել ռուսական բանակին:

Սասնա լեռները մինչև 1916 թ. գարունը պահպանեցին իրենց զավակներին, մինչև որ ռուսական զորքի առաջխաղացման հետևանքով թուրք-քրդական ուժերը նահանջեցին, և հայ կամավորական զնդերը 1916 թ. առաջին ամիսներին վերանվաճեցին Տարոնը: Սասունի հայությունը մեկ ամբողջ տարի՝ 1915 թ. փետրվարից մինչև 1916 թ. փետրվար, կրելով ծանր կորուստներ, այդուհանդերձ հաջողությամբ դիմադրեց թուրքերին և էական մասնակցություն բերեց Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծմանը:

### ՇԱՊԻՆԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1915 թ. հունիսի 3-ին սկսվեց Շապին Գարահիսար քաղաքի հայկական թաղամասի ինքնապաշտպանությունը: Ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունը հանձնարարվեց Գուկաս Տեովլեթյանին (Գուկաս Աղբար), որը վայելում էր բոլոր քաղաքական հոսանքների համակրանքն ու վստահությունը: Իսկ մարտական գործողություններն անմիջականորեն ղեկավարում էր Անդրանիկ Օզանյանի վաղամեռիկ կնոջ՝ Վերոնիկայի եղբայր Գարեգին Թաշճյանը<sup>70</sup>:

Ի պատասխան թուրքերի կրակի՝ հայերն իրենց ամուր դիրքերից կրակ տեղացին թուրքական թաղերի վրա, սակայն ի վերջո ստիպված էին փոխադրվել քաղաքի հինավուրց բերդը, որը կառուցված և ամրացված էր դեռ հռոմեական

<sup>68</sup> Տես նույն տեղում, էջ 456:

<sup>69</sup> Տես նույն տեղում, էջ 457 – 458:

<sup>70</sup> Տես Հ. Միմոնյան, Անդրանիկի ժամանակը: Գիրք Ա: Ե., 1996, էջ 471:

գորավարների ձեռքով և ուներ բնական ու արհեստական ամրություններ: Բերդում ապաստանեց 5062 հոգի: Նրանցից 1500-ը արական սեռի էին. կռվի ընդունակ էին 250-ը, իսկ մնացածները ծերեր, կանայք, երեխաներ, պատանիներ, հիվանդներ էին: Բերդում ձեռնարկվեցին կազմակերպական աշխատանքներ՝ պարենավորում, ջրամատակարարում, զինական պատրաստում: Ստեղծվեց Ձինվորական խորհուրդ:

Բերդում ապաստանած ժողովուրդը մի քանի ժամվա ընթացքում կիսաավեր բերդը վերածեց լավ ամրացված ամրոցի: Քարե հաստ պատերով նորոգվեցին աշտարակները, խարխլված պարիսպները, նոր պատնեշներով իրար կապվեցին դիրքերը: Դիրքեր կառուցվեցին իշխող յոթ ճակատների վրա, կազմվեցին դրանք պաշտպանող խմբեր՝ յուրաքանչյուրը 8-25 հոգի, իրենց պետերով, տասնապետերով, հերթապահներով, փոխանորդներով:

Բերդի պաշտպաններն ունեին 150 մաուզեր, 50 կարաբին և «այնալու» հրացան, հունական, բուլղարական հրացաններ, 40 հեծելագորային բազմահարված «Ֆիլինտա» տիպի հրացան և 80-ի կարգի ձեռնառումբեր<sup>71</sup>: Ինքնապաշտպանության ղեկավար Ղուկաս Աղբարը հրահանգ տվեց՝ ոչ մի անտեղի գնդակ, ոչ մի ռումբ չարձակել առանց գոնե 5 թուրք սպանելու: Կարգապահություն հաստատելու համար Ձինվորական խորհուրդը տվեց հետևյալ հրահանգները. 1. բացարձակ հնազանդություն խմբապետներին, 2. միջկուսակցական վեճեր և խռովություններ հարուցող անձինք կզնդակահարվեն, 3. առանց Ձինվորական խորհրդի թույլտվության ոչ ոք իրավունք չունի հեռանալու բերդից, 4. անհնազանդները տեղում կենթարկվեն մահապատժի<sup>72</sup>:

Հունիսի 5-ի առավոտյան թուրքերն սկսեցին հրետակոծությունը: Հայերը հավաքում էին ժայռերի խռոչներում պայթած ռումբերի բեկորները, տանում զինարան, փամփուշտներ ձուլում ու «վերադարձնում» թշնամուն: Ղուկաս Աղբարի հնարամտության շնորհիվ թուրքական թնդանոթներից մեկը լռեց, որովհետև հայերը նշանառվական կրակով ոչնչացրին թնդանոթաձիգներին:

Հաջորդ լուսաբացին թուրքերը վերսկսեցին հրետակոծությունը՝ երեք հրանոթներով: Ղուկաս Աղբարը և Ձինվորական խորհուրդը որոշեցին մինչ այդ պահված ռումբերը բաժանել դիրքերում գտնվող մարտիկներին: Մինչև կեսօր հայերը նախապատրաստվեցին և պատասխան կրակ չբացեցին: Այդ լուսայամբ քաջալերված՝ թուրքերը շարժվեցին դեպի վեր: Հայկական դիրքերից կրակ տեղաց, և թշնամին անկանոն կերպով նահանջեց: Թուրքական հարձակումը վերսկսվեց հաջորդ օրը: Այս անգամ վեր էր մագլցում թուրք խուժանը, իսկ զինվորները մնացին ներքևում: Սկսվեց թեժ կռիվ, որը շարունակվեց մինչև երեկո, երբ հարձակվողները կրկին նահանջեցին: Նույնը կրկնվեց նաև հաջորդ օրերին: Բերդի պաշտպանները հույսեր էին կապում ռուսական զորքերի առաջխաղացման հետ: Նրանք սպասում էին նաև Մեքաստացի Մուրադին և Անդրանիկին, որոնք, սակայն, ուշանում էին:

<sup>71</sup> Տես «Մեծ եղեռնի հերոսապատում. ...», էջ 118:

<sup>72</sup> Տես նույն տեղում, էջ 119:

Հունիսի 20-ի լուսաբացին թնդանոթների համազարկերի ուղեկցությամբ թուրք զինվորների շրթաները քայլող անտառի նման սկսեցին բարձրանալ դեպի բերդ: Հայերը պատասխանեցին միահամուռ ու անդադար կրակով՝ հաշվի չառնելով փամփուշտ խնայելու պահանջը: Նրանք գերագույն ճիգերով էին մնում դիրքերում, ամեն կողմից լսվում էին օգնության կանչեր: Ղեկավարները հայտնվեցին անելանելի դրության մեջ. ինչպե՞ս դիմադրել թուրքական 5-6 հազարանոց կանոնավոր բանակին և նույնքան էլ խուժանին: Թշնամին հասավ բերդի պարիսպներին: Նրան հաջողվեց գրավել բերդի դուռը և քանդել մուտքը պաշտպանող պատվարը: Այդ ճգնաժամային պահին բերդի դռան առջև պայթեց մի ռումբ, որը նետել էր Գ. Կարմիրյանը: Հացթուխ կանայք ևս ռումբեր պահանջեցին: Այդ պահին 14 տարեկան Հ. Թևեքելյանը կյանքի գնով հայթայթեց մի ռումբ, որը պայթեցվեց դռան առջև՝ սպանելով 5-6 զինվորի, մինչդեռ մյուսներն ահաբեկված թաքնվեցին քարերի հետևում:

Հայ մարտիկները հարձակվեցին խուճապահար թշնամու վրա: Թշնամին դիմեց փախուստի՝ թողնելով մեծաթիվ դիակներ: Ժողովուրդը պարով ու լացով էր տոնում իր հաղթանակը, որովհետև միևնույն ժամանակ լուսնի լույսով հողին էր հանձնում իր զոհված հարազատներին, այդ թվում՝ ինքնապաշտպանության ղեկավարներից Հ. Գարակյոզյանին, Ավագ Տուրիկյանին, Ռուբեն և Գրիգոր Պարոնվարդյան եղբայրներին, Ե. Վեցիկյանին և ուրիշների<sup>73</sup>:

Հաջորդ մի քանի օրերին հարաբերական անդորր էր: Բայց ի՞նչ չկարողացավ անել թշնամին, արեց սովը: Ոչ մի տեղից օգնություն չեկավ: Անդրանիկ Պարոնվարդյանը և Նշան Մերեճյանը գնացին թուրքերի հետ բանակցելու, բայց այլևս չվերադարձան:

Ղուկաս Աղբարը ժողովի հրավիրեց բոլոր մարտիկներին: Նա հրահանգեց գիշերային ուժեղ հարձակումով ճեղքել պաշարման օղակը, իջնել դաշտ և կռիվը շարունակել շրջակա լեռներում, ինչպես նաև թուրքերին սպառնալ շրջակա թուրքական գյուղերի ոչնչացմամբ, եթե նրանք վայրագորեն վարվեն բերդում մնացած կանանց ու երեխաների հետ:

Նահանջն սկսվեց դռան առջևից: Սկսեցին իջնել զգուշորեն, առանց աղմուկի: Մակայն թշնամին կռահեց հայերի մտադրությունը: Սկսվեց գիրկընդիսառն կռիվը: Նահանջին մասնակցող շուրջ հազար հոգուց հարյուրը նահատակվեց այդ գիշերային մարտում: Մնացածները, երեք ճակատով հարվածելով թշնամուն, անցան դաշտ, որտեղ ցրվեցին և մոտ երկու տարի տարբեր վայրերում կռվելուց հետո բոլորն էլ սպանվեցին<sup>74</sup>:

Հունիսի 28-ին բերդի վրա պարզվեց անձնատվության սպիտակ դրոշը: Չհավատալով աչքերին՝ թշնամին վեց ժամ սպասեց և նոր միայն հաղթանակի փողեքով ու թմբուկներով բարձրացավ բերդ՝ հերթական կոտորած ձեռնարկելու համար: Հաջորդ սերունդների շուրթերին մնաց դյուցազնական Շապին Գարահիսարիի հերոսական անունը: Իսկ շապինգարահիսարցի Արամ Հայկազն իր հուշերի

<sup>73</sup> Տես նույն տեղում, էջ 133:

<sup>74</sup> Տես նույն տեղում, էջ 137:

գրքում գրեց. «Աղոթելու տեղ կանիծեմ այն Աստվածը՝ որ մեր ճակատագիրը գրեց»<sup>75</sup>:

Գահիճներն առանձին դաժանությամբ հաշվեհարդար տեսան Անդրանիկի հարազատների հետ՝ նման քստմնելի եղանակով վրեժխնդիր լինելով իրենց համար սարսափազդու ժողովրդական հերոսից: Նրանք ոչնչացրին Անդրանիկի եղբոր ու հորեղբոր ընտանիքները: Նրանց թվում էր Անդրանիկի հորեղբոր որդին՝ նշանավոր հնչակյան գործիչ և անվանի մտավորական Գազիկ Օզանյանը, որի գրչին են պատկանում «Պատմություն հայ լեզվի և բանահյուսության», «Հայաստանում: Հայուն պատմական դերը» արժեքավոր աշխատությունները:

### ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

1915 թ. հուլիսի 26-ին տեղահանվելու հրահանգ ստացավ Քեսայի հայ բնակչությունը: Կային միամիտներ, որոնք հավատացին կառավարության կեղծ խոստումներին, թե իրենց մեկնումը ժամանակավոր է: Դրանք բնակչության մեկ երրորդն էին, իսկ մնացած մասը որոշեց դիմագրավել արյունաբերու թշնամուն<sup>76</sup>: Դրանցից զենք կրելու ընդունակ էին շուրջ 800-ը, իսկ զենքը քիչ էր՝ 133 հունական «Կրա» հրացան, 7 մատզեր, 450 հնատիպ և որսորդական հրացաններ: Յուրաքանչյուր հրացանի բաժին էր հասնում 80-100 փամփուշտ<sup>77</sup>: Դրանից բացի, կար բավականաչափ վառող ու կապար՝ 30000 փամփուշտ սարքելու համար:

Չափազանց կարևոր էր ինքնապաշտպանության համար հենակետ ընտրելու հարցը: Ոմանք առաջարկեցին ամբողջ ժողովրդին հավաքել ամենալավ դիրք ունեցող գյուղում և այն վերածել ամրոցի: Ի վերջո, վերապատվելի Տիգրան Անդրեսայանի և Մովսես Տեր-Գալուստյանի առաջարկով որոշվեց հաստատվել Մուսա լեռան գագաթին, որի բարձրությունը 1800 մետր էր, տարածքը՝ 70-80 քառ. կմ<sup>78</sup>: 1915 թ. հուլիսի 31-ին սկսվեց լեռ բարձրանալու գործողությունը, որը տևեց երեք օր: Դա կատարվում էր մեծագույն դժվարություններով, որովհետև պատերազմի ընթացքում կառավարությունը բռնագրավել էր բոլոր փոխադրամիջոցներն ու քարշակող ուժը: Ամեն մի գյուղից ծայր առավ մարդկային բազմություն՝ հակերով ու պարկերով բեռնված, իսկ հովիվները քշում էին կովերին, այծերին ու ոչխարներին: Վերելքը գնալով դժվարանում էր: Օգոստոսի 1-ին ժողովրդի մեծ մասը հասավ Թաթար Ալան կոչված սարահարթը՝ լեռան գագաթից բավական ներքև: Հետագայում եկածներին տեղավորեցին Գ-ճլճա, Գ-ուզնդազ, Տամլաճիզ և Գ-ափլան Տուզաղե վայրերում<sup>79</sup>: Ժողովրդի տեղաշարժը աննկատ չմնաց, և Սվեդիայի մյուդիրը երեք անգամ հայերից պահանջեց հրաժարվել իրենց մտադրությունից, բայց նրա հորդորներն անպատասխան մնացին:

<sup>75</sup> *Արամ Հայկազ*, Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը: Նյու Յորք, 1957, էջ 459:

<sup>76</sup> Տես *Ջ. Բրայս*, Նշ. աշխ., էջ 91:

<sup>77</sup> Տես *Յ. Գ. Պուրասյան*, Մուսա-լեռան հերոսամարտը: Այնճար, 2004, էջ 13:

<sup>78</sup> Տես «Մեծ եղեռնի հերոսապատում. ...», էջ 30:

<sup>79</sup> Տես նույն տեղում, էջ 31:

Մուսա լեռան բարձունքներն ունեին աննպաստ կլիմա: Եթե ստորին մասում կիզիչ արև էր, ապա վերևում տևական սառցային ու թանձր մշուշ էր, որը պարունում էր մարդկանց մարմինը, թրջում հագուստները և թափանցում մինչև ոսկորները: Ռ-ազմագիտական տեսակետից մշուշն ուներ իր առավելություններն ու անպատեհությունները: Տղամարդիկ ձեռնամուխ եղան ծառերից կացարաններ պատրաստելու գործին:

Օգոստոսի 5-ին մյուդիրը մուսալեռցիների մոտ ուղարկեց մի պատվիրակություն՝ նամակով, որում փորձում էր ըմբոստներին համոզել հրաժարվել «արկածախնդրությունից» և իրենց ճակատագիրը վստահել «բարեխնամ» կառավարությանը: Սակայն մյուդիրի այս փորձն էլ հաջողություն չունեցավ:

Օգոստոսի 7-ին տեղի ունեցավ Թաթար Ալանի ընդհանուր ժողովը: Յուրաքանչյուր շրջանից մասնակցում էր 15 ներկայացուցիչ: Սակայն ժողովը նոր էր սկսվել, երբ լուր հասավ, որ 200 թուրք ասկյարներ շարժվում են դեպի հայերի դիրքերը: Եվ սկսվեց առաջին մարտը: Թշնամին թերագնահատել էր հայերի ուժը, այնպես որ վեց ժամ տևած ընդհարումից հետո թուրքերը նահանջեցին՝ թողնելով տասը սպանված և քսան վիրավոր: Այդ հաղթանակն ունեցավ կարևոր հոգեբանական նշանակություն և գոտեպնդեց ժողովրդին:

Օգոստոսի 10-ի լուսաբացին սկսված ճակատամարտը տևեց 12 ժամ, թշնամին կորցրեց 100, հայերը՝ 3 մարդ: Իրենց քաջությամբ աչքի ընկան Պետրոս Գալուստյանը և Հակոբ Գարակյոզյանը: Առաջինը հինգ գնդակով սպանեց չորս թնդանոթածիզների, իսկ երկրորդը մարտնչեց մինչև վերջին փամփուշտը և ստացած վերքերից հաջորդ օրը մահացավ:

Երեք շրջանների տեղական մարմինները Տամլաճիգում հրավիրեցին ժողով՝ իրենց գործողությունները համակարգելու համար: Ստեղծվեց Կենտրոնական վարչական ժողով և զինվորական կենտրոնական վարչություն, որի վերահսկիչ նշանակվեց 21-ամյա Մովսես Տեր-Գալուստյանը: Կենտրոնական վարչական ժողովի ատենապետն էր պատվելի Տիգրան Անդրեասյանը: Մովսես Տեր-Գալուստյանի առաջին գործը եղավ մարտական ուժերի կազմակերպումը:

Օգոստոսի 19-ին Աստվածածնի տոնի առթիվ գլխավոր գորանցի մոտ մատուցվեց հանդիսավոր պատարագ, որին ներկա էր գրեթե ամբողջ ժողովուրդը: Պատարագը դեռ չէր ավարտվել, երբ հայտնի դարձավ, որ թշնամին մեծ ուժերով շարժվում է դեպի լեռը: Հարձակվում էր մոտ 4000 զինվոր՝ տասնյակ թնդանոթներով, և անհամար խուժան: Թուրքերն իրենց ուժերը կենտրոնացրին Թաթար Ալանի ուղղությամբ, որտեղից հեշտ կլիմեր գրավել մյուս դիրքերը: Երբ գիշերն իջավ Մուսա լեռան վրա, թշնամին տիրացավ Թաթար Ալանին և հայտնվեց հայերի վերջին դիրքերից հագիվ 200 մետր հեռավորության վրա: Լուսաբացին հայերը մարտնչեցին մեկը տասի դեմ: Նրանց կարգախոսն էր. «Դիմադրել, չնահանջել ու մեռնել»: Կեսօրից հետո սկսվեց գլխավոր հարձակումը: Գրաված Թաթար Ալանից թշնամին արկերի տարափ տեղաց բնակավայրերի ու գորանոցների վրա, և ժողովուրդն ստիպված եղավ խուճապահար փախչել մոտակա անտառները:

Մարտը հիմնականում մղվեց մի բլրի շուրջ, որը կոչվեց «Մահվան բլուր»:

Գիրքերը չէին լքում նույնիսկ ծանր վիրավորները: Թշնամին յոթգլխանի դևի պես փորձում էր շրջապատման օղակի մեջ առնել «Մահվան բլուրը»: Եվ այդ պահին կատարվեց անհավատալի մի բան: Գիրքերը լքած մարտիկներից շատերը հետ վերադարձան: Նրանցից մեկը առաջարկեց կազմել 50 հոգանոց խումբ և անակնկալ կերպով հարվածել թշնամու թիկունքից, ինչն էլ արվեց:

Թշնամու աջ թևն սկսեց խուճապահար նահանջել: Բլրի պաշտպանները, օգտվելով դրանից, դուրս եկան իրենց դիրքերից ու գրոհեցին նրանց վրա՝ թշնամու շարքերում մահ սփռելով: Շատ չանցած՝ հրանոթներն ու հրացանները լռեցին: Հայերը տվել էին 10, թշնամին՝ 500-ից ավելի զոհ: Լուսաբացին ամբողջ Մուսա լեռը հայերի ձեռքում էր: Հայերի ռազմավարն էր՝ մի քանի ջորի, 9 մարուգեր և հազար փամփուշտ<sup>80</sup>: Կրած պարտությունից հետո թուրքերը փոխեցին ռազմավարությունը. նրանք որոշեցին պաշարել Մուսա լեռը և ժողովրդին սովի մատնել:

Այս ամբողջ ժամանակամիջոցում չերևաց ոչ մի ռազմանավ: Ռխտի որոշվեց կրկին մարդ ուղարկել Ալեքսանդրետ՝ ռազմանավ որոնելու համար, ինչպես նաև շինել մի փոքրիկ առագաստանավ՝ Կիպրոս հասնելու համար:

Այսպես անցավ ամբողջ օգոստոս ամիսը: Օրեցօր ոչ միայն ավելի էր սրվում պարենավորման վիճակը, այլև մոտենում էին աշնան ցրտերը, որոնք անկարելի կդարձնեին նման բարձրության վրա գոյատևելը:

Վերջապես սեպտեմբերի 5-ին ծովի կապույտ ջրերի հեռվում երևաց մի մոխրագույն զանգված, որից ծխի քուլաներ էին բարձրանում: Ժողովուրդը մի մարդու նման վազեց դեպի «Ազատության լեռը», որի վրա արդեն ցցված էին երկու դրոշները: Նավը մոտեցավ մեծ արագությամբ: Այն խարիսխ գցեց ծովեզերքից մի քանի կիլոմետր հեռու: Դրանից անջատվեց մակույկ, որը եկավ ու կանգ առավ մի փոքրիկ ծովածոցում:

Մուսա լեռան վրա գտնվող հայերի ճակատագիրը պետք է որոշվեր ութ օր հետո: Հայերը ռազմանավի հրամանատարին հայտնեցին նաև, որ թուրքերը Քեբուսիե գյուղի եկեղեցում կուտակել են մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք, իսկ գյուղը լիքն է հայ գաղթականներով: Ռազմանավն իջավ մի քանի կիլոմետր դեպի հարավ և սկսեց ռմբակոծել թուրքերի ռազմական պահեստները: Դրանից հետո «Գիշերն» չերևաց երկու օր:

Սեպտեմբերի 7-ի առավոտյան թուրքական մեծ ուժեր կրկին նետվեցին լեռան կողմի վեր՝ Շեյխ Օրդուի կողմից: Ծակատամարտը տևեց 10 ժամ: Երեկոյան թշնամին հայերի դիմադրության առջև դարձյալ ընկրկեց՝ կրելով մեծ կորուստներ: Սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ Մուսա լեռան վերջին ու վճռական ճակատամարտը: Լեռան պաշտպանների թիկունքը հսկում էին «Գիշերն» և «Դեսեքս» ֆրանսիական նավերը: Գետնին էին փռվում թշնամու ամբողջ շարքերը: Մուսալեռցիները գերազանցում էին մեկը մյուսին: Հատկապես աչքի ընկավ Եսայի Յաղությանը, որը հայտնվում էր ամենավտանգավոր դիրքերում: Նրա վճռականությունն ու զինական հմտությունը մեծապես նպաստեցին այդ օրվա հաղթանակին: Հետ չէին մնում նաև հայ կանայք: Խուժանը, կորցնելով հարյուրավոր գրոհայինների, տեղի տվեց ու սկսեց նահանջել, ապա նահանջը վերաճեց

<sup>80</sup> Տես նույն տեղում, էջ 73:

փախուստի: Հայերից գոհվեցին երկուսը, մի քանիսը վիրավորվեցին: Ճակատամարտի ավարտին երկու ռազմանավերն սկսեցին հրետակոծել թուրքերի գորակայաններն ու գյուղերը:

Երբ ռմբակոծությունն ավարտվեց, «Գիշենից» մի մակույկ մոտեցավ ափին: Հայերին հաղորդվեց ֆրանսիական կառավարության որոշումը, որ անհնար է օգնական զորքեր ափ հանել և շարունակել դիմադրությունը: Ծովակալ Դարտիժ դյու Ֆուռնեն հրահանգ էր ստացել Մուսա լեռան հայերին փոխադրել ապահով վայր՝ Կիպրոս կամ Եգիպտոս: Հրահանգվում էր առանց ժամանակ կորցնելու ժողովրդին հավաքել ծովեզրին, որտեղից նրանք մակույկներով կփոխադրվեն ռազմանավեր: Գիշերում թողնելով փոքրաթիվ ուժեր՝ ժողովուրդն իջավ ծովեզրը: Այդ գործողությունը տևեց երկու օր:

Հետագայում ֆրանսիական բանակի կազմում ստեղծվեց Հայկական (Արևելյան) լեգեոն, որի առաջին զինվորագրյալները Մուսա լեռան մարտիկներն էին<sup>81</sup>: Լեգեոնն աչքի ընկավ Արարայի ճակատամարտում և արժանացավ Պաղեստինում դաշնակից զորքերի հրամանատար, անգլիացի գեներալ Ալենբիի բարձր գնահատականին: Տարիներ անց Սվեդիայի հայությունը դաշնակից զորքերի հետ վերադարձավ իր գյուղերը:

Մուսա լեռան հերոսամարտի մասին «Մուսա լեռան քառասուն օրը» վերնագրով անմահ վեպ ստեղծեց ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը<sup>82</sup>: Վեպը գերմաներեն լեզվով լույս տեսավ 1933 թվականին: Վեպը թարգմանված է 36 լեզուներով, այդ թվում նաև հայերեն:

1938 թ. Պոլսում թուրքերն այրեցին «անիծյալ վեպի» հազարավոր օրինակներ: 1961 թ. անգլերեն երկրորդ տպագրությունը լույս տեսավ երկու միլիոն տպաքանակով և արագ սպառվեց: Վեպը բարձր է գնահատել Վիլյամ Սարոյանը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Սլովենիայի պարտիզանները Ռոզ լեռը կոչեցին «Սլովենիայի Մուսա լեռ»:

### ՈՒՐՖԱՅԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Ուրֆա (Ռոռնա) կամ Եդեսիա, քաղաքը գտնվում է Սիջազետքի հյուսիսային սահմաններում: Ուրֆայի գավառն ուներ շուրջ 10 հազար քառ. կմ տարածք և որպես ինքնուրույն մյութեսարիֆություն ենթարկվում էր անմիջականորեն Պոլսին:

20-րդ դարի սկզբին Ուրֆա քաղաքի հայության թիվն անցնում էր 30 հազարից:

«Ինքնապաշտպանության միակ խիզախ և անկախ պատասխանատու և առաջնորդը եղավ Յոթնեդարյան Սկրտիչ: Ան իր եղբոր Սարգիսին և Ռասթկելենյանին ու իր մյուս ընկերներուն հետ կռվեցավ և քաջաբար միասին նահատակվեցավ... Ուրֆայի հայ երեւիները ամեն պարագային տակ ինքնապաշտպա-

<sup>81</sup> Լեգեոնի ստեղծման ու գործունեության պատմության և իրավաբաղադրական վերլուծությունը տես Ռ. Հ. Գասպարյան, Հայկական լեգեոնը (1916–1920 թթ.): «ՀԲ», 1996, հմ. 1, *ևսև՝ Ա. Հ. Գարամանուկյան, Հայկական լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ: «ՀԲ», 1996, հմ. 2:*

<sup>82</sup> Տես Ֆ. Վերֆել, Մուսա լեռան քառասուն օրը: Ե., 1964:



նության գաղափարին հակառակ կեցան: Միայն վերջին թույնին կրցան տեսնել իրականությունը, բայց ուշ էր»<sup>83</sup>:

ՌԻՖԱՅԻ հայության մղձավանջն սկսվեց հունիսի 8-ին, երբ ձերբակալվեցին 16 երևելիներ և կուսակցական գործիչներ: Երկու օր անց նրանք արքայազն Բագրատ Գյուլարաղաբը: Այստեղ բանտում քրդական տարագով ծայտված նրանց այցելեց Մկրտիչը և հայտնեց, որ հաջորդ օրը հարձակում է լինելու բանտի վրա ու բոլորին ազատելու են, սակայն բանտարկյալները չհամաձայնեցին<sup>84</sup>: Մի քանի օր անց ՌԻՖԱՅԻ ձերբակալված հայ գործիչներն սպանվեցին:



ՌԻՖԱՅԻ հերոսամարտի մասնակիցները, 1915 թ. հուլիս

Հունիսի 25-ին ՌԻՖԱՅԻ սկսվեցին նոր զանգվածային ձերբակալություններ: Հուլիսի 10-ին կառավարչատուն կանչվեց Արտավազը վարդապետը, որին հանձնարարվեց 48 ժամվա ընթացքում հավաքել հայկական թաղերում գտնվող բոլոր զենքերը: Հայերը հանձնեցին ոչ պիտանի զենքերը: Հուլիսի 26-ին Առաջնորդին նույնպես ձերբակալեցին: Հուլիսի 28-ի գիշերը բոլոր բանտարկյալներին դուրս բերեցին բանտից ու տարան դեպի Տիգրանակերտ, ճանապարհին էլ՝ ՌԻՖԱՅԻյից մի քանի ժամվա հեռավորության վրա գտնվող Շեյխան Գերեսի վայրում, բոլորին կոտորեցին<sup>85</sup>:

Օգոստոսի 4-ին թուրք զինվորներն ու չեթեները հանկարծակի շրջապատեցին ու կոտորեցին ՌԻՖԱՅԻյի երկու ժամվա հեռավորության վրա գտնվող Գուտենյան և Կարա Քյոփրու վայրերում տեղաբաշխված ավելի քան 1500 անգեն հայ զինվորների<sup>86</sup>: Մեպտեմբերի 29-ի առավոտյան թուրք ոստիկանները պաշարեցին Գուտենյի կոտորածից միակ փրկվածների՝ Սարգիս և Գրիգոր Տարախյանների թաքստոցը, որտեղ ապաստանել էին մի քանի տասնյակ հայեր: Եվ... սկսեցին

<sup>83</sup> Տես «Մեծ եղեռնի հերոսապատում. ...», էջ 165 *ևսև՝ Եվա Դերվիշյան*, ՌԻՖԱՅԻ ինքնապաշտպանությունը կամ դյուցազնաշունչ հայության վկան: Բեյրութ, 1978, էջ 358–359:

<sup>84</sup> Տես «Մեծ եղեռնի հերոսապատում. ...», էջ 168:

<sup>85</sup> Տես նույն տեղում, էջ 170, 177–178:

<sup>86</sup> Տես նույն տեղում, էջ 180–183:

դողանջել եկեղեցիների զանգերը: Քառորդ ժամ անց բոլորն իրենց դիրքերում էին: Հերոսամարտն սկսված էր:

Սկրտիչ Յոթնեղբարյանի հրամանով թաղում գտնվող թուրք ոստիկանները զինաթափվեցին, իսկ դիմադրողները սպանվեցին: Նա հրահանգեց թուրքական և հայկական թաղերի միջև նոր պատնեշներ չկառուցել, այլ ամրացնել թուրքական թաղերին նայող տները: Բոլոր դիրքերին բաժանվեցին ռումբեր:

Մեպտեմբերի 30-ի արշավույսին թուրք խուժանը՝ երեք խմբի բաժանված, հարձակվեց հայկական թաղերի վրա: Հայերը թույլ տվեցին, որ ամբոխը մտնի թաղերից ներս և ռմբահարեցին նրան: Առաջին օրը թուրքերը մարտի դաշտում թողեցին 450 դիակ, հայերն ունեցան 8 զոհ<sup>87</sup>:

Կովից հետո Յոթնեղբարյանն ու Ռասթկելենյանն այցելեցին բոլոր դիրքերը: Նրանք ստեղծեցին Ձինվորական խորհուրդ, որի մեջ մտան Հարություն Միմյանը, Խորեն Կյուպեղյանը, Լևոն Եղբերկերյանը, Հովհաննես Իմիրզյանն ու Արմենակ Աթարյանը<sup>88</sup>: Ընտրվեց Պարենավորման մարմին, սարքավորվեց հիվանդանոց: Բացվեց զինագործարան, որտեղ լցնում էին դատարկ փամփուշտները, նորոգում զենքերը:

Ձինվորական խորհրդի կարգադրությամբ հայկական թաղամասը բաժանվեց վեց շրջանների, որոնք միասին ունեին 32 դիրք: Յուրաքանչյուր շրջան ուներ իր խմբապետը, ամեն տասնյակ՝ իր տասնապետն ու փոխանորդը: Երկու խումբ թողնվեց կենտրոնում՝ իբրև պահուց ուժ:

Հոկտեմբերի 1-ի գիշերը թուրքերը մտան կաթոլիկական եկեղեցու բակ: Սկրտիչի հրահանգով ծուղակ սարքվեց, և բոլորը ոչնչացվեցին: Նույնը կատարվեց նաև Թեմրին թաղում՝ Գևորգ Ալահայտոյանի գլխավորությամբ: Գերված երկու թուրք զինվորների զենքերը Սկրտիչը հանձնեց կովին մասնակցած օրիորդներ Խանում Քեթենճյանին և Մարիամ Չիլինկիրյանին<sup>89</sup>:

Շուտով հայտնի դարձավ, որ Հալեպից դեպի Ռիֆա է գալիս Ֆախրի փաշան՝ 6000-անոց զորքով ու թնդանոթներով, ինչպես նաև Սուլեյման բեկը՝ 600 մարտիկներով: Դեպի Ռիֆա էին ձգվում նաև շրջակայքի քրդական աշիրեթները:

Հոկտեմբերի 3-ի առավոտյան հայկական թաղի ուղղությամբ արձակվեց առաջին թնդանոթի ռումբը: Մակայն այդ նույն գիշեր Հ. Ռասթկելենյանին հաջողվեց նոր ծուղակի մեջ գցել թուրքերին<sup>90</sup>: Սկրտիչի եղբայր Մարգիս Յոթնեղբարյան (Քոռ Մաքո), Գևորգ Ալահայտոյանն ու ևս հինգ քաջեր կարողացան քրդական տարագով աննկատ մտնելու Ֆախրի փաշայի թնդանոթներին, դիպուկ կրակով ոչնչացնել թնդանոթաձիգներին, հանել թնդանոթներից մեկի փակաղակը և վերադառնալ<sup>91</sup>:

<sup>87</sup> Տես նույն տեղում, էջ 187:

<sup>88</sup> Տես նույն տեղում, էջ 190:

<sup>89</sup> Տես նույն տեղում, էջ 194–195:

<sup>90</sup> Տես նույն տեղում, էջ 197:

<sup>91</sup> Տես նույն տեղում, էջ 202:

Հոկտեմբերի 7-ի առավոտյան Հայր Աբրահամի դիրքի մարտիկները նկատեցին, որ դիմացի բլրի լանջին տեղադրված են թուրքական թնդանոթներ: Քիչ անց եկավ մի թուրք բանագնաց հիսնապետ, որը բերեց Ֆախրի փաշայի նամակը գրված Սկրտիչ Յոթնեղբարյանին: Փաշան հայերի քաջությամբ իր հիացմունքն էր հայտնում և առաջարկում էր հանձնվել՝ խոստանալով, որ դիմադրության մասնակիցները ոչ միայն չեն պատժվի, այլև թուրքական բանակում կստանան կարևոր պաշտոններ: Քաջ ծանոթ լինելով թուրքի խոստումների ու երդման արժեքին՝ Սկրտիչը պատասխանեց, որ ՌԻՖայի հայությունը պետք է կռվի մինչև վերջին մարդը:

Բանակցություններից հետո թշնամին հայկական թաղերի վրա բացեց երկու թնդանոթների անկանոն կրակ: Հոկտեմբերի 8-ին Ֆախրի փաշայի գորքերն անցան կատաղի գրոհի: Նրանք տների պատերը ծակելով ջանացին անցնել հայկական Թեմրին թաղը: Երեսուն հայ մարտիկներ, թուրքերի զգեստներ հագած, ծուղակի մեջ գցեցին հայկական թաղերին անձանոթ թուրք զինվորներին ու կոտորած սարքեցին: Թուրքերից 200 հոգի սպանվեց, իսկ մնացածները փախան: Հոկտեմբերի 9-ի կիրակի օրը թուրքերին հաջողվեց ամրանալ Թլֆաուր կոչվող բլրի գագաթին, որը գտնվում էր հայկական թաղի թիկունքում, և այնտեղից կարելի էր հարվածել հայերի բոլոր դիրքերին ու տներին: ՌԻՂԻԺ Ժամը 12-ին բլրի գագաթից սկսեցին որոտալ թուրքական թնդանոթները: Սկրտիչը և Հարությունը շրջում էին դիրքից դիրք ու ժողովրդի մեջ նկատում սարսափ ու վարանում: Միննույն ժամանակ զինված օրիորդները երեք խմբով՝ Խանում Զեթենճյանի, Մարիամ Զիլին-կիրյանի և Կեմչյանի ղեկավարությամբ, անցնելով դիրքից դիրք, սկսեցին քաջալերել հայ մարտիկներին: Դիրքերի պաշտպանները երգում էին հայրենասիրական երգեր: Փամփուշտ չխնայելու կոչ անելով Սկրտիչը դուրս թռավ իր դիրքից, ծնկեց փողոցի կենտրոնում ու դիմահար կրակով տապալեց առաջ վազող թուրք զինվորին: Հայկական դիրքերից բազմաթիվ ռումբեր տեղացին հարձակվող թուրքերի վրա, որոնք, թողնելով բազմաթիվ դիակներ, սկսեցին փախչել: Հաղթանակը կատարյալ էր: Սակայն թշնամու գնդակից Սկրտիչը վիրավորվեց և տեղափոխվեց հիվանդանոց: Սկրտչի վիրավորվելու լուրն արագորեն տարածվեց ժողովրդի մեջ<sup>92</sup>:

Հարություն Ռասթելեյանը, թեև բարձր ջերմությամբ, անցնում էր դիրքից դիրք՝ խրախուսելով պաշտպաններին որոնք, 12 օր ու գիշեր կռվելով՝ ուժասպառ էին եղել: Նահատակվել էին լավագույն կռվողներ Գարատաշյանը, Ալաջաշյանը, Էդրերդերյանը, Արզուհալաճյանը, Լզվույանը, Սևքարյանը և ուրիշներ, սպառվելու վրա էր ձեռնառումների պաշարը, դատարկվում էր վառոդի պահեստը:

Հիվանդանոցում՝ Սկրտչի մոտ, խորհրդակցության հավաքվեցին Զինվորական մարմնի անդամները՝ կռվի նոր ծրագիր մշակելու համար: Բոլորը միաբերան ուխտեցին կռվել մինչև վերջին փամփուշտը ու վերջին մարդը:

Հոկտեմբերի 10-ի լուսադեմին թուրքական թնդանոթները վերսկսեցին ավերիչ ռմբակոծությունը: Մեկը մյուսի հետևից քանդվում էին հայերի տները, և պաշար-

<sup>92</sup> Տես նույն տեղում, էջ 220–221:

ման օղակը գնալով սեղմվում էր: Ուրֆացի մարտիկները կրակում էին ավերակների հետևից՝ անընդհատ «ամենայն տեղ մահը մի է» երգելով:

Հոկտեմբերի 11-ին գերմանացի Մ. Էքարտը, իր ցանկությամբ հանդիպեց Սկրտչի հետ: Տեսակցության ժամանակ գերմանացի սպան փորձեց Սկրտչին համոզել, որ հետագա դիմադրությունն ավելորդ է, և պետք չէ ժողովրդի բնաջնջման պատճառ դառնալ: Նա խոստացավ հերոսին փոխադրել Գերմանիա, սպահովել զինակիցների կյանքը: Սկրտիչը, մեղադրելով գերմանացուն Ուրֆայում խաղացած բացասական դերի համար, խստաշունչ ոճով պատասխանեց. «Եթե ձեր մեջ տակավին քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա, փրկեցեք անապատներուն մեջ անգեն ու անպատասպար կոտորվող բազմությունները: Ո՞ր են մեր ղեկավարները, ո՞ր է մեր առաջնորդը, բերեք միայն այս վերջինը ու անմիջապես վար դնեմ գեներալ»:<sup>93</sup> Էքարտը հեռացավ՝ սպառնալով անձամբ ղեկավարել թնդանոթած գոյությունը<sup>93</sup>:

Հոկտեմբերի 12-ին ռմբակոծություններն ավելի սաստկացան, և թուրքերն անցան կատաղի հարձակման: Թուրքերը մեծ թվով դիակներ էին թողնում, բայց զոհեր էին տալիս նաև հայերը, որոնց այլևս փոխարինողներ չկային: Պաշարման օղակը սեղմվում էր, և փրկության հույսը հետզհետե մարում էր: Ռասթկելենյանն առաջարկեց, որ կռվող տղաներն իրենք սպանեն իրենց մայրերին ու քույրերին, որպեսզի նրանք չընկնեն թուրքերի ձեռքը: Սկրտիչն առաջարկեց մի քանի օրվա դիմադրությունից հետո, երբ այլևս հնարավոր չլինի շարունակել կռիվը, մնացած ուժերով ճեղքել ճակատը և ապաստանել շրջակա լեռներում:

Հոկտեմբերի 13-ին չորս ժամ տևած ռմբակոծությունից հետո թշնամին կրկին հարձակվեց բոլոր դիրքերի վրա: Կռվի էին ելել անգամ փամփուշտ լցնող վարպետները: Թուրքերի ձեռքն անցան նաև մինչ այդ չգրավված տները: Ահավոր կռիվներ տեղի ունեցան հատկապես Հայր Աբրահամի շրջանում: Հայերի գնդակներն իզուր չէին թռչում, ճանապարհները լցվում էին թուրք զինվորների դիակներով, բայց զոհվածների փոխարեն կռվի դաշտ էին մտնում նորերը<sup>94</sup>:

Հաջորդ օրը հայկական թաղի տարածքն զգալի չափով փոքրացած էր: Սկրտիչն ու Հարությունն իրենց շուրջը հավաքեցին վերջին ուժերը, ամրացնել տվեցին նոր դիրքեր, ճշտեցին զինամթերքի քանակը, դասավորեցին մարտիկներին: Տնից տուն, փողոցից փողոց շրջելով՝ նրանք խրախուսեցին ժողովրդին, որ հանձնվելու մասին չմտածեն: «Քաջությամբ վերջացնենք քաջությամբ սկսած գործը», այս էր նրանց վերջին կարգախոսը<sup>95</sup>:

Մինչև հոկտեմբերի 18-ը կռիվը շարունակվեց նույն սաստկությամբ: Սկսել էր մաղել աշնանային անձրևը, ամենուրեք ավերակներ էին, վառողի ու նեխած դիակների անտանելի հոտ: Այդ պայմաններում անգամ Սկրտիչը հղացել էր նոր ծրագիր, որն իրագործելու համար Հարություն Միմյանը նոր ռումբեր էր լցնում: Հայերը ամերիկյան հյուպատոսարանի վրա ճերմակ դրոշ բարձրացրին և, երբ

<sup>93</sup> Տես նույն տեղում, էջ 223:

<sup>94</sup> Տես նույն տեղում, էջ 224–225:

<sup>95</sup> Տես նույն տեղում, էջ 225:

թուրքերը լցվեցին շենքի բակը, թաքստոցներից դիպուկ կրակով ոչնչացրին բոլորին: Դա Ֆախրի փաշային տրված վերջին դասն էր:

Ողբերգական էր ժողովրդի վիճակը, բազմաթիվ ընտանիքներ սկսեցին դիմել հավաքական անձնասպանության:

Ամսի 18-ին թուրքերն ամեն կողմից խուժեցին հայկական թաղերը և մտան Մայր եկեղեցու գավիթը: Այդ մարտում ճակատից խոցվելով ընկավ Հարություն Ռասֆելեյնյանը: Նույն օրը տեղի ունեցավ նրա թաղումը, որի մասնակիցներից մեկն ասել է. «Նա խաչից նոր իջեցրած Քրիստոսի տեսք ուներ, ճակատին՝ արյունի պսակ»<sup>96</sup>:

Հոկտեմբերի 20-ին դիմադրությունը շարունակվում էր միայն երկու թաղերում, իսկ գրավված թաղերում բազմաթիվ կանայք ու աղջիկներ ինքնասպան էին լինում: Հրանոթային կրակը դադարեց, և թուրքերը դիրքեր գրավեցին հայկական թաղերում ու տներում: Դա տևեց երեք օր, մինչև որ ընկան ուրֆացի վերջին կտրիճները, և զորքը տիրացավ քաղաքի ամբողջ հայկական թաղամասին:

Հոկտեմբերի 23-ի կիրակի օրը մեռյալ լուծություն էր: Այդ օրը ավարտվեց ՌԻՐՖայի հայության մեկամսյա հերոսամարտը: Եվ Ֆախրի փաշան բացականչեց. «Ի՞նչ կլինեն մեր վիճակը, եթե այդ ծանր օրերին մի քանի ուրֆաներ մեր դեմ այդպես ծառանային»<sup>97</sup>:

Վերջին օրերին Սյրտիչ Յոթնեղբարյանին պատգարակով դիրքից դիրք էին տանում, և միայն նրա երևալը ուժ էր տալիս ուժասպառ մարտիկներին: Մի վերջին ճիգով նա աչ ու ձախ կրակեց թուրք զինվորների վրա և վերջին գնդակով կյանքն ավարտեց փառավոր մահով: Ֆախրի փաշան թնդանոթի 24 համազարկով թուրք խուժանին տեղեկացրեց հսկայի մահվան մասին<sup>98</sup>:

Հանուն Հայոց աշխարհի ընկան նաև Գևորգ Ալահայտոյանը, Սարգիս Յոթնեղբարյանը, Հարություն Միմյանը, Արմենակ Աթարյանը, Լևոն Չերչյանը, Վահարշ Մեսրոպյանը, Գառնիկ Շամյանը և շատ ու շատ ուրիշներ<sup>99</sup>:

ՌԻՐՖայի հերոսամարտին, իրենց մասնակցության մեծ բաժինն ունեցան ՌԻՐՖայի հայուհիները: Նրանք ոչ միայն գթության քույրեր էին, այլև դիրքերում զենքը ձեռքին կռվողներ, իրենց ամուսիններին ու եղբայրներին ոգեշնչողներ: Այսպես. Եղիսաբեթ Յոթնեղբարյանը Սյրտիչի կինն էր ու նրա համհարզը, զինավառ Մուլթան Միմյանը Ռասֆելեյնյանի քույրն էր: Իրենց հերոսությամբ աչքի ընկան նաև օրիորդներ Մարիամ Չիլինկիրյանը, Խանում Քեթենճյանը, տիկին Խաթուն Գոնատուրաճյանը և շատ ուրիշներ: Նրանցից շատերը ընկան դիրքերում կամ օրհասական վերջին գրոհից հետո թույն խմեցին, իսկ ոմանք էլ իրենց գավակների ձեռքից բռնած նետովեցին իրենց ձեռքով հրդեհված տների բոցերի մեջ:

Այսպես ավարտվեց ՌԻՐՖայի հերոսամարտը՝ հայոց ինքնապաշտպանական հերոսամարտի հերթական փառավոր էջը:

<sup>96</sup> Տես նույն տեղում, էջ 239:

<sup>97</sup> Տես նույն տեղում, էջ 234:

<sup>98</sup> Տես նույն տեղում, էջ 238:

<sup>99</sup> Տես նույն տեղում, էջ 240:

## ՊՈՆՏՈՍԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Ինքնապաշտպանության դիմեց նաև Պոնտոսի հայությունը: Հատկապես նշանակալի էր Տրապիզոնի մոտակայքում գտնվող Շամպա և Թրե լեռներում ամրացած 700 տրապիզոնահայերի դիմադրությունը: Հայերի ղեկավարներն էին Ջիլ Հովհաննեսը, Հակոբ Քեհյանն ու Միքայել Ջեթունյանը<sup>100</sup>: 1915 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին թուրքական կանոնավոր բանակի զորամասերը՝ զինված հրանոթներով և գնդացիներով, փորձեցին ընկճել հայ մարտիկներին, բայց պարտություն կրելով՝ նահանջեցին: Որոշ ընդմիջումներով Պոնտոսի հայերը մարտնչեցին մինչև 1923 թ. նոյեմբերը, երբ նավակներով ճեղքելով Սև ծովի ալիքները՝ հասան ռուսական ափ<sup>101</sup>: Նրանք վերջին 700 հայերն էին, որ զենքը ձեռքներին հեռացան հայրենի եզերքից: Ռուսական հողում ապաստանեցին թուրքական յաթաղանից փրկված տասնյակ հազարավոր հայեր:

Ստորև ներկայացնում ենք մի քանի դրվագ պոնտոսահայության (համշենահայության) ինքնապաշտպանությունից:

Տրապիզոնից ու նրա շրջակայքից բռնագաղթած շուրջ 100 հայ տղամարդ Թեքքե կայանում հարձակվեց պահակների վրա, զինաթափեց և, հեռանալով լեռները, շարունակեց կռվել թուրք բարբարոսների դեմ:

Ֆեղասպանության առաջին օրերին Ջեմալ Ազիմ փաշայի հրամանով 40 հայ տղամարդու փորձեցին ծովում խեղդամահ անել, սակայն մահապարտները մերկ ձեռքերով հարձակվեցին ուղեկցող թուրք ոստիկանների վրա, բոլորին սպանեցին, բայց իրենք էլ զոհվեցին: Փրկվեցին միայն երկուսը՝ Ադամ Հովսեփյանը և շապինգարահիսարցի Անդրանիկը:

Տրապիզոնցի Հարություն Սարգսյանն իր երկու որդիների՝ Գուրգենի և Պարույրի հետ ծրագրեց սպանել ջարդարար Ջեմալ Ազիմին և ապա զենքի կոչել հայերին: Սակայն նրանք ընկան թուրք ոստիկանների ձեռքը և սպանվեցին: Տրապիզոնցիներ Սեդրակ Սեյրանյանն ու Երվանդ Տերտերյանը, իրենց տները վերածելով կրակակետերի, մինչև վերջին գնդակը կռվեցին թուրք հրոսակների դեմ, ապա անճնասպան եղան<sup>102</sup>:

Թուրք մարդասպանների դեմ զենք բարձրացրեց Սև ծովի ափին՝ Տրապիզոնի մոտ, գտնվող Կովատ Շամի հայ բնակչությունը, որի հերոսական պայքարը, մեր կարծիքով, հայոց 1915 թվականի դյուցազնամարտի՝ ցարդ արժանվույնս չլուսաբանված փառահեղ Էջերից է:

Եղեռնի նախօրերին ինքնապաշտպանության կազմակերպման զգալի աշխատանք էր կատարվել Տրապիզոնի մերձակայքում գտնվող և քսան հայկական գյուղերից կազմված Յոմուրա գյուղախմբում: Բայց կուսակալ Ջեմալ Ազիմը մի շարք երևելի հայերի խաբելով կամ պարտադրելով ուղարկեց հայ բնակչությանը

<sup>100</sup> Տես «Վերապրած Գոհար Սարյանի վկայությունը Տրապիզոնի հայության կոտորածների մասին»: «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ», հ. 3, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, էջ 368–373:

<sup>101</sup> Տես *Մ. Արզումանյան*, Հայաստան 1914–1917: Ե., 1969, էջ 387:

<sup>102</sup> Տես *Մ. Ս. Կարասպեղյան*, Նշ. աշխ., էջ 146:

համոզելու, որ հանձնեն զենքերը և «զերծ մնան վտանգից»: Իրավիճակը ծանրացնում էր նաև այն, որ հայ ղեկավարների մի մասի սպանվելու և ինքնապաշտպանության գլխավոր կազմակերպիչ Միսաք Թողլաքյանի՝ Կովկաս ուղարկվելու պատճառով ժողովրդին համախմբելու ունակ մարդիկ չկային, ու վերջին պահին մարտախմբերն ու ժողովրդի մի մասը կոլեկտիվ ինքնապաշտպանության փոխարեն քաշվեց լեռները, թեև հետո շատերը վերադարձան:

Առաջին ընդհարումը տեղի ունեցավ տեղահանվող Շանա գյուղի մերձակա լեռներում և տևեց մինչ երեկո: Հայերը երեք գոհ ունեցան, իսկ Ասլան բեյի 500 հոգանոց չեթեների խումբը, երեսուն սպանված ու վիրավոր տալով, հեռացավ այդ լեռներից: Հաջորդ ընդհարման ժամանակ հայտնվելով դարանում՝ չեթեների խումբը ցրվեց:

Արդեն սեպտեմբերին Շանայի լեռներում գործում էին ութ մեծ ու փոքր մարտախմբեր, որոնցից միայն Հովհաննես Դուկասյանի խումբն էր կազմված բացառապես երիտասարդներից: Մյուսներում կային նաև կանայք ու երեխաներ, իսկ ութերորդ խմբում Ղոշարա գյուղի պատանիներն ու աղջիկներն էին, որոնց մասին մյուս մարտիկներն իմացան միայն խմբի ջախջախումից հետո, երբ ողջ մնացածները միացան մյուս խմբերին:

Յոթ մարտախմբերը միմյանց հետ ունեին մշտական կապ, վտանգի դեպքում նրանք համախմբվում ու կռվում էին միասին: Գրեթե բոլոր մեծ կռիվները տեղի ունեցան Արգուլա լեռան վրա: Մարտիկները գիտեին նաև, որ Մյուրմենի լեռներում Գաբրիել Մատելյանի և Սև Կարապետի հրամանատարությամբ երեսուն հոգանոց ուժեղ մարտախումբ է գործում, որը մեծ սարսափ էր տարածել շրջակայքում<sup>103</sup>:

Երկրորդ մեծ ընդհարումն աշնանն էր, երբ արդեն պետք էր սննդամթերքի պաշար հավաքել 1916 թվականի ձմեռը դիմավորելու համար: Մարտիկները հարձակվում էին քարավանների վրա, իջնում շրջակա հունական ու թուրքական գյուղերը, և բոլորը գիտեին լեռներում ու անտառներում ապաստանածների մասին: Թուրք գյուղացիներն արդեն զգուշանում էին ցեղասպանություն վերապրած հայերին սպանելուց՝ համոզված լինելով, որ անպատիժ չեն մնա: Հոկտեմբերի սկզբին թուրքերը մեծ հարձակում ձեռնարկեցին Արգուլա լեռան վրա, բայց հանդիպելով ուժեղ դիմադրության՝ այդպես էլ չհամարձակվեցին անտառ մտնել:

Նոյեմբերի վերջին սկսվեց հայտնի հրոսակապետ Լուիվի չաուշի հարձակումը: Նրա 300 հոգանոց խումբը կազմված էր տարիներով անտառներում ապրած ավազակներից: Տեղահանությունների սկզբից նրանք հաջողությամբ հետամուտ եղան փախստական հայերին «որսալուռ» և նախկին ավազակներից շուտով վերածվեցին «հերոսների»: Հանդուզն ու անսպասելի հարձակմամբ բավական առաջ շարժվելով՝ Լուիվին կարողացավ խզել հայերի մարտախմբերի միջև կապը և ջլատել նրանց ուժերը: Սկսվեց երեքժամյա կատաղի մերձամարտ, որը երկու կողմերի համար էլ կյանքի ու մահվան պայքար էր: Շուտով թուրքերը, չդիմանալով հայերի հանդուզն հակագրոհներին, փախուստի դիմեցին: Հաջորդ օրը հայկական մարտախումբը Կալաֆկա սարից հանգիստ դիտեց, թե ինչպես մի

<sup>103</sup> Տես *Միսաք Թողլաքյան*, Օրերուս հետ: Լոս Անջելես, 1953, էջ 18:

քանի հազար զինված թուրքեր պաշարեցին Արգուլան, և 4–5 ժամյա հրաձգություներից հետո գրոհեցին անմարդաբնակ լեռան վրա և, հազարավոր փամփուշտներ վատնելով, գտան միայն իրենց թողած հինգ դիակները<sup>104</sup>։

1916 թվականի կեսերին ռուսական զրահանավով տասնմեկ զինակիցների հետ Տրապիզոն վերադարձավ Միսաք Թռուլաբյանը, որը Յոմուրայի գյուղախմբի ինքնապաշտպանության ոգին էր և հետագայում սատակեցրեց Բաքվի 30000 հայության գլխավոր դահիճներից մեկին՝ Ադրբեջանի ներքին գործերի նախարար Բեհբուժ խան Ջիվանշիրին։ Սև ծովում ռուսական առափնյա զորքերի հրամանատարությունը նրանց ուղարկել էր հետախուզական առաքելությամբ, սակայն Թռուլաբյանի հիմնական նպատակն էր լեռներում ապաստանած հայերին փրկելը<sup>105</sup>։

1915–1916 թթ. ձմեռը սաստիկ էր։ Վերապրածները փակվեցին քարայրներում, ու նրանց գտնելն անկարելի էր։ Շուտով Միսաքը միացավ լեռներում ապաստանած մարտիկներին։

1915 թ. մայիսի 13-ին հայկական Պոնտոսում սկսված եղեռնի մասին լուրը Կովկաս հասցրած հրամանատարի վերադարձը խանդավառեց բոլորին։ 1916 թ. փետրվարին Շանա գյուղում տեղի ունեցավ նախավերջին ու ամենակատաղի մարտը։ Մի քանի հազարանոց խուժանն ու բանակային ստորաբաժանումները խայտառակ պարտություն կրեցին։ Մութն ընկնելուն պես թուրքերը դադարեցրին կռիվը, իսկ հայերը տեղափոխվեցին Կալաֆկա լեռ։ Հաջորդ օրը վաղ առավոտից վերստին հարձակման անցած թշնամին, դարձյալ տասնյակ հազարավոր փամփուշտներ վատնելով, կեսօրից հետո միայն կարողացավ գրավել դատարկ Արգուլան։

Հուսահատված կառավարությունը ազատ արձակեց և հայերի դեմ ուղարկեց նահանգի բոլոր կալանավորներին։ Շուտով թշնամու 4000-անոց ուժերը նեղ օղակի մեջ առան Կալաֆկան։ Սա ամենաերկար ու ծանր կռիվն էր։ Թուրքերը, բառիս բուն իմաստով հնձվելով, փորձեցին առաջ շարժվել։ Կռիվը շարունակվեց կեսգիշերից հետո էլ, մինչև մարտիկները կանանց ու երեխաների հետ կարողացան ճեղքել պաշարումն ու հեռանալ։ Իսկ հաջորդ օրը հայկական մարտախմբերը վերստին Արգուլայի վրա էին<sup>106</sup>։

Սննդի ու զինամթերքի պակասի պատճառով սյուրմենցիները վերադարձան իրենց լեռները, Կալաֆկայի մարտախմբերը մնացին իրենց երբեմնի գյուղերի մերձակայքում, իսկ կռվողների մեծ մասը տեղափոխվեց Արգուլա։

Փետրվարի կեսերին թշնամու գյուղերը մեծ եռուզեռի մեջ էին։ Շուտով թուրքերը բոլոր կողմերից հրդեհեցին Արգուլայի անտառները։ Երեք կողմում ամեն ինչ լափող համատարած կրակն էր, չորրորդ կողմում՝ բազմահազարանոց թշնամին։ Մարտիկները որոշեցին յուրաքանչյուրը մեկ կնոջ կամ աղջկա հետ ճեղքել պաշարման շղթան։ Մութն ընկնելուն պես նրանք կարողացան զարմանալիորեն աննկատ անցնել թուրքերից ընդամենը 700-800 մետր հեռավորության վրա և

<sup>104</sup> Տես նույն տեղում, էջ 22։

<sup>105</sup> Տես նույն տեղում։

<sup>106</sup> Տես նույն տեղում, էջ 32։



դուրս գալ սեղմվող հրե օղակից: Իսկ մի քանի օր անց իմացան, որ նույն օրը ռուսները գրավել էին Ռիզան ու որպես ազդանշան՝ լեռնագագաթներից մեկի վրա հսկայական խարույկ էին վառել, որն իրենք տեսել, բայց նշանակությունը չէին հասկացել: Ռուսական հարձակումից սարսափահար թուրքերը դիմեցին փախուստի, և թվում էր, թե վերապրած հայությունը փրկված է: Ապրիլի 16-ին, երբ ռուսական զորքերը մտան Տրապիզոն, հունական Լիվերա գյուղի մերձակայքում գտան շուրջ 400 փախստական հայերի, որոնց վաղուց գոհված էին համարում: Անցնելով ռուսական գոտի՝ մարտիկներից երեսունհինգն իսկույն զինվորագրվեցին ու մեկնեցին ռազմաճակատ, սակայն ռուսական հրամանատարությունը նրանց նկատմամբ անթաքույց անբարյացակամ վերաբերմունք էր դրսևորում: Վերապրածներից շատերն ի վերջո հաստատվեցին Սոչիում ու նրա շրջակայքում<sup>107</sup>:

Ոստիկանության հետ մի մեծ ընդհարումից հետո Մ. Թռուլաքյանի մարտախմբի քսանհինգ-երեսուն մարտիկներ ամրացան դիրքերի վերածված մի քանի տներում՝ տասնհինգ հոգու ուղարկելով լեռան տարբեր կողմեր և ստեղծելով մեծաքանակ ուժի առկայության տպավորություն: Այդ ծանր մարտը տևեց մինչև ուշ գիշեր: Հարձակվող թշնամին, հիսուն զոհ տալով, ոչ մի հաջողության չհասավ, անգամ չկարողացավ միմյանցից մեկուսացնել հայկական դիրքերը: Ոստիկանների հետ առաջին ընդհարման ժամանակ հայերը գերեվարված թուրքերին զինաթափելով՝ ուղարկեցին Տրապիզոն՝ կուսակալ Ջեմալ Ազիմին նամակով խնդրելով հաջորդ անգամ իրենց դեմ ուղարկվելիք ժանդարմներին զինել ավելի ժամանակակից զենքերով: Կատաղած կուսակալը ոչ միայն ներում չնորհեց բոլոր ավագակներին, հանցագործներին ու դասալիքներին, այլև յուրաքանչյուր հայի գլխի դիմաց հարյուր ոսկի խոստացավ և հայ մարտիկների դեմ հանեց 2500 հոգանոց զինված ուժ, որոնցից 800-ը՝ բանակային, իսկ 300-ը՝ ժանդարմական ստորաբաժանումներից էին<sup>108</sup>: Թշնամու մի մասը Տրապիզոնից հարավ-արևմուտք գտնվող լեռներում եռօրյա ապարդյուն կռիվներում տասնյակ զոհեր տալուց հետո, նահանջելով, միացավ Շանա գյուղի վրա գրոհողներին: Հինգ օր շարունակ թշնամին, վախենալով անտառ մտնելուց, անիմաստ կրակում էր ծառերի վրա և միայն օգնական ուժ ստանալուց հետո գրոհով մտավ Արգուլայի արդեն դատարկ անտառները, իսկ հայ մարտիկները Կալաֆկայի բարձունքներից դիտեցին այդ անօրինակ «այաքարը»: Թշնամին ի վերջո հասավ Կալաֆկա ու ձյան վրա եղած հետքերից հասկանալով, որ մարտիկներն անտառ են մտել, վախեցած վերադարձավ գյուղ: Գրեթե սնունդ չունեցող, սովահար հայ մարտիկների խումբը կենտրոնացավ հագիվ 1000 մետր շրջագծով անտառապատ բարձունքում՝ հսկելով ճանապարհի բոլոր կարևոր հատվածները: Վիճակը բավական լուրջ էր, և կարգադրվեց նախահարձակ չլինել, թուրքերի երթևեկը չարգելել, իսկ անտառ նրա մտնելու դեպքում՝ հինգ-վեց քայլից նոր միայն կրակել:

Շուտով թշնամին երեք ուղղություններով անցավ հարձակման: Կատաղի կռիվը տևեց մինչև ուշ գիշեր: Թուրքերն անգամ օդ բարձրացրին ինքնաթիռ, որը,

<sup>107</sup> Տես նույն տեղում, էջ 46–47:

<sup>108</sup> Տես նույն տեղում, էջ 58:

սակայն, թռչչի ժամանակ խափանվեց և ծովն ընկավ: Գիշերը ճեղքելով պաշարումը՝ մարտիկները քաշվեցին Արգուլա, որն ինքնապաշտպանության համար ավելի հարմար վայր էր: Ի դեպ, վաթսուն հոգանոց խմբում միայն քսաներեքն էին մարտիկներ, իսկ մյուսները կանայք, երեխաներ ու ծերունիներ էին: Առավոտյան թուրքերը հասկացան կատարվածը, բայց արդեն հարյուրից ավելի զոհ ունեին և չհամարձակվեցին գրոհել Արգուլայի վրա, այլ միայն հրդեհեցին անտառները՝ հուսալով գոնե այդ կերպ ոչնչացնել մարտիկներին:

Իմանալով Ռիզայի անկման մասին՝ հայերի մարտախումբը փորձեց անցնել ռուսների գրաված տարածք, բայց ռուսների հարձակումը դադարեցվեց, ու հայ մարտիկները մնացին թուրքական զորքերի խմբավորման անմիջապես կենտրոնում: Անգամ այդ վիճակում, երբ ամեն պահի կարող էին նկատվել ու լիովին ոչնչացվել, նրանք գտան և սպանեցին տեղի հայության գլխավոր ջարդարարներից մեկին, ազատեցին թուրքերի առևանգած մի քանի հայուհիների: Ի վերջո, բազմաթիվ արկածներով անցան ճակատի գիծը<sup>109</sup>:

1917 թ. օգոստոսի 15-ին արդեն ռուսական բանակի հակահետախուզությունում ծառայող Միսաք Թռուլաքյանը մի զորաջոկատի հետ ստացավ հանձնարարություն ոչնչացնել գիշերները պարեն ու ռազմամթերք փոխադրող թուրքական նավերը: Առաջադրանքի կատարումից հետո, տեսնելով թուրքերի բարոյալքված վիճակը, ռուս հրամանատարն առաջարկեց ծովային հրանոթների կրակի աջակցությամբ այդ փոքրիկ ջոկատով գրոհել մերձակա Թերմե քաղաքի վրա: Ռազմական խորամանկությունների միջոցով իր ուժերն իրականից անհամեմատ մեծ ցույց տալով՝ ջոկատն արագորեն գրավեց ճանապարհի վրա գտնվող մի քանի գյուղերը, իսկ երբ հասավ Թերմե, պարզվեց, որ քաղաքի 10000–12000-անոց թուրք բնակչությունն արդեն փախել է<sup>110</sup>: Հայ մարտիկներն սկսեցին պայթեցնել զինապահեստներն ու պետական կարևոր շենքերը, երբ հանկարծ մերձակա անտառից լսվեցին հրաձգության ու ձեռնառումների պայթյունների ձայներ, ապա քաղաք մտան մոտ յոթանասուն հայ վերապրածներ՝ մարտիկներ, ծերեր, կանայք ու երեխաներ, որոնց առաջնորդն էր Չարշամպա գյուղի քահանա Քալեն-ճյանը, որին թուրքերը «Խենթ քահանա» էին կոչում: 1915 թ. Չարշամպայի տեղահանության ժամանակ մարտախմբով լեռները քաշվելիս նա իր տան դռան վրա թուրքերեն գրություն էր թողել. «Տանն իմ ընտանիքի հանգիստը խանգարողի հերը կանիծեմ, շանաստակ կանեմ, լինի զինվորական, պետական պաշտոնյա, թե ոստիկան»<sup>111</sup>: Մոտ վեց ամիս թուրքերը չմտան այդ տուն: Իսկ հետո մեծաքանակ խուժանը եկավ ու հիմնահատակ ավերեց և՛ Չարշամպան, և՛ տունը:

Այս խումբն իր հանդուգն գործողությունների շնորհիվ ամբողջ շրջակայքում ձեռք բերեց մեծ հռչակ: Իսկ քահանան իր հոտի հետ անցավ Ռուսաստան, պատերազմի ավարտից հետո վերադարձավ, 1922 թ. ձերբակալվեց և երկու խմբապետների հետ քենալականների ձեռքով ողջակիզվեց:

<sup>109</sup> Տես նույն տեղում, էջ 67–69:

<sup>110</sup> Տես նույն տեղում, էջ 82–83:

<sup>111</sup> Տես նույն տեղում, էջ 101–102:

## ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ



Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստը.

Երևան, 2015 թ. հունվարի 29



ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հրապարակում է Հայոց ցեղասպանության 100-ամյակի համահայկական հռչակագիրը

Երևան, Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր,  
2015 թ. հունվարի 29

## ԵՂԵՌՆԻ ԶՈՂ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐ



Ռուբեն Ջարդարյան (1874–1915)  
գրող, հրապարակախոս



Գրիգոր Ջոհրապ (1861–1915)  
գրող, հրապարակախոս,  
հասարակական-քաղաքական գործիչ



Դանիել Վարուժան  
(Դանիել Չարոզյարյան, 1884–1915)  
բանաստեղծ, հասարակական գործիչ



Կոմիտաս  
(Մողոմոն Մողոմոնյան, 1869–1935)  
կոմպոզիտոր, երաժշտագետ,  
երգիչ, խմբավար, մանկավարժ



Ռուբեն Սևակ  
(Ռուբեն Չիլինկիրյան, 1885–1915)  
բանաստեղծ, արձակագիր, բժիշկ



Միամանթո  
(Ատոմ Յարճանյան, 1878–1915)  
բանաստեղծ



Էրզրումի հայ բնակչության բռնի տեղահանումը, 1915 թ.



Հայ գաղթականներ, 1915 թ.

(լուսանկարը՝ գերմանացի գրող Արմին Վեգների.

Armin T. Wegner . Wallstein Verlag, Germany)

([http://www.genocide-museum.am/arm/armin\\_wegner.php#sthash.mLWNLxAN.dpuf](http://www.genocide-museum.am/arm/armin_wegner.php#sthash.mLWNLxAN.dpuf))




Հայերի մահապատիժը Կոստանդնուպոլսում, 1915 թ.



Սպանդի ենթարկված հայերի դիակներ



Առաջին շարքում՝ 1915 թ. մայիսին Ջեյթունից Մարաշ բռնի տեղափոխված մի խումբ հայեր. լուսանկարվելուց կես ժամ անց քուրքերը նրանց բոլորին հրկիզեցին կամ կոտորեցին ([http://www.genocide-museum.am/arm/arm\\_archive.php#sthash.62OvdCqw.dpuf](http://www.genocide-museum.am/arm/arm_archive.php#sthash.62OvdCqw.dpuf))



Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության  
ղեկավար գործիչների դատավարությունը՝  
Օսմանյան կայսրությունն առաջին համաշխարհային պատերազմի մեջ  
ներքաշելու, հայերի տեղահանությունն ու կոտորածները կազմակերպելու մեղադրանքով  
Կ. Պոլիս, 1919 թ. ապրիլի 3

ԵՂԵՌՆԻՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐ



Արղրանիկ Օգանյան (1865–1927)  
Ռուսական բանակի կազմում  
Հայկական 1-ին կամավորական  
ջոկատի հրամանատար



Արամ Մանուկյան (1879–1919)  
պետական, հասարակական գործիչ,  
1915 թ. Վանի հերոսամարտի  
կազմակերպիչ և ղեկավար



Արմենակ Եկարյան (1870–1925)  
1915 թ. Վանի ինքնապաշտպանության  
ղեկավարներից



Սյրտիչ Յոթնեղբայրյան  
(1880-ական – 1915)  
ՌԻԲայի ինքնապաշտպանական  
մարտերի ղեկավար



Միսաք Թոռլաքյան (1889–1968)  
ժողովրդական վրիժառու,  
Պոնտոսի հայերի  
ինքնապաշտպանության ղեկավար



Զոր  
(Հարություն Աբրահամյան, 1878–1937)  
Ֆիդայի, 1915 թ. Սասունի  
ինքնապաշտպանության մասնակից





Հ. Թումանյանը և նրա դուստր Նվարդը  
որբերի և բուժանճնակազմի հետ.  
Էջմիածին, 1915 թ. օգոստոս



1918 թվականին անապատներում հավաքված և Երուսաղեմ տարված հայ որբեր  
(լուսանկարի սկզբնաղբյուրը՝ Նուբարյան գրադարանի հավաքածու, Փարիզ:  
«100 լուսանկարչական պատմություններ Հայոց ցեղասպանության մասին» գրքից)



Հայոց ցեղասպանության հիշատակություն  
Երևան, Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր,  
2014 թ. ապրիլի 24



Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակություն Թուրքիայում  
Ստամբուլ, 2014 թ. ապրիլի 24

1915–1923 թթ. ութամյա գոյամարտ տեղի ունեցավ Ջանիկի լեռներում՝ Սամսունում:

1915 թ. ամռան կեսին լեռներում ապաստանած խմբերը կապ հաստատեցին միմյանց հետ ու մահվան գնացող տարագիր քարավաններին ուղեկցող ժանդարմների վրա անակնկալ հարձակումներով ազատեցին բազմաթիվ հայերի, ինչպես նաև հայթայթեցին զենք ու զինամթերք: Ջանիկի լեռներում ամրացած գրեթե բոլոր մարտախմբերում էլ կային կանայք ու երեխաներ: Վերապրածները հիշում են, որ այդ ժամանակ Քելթեփեի հատվածում կար շուրջ 150 կովոդ (փոքրիշատե զինված էին 50-ը), իսկ Չարշամպայի կողմերում՝ մի 70-80 հոգանոց խումբ: Մարտախմբեր կային նաև Սամսունում: Օգոստոսին ժանդարմական կենտրոնատեղի Քեոքլուկ գյուղում մեծ թուրքական ստորաբաժանման ծանր պարտությունն ու յոթ ժանդարմի սպանվելը սարսափ տարածեցին շրջակայքում:

Հայդուկային պայքարն ուժեղանում էր: Օրեր անց մարտիկներն իմացան, որ Քեոքլուկում թուրքերը ողջակիզելու համար գյուղի եկեղեցում հավաքել են մնացած հիսուն հայ ծերունիներին և 85-ամյա Միքայել քահանային: Երբ երեսունհինգ հոգանոց մարտախումբը տեղ հասավ, ողջակիզվող հոգևորականը հասցրեց տեսնել սկսված հզոր հարձակումն ու վերջին օրհնությունը տալ մարտիկներին: Թշնամին տասն սպանված ու չորս գերի թողնելով՝ փախուստի դիմեց: Այդ օրը մարտիկներն առանց խտրության կտորեցին հանդիպած բոլոր թուրքերին: Քեոքլուկն ամայացավ, ու թուրքերն այլևս երբեք չհամարձակվեցին այնտեղ վերաբնակվել<sup>112</sup>:

Մեպտեմբերի 6-ին մարտիկներին պաշարեց չաուշ Սուլեյմանի չեթների սովար խումբը, որին հենց իրենք էին որոնում՝ գործած չարիքների վրեժն առնելու համար: Կռիվը սկսվելուն պես հայասպանն ընկավ, իսկ չեթները փախան: Մարտիկները հեռանալիս ուսանելի դաս տվեցին նաև իրենց վրա կրակ բացած մի թուրքական գյուղի:

Երբ մարտախմբերում եղած պատանիները փոքրիշատե փորձ ձեռք բերեցին, նրանցից կազմվեց տասներեք հոգանոց մի առանձին խումբ, որի առաջին գործը եղավ (թեև հրամանատարությունը խստորեն արգելել էր) վրեժխնդրությունը հայտնի հայասպան չաուշ Իսմայիլից: Գազանը տանը չէր, և վրիժառուներն սպանեցին նրա որդուն ու ազատեցին մի առևանգված հայ աղջկա<sup>113</sup>:

Հայկական Պոնտոսի հայերը քարավանների վրա հարձակումներով բավական մթերք ձեռք բերեցին ու 1915–1916 թթ. ձմեռը հանգիստ անցկացրին հսկա քարայրներում: Փոքրիկները գրել ու կարդալ էին սովորում, պատանիները՝ զբաղվում զինավարժությամբ:

Գարունը դեռ չէկած՝ խմբերը վերստին կապ հաստատեցին միմյանց հետ, սպա գերված թուրք սուրհանդակից խլված նամակից իմացան, որ Մեքաստիայից մեծաքանակ զինվորական պարենով քարավան է գալիս, իսկ փետրվարի 25-ին իրենց դեմ մեծ հարձակում է սկսվելու: Հայերը, տիրանալով քարավանին՝

<sup>112</sup> Տես *Յովակիմ Յովակիմիան (Արշակունի)*, Պատմություն Հայկական Պոնտոսի: Պէյ-րոս, 1967, էջ 33:

<sup>113</sup> Տես նույն տեղում, էջ 42 – 43:

լիովին լուծեցին իրենց սննդի ու զինամթերքի հարցը, առաջին անգամ ունեցան ձեռնառումներ և ոգևորված սպասեցին գալիք մեծ կռվին:

Երկօրյա ծանր կռիվներից հետո, երբ 150 մարտիկներն արդեն օրհասական վիճակում էին, օգնության հասան այլ մարտախմբեր, ու թշնամին մեծ կորուստներով հետ շարտվեց: Այդ կռվում զոհվեց մարտախմբի հրամանատար Տ. Ջեյթունճյանը:

Փետրվարի 25-ին թշնամին, վերադասավորելով ուժերը, անցավ վերջին ու վճռական հարձակման, բայց արդեն տեղ էին հասել լեռներում ամրացած բոլոր հայդուկային խմբերը, և մի քանի հազարանոց թշնամին ընդամենը 350 մարտիկներից ուղղակի խայտառակ պարտություն կրեց՝ կորցնելով անգամ ընդհանուր հրամանատարին: Իսկ հայերը տասներկու զոհ ունեցան:

Շուտով ռուսական բանակը մտավ Տրապիզոն, բայց Ջանիկի լեռներում ապաստանած շուրջ 2000 հայերից նավեր բարձրանալ թույլ տրվեց միայն կանանց ու երեխաներին<sup>114</sup>: Հայ մարտիկները, հետո միայն հասկանալով, որ ռուսական հրամանատարության համար իրենք լոկ թշնամու թիկունքում գործող հարվածային ու քայքայիչ ուժ էին, դարձյալ բաշվեցին լեռներ:

Նոյեմբերի 26-ին չորս թնդանոթ ունեցող բազմահազարանոց թշնամին, որի կետը կանոնավոր գործեր էին, հզոր հարձակում ձեռնարկեց թվով 450 հայ մարտիկների դեմ, որոնք պիտի պաշտպանեին նաև 200 հույն ընտանիքների: Կեսօրից հետո թշնամին բավական մեծ թվով դիրքեր գրավեց: Մութն ընկնելուց հետո, երբ հայերը դաշույններով ու ձեռնառումներով դիմեցին հուսահատ հակահարձակման, տեղանքում կողմնորոշումը կորցրած թուրքերն սկսեցին կոտորել միմյանց: Բայց այդ արյունալի օրը հայերից շատ կյանքեր խլեց:

1916 – 1917 թթ. ձմեռը նույնպես ցուրտ և ծանր էր: Մատնության հետևանքով զոհվեցին մարտախմբի հրամանատար Ջիլ Օվանեսը և Աղդադի լեռներից Կովկաս անցնելու համար այստեղ եկած Ադամ Չաուշը, որը Յոզգաթի դիմադրության հրամանատարներից էր: Քեռքուկում հաստատվել փորձող թուրք գաղթականները, անմոռանալի դաս ստանալով, ընդմիջտ հեռացան, իսկ մարտիկները հրդեհեցին գյուղը: Նրանք սպանեցին հայերի հայտնի դահիճ Քեռմյուրիե օղլուին<sup>115</sup>:

1918 թ. օգոստոսի վերջին թուրքական կառավարությունը հերթական անգամ «ներում» շնորհեց: Բայց 1919 թ. աշնան սկզբին քեմալականներն աշխուժացան և վերսկսեցին թալանն ու սպանությունները: Թուրքերը ողջակիզեցին Սովուճագ գյուղի մարտախմբի հրամանատար Հովհաննես Ուրումյանի ընտանիքին, ապա սպանեցին Արթին Սինասյանին և այլ խմբապետերի:

Իսկ մինչ այդ՝ 1919 թ. հուլիսի 25-ին, չեթների խմբերը պաշարեցին Քեռքուկը, բայց հերթապահող դիրքապահները հասցրեցին ոտքի հանել ժողովրդին: Հարձակումը մեծ դժվարությամբ հետ մղվեց՝ հրամանատար Ավետիս Չազըրյանի կյանքի գնով: Դրանից հետո թուրքերը շուրջ մեկ տարի լռեցին: Իսկ 1920 թ. օգոստոսին զենքերը հանձնելու խիստ հրամանը հայերին ստիպեց իսկույն ամրացնել Քեռքուկի դիրքերը: Սեպտեմբերի սկզբին 1500 հոգուց բաղկացած

<sup>114</sup> Տես նույն տեղում, էջ 46:

<sup>115</sup> Տես նույն տեղում:

խուժանն ու գորքը հարձակվեցին գյուղի վրա (ժողովուրդը հասցրել էր վաղօրոք տեղափոխվել անտառ) և հարյուր մարտիկների դեմ հինգժամյա կռվից հետո մեծ կորուստներով նահանջեցին: Օրեր անց երկրորդ մեծ հարձակումն արդեն դիմադարձվեց բավական մեծ դժվարությամբ, ինչից հետո մարտիկները վերջնականապես հեռացան լեռներ, իսկ կայմականը թրքացած հայ դավաճանների օգնությամբ ձերբակալեց, ապա սպանեց խմբապետ Կարապետ Թահմազյանին (Դելի չոճա)՝ իր տասը զինակիցներով<sup>116</sup>:

Մարտախմբերի խորհրդակցությունում որոշվեց թշնամու ուշադրությունը շեղող հարձակում ձեռնարկել գյուղերի վրա: Երբ քաղաքից թուրքական գորքը օգնության հասներ, երկրորդ խումբը պիտի գրոհեր բանտի վրա: Բայց մի հույնի մատնության հետևանքով կալանվածներին տեղափոխեցին կենտրոնական բանտ, որտեղից նրանց ազատելն արդեն անհնար էր, և իրագործվեց միայն ծրագրի՝ թուրքական գյուղերին հարվածելու մասը:

1920–1921 թթ. ձմեռը լեռներում ապաստանած մարտիկների համար հանգիստ անցավ: Փետրվարին քեմալականները փորձեցին մեկ հարվածով ոչնչացնել թե՛ հայ և հույն մարտախմբերին, թե՛ հակաքեմալական ուժերին, բայց տևական կռիվները արդյունք չտվեցին: Ծանր պաշարումն ու կռիվները շարունակվեցին, երբ անակնկալ կերպով եկավ «ներման» հերթական հրամանագիրը, որին հավատարմով, քեռքլուկիներից բացի, գրեթե բոլորն իջան գյուղերը: Ներման այս քաղաքականությունը տևեց մինչև Հունաստանն ու Թուրքիան փոխանակեցին միմյանց տարածքում պատանդ մնացած մեծաթիվ հույների և թուրքերի: Առիթից օգտվելով՝ հայ մարտիկները կարողացան ևս 200 հոգու ուղարկել Կովկաս ու լեռներում մնացին մեռնալ: Ապա իմացան, որ լեռներում են մահ Հովհաննես Ռիբումյանի, Կարապետ Սարյանի, Մեսրոպ Տազրճյանի ու Սահակ Համալյանի մարտախմբերը: Կենտրոնանալով Թերմեի անտառներում՝ նրանք փորձեցին անցնել Ռուսաստան, սակայն փորձը ձախողվեց հետապնդումների սաստկացման պատճառով:

1921 թ. մայիսին տեղի ունեցած սաստիկ ընդհարումից հետո բռնություններ սկսվեցին անգամ ներման հրամանագրերին արձագանքած ու խաղաղ ապրող հայերի նկատմամբ, որոնց մեծ մասն ստիպված եղավ վերստին քաշվել լեռներ<sup>117</sup>:

Նոյեմբերին մարտիկների վրա շուրջ 1000 չեթներով հարձակման անցավ տխրահռչակ Թոփալ Օսմանը, սակայն հայերին պաշարելիս ինքը հայտնվեց ծուղակում և խայտառակ փախուստի դիմեց՝ անգամ թուրքական մամուլում դառնալով ծաղրի առարկա: Բայց հայասպանն իր վրեժը լուծեց հայ և հույն անզեն ժողովրդից<sup>118</sup>:

1921–1922 թթ. ձմեռը հայդուկները հեշտ անցկացրին, քանի որ նախապես հավաքել էին անհրաժեշտ ամբողջ պաշարը: Գարնանը մեծ դժվարություններով կարողացան նավով գաղտնի Կովկաս ուղարկել ևս 250 վերապրածների, ապա, մասնակի զիջումներով ու առանց զենքը հանձնելու, համաձայնեցին գյուղ իջնել,

<sup>116</sup> Տես նույն տեղում, էջ 53–54:

<sup>117</sup> Տես նույն տեղում, էջ 59–60:

<sup>118</sup> Տես նույն տեղում, էջ 78–79:

որովհետև մտածում էին Ռուսաստան անցնելու մասին: Իսկ քեմալական շարժումն ուժեղանում էր: 1922 թ. դեկտեմբերին ընդամենը երեք օրում սպանվեցին ներման հրամանագրերին ու թուրքի բարեկամությանը հավատացած շուրջ երեսուն հայ և հույն խմբապետեր ու մարտիկներ: 1915 թ. լեռները բարձրանալուց ի վեր կռվող ուժերի մման մեծ կորուստ դեռ չէր եղել:

Դրան հետևեցին կայմակամի սպառնալիքներն ու Քեոքլուկի երկօրյա կռիվը: Երեք գոհ տալով՝ մարտիկները քաշվեցին լեռներ, որտեղ անհրաժեշտ պայմաններ կային հետագա դիմադրության համար:

1922 – 1923 թթ. ձմեռն անցկացնելուց հետո ինքնապաշտպանները կարողացան նավով Ռուսաստան ուղարկել ևս 75 հոգանոց մի խումբ, ու լեռներում մնացին միայն զինված երիտասարդները, որոնք որոշել էին ընդմիջտ մեկնելուց առաջ լուծել դավադրաբար սպանված խմբապետերի վրեժը: Այս մարտիկները, որոնք, «ներման» հրամանագրերին չհավատալով, չէին բարեկամացել թուրքերի հետ ու գրեթե ոչ որի չէին ճանաչում, բաժանվեցին տասնհինգ փոքր խմբերի ու մեկնեցին տարբեր ուղղություններով: Նրանք գերեցին պատահած բոլոր թուրք տղամարդկանց, բերեցին Չանկերիչ, քառասուներկուսին գնդակահարեցին, երկու խոշոր ազարակատերերի պատանդ պահեցին, որ թուրքերը հայերին չնեղեն, իսկ մնացած գերիներին ազատ արձակեցին, որ սրանք ամենուր պատմեին կատարվածը: Ծանր պատիժ ստացավ մահ էլզրուկ գյուղը, որի թուրքերն էին սպանել խմբապետ Պետրոս Թահմազյանին<sup>119</sup>:

1923 թ. քեմալական կառավարությունը հայերին երկրից հեռանալու արտոնություն շնորհեց, որին շուտով հետևեց մահ սպաստամբների ներումը: Բոլոր կողմերից գալով ու միանալով իրար՝ վերջին 445 հայերը, որոնցից 375-ը լավ զինված էին, հեռացան Ռուսաստան:

Տրապիզոնի և շրջակայքի շուրջ 60000 հայությունից փրկվեց միայն 10 տոկոսը՝ լեռներում ապաստանած, տարիներով կենաց մահու կռիվ մղած մարտիկների անօրինակ նվիրումի ու պայքարի շնորհիվ:

### ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ երիտթուրքերի կառավարությունը, որդեգրելով պանթյուրքականության գաղափարախոսության վրա խարսխվող և երկրի բնակչության համասեռացման քաղաքականություն, մշակեց կայսրության ներքին շրջաններում այլ ժողովուրդների (հայեր, հույներ, ասորիներ, քաղղեացիներ) ոչնչացման ու բռնի տեղահանման հրեշավոր ծրագրեր: Այդ ծրագրի գոհ դարձան իրենց հայրենիքում բնակվող հարյուր հազարավոր հայեր, ասորիներ, հույներ:

Կառավարական կանոնավոր գործը և նրան միացած ու հայերի ունեցվածքով հարստանալու ձգտող թուրք խաժամուժն ու քրդական աշիրեթները հարձակվում էին հայկական գյուղերի վրա, կողոպտում ու այրում շինությունները, զազանաբար սրի քաշում տղամարդկանց, ծերերին ու երեխաներին, բռնաբարում ու սպանում կամ փախցնում կանանց ու աղջիկներին:

<sup>119</sup> Տես նույն տեղում, էջ 82–83:

ՈՒ թեև նրանք դեռ մինչև 1915 թ. գարունն էին սկսել իրենց պատրաստությունները՝ գրկելով հայերին ղեկավար կազմակերպիչ (ռազմակուսակցական գործիչներ, մտավորականություն) ու կռվող (տղամարդկանց մի զգալի մասին գորակոչել էին բանակ և այնտեղ կոտորել) ուժից, այդուհանդերձ, որոշ տեղերում հայությունը դիմեց ինքնապաշտպանության, ինչի շնորհիվ նրա՝ թեկուզ և շատ փոքր մասին հաջողվեց փրկվել:

Ինչպես ցույց են տալիս հավաստի (ինչպես հայկական, այնպես էլ օտար) աղբյուրները, հայերը բոլոր դեպքերում եղել են պաշտպանվող կողմ և դիմել են զենքի միայն իրենց ու իրենց հարազատների կյանքը, իրենց աշխարհն ու ունեցվածքը փրկելու համար:

## ГЕРОИЧЕСКАЯ САМООБОРОНА АРМЯН В 1915 ГОДУ

*Э. Г. МИНАСЯН, доктор исторических наук, профессор,  
декан факультета истории ЕГУ*

### РЕЗЮМЕ

Тщательно спланированная и осуществляемая геноцидальная политика турецкого государства в ряде районов натолкнулась на стихийную самооборону армян. Первые самооборонительные бои произошли в провинции Ван–Васпуракан – как ответ на действия правительства, провоцировавшего нападения курдов на армян, осуществлявшего аресты и убийства общественно-политических деятелей, стягивавшего в вилайет войска и вооружавшего чернь. Армяне Вана, Васпуракана, Тарона, Муша, Сасуна, Свевии, Урфы, Шапин-Гарайсара, Трабзона и других районов предпочли осознанную героическую смерть с оружием в руках участи подвергнувшихся резне или выселению в пустыни. Многие участники и участницы самообороны, исчерпав все возможности для продолжения борьбы, вместе с детьми бросались в пропасть или в огонь, дабы не попасть в руки безжалостным врагам. С учетом несоответствия сил турок и армян самооборону армян следует считать не борьбой за существование, а выбором более почетной смерти.

Фактически, западное армянство в 1915 году не имело четкой и последовательной программы самообороны, из-за чего оказываемое сопротивление было по существу неорганизованным и слабым. Этому способствовала также дезориентирующая роль Конституции 1908 года, которая расколола боевые и политические силы западного армянства. Сыграли свою отрицательную роль также недалёковидность некоторых армянских руководящих общественно-политических кругов, противоречия и раздоры между различными слоями армянского общества.

THE HEROIC SELF-DEFENSE OF THE ARMENIANS IN 1915

*E. G. MINASYAN, Doctor of History, Professor,  
Dean at the Faculty of History, YSU*

SUMMARY

The carefully premeditated and implemented genocidal policy of the Turkish government encountered the Armenians' spontaneous self-defense in a number of regions. The first self-defensive battles took place in the province of Van-Vaspurakan, as a response to the actions of the government which provoked Kurds, attacks on Armenians, arrested and assassinated public and political figures, drew up the troops to the vilayet and armed the mob. The Armenians of Van, Vaspurakan, Taron, Mush, Sasun, Suetia, Urfa, Şebinkarahisar, Trabzon and other regions preferred conscious heroic death in arms to the inglorious fate of the slaughtered or deported to the deserts. Many men and women having participated in the self-defense, having exhausted all the opportunities for continuing the struggle, threw themselves into the abysses or fire together with their children in order not to fall into ruthless enemies' hands. On account of the incompatibility of Turks' and Armenians' forces the self-defense of the Armenians should not be considered a struggle for existence, but rather the choice of more honorable death.

In fact, in 1915 Western Armenians did not have a clear and consistent program of self-defense, therefore, the resistance offered was essentially disorganized and weak. The misleading role of the 1908 Constitution, which split the combatant and political forces of Western Armenians, also facilitated that. The short-sightedness of some Armenian leading social and political circles, contradictions and discords between different strata of the Armenian society also did play a negative role.



## ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԵՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ. ՎԱՆԸ ՀԻՇԱՏԱԿԵԼՈՎ ԵՎ ՆՈԳԱԼԵՍ ՎԵՐԸՆԹԵՐՅԵԼՈՎ

*Տ. ՀՈՖՄԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պատվավոր պրոֆեսոր,  
Բենլիևի Ազատ համալսարանի հեղափոխող-գիտնական (Գերմանիա)*

*«Երբ այն ուշ երեկոյան ես միայնության մեջ հանգստանում էի Թերվան (Տարվան. – Տ. Հ.) բլրի վրա և մտազբաղ նայում Արիսա Պալուսի (Վանա լճի) հանդարտ ջրերին, ամպերը ցրվեցին և երեկոյան երկնքում որպես փրփրուն բուրգ հայտնվեց Սուփան-Դաղը (Սիփան սար. – Տ. Հ.): Երբ այն կամաց-կամաց ծածկվեց մութ շղարշով, հեռվում բռնկվեց Արարատ սարը որպես մի կաթիլ հալված ծծումբ: Այդ բնապատկերը, որի վրա սիռնված էին մարող ցուլքը և անվերջանալի րիտուր գեղեցկությունը, ինձ հիշեցրեց, որ ես ի վերջո հասա իմ նպատակին. ես հին Հայաստանի բուն սրտում էի»:*

**Ռաֆայել դը Նոզայես. Չորս տարի մահիկի ներքո**



Ո՞Վ ԷՐ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ,  
Ո՞Վ՝ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Վանի օսմանյան նահանգը (վիլայեթ) մի հեռավոր շրջան էր, որի հարևաններն էին. արևելքում՝ չեզոք Իրանը, իսկ հյուսիսում՝ Էրզրումի սահմանամերձ նահանգը: Գերմանիան, որը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության ամենակարևոր դաշնակիցներից էր, ոչ մի անմիջական կամ անհապաղ տեղեկություն չէր ստանում Վանում կատարվող իրադարձությունների մասին և հետագայում լիովին հակված էր չափից ավելի դյուրահավատությամբ ընդունելու «համաքրիստոնեական» ապստամբության մասին պաշտոնական օսմանյան վարկածը, որը և 1915 թ. մայիսի 8-ին հաղորդեց Մոսկուում Գերմանիայի փոխհյուպատոս Հոլշտայնը:

«Այսօր տեղի վալին (նահանգապետը. – Տ. Հ.) ինձ տեղեկացրեց հետևյալի մասին. «Յոթ օր է, ինչ Վանի վիլայեթում քրիստոնյաներն ապստամբել են: Ապստամբությունն սկսվել է հայերի կողմից՝ Վանի հարևանությամբ գտնվող մահմեդական գյուղերի թալանով: Վանում հայերը ձեռնարկել են միջնաբերդը գրավելու անհաջող փորձ, որի հետևանքով թույլ թուրքական կայազորը կրել է 300 մարդու կորուստ: Քաղաքի մեծ մասը գտնվում է ապստամբ հայերի ձեռքում. ամեն օր տեղի են ունենում փողոցային մարտեր: Վանի մերձակայքում ապստամբությունն առավել ինտենսիվ է Շատախի շրջանում: Հայերի ապստամբության հետ միաժամանակ Բաշկալեի շրջանում սկսվեց Թիարիների (նեստորականներ) հեղափոխությունը: Թալանելով մահմեդական գյուղերը՝ մոտավորապես 2000 լավ զինված թիարիներ ապաստանեցին Ջուլամերկի հյուսիսում: Ասում են, որ Հալիլ բեյի և Քյազիմի դիվիզիաներից զորք ուղարկվեց, համապատասխանա-

քար, Բաշկալե և Վան: Քանի որ կապ չկա, ես Վանի մեր հաստատությունների մասին տեղեկություն չունեն»<sup>1</sup>:

Ըստ օսմանյան մեկնակերպի՝ Վանի իրադարձությունները ներկայացվում են որպես երկու էթնոկրոնական խմբերի՝ Վանի տարածքում առաքելական հայերի և Հեքյարի շրջանում (սանջակ) ասորիների\* ձեռնարկած արտաքուստ շարժառիթներ չունեցող թալանիչ և զինված ապստամբությունից պետության ինքնապաշտպանություն, որի ժամանակ օսմանյան ուժերը իրականացրին զինված ինքնապաշտպանության իրենց իրավունքն ու կատարեցին պարտքը: Հակասական տեղեկությունները չափազանց ուշ տեղ հասան, որպեսզի անմիջական ազդեցություն գործեն Գերմանիայի պաշտոնական կարծիքի և որոշումների ընդունման վրա: Հայկական աղբյուրներից ավելի վաղ ստացված հակատեղեկություններից մեկը բողոքական քարոզիչ դոկտոր Յոհաննես Լեփսիուսը



Ամերիկացի բժիշկ Աշերը կնոջ՝ Էլիզաբեթի հետ Վանում վիրավորներ բուժելիս, 1915 թ.

1915 թ. հունիսի 15-ին<sup>2</sup> ուղարկել էր Գերմանիայի արտաքին գործերի նախարարություն: Այն արտացոլում էր 1915 թ. մայիսի սկզբի, այսինքն՝ ամենաքիչը մեկ ամիս առաջվա, ռազմական իրավիճակը: Ամենավաղ տպագրված տեղեկությունը կարելի է գտնել Կեսարիա քաղաքում ծնված ամերիկացի քարոզիչ Էլիզաբեթ Ֆրիմեն Բառնուզ Աշերի (1873 – 1915 թթ.) կենսագրության մեջ, որը 1916 թ. հրատարակել է նրա հայրը՝ Ջոն Օտիս Բառնուզը: 12-րդ գլխում, որի վերնագիրն է «Հակամարտություն», նա մեջբերում է կատարում իր դատեր օրագրից, որը լույս է սփռում շատ հարցերի վրա.

«Ապրիլի 20. թուրքերն սկսեցին կռիվը՝ հարձակվելով մի որբ աղջնակի վրա, որը մի քանի գեղջկուհիների հետ փորձում էր փախչել դեպի գերմանական բնակատեղիներ: Հեղափոխականները (հայ. – Տ. Հ.) կրակում էին, որպեսզի պաշտպանեն աղջնակին, և մարտն սկսվեց: Դա տեղի ունեցավ գերմանական ներկա-

<sup>1</sup> Տես «Der Vizekonsul in Mossul (Holstein) an die Botschaft Konstantinopel». Telegraphischer Bericht, Mossul, den 8. Mai 1915 ([http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-05-08-DE-003](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-05-08-DE-003)):

\* Արամեերենով խոսող քրիստոնյաների տարբեր ենթախմբերի համար գոյություն ունեն վիճելի որոշարկիչներ նրանք լեզվաբանորեն բաժանված են երկու հիմնական ճյուղերի (արևելյան ու արևմտյան ասորական), իսկ ըստ կրոնի՝ առնվազն չորս դավանանքի: Վանի շրջակայքում և հարևան Բիթլիսի ու Դիարբեքիի նահանգներում «ասորի» տերմինը սովորաբար հոմանիշ է «Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի» անվանման տարածված ձևը՝ նեստորականներ:

<sup>2</sup> Տես «Der Vizekonsul in Mossul (Holstein) an die Botschaft Konstantinopel» ([http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-05-08-DE-003](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-05-08-DE-003)):

յացուցչության դարպասների առջև, այսպիսով շատերն ականատես եղան, որ անկարգությունները նախաձեռնեցին թուրքերը: Թեև վալին այն անվանում է ապստամբություն, իրականում դա իրենց կյանքը և տները պաշտպանելու հայերի ճիգն է»<sup>3</sup>:

Առ այսօր պաշտոնական թուրքական մեկնակերպը<sup>4</sup> հիմնված է քրիստոնեական ազդեցության թուրքական-մահմեդական ինքնապաշտպանության շինծու գաղափարի վրա: Սույն աշխատության մեջ վերականգնվում են 1915–1916 թթ. իրադարձությունները, ընդամենը մեծ մասամբ դրա հիմքում են մի օտարերկրացի ականատեսի հիշողությունները, որը միառժամանակ եղել է Վանը պաշարող օսմանյան ուժերի հրամանատարության կազմում: Ընդ որում, «հնագույն Ադիլ-ջևազ\* (Արծկե) ամրոցի պաշարման ժամանակ այս օսմանյան սպայի ձեռք բերած անձնական փորձը հաստատում է հայերի ինքնապաշտպանության մասին վերը բերված ամերիկյան մեկնակերպը.

«Ապրիլի 21-ի լուսաբացին ինձ արթնացրեց կրակոցների ձայնը: Հայերը գրոհել էին քաղաքի վրա: Ես անմիջապես հեծնեցի ձիս և մի քանի զինված մարդկանց ուղեկցությամբ գնացի տեսնելու, թե ինչ է կատարվում: Որքա՜ն մեծ էր իմ զարմանքը, երբ ես պարզեցի, որ նախահարձակ են եղել ամենևին էլ ոչ հայերը, այլ ոստիկանական ուժերը: Աջակցություն ստանալով քրդերից և մոտակա գյու-

<sup>3</sup> *Stu John Otis Barrows. In the Land of Ararat: A Sketch of the Life of Mrs. Elizabeth Freeman Barrows Ussher, Missionary to Turkey and a Martyr of the Great War. London, Edinburgh et al.: Fleming H. Revell Company, 1916, P. 128:*

<sup>4</sup> Պաշտոնական մեկնակերպին կարելի է ծանոթանալ Թուրքիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության կայքէջերում: Այն ակնհայտորեն անտրամաբանական է, քանի որ այդ կայքէջերում տեղադրված է նյութի կատարելագործված տարբերակը, որում ընդունվում է հայերի վիշտը, միևնույն ժամանակ, և ընդդեմ բոլոր փաստերի, ժխտվում է ՄԱԿ-ի Յեղասպանության կանխման և պատժման վերաբերյալ համաձայնագրի իմաստով հայերին ոչնչացնելու որևէ պետական կամ կառավարական մտադրության գոյություն. «Այդուհանդերձ, գոյություն չունի ոչ մի հավաստի ապացույց, որով հաստատվի այն պնդումը, թե իբր Օսմանյան կառավարությունն ունեցել է հայերի բնաջնջման նախապես մշակված պլան: Ավելին. օսմանյան սոցիո-մշակութային կառույցը չպաշտպանեց ռախիսական դիքորոշումները, որոնք նպաստեին այդպիսի ահավոր հանցագործությանը: Կյանքի կորուստը, անկախ զոհերի թվից և նրանց հնարավոր մեղավորությունից, ողբերգական է և պետք է հիշվի: Այդուհանդերձ, այդ դրվագը «ցեղասպանություն» անվանելը փաստական առումով խնդրահարույց է, բարոյականության տեսանկյունից՝ արատավոր, իրավաբանության տեսանկյունից՝ անհիմն» (տես «The Events of 1915 and the Turkish-Armenian Controversy over History: An Overview» ([http://www.mfa.gov.tr/the-events-of-1915-and-the-turkish-armenian-controversy-over-history\\_-an-overview.en.mfa](http://www.mfa.gov.tr/the-events-of-1915-and-the-turkish-armenian-controversy-over-history_-an-overview.en.mfa)):

Ավելին. Թուրքիայի Արտաքին գործերի նախարարության կայքէջերը շարունակում են նախկին հայտարարությունները Վանում և այլուր հայերի ձեռնարկած լայնամասշտաբ կոտորածների մասին (տես «Did the Turks undertake a planned and systematic massacre of the Armenians in 1915?». «Armenian allegations and historical facts: Questions and answers». Center for Strategic Research. Ankara, 2007, PP. 29–30 ([http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/ErmeniIddialari/Ermeni\\_ingilizce\\_Soru\\_CevapKitapci.pdf](http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/ErmeniIddialari/Ermeni_ingilizce_Soru_CevapKitapci.pdf)):

\* Նոգալեսն այդ վայրը անվանում էր Ադիլյավուս:

ղերի խաժամուժից՝ նրանք գրոհում էին և թալանում հայկական թաղամասը, որտեղ 300–400 քրիստոնյաներ հուսահատ խիզախությամբ պաշտպանվում էին թալանչիների այդ հրոսակախմբից: (...) Թեև կրակոցները չէին դադարում, ինչի հետևանքով փողոցները փակվել էին, ինձ վերջապես հաջողվեց մոտենալ քաղաքի ռես Բելեդիին, որը ղեկավարում էր արյան այդ զինարբուքը. ես անմիջապես հրամայեցի նրան իսկույնևեթ դադարեցնել կոտորածը: Նա ինձ սաստիկ զարմացրեց՝ պատասխանելով, որ ինքը կատարում էր ոչ այլ բան, քան մարզի գեներալ-նահանգապետի միանշանակ հրամանը՝ ամենքի հետ ոչնչացնել նաև 12 տարեկան և ավելի տարիքով արական սեռի բոլոր հայերին» (էջ 45):

### ՌԱՖԱՅԵԼ ԴԸ ՆՈԳԱԼԵՍ ՄԵՆԴԵՍ

Ռաֆայել Ինչաուսպե<sup>5</sup> Մենդեսը (1877/9–1937), որը հայտնի է դարձել որպես Ռաֆայել դը Նոգալես, վենեսուելացի հեղափոխական էր, գրող, և 19-րդ դարի



Ռաֆայել դը Նոգալես Մենդեսը օսմանյան բանակի սպայի համազգեստով

վերջից, ինչպես ինքն է իրեն բնութագրում, «հաջողության զինվոր»: Նա Վենեսուելայից հեռացել էր երիտասարդ տարիքում, որպեսզի կրթություն ստանար արտասահմանում՝ Գերմանիայում (1886 թ.) և Բելգիայում, որտեղ հաճախել է ռազմական ակադեմիա<sup>6</sup>:

1898 թ. Նոգալեսը՝ որպես ռազմական ակադեմիայի կուրսանտ, մասնակցել է Կուբայում ամերիկա-իսպանական պատերազմին, 1902 թ.՝ Վենեսուելայի ազատագրական պայքարին, 1904 թ.՝ ռուս-ճապոնական պատերազմին: Մինչ նախագահ Գոմեսի դեմ պայքարելու համար վերադարձը հայրենիք նա՝ որպես վենեսուելացի վտարանդի, ապրել էր արկածախնդիր և անհոգ կյանքով, մասնավորապես՝ որպես կովբոյ Արիզոնայում և ոսկի որոնող՝ Նևադայում: Երբ նա իմացել է առաջին համաշխարհային պատերազմն սկսվելու մասին, վերադարձել է Եվրոպա, որտեղ

մտադիր է եղել կռվելու գերմանական բռնազավթումից կեղեքվող Բելգիայի կողմից: Բայց երբ ձախողվել են դաշնակից բանակներից մեկում պատշաճ և առանց քաղաքացիությունից հրաժարվելու ծառայելու նրա ծրագրերը, Նոգալեսը Կ. Պոլսում հանդիպել է ռազմական նախարար Էնվերի հետ: 1915 թ. փետրվարին նա մտել է օսմանյան ուժերի շարքերը՝ որպես կադրային սպա, բայց առանց

<sup>5</sup> Նրա հայրական ազգանունը բասկյան էր (տես *Jasmina Jäckel de Aldana*. Rafael de Nogales Méndez (1877–1937): Chronologie einer persönlichen Erkenntnis. 2007, P. 8 ([https://www.academia.edu/6085604/Rafael\\_de\\_Nogales\\_M%C3%A9ndez\\_1877\\_1937\\_Chronologie\\_einer\\_pers%C3%B6nlichen\\_Erkentnis](https://www.academia.edu/6085604/Rafael_de_Nogales_M%C3%A9ndez_1877_1937_Chronologie_einer_pers%C3%B6nlichen_Erkentnis))):

<sup>6</sup> Նրա կենսագրությունը տես նաև *Kim McQuaid*. The Real and Assumed Personalities of Famous Men: Rafael De Nogales, T. E. Lawrence and the Birth of the Modern Era, 1914–1937. London: Gomidas Institute, 2010:

երդման և առանց իր ազգությունից հրաժարվելու, ապա Էրզրումով ուղարկվել Վան: Գեներալ-նահանգապետ Ջևդեթ բեյի ու Հալիլ բեյի հրամանատարությամբ ձեռնարկված՝ Վանի պաշարման ժամանակ նա ղեկավարել է ոստիկանական ստորաբաժանումները և քրդական ոչ կանոնավոր ուժերը, ընդհանուր առմամբ՝ 10-12 հազար զինված տղամարդկանցից կազմված մի խումբ (էջ 56) և 21 օրում դարձել հրամանատարի տեղակալ:

Լինելով Վանի և Բիթլիսի նահանգներում կազմակերպված կոտորածների անգոր ակնաստես՝ Նոգալեսը 1915 թ. հունիսի 12-ին որոշել է.

«Խորապես ցնցված լինելով մեծաթիվ քրիստոնյաների սպանություններից, որոնք կատարվել են մեր ռազմարշավային զորքերի ընդհանուր ղեկավար գնդապետ Հալիլի եթե ոչ ուղղակի հրամանով, ապա, համենայն դեպս, իմացությամբ, ես խնդրեցի պաշտոնաթողություն Վանի ոստիկանության դիվիզիայի շտաբի պետի տեղակալի պաշտոնից» (էջ 88):

Այդ պահից Նոգալեսն ստիպված է եղել փախչել Ջևդեթի և Հալիլի «ճիրաններից», որոնք փորձում էին բռնել նրան ոչ միայն վրեժից դրդված, այլև իրենց զանգվածային հանցագործությունների անցանկալի վկային ընդմիշտ լռեցնելու համար: Պատահականության և գերմանացի ու թուրք սպաների միջև հարաբերությունների աճող լարվածության շնորհիվ Նոգալեսին մի քանի գերմանացի հրամանատարների աջակցությամբ հրաշքով հաջողվել է ապաստան գտնել օսմանյան ուժերի այլ ստորաբաժանումներում՝ մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, երբ նա զորացրվել է՝ սուլթանի կողմից արժանանալով հարգանքի և ստանալով շքանշաններ: Բեռլին ժամանակավոր այցից հետո (1918 թ. աշուն) Նոգալեսը 1919 թ. ապրիլին վերջնականապես հեռացել է Օսմանյան կայսրությունից:

Հինգ տարի անց Նոգալեսը հրատարակել է իր չորս ինքնակենսագրական գրքերից առաջինը՝ «Չորս տարի մահիկի ներքո» հուշագրությունը (1924 թ.), որին շուտով հետևել են գերմաներեն (1925 թ.)<sup>7</sup> և անգլերեն (1926 թ.) հրատարակությունները: Վերջին տարիներին նրա նշանավոր վկայությունը թարգմանվեց ռուսերեն (2003 թ.) և թուրքերեն (2008 թ.)<sup>8</sup>: Ինչպես ցույց է տալիս բնաբանում արված մեջբերումը, Նոգալեսը՝ որպես փորձառու, կրթված հեղինակ, զգալով հայկական լեռնաշխարհի վեհությունը, նույնիսկ պայքարի և ավերի ամենահուսահատ հանգամանքներում դրսևորել է պատմական և մշակութային համատեքստերի խոր ըմբռնողականություն:

<sup>7</sup> Նոգալեսը, որն իր դպրոցական տարիներն անցկացրել էր Համբուրգում, լավ տիրապետում էր գերմաներենին (իտալերենից և ֆրանսերենից բացի): Ուխտի մեջբերումներն իմ թարգմանությամբ կարվեն գերմաներեն հեղինակային հրատարակությունից, որը տարբերվում է անգլերեն ոչ հեղինակային հրատարակությունից (տես *Rafael de Nogales. Vier Jahre unter dem Halbmond: Erinnerungen aus dem Weltkrieg.* Berlin: Verlag Reimar Hobbing, 1925) 65 լուսանկարով և քարտեզով, որոնք պատկերում են Օսմանյան կայսրությունում Նոգալեսի ճանփորդությունների երթուղիները:

<sup>8</sup> Տես *Rafael de Nogales. Osmanlı Ordusunda Dört Yıl.* İstanbul: Yaba Yayınları, 2008:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ  
ԵՎ ՆՐԱՆՑ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

Նոգալեսի և՛ հուզական, և՛ բարոյական դիրքորոշման մեջ կա խոր անորոշություն. որպես Օսմանյան կայսրության կապիտան՝ նա հավատարիմ էր իր ռազմական առաջադրանքին, որը ներառում էր էթնոկրոնական փոքրամասնությունների ապստամբությունների ճնշումը: Ջգացմունքային մակարդակում նա իրեն նույնացնում էր «մեր ուժերի» հետ, ինչն իր վերջին՝ «Մետաքսե գլխարկ և խթաններ», գրքում հասավ «մենք՝ թուրքերս» արտահայտության գործածմանը: Մինչդեռ իր ամբողջ կյանքի ընթացքում (իր ժամանակին ընդհանրապես ոչ յուրահատուկ կերպով) նա պաշտպանել է սովորական թուրք զինվորի պատիվը. «Քրդերը, արաբները և հայերը Ռաֆայել դը Նոգալեսի համար բարոյագիտության տեսանկյունից այնքան էլ վեհանձն չէին: Թուրքերը պարզապես ավելի լավ էին զինված և կազմակերպված ու գործում էին այնքան դաժանորեն, որքան իրենց հակառակորդները կգործեին, բայց թուրքերի գործելուց առաջ»<sup>9</sup>:

Այդուհանդերձ, որպես կաթոլիկ քրիստոնյա՝ Նոգալեսն իրեն առանձնացրել է ցեղասպանության մեղավորներից, որոնք իր հրամանատարներն էին և զինակիցները: Լինելով անցյալում կատարված հանցագործությունների ակնատես և մեկնաբան՝ նա վաղի Ջևդեթին անվանում է «արնախում կերպար» (էջ 42) և «վագր՝ մարդու կերպարանքով» (էջ 54), խորապես առել է գնդապետ Հալիլին («խիստ պատվամոլ և ընչաքաղց») (էջ 153), որի անսպասելի ռազմական կարիերան վերագրել է այն հասկանալի հանգամանքին, որ Հալիլը նախարար Էնվերի մերձավոր ազգականն էր (էջ 76): Բացի այդ, նա Հալիլի մեղքն է համարել կատարյալ ռազմական անպատասխանատվությունը. նրա ղեկավարությամբ կործանվել էին մի քանի օսմանյան բանակներ, մասնավորապես՝ 6-րդ բանակը, որի հրամանատարությունը Հալիլը ստանձնել էր ֆելդմարշալ ֆոն դեր Գուցի մահից հետո: Ըստ Նոգալեսի՝ Ջևդեթը Հալիլի ձեռքում դարձել էր «ճկուն գործիք». «Նրա (Հալիլի – թարգմ.) հրամանով նա քրիստոնյաներից վրեժ լուծելու համար անում էր ամեն ինչ, որովհետև վերջիններս Դիլմանի (Մալմաստ՝ Իրանում. – Տ. Հ.)՝ ճակատամարտի և հետագայում Վանի պաշարման ժամանակ բարոյական և նյութական աջակցություն էին ցույց տվել ռուսներին» (էջ 96):

Բայց գոյություն ունեին ավելի ծանրակշիռ դրոշմատեսներ՝ հայրենասիրությունը և կրոնը: «Ջևդեթը սպանում էր ոչ միայն այն պատճառով, որ սիրում էր դա անել, այլև այն բանի համար, որ խորապես նվիրված էր իր հայրենիքին ծառայելու գործին, առավել, քան իր կրոնին, այնպես, ինչպես խաչակիրները» (էջ 92): Ըստ Նոգալեսի դիտարկումների՝ Օսմանյան կայսրությունում ապրող քրիս-

<sup>9</sup> Տես *Կիմ ՄակՔուեյդ*, Նշ. աշխ., էջ 123:

\* Դիլմանի ճակատամարտը տեղի ունեցավ 1915 թ. ապրիլի 15-ին ռուսական և օսմանյան զորքերի միջև: Ռուս-հայկական հաղթանակը բացատրվում է այն փաստով, որ օսմանյան զորքի կեսը կազմում էին քրդերը, որոնցից համարյա բոլորը դասալիք դարձան: Բացի հայ սպաներից, որոնք Թովմաս Նազարբեկյանի հրամանատարությամբ ծառայում էին Կովկասյան ռուսական բանակում, հայերը կազմավորեցին կամավորական գումարտակ Անդրանիկ Օզանյանի գլխավորությամբ և Սմբատ Պարոյանի մասնակցությամբ:

տոնյաներին ոչնչացնելու մտադրությունը գոյություն է ունեցել դեռ 1915 թ. գարնանից առաջ և նույնիսկ մինչև առաջին համաշխարհային պատերազմը: Նոգալեսը «Միություն և առաջադիմություն» (ՄԱ) կուսակցությանը, այլ կերպ ասած՝ երիտթուրքերին, մեղադրում էր «Սրբազան պատերազմի միջոցով կայսրության սահմանները պանիսլամականության ոգով ընդլայնելու և հայերին ու Թուրքիայի այլ քրիստոնյա սուբյեկտներին ոչնչացնելու նպատակով պատերազմի մեջ մտնելու համար» (էջ 20):

Այս համատեքստում Դիարբեքիի նահանգում եղեռնի հիմնական կազմակերպիչների հետ Նոգալեսի հանդիպումները լույս են սփռում շատ հարցերի վրա: Նրան հյուրընկալել է Մահմեդ Ազիմը, որը ժանդարմերիայի հրամանատարն էր և ըստ Նոգալեսի՝ կոտորածներ իրականացնողը (էջ 100): Արդեն հասնելով Դիարբեքի՝ Նոգալեսն զգաց դիակների հոտը (էջ 99): Քանի դեռ Ազիմը զբաղված է եղել մեկ այլ կոտորած կազմակերպելով ու ղեկավարելով, Նոգալեսն օգտվել է հնարավորությունից և այցելել է Դիարբեքի քաղաք, որի բնակչությունը այն ժամանակ կազմում էր մոտավորապես 30000 մարդ: Ինչպես մյուս բոլոր փոքր ու մեծ քաղաքներում, նա տեսել է լքված շուկաներ և կաթվածահար եղած մանկավաճաղործական արդյունաբերություն, ինչը «հայերին բնաջնջելու» հետևանք էր (էջ 104): Դիարբեքիում ինը եկեղեցիներից մեկը սրբապղծվել էր՝ վերածվելով ձիանոցի, մինչդեռ մյուսները, օրինակ՝ ՌԻլու Ջամին<sup>10</sup>, դարձվել էին մզկիթներ:

Երբ Նոգալեսը հայտնվեց Դիարբեքիում, նա արդեն Հալիլից փախուստի էր դիմել, այդուհանդերձ, նա խիզախություն է ունեցել 1915 թ. հունիսի 26-ին հանդիպելու այս նահանգի տիրահռչակ արյունոտ լուսահանգապետ՝ դոկտոր Մահմեդ Ռեշիդ Շահինգիրեյի հետ (1878–1919 թթ.):

«Նա ինձ ոչ բացահայտ, բայց միանգամայն դյուրըմբռնելի կերպով հասկացրեց, որ հայերի նկատմամբ ոճրագործությունները կատարում էր հենց իր վերադասի հրամանով: Հետևաբար՝ զանգվածային սպանությունների պատասխանատվությունը կրում է ոչ թե ինքը, այլ իր ղեկավարը՝ այն ժամանակվա Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, հետագայում՝ Մեծ վեզիրը, որը հեռագրով իրենց շրջաբերականներ էր արձակում» (էջ 104–105):

Ինչպես և այդ ժամանակվա այլ օտարերկրացի դիտորդներ և ակնատեսներ, Նոգալեսը եկել է այն եզրակացության, որ երիտթուրքերը բոլոր բնիկ օսմանյան քրիստոնյաներին ոչնչացնելու համար ունեցել են նախապես կազմված ծրագիր (էջ 98). «Ոչ մի կասկած չկա, որ այդ սպանողը և բռնի տեղահանումները բխում էին Մեծ վեզիր Թալեաթ փաշայի և նրա պետական պաշտոնյաների ղեկավարած ոչ առաջադիմական կուսակցության («Միություն և առաջադիմությո-

<sup>10</sup> Կերպափոխումը տեղի է ունեցել արդեն 639 թ., և դրա հետևանքով ՌԻլու Ջամին դարձել է ժամանակակից Թուրքիայի տարածքում գտնվող ամենահին մզկիթներից մեկը: Մինչև 770 թ. մահմեդականներն ու քրիստոնյաները ՌԻլու Ջամին օգտագործել են համատեղ: Նոգալեսը ուշադրություն է հրավիրել մեծ թվով քրիստոնեական տարրերի վրա և վկայակոչել պատմաբանների փորձագիտական կարծիքը, որ ՌԻլու Ջամին կառուցվել էր հայտնի Սուրբ Թովմաս եկեղեցու մասունքներից՝ Տիգրան Առաջինի թագավորական պալատի ավերակների վրա (տես նույն տեղում, էջ 102 f):

յուն».–Տ. Հ.) նախապես կազմված ծրագրից, որի նպատակն էր առաջին հերթին վերացնել հայերին, ապա՝ հույներին և թուրքական կայսրությունում բնակվող մնացած քրիստոնյաներին:

Դրա ապացույցն են Սադիբթում (Սդերդ.–Տ. Հ.), Յեզիրեստում (Ջեզիրե.–Տ. Հ.) և հարակից նահանգներում տեղի ունեցած կոտորածները, երբ զոհվեցին առնվազն 200 հազ. նեստորական քրիստոնյաներ, կաթոլիկ սիրիացիներ, հակոբիկյաններ և այլն, որոնք ոչ մի կապ չունեին հայերի հետ և միշտ հավատարիմ են եղել Սուլթանին: Նույն կերպ Անգորայից (Անկարա) բռնի տեղահանվեցին նաև հայերը, որոնք համարյա բոլորը հռոմեական կաթոլիկներ էին և մասը նախընտրել էին իսլամն ընդունելուց (...):»

### ԿՈՌՈՒՊՏԻԱ ԵՎ ՀՍՓՇՏԱԿՈՒՄ

Ոճրագործների տեսակետից ցեղասպանությունը մեծ հնարավորություններ է ընձեռում անձնական հարստացման և այլ օգուտների համար, ինչը Օսմանյան կայսրության դեպքում ուղեկցվում էր կոռուպցիայով և հափշտակումներով: Ըստ ողջ մնացած հայերի պատմածների՝ կոռուպցիան և հափշտակումները սովորական էին օսմանյան վարչական պրակտիկայում<sup>11</sup>, այդ թվում և անվտանգության ուժերի (ոստիկանություն և բանակ): Նոգալեսի նկարագրությամբ՝ Մուշի և Սասունի քրիստոնյա բնակչության վրա դրված «հարկադիր փոխառություններն» ու հափշտակումը Ջևդեթի և Հալիլի ցեղասպանական պրակտիկայի անբակտելի մասն էին: Արդեն շրջապատված լինելով «ժանդարմերիայի և քրդական աշիրեթների (քրդական ցեղեր) ուժեղ պահակաջոկատներով»՝ Մուշի և մերձակայքի հայերն ստիպված էին զինված դիմադրություն ցույց տալ (էջ 96–97), ինչը հետագայում դարձավ «ապստամբներին պատժելու» առիթ, այն է՝ «կոտորածներ» բառի հոմանիշ: «Պաշտպանության համար նախատեսված զուսմարի» կորզումը հաճախ ավարտվում էր զոհերի մատնությամբ: Այսպես. 1915 թ. հունիսի 25-ին Ջևդեթը հրամայեց «Բիթլիսի հայության ընտրախավի 200 ներկայացուցիչների հետ կախաղան բարձրացնել նաև Կակիդյան էֆենդուն\* , այն բանից հետո, երբ նրանցից հափշտակեց 5000 ֆունտ ոսկի, որը հետագայում կիսեց Հալիլի հետ» (էջ 95):

Նոգալեսը Մամուրեսում տեսել էր Ադանայի գավառից բռնագաղթեցված հայերի, որոնք «լիովին թալանված էին կառավարության պաշտոնյաների ազահության և այդ ժամանակ Մամուրեից (Մամուրա – Տ. Հ.) Կադմեի ռազմական ճանապարհը կառուցելու և վերականգնելու առաջադրանքով» այնտեղ ուղարկված փոխզնդապետ Ադիա բեյի ամոթալի հարձակումների հետևանքով (էջ 119), մինչդեռ Ադանայում հայերի ունեցվածքը՝ «նրանց ամբողջ գույքով հանդերձ», բաշխ-

<sup>11</sup> Օրինակ՝ *Գրիգորիս Պալագեսի*, Հայ Գողգոթան, հ. 1, Վիեննա, Մխիթարյան Միաբանություն, 1922, հ. 2, Փարիզ, 1959, անգլերեն՝ *Grigoris Balakian. Armenian Golgotha: A Memoir of the Armenian Genocide 1915–1918. Translated by Peter Balakian with Aris Sevag.* New York: Alfred A. Knopf, 2009:

\* Դաշնակցական ղեկավար Հողիկյանի անվան սխալ գրություն (տես *Raymond Kévorkian. The Armenian Genocide: A Complete History.* London, New York, 2011, P. 887, footnote 36):



վել էր տեղական և գավառային իշխանությունների միջև, բռնագավթված ունեցվածքի հինգերորդ մասը պետք է ուղարկվեր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտե, որը գտնվում էր օսմանյան մայրաքաղաք Կ. Պոլսում (էջ 119): Նոգալեսը այդ «պարբերաբար կատարվող թալանը» նկարագրել է որպես համարյա համակայսերական ընդգրկում ունեցող՝ երիտթուրքերի ձեռք բերած առաջին անօրինական շահույթը: «Բայց ոսկին, որը նրանք այդքան առատորեն ստացել էին, կուրացրեց և փչացրեց նրանց այն աստիճան, որ չգոհանալով հեշտությամբ ձեռք բերված հայկական ավարով, թաթը դնում էին այն ամենի վրա, ինչը կարող էին որևէ կերպ խլել» (էջ 119):

Ինչպես Նոգալեսը նկատել էր Մամուրեում, որտեղ գործում էին գրեթե լիովին հայերից և հույներից կազմված մինչև չորս աշխատանքային գումարտակներ, հափշտակման ձև էր աշխատանքային գումարտակների համար պարենամթերքի մասնավոր վաճառքը և օսմանյան բանակի համար նախատեսված լծկան անասուններին խլելը. «Այդ անկարգությունների հետևանքով 2000 «հողափորներից» 500-ը աստիճանաբար հյուծվեցին, մինչդեռ մնացած 1500-ը մահացան սովից և ուժասպառ լինելուց (էջ 125): Բայց նույնիսկ «բնականոն» պայմաններում (որոնք համաշխարհային պատերազմի և թուլացող Օսմանյան պետության պայմաններում խիստ հազվադեպ էին) ոչ մահմեդական աշխատավոր զինվորները<sup>12</sup> հազիվ թե հնարավորություն ունեին փրկվելու: 1915 թ. ապրիլի կեսին Հինիսում (Խինիս, հայերեն՝ Խնուս՝ Էրզրումի գավառում) հանդիպելով աշխատանքային գումարտակների զինաթափ արված հայ աշխատավոր զինվորների «քարավանին»՝ Նոգալեսը նշել է. «Նրանց կառավարության հատկացրած սնունդը օրական կես կիլոգրամ հացից էլ քիչ էր: Ոստիկանական պահակախմբից ես իմացա, որ (աշխատավոր զինվորների. – Տ. Հ.) կեսից ավելին ճանապարհին մահացավ սովից և հյուծումից (էջ 41):

### ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՀԵՏԱՑՈՒՄ

Արդեն դեպի Վան նահանգ և քաղաք ուղևորվելիս՝ Նոգալեսը Մուշում իր հայ հյուրընկալից և երկու դանիացի քարոզիչներից ստացել է տագնապալի լուրեր: 1915 թ. ապրիլի 20-ին հեռանալով Ախլաթից (Խլաթ)՝ նա հայտնաբերել է «բազ-

<sup>12</sup> Մինչև այսպես կոչված Մակեդոնյան հեղափոխությունը և դրան հաջորդած 1908 թ. Օսմանյան սահմանադրության վերականգնումը ոչ մահմեդականները ազատվում էին զինվորական ծառայությունից՝ փոխարենը վճարելով նսեմացուցիչ տարեկան գլխահարկ (սիզե, կամ հառաչ): 1909 թ. հոկտեմբերից օսմանյան ուժերի էթնոկրոնական աստիճանակարգության մեջ նրանց «ներառումը» ցույց է տալիս, որ նույնիսկ (հարաբերականորեն) խաղաղ ժամանակներում նրանց կարգավիճակը մնում էր ամենացածրը, քանի որ «անհավատներից» շատերը, եթե ի վիճակի չէին մոծելու ազատման վճարը (*bedel-i askeri*), որը պահուստային ստորաբաժանումների համար 45 ֆունտ էր, պետք է ծառայեին տխրահռչակ անգեն «աշխատանքային գումարտակներում» (*amele tabulari*): Ըստ հոլանդացի թուրքագետ Էրիկ Յան Յուրխեթի՝ պատերազմի ամբողջ ընթացքում աշխատանքային գումարտակների թիվը փոփոխվում էր, «բայց ցանկացած պահի գործում էր 70-120 ստորաբաժանում: Աշխատանքային գումարտակները տարբեր ծառայություններ էին մատուցում, սակայն ամենակարևորներն էին ճանապարհների վերանորոգումն ու փոխադրումը» (տես *Eric Jan Zürcher. Ottoman labour battalions in World War I. Internet essay, 2008* (<http://www.arts.yorku.ca/hist/tgallant/documents/zurcherottomanlaborbattalions.pdf>):

մաթիվ հայերի այլանդակված դիակներ, որոնք ընկած էին ճամփեզրին» (էջ 44): Ինչպես վերը նշվել է, մեկ օր հետո Ադիլջևագում նա ակամատես է եղել քրիստոնեական թաղամասի վրա ոստիկանների և քրդերի հարձակման և հետագա կոտորածի, որում 300-400 քրիստոնյաներից և ոչ մեկը չի փրկվել: Նոգալեսը, իրեն Ադիլջևագից Վան քաղաք տեղափոխող նավակով Վանա լճի Ախթամար կղզու մոտով անցնելիս, դարձել է այնտեղ կատարված հանցագործությունների ակամատեսը.

«Թվում էր, թե կղզում ոչ մի մարդ չկա, միայն եպիսկոպոսի և վանականների դիակներն էին, որ ընկած էին սրբավայրի շենին ու ներսում, և մի քանի ժանդարմներ, որոնք կատարել էին այդ սպանությունները» (էջ 47):

Վանից հեռանալուց հետո (Վանա լճի հարավային ափի երկայնքով) Հալիլն ու Ջևդեթը ուղղություն են վերցրել դեպի հյուսիս, որպեսզի «կոտորածներ կազմակերպեն Սայիրտում (Սդերդ), Բիթլիսում, Մուշում և Սասունում» (էջ 88): «Փոքրիկ Քիսգիր քաղաքում» Նոգալեսը տեսել է ամբողջովին դատարկված խանութներ ու շուկաներ. «Ազահ մորեխների երամից է՛լ ավելի վատը լինելով՝ Հալիլ բեյի զինվորներն անցել էին այդ տարածքով և ոչնչացրել ու պղծել այն ամենը, ինչը չէին կարողացել տանել» (էջ 87): 1915 թ. հունիսի 18-ին Նոգալեսը, ժամանելով Սդերդ, ճանապարհի մոտ գտնվող ժայռին տեսել է «կիսամերկ, արնաշաղախ, անկանոն կերպով ընկած հազարավոր դիակներ. յուրաքանչյուր զոհ ընկել էր հենց այնտեղ, որտեղ նրան խոցել էին սպանողների գնդակները և դանակները: Այստեղ և այնտեղ երևում էին մահացողների տրոփող վերջույթները (էջ 89): Նա տեսել է, թե ինչպես էր ոստիկանությունը և քաղաքի խուժանը դեռ թալանում քրիստոնյաների տները: Սդերդի կոտորածը («ժամանակակից հայոց պատմության մեջ ամենաերկշտ եղանակով կատարված սպանություններից մեկը» (էջ 88)) մեկ օր առաջ պատվիրել էր Ջևդեթը, և այն ղեկավարել էր կապիտան Քյազիմը, որը 1915 թ. հունիսի 17-ին Բիթլիսի նահանգի ժանդարմերիայի պետն էր, մինչդեռ Ջևդեթն ինքը մեկնել էր Բիթլիս քաղաք, «որպեսզի այնտեղ սկսի երկրորդ կոտորածը» (էջ 90): Բիթլիսում ևս սպանվել էին չափահաս տղամարդիկ, երիտասարդ կանանց խուժանը բաժանել էր իր միջև, իսկ 12 տարեկանից փոքր երեխաներով մնացած հայերը բռնի կերպով տեղահանվել էին. «Այսպիսով՝ Բիթլիսում և նրա շրջակայքում մահացավ մոտավորապես 15000 հայ», ամփոփել է Նոգալեսը (էջ 96): Մի քանի փախստական փախել էին Մուշ և «Սիլվանից» (Սիլվան) ու «Բիշերիկից» (Բեշիրի) գաղթածների հետ առաջ շարժվել դեպի «Սասունի անանցանելի լեռնաշխարհը».

«Այդ լեռնաշխարհի արծաթագույն, առկայծող բարձունքներում և հանգած հրաբուխներում մոտավորապես 30000 տղամարդ, կին ու երեխա ի վերջո շրջապատվեցին և, որպեսզի չընկնեին քրդերի ու Ջևդեթի կամավորականների ձեռքը, նետվեցին անդունդներն ու վիհերը» (էջ 96):

Ի վերջո, Ջևդեթը շրջվեց դեպի Մուշ և դրա շրջակայքը, որտեղ «երկու շաբաթից էլ քիչ ժամանակում սպանվեց մոտավորապես 50000 հայ: Մոտակա մի քանի գյուղերում, ինչպիսիք են Ալեդշանը, Մագրակոմը և Կեսկեսքը, կատարվեցին ահավոր զագանություններ: Կանանց և երեխաների մի մասին փակի տակ առան

և կենդանի-կենդանի այրեցին, մյուսներն իրենց մահը գտան Եփրատի ջրերում» (Էջ 97):

Նոգալեւը շեշտել է, որ կոտորածները կատարվել են մեծ մասամբ Վան, Բիթլիս, Դիարբեքի նահանգներում և մասամբ՝ Մամուրեթ-ուլ-Ազիզում (Խարբերդ, Հարպուտ), և դա փորձել է բացատրել ենթադրելով, որ այդ նահանգների բնակչության մեծ մասը հայ ուրացողներն էին, որոնք, ինչպես բոլոր նորադարձները, պետք է լինեին առանձնակի մոլեռանդ (Էջ 148):

«Կայսրության մյուս վիլայեթներում հալածանքն ստանում էր զանգվածային բռնի տեղահանումների ձև՝ համարյա նույն հետևանքներով, որովհետև Սև ծովի ափերից, կենտրոնից, Արևելյան Անատոլիայից դեպի Սիրիայի անապատ և Միջագետք ճամփա ընկած բազմաազար բռնի տեղահանվածների անվերջ քարավանների երեք չորրորդը, երբեմն էլ՝ 90-95 %-ը մահացավ տիֆից ու զրկանքներից: Նրանք, ովքեր փրկվեցին սովից, դարձան թալանչի քրդերի ու չերքեզների և հաճախ էլ իրենց պահակախմբերի զոհերը, պահակախմբերի, որոնք, հոգնելով այդ դժբախտ մարդկանց պատճառով նեղություն կրելուց, նրանցից ազատվում էին գանահարելով կամ էլ կրակոցներով ստիպում էին մերկ անցնել կատաղի գետերը, որոնց ջրերի մեջ էլ նրանք ընկղմվում էին, որպեսզի այլևս երբեք դուրս չգան» (Էջ 98):

### ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացին ունի՞ արդյոք զենք վերցնելու իրավունք՝ իրեն կամ ուրիշներին պաշտպանելու համար, նույնիսկ եթե հարձակվողը պետությունը կամ կառավարությունն են: Ի տարբերություն 20-րդ դարի սկզբին արտահայտված այն կարծիքներից, որոնք ինքնապաշտպանական գործողությունները դատապարտում էին որպես անօրինական գործողություններ, եթե նույնիսկ դրանք կատարվել էին ցեղասպանության համատեքստում, վերջերս ընդունված օրենքը և փորձագիտական կարծիքը մեծ մասամբ հաստատում են այդ իրավունքը. այն ամրագրված է ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածում, և Արդարադատության միջազգային դատարանը ճանաչում է այն:

Հետադարձ հայացք նետելով 20-րդ դարի ցեղասպանությունների ժամանակ ինքնապաշտպանության ամենաակնառու դեպքերի վրա՝ մենք հասկանում ենք, որ «ինքնապաշտպանություն» բառն օգտագործվել է քարոզչության մեջ՝ ցեղասպանության արդեն գոյություն ունեցող ծրագրերի իրականացումն արդարացնելու համար: Դա տեղի է ունեցել 20-րդ դարի առաջին ցեղասպանության ժամանակ, այն իրականացրել են Գերմանիայի գաղութային ուժերը, որոնց հրամանատար զեներալ-լեյտենանտ Լոթար ֆոն Տրոթան 1904 – 1908 թթ. Նամիբիայում ոչ միայն զինված ուժով ճնշել է տեղացի հերերո և նամա ցեղերի ապստամբությունը, այլև հրամայել է պարտվածներին քշել Կալահարի անապատը՝ նրանց վերջնականապես ոչնչացնելու նպատակով: Վաթերբերգի ճակատամարտի (1904 թ. օգոստոսի 11/12) հարյուրամյակի առթիվ Գերմանիայի Արտաքին գործերի նա-

խարարության կայքը հիշատակել է հերերոների և նամանների ապստամբությունը՝ առանց ընդունելու դրան հաջորդած ցեղասպանությունը: Ընդհանուր առմամբ մահացել է մոտավորապես 100000 հերերո և 10000 նամա, մինչդեռ այդ երկու ցեղերի արոտավայրերին մի ժամանակ ապօրինի կերպով տիրացած գերմանացի գաղութարարների 5000 հետնորդներ դեռ այդ հողերի տերերն են:

Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայի հրեական գետոյից օրական 12000 մարդու բռնի տեղահանումից և, ի լրումն դրա, մահվան ճամբարներ մնացած հրեաների բռնի տեղահանումից ազդված երիտասարդ, մեծ մասամբ որբացած հրեաները 1943 թ. ապրիլի 19-ից մինչև 1943 թ. մայիսի 16-ը զենքը ձեռքներին մարտնչեցին կանոնավոր գերմանական ուժերի դեմ: Ընդհանուր առմամբ 750 վատ զինված հրեա մարտիկներ կոչվում էին 2000 գերմանացի զինվորների, էսէ-սականների և լեհ ոստիկանների դեմ: Գետոյում բռնկված հուսահատ ապստամբությունը պատրվակ դարձավ հրեական թաղամասի ամբողջական ոչնչացման, դրա բնակիչների բռնի տեղահանման և 30000 հոգու մահապատժի ենթարկման համար: Թեև երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ տարբեր դաշնակից բանակներում և նացիստական Գերմանիայի դեմ դիմադրության շարժումներում հիմնականում որպես կամավորական կոչվում էր մոտավորապես 1 միլիոն հրեա, ժամանակակիցները (ներառյալ՝ հրեաները) գերազանցապես համարում էին, որ հրեաները ի վիճակի չեն իրենց պաշտպանելու, ինչի հետևանքով նրանք մոռացվել են գառների նման:

Հայերի մասին ժամանակակից կարծիքները (ներառյալ՝ հայկական տեսակետը) անտրամաբանորեն երկիմաստ է: Մի կողմից՝ հայերը մեղադրվում են ապստամբության, հեղափոխության և դավադրության մեջ, մյուս կողմից՝ նրանք դիտվում են որպես վախկոտներ ու թուլամորթներ: Նոգալեսի գրքում կարելի է հանդիպել այդ երկու կարծիքներին. նա, լինելով պաշարման ժամանակավոր հրամանատար, հարգանքով է խոսել «հերոս Վան քաղաքի» պաշտպանների հայրենասիրության մասին, որոնք «իրենց սևացած տների ավերակների մեջ մինչև վերջին շունչը պայքարում էին հանուն ազատ Հայաստանի և Սուրբ Խաչի հաղթանակի, մինչդեռ ես անիծում էի այն ժամը, երբ իմ չար աստղը ինձ ընտրեց որպես իմ հավատակիցների դահիճ» (էջ 54):

Մյուս կողմից՝ Նոգալեսը չի կարողացել ոչ մի կերպ հասկանալ բռնի տեղահանված հայ տղամարդու «թուլությունը».

«Ո՞վ կարող էր իմանալ, թե ինչ գազանությունների նրանք կհանդիպեին, բայց խիզախություն չունեին դիմադրելու ոչ ավելի, քան հինգ ժանդարմի, որոնք ուղեկցում էին յուրաքանչյուր շարքին և հաճախ նույնիսկ զինված չէին: Ինչու՞ այս վախկոտները չեն ապստամբում, հարցնում էի ինքս ինձ, ինչպես կանեին իսկական տղամարդիկ, ծեր կանանց նման տնքալու փոխարեն: Ինչու՞ գետին չեն տապալում իրենց պահակախմբին, որպեսզի հետո գերեն Մամուրեում գտնվող փոքր կայազորը և պաշտպանվեն այնտեղի զենք-զինամթերքով: Եթե նրանք ձեռք բերած լինեին այդ զենքը, հեշտությամբ կկարողանային առաջինը գրավել սարերը, հետագայում Ալեքսանդրեթի նեղուցը անընդհատ ակոսող անզլիական և

ֆրանսիական հաճանավերի օգնությամբ իրենց վերահսկողության տակ կվերցնեին ամբողջ Ադանայի վիլայեթը և Հալեայի վիլայեթի մեծ մասը» (էջ 121):

Խորհելով օսմանյան հայերի համար հնարավոր այլընտրանքի մասին՝ Նոգալեսը մեղադրել է հայերին, որ նրանք, լեռներում և անտառներում «ազգային ինքնավարությանը արժանի ազգերի օրինակով» (տես նույն տեղում) պարտիզանական պատերազմ վարելու փոխարեն իրենց ժամանակը վատնել էին միջանձնային գժտություններով զբաղվելու և Անտանտի հետ կապված ապարդյուն հույսեր տածելու վրա: Հարցերը, որոնք ներկայացրել է Նոգալեսը, հետադարձ հայացք գցելով 1924 թ., դեռ մինչև 1915 թ. քննարկվել էին հայ մտավորականների և ակտիվիստների շրջանում: 1915 թ. փորձը, սակայն, ցույց է տալիս, որ հայկական ինքնապաշտպանության ավելի ակնառու դեպքերից՝ Վան, Շապին Գարահիսար, ՌԻռհա, Մուսա լեռ («Մովսեսի լեռան»), միայն վերջինն էր ամբողջությամբ հաջողվել, այն էլ՝ շնորհիվ «Մովսեսի լեռան»՝ աշխարհագրական դիրքի ծովի մոտ գտնվելու: Վանի 30000 հայ բնակիչներն ու մոտակայքի գաղթականներն անմիջապես ենթարկվեցին նոր վտանգների, երբ 1915 թ. հունիսին ռուսական զորքերը լքեցին Վանը, հազարավոր կանայք և երեխաներ, որոնք անկարող էին հետևել ռուսների հապշտապ նահանջին, բռնությամբ առևանգվեցին քրդերի և օսմանյան կամավորականների կողմից և կոտորվեցին Բերգուրիում (Բերկրի՝ Վանա լճից հյուսիս-արևելք) (էջ 108): Ամեն դեպքում, հաջող ինքնապաշտպանությունը կախված էր արտաքին միջամտությունից՝ լինի Անտանտի նավատորմը, թե ռուսական բանակը, որին Նոգալեսը, սակայն, մեղադրում էր Վանի ոչ ռազմի հայ բնակչությանը բախտի քմահաճույքին թողնելու մեջ: Լինելով Սողոմոն Թեհլերյանի 1921 թ. բեռլինյան դատավարության փորձագետ՝ Յ. Լեփսիուսը նշել է, որ թեև օսմանյան սահմանի մոտ գտնվող շրջաններից մոտավորապես 250000 հայ ողջ է մնացել՝ շնորհիվ արևելյան օսմանյան գավառների ժամանակավոր ռուսական բռնազավթման, Ռուսաստանը գաղթականներին հնարավորություն չի տվել վերադառնալու Կովկասից, երբ ռուսական զորքերը երկրորդ անգամ շարժվել են դեպի Արևելյան Անատոլիա. ըստ ռուսական շտաբի պետ գեներալ Նիկոլայ Յանուշկևիչի՝ Ռուսաստանը մտադիր էր բնիկ հայերի փոխարեն այնտեղ բնակեցնելու քրդերի և կազակների<sup>13</sup>:



Սողոմոն Թեհլերյան  
(Թեհլերյան)  
(1896 – 1960)

Օսմանյան կայսրությունում և հետագայում Թուրքիայի Հանրապետությունում կատարված այլ ցեղասպանությունների համեմատական փորձի հաշվառմամբ, պետք է ընդունել, որ Նոգալեսի ենթադրությունները հիմնավոր չեն: Նոգալեսը, մասնավորապես, քննադատել է հայերին, որ նրանք փորձել են պաշտպանվել իրենց թաղամասերում և եկեղեցիներում՝ սարերում ու անտառներում ապաս-

<sup>13</sup> Stu Tessa Hofmann (Ed.). «Der Völkermord an den Armeniern vor Gericht: Der Prozess Talaat Pascha» («The Genocide against the Armenians at Trial: The Talaat Pasha Court Proceedings»). 2. Aufl. Göttingen, Wien: Gesellschaft für bedrohte Völker, 1985, P. 58 f:

տան գտնելու փոխարեն: Բայց նրա «խորհուրդները» հակասում են իր իսկ դիտարկումներին, ինչպես որ ցույց է տալիս Սասունի հիշատակված օրինակը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կամ 1919–1922 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում բնակվող հունական ուղղափառ ոչ ռազմի բնակչությանը փրկելու տեղային կամ տարածաշրջանային փորձերը ցույց են տալիս, որ կանանց և երեխաներին քարանձավներում թաքցնելը հաճախ հանգեցրել է աղետալի հետևանքների<sup>14</sup>: Նույն կերպ, երբ թուրքական բանակը կրակի է մատնել քարանձավները, Դերսիմի աղանդավոր մահմեդական (ալավի) բնակչությունը 1938 թվականին իր փորձով հասկացավ, որ դրանք դառնում են մահացու թակարդներ: Ցեղասպանությունը անելանելի իրավիճակ է, որից խուսափելն անհնար է, նշանակություն չունի, թե որքան «խիզախ» են որպես թիրախ ընտրված զոհերը: Ողջ մնացածների և նրանց հետնորդների համար, սակայն, տարբերություն չկա՝ զոհերը պարզապես «մոթովել են գառների նման», թե իրենք են ընտրել իրենց մահվան ուղին:

#### ԱԶԵՐՋԱՆԻ ԳԱՆԳԸ. ՎԵՐՋԱԲԱՆ

Հայերի ցեղասպանությունը և դրանում իր խաղացած երկինաստ դերը Նոգալեսին ակնհայտորեն հետապնդել են մինչև կյանքի վերջը: Իր առաջին գրքում Նոգալեսը պատմել էր, որ Ադիլջևագում տեղի ունեցած կոտորածից մեկ ու կես ժամ անց ողջ են մնացել միայն յոթ հայ, որոնց նա կարողացել է մի կարճ ժամանակով ազատել իրենց դահիճներից: Նոգալեսը իր հովանավորյալներին միա-

<sup>14</sup> 1916 թ. ապրիլին Տրապիզոնի շրջանից բռնի տեղահանումից խուսափելու համար, մոտավորապես 1200 պոնտոսցի հույներ թաքնվել էին Կունակա գյուղի մոտ գտնվող հսկայական քարանձավում. նրանք ստիպված էին հանձնվել քաղցի պատճառով (տես *Konstantinos Faltais. Der Völkermord an den Griechen des Pontos.* in: Tessa Hofmann (Ed.). «Verfolgung, Vertreibung und Vernichtung der Christen im Osmanischen Reich 1912–1922LL («Persecution, expulsion and extermination of the Christians in the Ottoman Empire 1912–1922») 2nd ed. Berlin 2007, P. 195), (Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների հետապնդումը, արքորումը և ոչնչացումը 1912–1922 թթ.): Աթենքի «Էմբրոս» թերթի սեփական և զինվորական թղթակից հույն Կոնստանտինոս Ֆալտասիտը հավաքել է մի քանի օսմանյան հույների պատմություններ որոնք, 1920–1921 թթ. Նիկոմեդիա (թուրքերեն՝ Իզմիր) շրջանում (Յալովա թերակղզի) կատարված հաճախակի կրկնվող հարձակումներից հետո հազիվ էին փրկվել իրենց գյուղերի և քաղաքների ոչնչացման ժամանակ: Փրկվածները, որոնց հաջողվել էր փախչել իրենց ոչնչացված և թալանված գյուղերից, ստիպված են եղել ապաստան գտնել Յալովա թերակղզու անտառներում և սարերում, երբ չէին կարող հասնել հունական ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքներ: Հետապնդվելով քեմալական անկանոն բանակի կողմից՝ գաղթականները ողջ մնալու համար խեղդել կամ ափիոնով թունավորել են իրենց երեխաներին: Մովորաբար իրենց մայրերի կամ էլ ամեն դեպքում կանանց կողմից երեխաների սպանությունների մասին պատմությունները, փրկվածների պատմությունների ամենահոգեմաշ դրվագներից են: Հենց այս համատեքստում էլ հույն կանայք վրեժ են լուծել թուրք գերիներից. «Մի օր Հաջի-Փարիզը (մի հույն. – Տ. Հ.) բռնեց թուրք սերժանտ Մեհմեդ Քաուշին և գերի պահեց նրան: Տղամարդիկ, կանայք, երեխաները դուրս եկան իրենց թաքստոցներից, հարձակվեցին և բզկտեցին նրան: Մենք թաղեցինք նրա մարմինը, բայց հաջողո՞ր օրը կանայք հանեցին նրա դիակը, կտրատեցին մամր մասերի, մինչև այդ մարմինը դարձավ փափուկ միս»: 1921 թ. Ֆալտասիտի խմբագրած պատմությունները «Autoi in e iTourki!» («Սրանք թուրքերն են») վերնագրով գրքով հրատարակել են Աթենքում:

մտաբար տարել է քաղաքապետի մոտ, որը խոստացել է իր կյանքով պատասխանատու լինել նրանց անվտանգության համար: Այդուհանդերձ, թուրք պաշտոնյան հաջորդ գիշեր հրամայել է սպանել այդ հայերին և նրանց դիակները 43 դիակների հետ նետել Վանա լիճ: Նոգալեսը հուսահատորեն եզրակացրել է. «Արևելքում նրանք այսպես են պահում իրենց երդումներն ու սուլթանի քաղաքացիական իշխանությունների կողմից տրված խոստումները» (էջ 46):

1931 թ. մարտին տրված հարցազրույցում Նոգալեսն անգամ որոշ մանրամասներ է հայտնել Ազերջան անունը կրող մի 16-ամյա հայ պատանու մասին, որն իր գյուղի վերջին ողջ մնացած արական սեռի ներկայացուցիչն էր և ակնհայտորեն մեկը այն յոթ տղամարդկանցից, որոնց Նոգալեսն Ադիջևագում ապարդյուն կերպով փորձել էր պաշտպանել: Երբ այս տղան պաշտպանություն աղերսելով նետվել է Նոգալեսի ոտքերի տակ, Նոգալեսն ասել է.

«Ազերջան, ես և դու միակ քրիստոնյաներն ենք բազմաթիվ մոլոններ տարածության վրա: Շուտով ես մենակ կմնամ: Դու փրկություն չունես: Ես ոչինչ չեմ կարող անել: Հանուն Քրիստոսի, ում հավատքը դուք քարոզում եք, մեռիր որպես քրիստոնյա և որպես տղամարդ: Յու՛յց տուր այդ շներին, որ դու չես վախենում»<sup>15</sup>:

Դրանից հետո երիտասարդ հայը «ոտքի կանգնեց և գնաց իր մահվանն ընդառաջ»՝ անիծելով թուրքերին: 1934 թ. հրատարակված Նոգալեսի հուշերի վերջին գիրքը բովանդակում է Ազերջանի մասին էլ ավելի մշակված տարբերակ, որը ակնհայտորեն ոչ միայն մարմնավորել է հեղինակի՝ մինչև վերջին շունչը անպարտելի, անվախ և ճշմարիտ մարտիկի լատինասամերիկյան իդեալը, այլև ծառայել թշնամական անտանելի և վտանգավոր միջավայրում իր խղճի և իր միայնության հետ հաշտվելու աճող պահանջին: Ըստ իր գրական թեմայի նոր զարգացման՝ 1917 թվականին Նոգալեսը Դիարբեքիի գանգվածային գերեզմանոցում հայտնաբերել է Ազերջանի գանգը և հետագա ամիսներին օգտագործել այն, ինչպես Համլետը, անձնական գիշերային գրույցների և խոստովանությունների համար, որոնք արտասանվում էին գերմաներեն, որովհետև «իմ հերթապահ զինվորը գերմաներեն ոչ մի բառ չէր հասկանում»<sup>16</sup>:

1918 թ. Նոգալեսն իր հայ ընկերոջ (երկրորդ «ես»-ի, խոստովանահոր) գանգը տարել է Կ. Պոլիս, որպեսզի թաղի այնտեղի քրիստոնեական գերեզմանոցում, հավանաբար կաթոլիկ վանականների կողքին<sup>17</sup>: Հետադարձ հայացք գցելով 1930-ական թվականներին և հետագա ժամանակաշրջանին՝ նա գեղարվեստական ուժով ստեղծել է իր իդեալական հային, որի միջոցով կարող էր հիշել Վանի հայությանը ոչ այնքան որպես զոհերի կամ ապստամբների, որքան՝ որպես մարտիրոսների\* և հերոսների:

<sup>15</sup> Տես *Harwood Hull*. Nogales Discards his Sword for a Pen... Will Write of Experience. «New York Times», 31 March 1931, P. 53. Բերված է ըստ *Կիմ ՄակԹոնլոյ*, Նշ. աշխ., էջ 132:

<sup>16</sup> Տես *Կիմ ՄակԹոնլոյ*, Նշ. աշխ., էջ 133:

<sup>17</sup> Տես նույն տեղում:

\* Հռոմեական կայսրությունում քրիստոնյաներին ընտրություն էր տրվում՝ երկրպագել կայսեր կամ մահապատժի ենթարկվել: Ցեղասպանության ժամանակ, սակայն, զոհերին ոչ մի ընտրություն չէր տրվում:

## SELF-DEFENCE IN GENOCIDE: COMMEMORATING VAN, RE-READING NOGALES

*T. HOFMANN, Doctor of History, Professor h. c.,  
Research Scholar at the Free University of Berlin (Germany)*

As I rested alone on that late afternoon on the hill of Tetvan [Tatvan; TH] and musingly looked upon the calm waters of the Arisa Palus [Վաւնա լիճ], the clouds parted, and the Supan-Dagh [Mount Sipan] emerged like a foamy pyramid against the evening sky. When he little by little enveloped into a dark cloak, in the far distance Mount Ararat blazed up like a drop of molten sulphur. This landscape, on which lay an extinct gloss and an infinitely sad beauty, reminded me that I eventually had reached my destination:

I found myself in the heart of ancient Armenia.

*Rafael de Nogales: Four Years beneath the Crescent*

### WHO WAS THE SELF-DEFENDER, WHO THE ATTACKER?

At the beginning of the First World War the Ottoman province (vilayet) of Van was a remote area, neighboring with neutral Iran in the east and in the north with the border province of Erzurum. Germany that was the most relevant of the Ottoman Empire's military allies during WW1 received no direct or immediate information about events in Van and was subsequently all too readily inclined to believe the official Ottoman version of an "all-Christian" rebellion, as conveyed by the German vice-consul at Mosul, Holstein, on 8 May 1915:

"Today, the local vali [governor; T.H.] informed me about the following:

"Since several days Christian elements rebel in the Van vilayet. The rebellion started with the looting of Muslim villages in Van's vicinity by Armenians. In Van, Armenians unsuccessfully attempted to take the citadel with the result that the weak Turkish garrison lost 300 men. Most of the city is in the hands of the rebellious Armenians; daily street fights. In Van's vicinity the rebellion is most intense in the area of Shatakh. Simultaneously with the Armenian uprising the revolution of the Tiari (Nestorians) in the district of Bashkale [Başkale] began. Having looted Muslim villages, about 2,000 well-armed Tiaris entrenched themselves north of Julamerk. It is said that divisions of Halil Bey and Kiazim have sent troops to Başkale and Van respectively. Since there is no communication I have no news about our institutions at Van""<sup>1</sup>.

---

<sup>1</sup> See "Der Vizekonsul in Mossul (Holstein) an die Botschaft Konstantinopel". Telegraphischer Bericht, Mossul, den 8. Mai 1915 ([http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-05-08-DE-003](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-05-08-DE-003)).



The Ottoman version depicts the events in Van as an act of state self-defence against the seemingly unmotivated looting and armed rebellion by two ethno-religious groups, the Apostolic Armenians in the Van area and the Assyrians\* in the Hakkari district (sancak), against which the Ottoman forces exercised their right and duty of armed self-defence. Divergent portrayals arrived too late to make an immediate impact on the official German opinion and decision-making. One of the earliest pieces of counter-information, based on Armenian sources, was sent by the Protestant missionary Dr. Johannes Lepsius to the German Foreign Office on 15 June 1915<sup>2</sup> and reflected the military situation of early May 1915, i.e. at least a month earlier. The earliest printed information can be found in the biography of the Kayseri born American missionary Elizabeth Freeman Barrows Ussher (1873–1915), published by her father John Otis Barrows in 1916. In its 12th chapter, entitled ‘The Conflict’, J. B. Otis quotes from his daughter’s very enlightening diary:

“April 20th. The Turks began the struggle by attacking an orphan girl, who, with several village women, was trying to escape to the German premises. The [Armenian; T.H.] revolutionists fired to protect her, and the war was on. This occurred in front of the gate of the German compound, so many were eyewitnesses that the trouble was initiated by the Turks. Although the Vali calls it a rebellion, it is really an effort to protect the lives and the homes of the Armenians”<sup>3</sup>.

Until today the official Turkish discourse<sup>4</sup> keeps up the perverted version of

---

\* There are controversial identifiers for the various sub-groups of Aramaic-speaking Christians, who are linguistically divided into two main branches (Eastern, Western Syriac), denominationally – into at least four denominations. “Assyrians” in the context of Van and the neighboring provinces of Bitlis and Diyarbakır is usually synonymous with the denomination of the “Holy Apostolic Catholic Assyrian Church of the East” (vulgo: Nestorians).

<sup>2</sup> See “Der Vizekonsul in Mossul (Holstein) an die Botschaft Konstantinopel” ([http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-05-08-DE-003](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-05-08-DE-003)).

<sup>3</sup> See *John Otis Barrows*. In the Land of Ararat: A Sketch of the Life of Mrs. Elizabeth Freeman Barrows Ussher, Missionary to Turkey and a Martyr of the Great War. London, Edinburgh et al.: Fleming H. Revell Company, 1916, P. 128.

<sup>4</sup> The official version is to be found on the websites of the Foreign Ministry of the Turkish Republic. It is by far not coherent, for it contains a modernized variety which acknowledges the Armenians’ grief, while at the same time and against all facts denying any state or governmental intent to destroy the Armenians in the sense of the UN *Convention on the Prevention and Punishment of Genocide*: “Nevertheless, no authentic evidence exists to support the claim that there was a premeditated plan by the Ottoman Government to kill off Armenians. Moreover, the Ottoman socio-cultural fabric did not harbor racist attitudes that would facilitate such a horrific crime. Loss of life, regardless of numbers and regardless of possible guilt on the part of the victims, is tragic and must be remembered. However, it is factually problematic, morally unsound and legally unfounded to call this episode ‘genocide’” (see “The Events of 1915 and the Turkish-Armenian Controversy over History: An Overview” ([http://www.mfa.gov.tr/the-events-of-1915-and-the-turkish-armenian-controversy-over-history\\_-an-overview.en.mfa](http://www.mfa.gov.tr/the-events-of-1915-and-the-turkish-armenian-controversy-over-history_-an-overview.en.mfa))).

Turkish/Muslim self-defence against Christian aggression. This contribution therefore reconstructs the events of 1915/1916, based mainly on the recollections of a foreign eyewitness who was temporarily in command of the Ottoman siege of Van. However, the personal experience of this Ottoman officer in the “ancient fortress” of Adilcevaz\* (Արծկե) confirms the above quoted American version of Armenian self-defence:

“On 21 April, at dawn I was awakened by the noise of shots. The Armenians had attacked the town. Immediately I mounted my horse and, followed by some armed men, went to see what was happening. Judge of my amazement to discover that the aggressors had not been the Armenians, after all, but the police forces themselves! Supported by the Kurds and the rabble of the vicinity, they were attacking and sacking the Armenian quarter where 300-400 Christians were defending themselves against this band of robbers with the courage of despair. (...) Despite the permanent shooting that blocked the streets I succeeded at last in approaching the Beledie reis of the town, who was directing this blood orgy; whereupon I ordered him to immediately stop the massacre. He astounded me by replying that he was doing nothing more than carry out an unequivocal order emanating from the Governor-General of the province to exterminate, among others, all Armenian males of twelve years of age and over” (p. 45).

#### RAFAEL DE NOGALES MÉNDEZ

Rafael Inchauspe Méndez (1877/9-1937)<sup>5</sup>, who became known as Rafael de Nogales, was a Venezuelan revolutionary, author and since the late 19th century, as he described himself, a ‘soldier of fortune’. He had left Venezuela at young age to be educated abroad in Germany (since 1886) and Belgium, where he attended the military academy<sup>6</sup>.

In 1898, Nogales participated as a youngster in the American-Spanish War in Cuba, in 1902 in the Liberating Revolution of Venezuela and in 1904 in the

---

Furthermore, the Turkish FO’s sites continue earlier allegations of large scale massacres committed by Armenians in Van and elsewhere (see “Did the Turks undertake a planned and systematic massacre of the Armenians in 1915?”. “Armenian allegations and historical facts: Questions and answers”. Center for Strategic Research. Ankara, 2007, PP. 29–30 ([http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/Ermenilddialari/Ermeni\\_ingilizce\\_Soru\\_Cevap\\_Kitapcigi.pdf](http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/Ermenilddialari/Ermeni_ingilizce_Soru_Cevap_Kitapcigi.pdf))).

\* Nogales called the place Adil Yavus.

<sup>5</sup> His paternal family name was Basque (see *Jasmina Jäckel de Aldana*. Rafael de Nogales Méndez (1877 – 1937): Chronologie einer persönlichen Erkenntnis. 2007, P. 8 ([https://www.academia.edu/6085604/Rafael\\_de\\_Nogales\\_M%C3%A9ndez\\_1877\\_1937\\_Chronologie\\_einer\\_pers%C3%B6nlichen\\_Erkenntnis](https://www.academia.edu/6085604/Rafael_de_Nogales_M%C3%A9ndez_1877_1937_Chronologie_einer_pers%C3%B6nlichen_Erkenntnis))).

Ապրիլի 4-ին Հիրճում իշխանություններն այդ նույն «բարեկամ» քրդի տանը հավաքեցին և սպանեցին գյուղի 46 հայ տղամարդկանց, ապա դիակները լցրեցին հորերը, իսկ կանանց կողոպտեցին, տանջեցին ու, գյուղից դուրս տանելով, նույնպես սպանեցին: Միայն մեկին հաջողվեց ազատվել: Այդ մասին Հովսեփ Խլղաթյանը հիշում է. «Հիրճ գիւղի հայերէն միայն մէկը ազատած է: Մնացեալները գիւղէն դուրս չեն կրնար գալ, բանտարկուած են և բնական է, որ պիտի կոտորուին: ...Կը կարծեմ, որ հերթը մեզի հասած է... Նորդուզէն և Խօշաբէն հազարաւոր հեծեալ և ետեւակ զինուած քիւրդեր արդէն իսկ բռնած են Հայոց-Չորի հայ գիւղերու բոլոր ճամբաները: Քրդական գունդերու առաջնորդն է Գրացի Շաքիր աղայի տղան՝ Լէզգին: Կը պատրաստուիմ դիմադրութեան, բայց թշնամու գերագանց ուժերու դէմ որևէ յաջողութիւն անյուսալի է: Ոչ միայն գէնքի և ռազմամթերքի, այլև կռուող ուժերու սուր կարիք ունինք... Մնաք բարով, «Համբոյրներով՝ Յովսեփ Խլղաթեան», 4 ապրիլի, Հայոց ձոր, 1915»<sup>23</sup>: Միևնույն ժամանակ նա հայտնում է Վան, որ այնտեղ հայերի կոտորածը նախատեսվում է 1915 թ. ապրիլի 6-ին<sup>24</sup>:



Արշակ Վռամյան  
(1870–1915)

«Վանա Իշխանին» սպանելուց և Փոլսոյ բեյի սուրհանդակների միջոցով դավադրության հաջողության լուրն ստանալուց հետո 1915 թ. ապրիլի 4-ին՝ շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին Ջևղեթը նույն մտադրությամբ իր տուն խորհրդակցության կանչեց Վանի ճանաչված հասարակական-քաղաքական դեմքերից՝ Ա. Վռամյանին, Արամին, Ա. Թերզիբաշյանին ու Գ. Չիթեջյանին<sup>25</sup>: Ջևղեթի նպատակն առաջին հերթին Ա. Վռամյանին և Արամին վերացնելն էր, որպեսզի նրանք միմյանցից անտեղյակ գան ու ընկնեն իր ծուղակը: Ա. Վռամյանին նամակը հանձնվեց այն պահին, երբ նա Եզնիկ և Դանիել վարդապետների հետ կառք նստած իջնում էր քաղաք<sup>26</sup>:

Դանիել վարդապետի խորհրդով Ա. Վռամյանը Ջևղեթի մոտ մեկնեց մենակ: Մեկնելուց առաջ նա Արամին գրեց մի երկտող հետևյալ բովանդակությամբ.

<sup>22</sup> Տես «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան, 1890-1950»: Բոստոն, 1950, էջ 477:

<sup>23</sup> Տես Օ. Միլիթարյան, Նշ. աշխ., էջ 43, նաև Ա. Ա. Վեր. Կէօրկիզեան, Վան-Վասպուրականի հերոսամարտը. 1915 ապրիլի 7 – 1915 մայիսի 7. Յոյս եւ լոյս: Պեյրոթ, 1965, էջ 88:

<sup>24</sup> Տես Մ. արք. Օրմանյան, Նշ. աշխ., էջ 19:

<sup>25</sup> Տես Հակոբ Պարսպի, Նշ. աշխ., էջ 81:

<sup>26</sup> Տես Հ. Կոստյան, Նշ. աշխ., էջ 28:

«Արամ, կուսակալը ինձ կանչեց, ես գնում եմ, եթե քեզ էլ կանչի, մի գար: Ես կ'երթամ կոր, դուն կեցի՛ր»<sup>27</sup>, «Երբ դու էլ հրախրես Ջևղեթի մօտ, չգաս մինչև իմ վերադարձս»<sup>28</sup>: Հ. Կոստյանն այն համոզմանն է, որ եթե անգամ Ա. Վռամյանն իմանար Իշխանի սուկայի մահվան մասին, նա միևնույն է պիտի գնար. «պիտի գնար մտրակելու համար Ջեվտեթի նամարդ գործը, պիտի աճապարէր ցատում կտրած՝ խարանելու համար ժողովրդի դահճապետի ճակատը»<sup>29</sup>:

Ոստիկանատանը Ա. Վռամյանին տեղեկացրին, որ կենտրոնական կառավարությունը պահանջում է նրան ներկայանալ Կ. Պոլիս, և որ այդ երեկո նա անհապաղ պետք է մեկնի: Ա. Վռամյանը բողոքարկեց այդ որոշումը՝ մատնացույց անելով իր երեսփոխանական (պատգամավորական) անձեռնմխելիությունը: Սակայն նրան բանտարկեցին, իսկ ապրիլի 5-ին 50 ոստիկանի ուղեկցությամբ Ավանցում նավ նստեցրին և աքսորեցին Դիարբեքիր: Ըստ գերմանական դիվանագիտական փաստաթղթերի և, մասնավորապես՝ Գերմանիայի արտգործնախարար Յիմերմանի՝ 1915 թ. հունիսի 28-ի հաղորդագրության՝ նախապես որոշված էր Ա. Վռամյանին ուղարկել Կ. Պոլիս՝ մահապատժի ենթարկելու համար<sup>30</sup>: Սակայն Բիթլիսում Բռնիտանու գետի կամրջի վրա նրան չարչարելով սպանեցին, դիակն էլ գցեցին գետը (ըստ Հ. Պարպիի՝ Վանա լիճը)<sup>31</sup>:

Այն, որ Իշխանը և Ա. Վռամյանը Ջևղեթի կազմակերպած դավադրության զոհ դարձան, վկայում են նույնիսկ գերմանական և թուրքական աղբյուրները: Այսպես. գերմանացի քահանա Շտիրը նշում է, որ «ապրիլի 15-ին այնտեղ (խոսքը Վանի մասին է. – *Այլ. Հ.*) ուղևորության ժամանակ սպանվեցին երկու հայ առաջնորդներ..., որը նրանք ձեռնարկել էին վալիի կարգադրությամբ՝ թուրք ոստիկանների ուղեկցությամբ»<sup>32</sup>:

Իսկ Թալեաթը մատնանշում է, որ «Գաշնակցութեան հրամանով եւ կուսակալ Ճէտեթ պէյի արտօնութեամբ՝ Վանէն երկու ընկերներով ճամբայ հանուած պարագլուխ «Իշխանը» ճամբան սպանուած եւ երեսփոխան Վրամեանն ալ անհետացուած է: Թէեւ Ա. Մանուկեանն ալ մէջտեղէն վերցնել ուզուած է, սակայն Մանուկեան աւելի ճարպիկ գտնուելով ապստամբած է՝ կուսակալ Ճէտեթը փախուստի մատնելով»<sup>33</sup>:

Ժամանակին քննադատություններ հնչեցին ինչպես Իշխանի, այնպես էլ Ա. Վռամյանի հասցեին, որոնք, առանց երկմտելու «կը մեկնեն միտքերը հանդար-

<sup>27</sup> Տես *Թէոդիկ*, Նշ. աշխ., էջ 72:

<sup>28</sup> Տես *Հովհ. ալ. քհ. Հանյան*, Նշ. աշխ., էջ 376:

<sup>29</sup> Հ. *Կոստյան*, Նշ. աշխ., էջ 28:

<sup>30</sup> Տես «Գերմանիան և Հայաստանը 1914–1918. ...», հ. I, էջ 207:

<sup>31</sup> Տես *Մ. արք. Օրմսկյան*, Նշ. աշխ., էջ 19:

<sup>32</sup> «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915–1918 թթ.). Օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները», հ. II: Կազմող, առաջաբանի հեղինակ՝ պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյան: Ե., 2011, էջ 161:

<sup>33</sup> Տես *Մելլան Չարե Բիֆաթ*, Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթքիհատի հայաջինջ ծրագիրները: Ե., 1990, էջ 93:

տեցնելու և կռիւն ընդհատելու...», «... թռան ձիուն կռնակը և յեղափոխական Շատախի կրակը մարելու գացին...»<sup>34</sup>:

Ե. Գեղամյանը համոզմունք է հայտնում, որ «պարզ չէ... այդ երկու գործիչների սպանության շարժառիթը»<sup>35</sup>: Ըստ հեղինակի՝ միգուցե թուրքական կառավարությունը նրանց սպանեց՝ զգուշանալով, որ նրանք շարունակելու են «հայ ժողովրդին գրգռել և լարել» թուրքերի դեմ: Չի բացառվում, որ սպանությունը նպատակ ուներ Վանում հրահրելու ապստամբություն և, օգտագործելով հարմար առիթը, կոտորելու վանեցիներին, որոնք երկար ժամանակ կասկածելի և աստելի էին կառավարության աչքում՝ «իրանց ռուսասիրութեան և թեթևամիտ ցոյցերի համար»<sup>36</sup>:

Ինչպես նշում է ռազմապատմական հանձնաժողովի նախագահ գեներալ-մայոր Ա. Կուլեբյակինը, Իշխանի և Վռամյանի շարանեզ սպանությունները դարձան Վանի Ապրիլյան հերոսամարտի կայծը<sup>37</sup>:

Այդ մասին Էրզրումում գերմանական հյուպատոս ֆոն Շոյբներ-Ռիխտերը Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան բարոն ֆոն Վանգենհայմին 1915 թ. մայիսի 15-ին ուղարկված հեռագրում նշում է. «Անհրաժեշտ են գտնում հեռագրային այս հաղորդումներին ավելացնել հետևյալը. Վանի խռովությունների արտաքին առիթը, ինչպես արդեն իմացել են, եղել է մի քանի հայ երևելիների, հատկապես՝ Իշխանի և Վանի հայ երեսփոխան Վռամյանի ձերբակալումն ու սպանությունը, որոնք մեծ հարգանք էին վայելում հայերի շրջանում»<sup>38</sup>:

Օ. Մխիթարյանը այդ իրադարձությունների վերաբերյալ նշում է. «Երկու օր առաջուայ զգուշութիւն ու համբերութիւն քարոզող յեղափոխական բարոյական գոյգ մեծութիւնները իրենք առաջինը, այնքան եղերականօրէն, զոհուած էին իրենց առաքելութեան ճամբուն վրայ և իրենց նահատակութեամբ իսկ փակած զիջումի և համբերութեան բոլոր ճամբաները: Բայց անոնցմէ մէկի անվերադարձ կորուստը և միւսի ստոյգ մահը եղան թերես ամէնէն զորատր մղիչ ու կազմակերպիչ ուժը Վանի երիտասարդութեան վիպական ու անձնուրաց հերոսամարտին: Մտաւորական առաջնորդ Վռամեանի ձերբակալումն ու յեղափոխական ռազմիկ Իշխանի մահը ցնցեցին բոլոր արի և երկչոտ հոգիները և համոզեցին բոլորը ի միասին, որ այլևս ուրիշ ճամբայ չկայ՝ բացի կռիւն ու ընդդիմութիւնը»<sup>39</sup>:

Թեև Ա. Վռամյանն ու Արամը նախապես պայմանավորվել էին, որ Վանի փրկության համար նրանցից մեկը գոնե պիտի ազատ մնար, սակայն Արամը, այնուամենայնիվ, որոշեց հանդիպել Ջևդեթի հետ: Վերջին պահին մի հայ կառապան նրան զգուշացրեց, որ չզնա, քանի որ պարզվել էր, որ Իշխանը

<sup>34</sup> Տես Ե. Գեղամեանի, Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը, մաս 2-րդ, XX դ.: Բաքու, 1915–1917, էջ 614, 616:

<sup>35</sup> Տես նույն տեղում, էջ 611:

<sup>36</sup> Տես նույն տեղում, էջ 612:

<sup>37</sup> Տես Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, ց. 1, գ. 6, ք. 1–18:

<sup>38</sup> Տես «Գերմանիան և Հայաստանը 1914–1918. ...», հ. I, էջ 173:

<sup>39</sup> Տես Օ. Մխիթարյան, Նշ. աշխ., էջ 43–44:

սպանվել է, իսկ Ա. Վռամյանը՝ ձերբակալվել<sup>40</sup>։ Արամն անմիջապես իջավ կառքից, մտավ հայկական թաղերը, ապա գնաց «Աշխատանք» թերթի խմբագրատուն<sup>41</sup>։ Նույն օրը նա ժամանակ շահելու համար դիմեց իտալական փոխհյուպատոս Սբորտոնին և խնդրեց Ջևդեթից պարզել Ա. Վռամյանի ձերբակալման, Իշխանի սպանության ու քաղաքի պաշարման պատճառները։ Սբորտոնը Վանի Ազգային քաղաքական ժողովի ատենապետ Գևորգ Չիտեջյանի, Ավետիս Թերզիբաշյանի, Վանի առաջնորդ Եզնիկ վարդապետի և ամերիկյան միսիոներ դոկտոր Աշերի ընկերակցությամբ հանդիպեց Ջևդեթի հետ։ Կուսակալը խուսափողական պատասխան տվեց և հրաժարվեց ազատել Ա. Վռամյանին՝ պատճառաբանելով, որ դա կենտրոնական կառավարության պահանջն է։ Իշխանի սպանության մասին նա ասաց, թե իբր զինվորները նրանցից պահանջել են անձնատուր լինել, նրանք չեն հանձնվել, դրա համար էլ սպանվել են։ Կուսակալը հերքեց քաղաքի պաշարման մասին լուրը՝ նշելով, որ ժողովրդի դեմ ոչինչ չունի և ցանկություն է հայտնում անձամբ տեսնելու Արամին, որին «իբր շատ է սիրելիս եղել»<sup>42</sup>։ Փաստորեն, պատվիրակությունը ձեռնունայն վերադարձավ Արամի մոտ, ինչով, ըստ էության, խաղաղության հույսերն իսպառ վերացան<sup>43</sup>։

1915 թ. ապրիլյան կռիվներից հետո Իշխանի և Ա. Վռամյանի դիակները բերվեցին Վան և հուղարկավորվեցին դաշնակցության Վանի պանթեոնում՝ Արարուց եկեղեցու գերեզմանատանը<sup>44</sup>։

Ջևդեթի հայահալած քաղաքականության հետևանքով սպանվեցին և անհետ կորան նաև Վանի գրական, հասարակական և հեղափոխական գործիչներից շատերը։

1915 թ. ապրիլի 8-ին Վանի բանտում սպանված 120 հայ բանտարկյալների թվում էր Հ. Հ. Դ. 8-րդ ընդհանուր ժողովի Վանի պատգամավոր և թուրքական բանակում կամովին զինվորական ծառայության անցած Սիիրան Թերլեմեզյանը։ Նրա կորստի մասին վերջին ստույգ տեղեկությունը հաղորդեց Ռոստոմը՝ ասելով, որ նա «սպանուած է»<sup>45</sup>։

Դեռ 1914 թ. նոյեմբերին թուրք նախարարների դեմ մահափորձ կազմակերպելու ամբաստանությամբ ձերբակալվել էին հինգ հնչակյան գործիչներ, որոնց Ջևդեթը պատրաստվում էր կախաղան հանել։ Սակայն «հրեշավոր սատրապը» պարզապես վախեցավ նրանց դուրս բերել բանտից ու հասցնել կախաղանի վայրը։ Նա զգուշացավ Վանի 30 հազար հայությունից<sup>46</sup>։ Ձերբակալվածների թվում

<sup>40</sup> Տես «Արամը, Մահուան Յիսնամեակին Առթիվ»։ Պեյրուք, 1969, էջ 458, *նուև*՝ «Հայրենիք ամսագիր»։ Բոստոն, հունիս 1924, թիվ 8։

<sup>41</sup> Տես Ա. Ա. Վեր. *Կէօրկիզեսն*, Նշ. աշխ., էջ 89։

<sup>42</sup> Տես Հ. աւ. քհ. *Հանեսն*, Հայոց տաժանքի ճամփաներով, հ. Ա, Թեհրան, 1965, էջ 377։

<sup>43</sup> Տես Գ. *Լազեսն*, Յեղափոխական դեմքեր։ Գահիրե, 1945, էջ 387–388, *նուև*՝ Հ. *Աճէմեսն*, Ազգայնական Իշխանի։ Թիֆլիս, 1916, էջ 22։

<sup>44</sup> Տես *Հանոի Պառպի*, Նշ. աշխ., էջ 81։

<sup>45</sup> Տես Մ. *արք. Օրմանյան*, Նշ. աշխ., էջ 34։

<sup>46</sup> Տես Կ. *Սոլախյան*, Նշ. աշխ., էջ 8։

Էր հնչակյան կուսակցության անդամ, «Երկիր» թերթի խմբագիր Ասոն (Տիգրան Օտյան), որը 1915 թ. ապրիլի 8-ին խեղդամահ արվեց Վանի բանտում<sup>47</sup>: Նրա հետ ձերբակալված էին նաև Արտաշես Սուլաքյանը<sup>48</sup>, Աբրահամ Բրուտյանը, Կարապետ Տանթեյանը (Տանթյան) և Հայկակ Էրեմիշյանը (Էրեմիշյան)<sup>49</sup>: Ա. Բրուտյանն ու Հ. Էրեմիշյանն իրենց մահկանացուն կնքեցին թուրքական զինվորական հիվանդանոցում: Իսկ Ա. Սուլաքյանը և Կ. Տանթեյանը Ջեդեսի հրամանով 1915 թ. ապրիլի 8-ին Ասոյի հետ սպանվեցին Վանի բանտում, որի «մեջի տեսարանը անելի ահաւոր էր: Բոլոր բանտարկեալ հայերը ջարդուած էին»<sup>49</sup>: Ի դեպ, հրաշքով փրկվեց Ա. Սուլաքյանի բանտային հուշատետրը, որը պատկերացում է տալիս թուրքական բանտի անտանելի պայմանների մասին<sup>50</sup>:

1915 թ. իթքիհատականների հայաջինջ քաղաքականության գոհ դարձավ նաև Վասպուրականի «Կանանց միության» հայտնի դեմքերից մեկը՝ Ջարուհի Շալ(ր)ջյանը<sup>51</sup>:

Եվ այսպես. Վանում հայ հասարակական, քաղաքական, ռազմական և մշակութային գործիչների՝ դավադրաբար կազմակերպված սպանությունները թուրքական կառավարության ոճրագործության նախօրոք պլանավորված ծրագրի միայն առաջին փուլն էին: Այդ քաղաքականությամբ նրանք նպատակ էին հետապնդում նախքան Վանում զանգվածային կոտորածների իրակագործումը կանխել դիմադրության կազմակերպման բոլոր փորձերն ու հնարավորությունները:

<sup>47</sup> Տես *Մ. արք. Օրմանյան*, Նշ. աշխ., էջ 35:

\* Վանի բանտի 120 սպանված բանտարկյալներից մեկը, որը Սահմանադրության տարիներից բեղուն մշակութային գործունեություն էր վարել, իր ծննդավայր Վանում 1908 թ. կազմակերպել է առաջին թատրոնը, ստեղծել սիրողական մի թատերախումբ, բեմադրել մի շարք պիեսներ, այդ թվում՝ իր գրածներից՝ «Ընտանիքը», «Աղբար Թորոսին Տնակը», «Իդեալի ճգնաժամը»:

<sup>48</sup> Տես «Քսան կախաղաններ»: Փրավիտենս, 1916, էջ 8, *նսև՝ Գ. Խ. Սյրեփանյան*, Արևմտահայ մտավորականության գոհերը: «Պատմա-բանասիրական հանդես», 1965, հմ. 1:

<sup>49</sup> Տես *Լորր Պրայս*, Հայկական ջարդերու փաստաթուղթերը, մաս Ա: Կազմեց Վահան Միրագենցը: Կ. Պոլիս, 1920, էջ 121:

<sup>50</sup> Տես *Ա. Սոլախյան*, Բանտային հուշեր (Վանի կենտրոնական բանտի զննան, 1914 թ. նոյեմբերի 14-ից 1915 թ. փետրվարի 14 ...): Ե., 2002:

<sup>51</sup> Տես *Մ. արք. Օրմանյան*, Նշ. աշխ., էջ 32, 36–37:

ЛИКВИДАЦИЯ ВОЕННО-ПАРТИЙНЫХ ДЕЯТЕЛЕЙ  
И ИНТЕЛЛИГЕНЦИИ АРМЯН ВАНСКОГО ВИЛАЙЕТА:  
РЕЗНЯ В ГИРЧЕ

*А. А. АРУТЮНЯН, кандидат исторических наук, доцент кафедры  
Армянской истории АГПУ им. Х. Абовяна*

РЕЗЮМЕ

Для беспрепятственного осуществления резни армян Вана–Васпуракана младотурецкие власти приняли решение предварительно ликвидировать армянских общественных, военно-партийных деятелей и интеллигенцию, способную организовать самозащиту армян. В рамках этой программы в ноябре 1914 года у Баязета был убит один из дашнакских деятелей Торос-Галуст Алоян, перебивавшийся из Вана на Кавказ, в конце 1914 года были убиты известный ванский юрист и тюрколог Ншан Галчян и гайдук Петрос из села Хамар Шатахской провинции. По личному приказу правителя Ванского вилайета Джевдет-бея были вероломно убиты видный член дашнакского комитета Ишхан, Мигран Тер-Маргарян, Ваган Хранян, Погос Тутунджян. Партийного деятеля и депутата от Вана А. Врямяна арестовали, инсценировали пересылку в Константинополь, а на деле убили в Битлисе.

8 апреля 1915 года в тюрьме Вана были убиты 120 армян, среди них – член партии «Дашнакцутюн», военнотурецкой армии Мигран Терлемезян, члены гнчакистской партии Арташес Солакян, редактор газеты «Еркир» Асо (Тигран Отян), Карапет Тантян и другие. В 1915 году жертвой арменоцидной политики иттихатистов стала также известный деятель «Женского союза» Васпуракана Заруи Шалрджян.

Были предприняты несколько попыток заманить в ловушку одного из лидеров ванских армян Арама Манукяна и осуществить расправу над ним, однако Араму не только удалось избежать этих засад и капканов, но и в апреле 1915 г. стать одним из вождей героической самообороны Вана.



THE LIQUIDATION OF THE ARMENIAN MILITARY LEADERS,  
PARTY FIGURES AND INTELLECTUALS IN THE VILAYET OF VAN.  
THE MASSACRE IN HIRCH

*A. H. HARUTYUNYAN, PhD in History, Associate Professor, the Chair of Armenian  
History, ASPU after Kh. Abovyan*

SUMMARY

The Young Turk government decided to preliminary liquidate the Armenian public figures, military and party leaders and intellectuals capable of organizing the self-defense of the Armenians in order to perpetrate the Armenians' massacre in Van–Vaspurakan without hindrance. The following people were killed in within this program: one of the Dashnak leaders, Toros-Galust Aloyan was killed in November 1914 at Bayazet on his way from Van to the Caucasus; an outstanding lawyer and specialist in Turkic studies in Van Nshan Galchyan and Haiduk Petros from the village of Khamar of Shatakh province were killed at the end of 1914. A prominent member of the Dashnak Committee Ishkhan, Mihran Ter-Margaryan, Vahan Khranyan, and Poghos Tutunjyan were treacherously murdered on Van Vilayet governor Cevdet Bey's personal order. A party leader and deputy from Van A. Vramyan was arrested. They faked his transfer to Constantinople, but in fact he was killed in Bitlis.

120 Armenians were killed in the prison of Van on 8 April 1915. The member of the «ARF», Turkish army soldier Mihran Terlemezyan, members of the Hunchakian Party Artashes Solakyan, the editor of «Yerkir» newspaper Aso (Tigran Otyan), Karapet Tanyan and others were among them. A well-known figure of the «Women's Union» of Vaspurakan Zaruhi Shalrjyan also fell a victim to the Armenocidal Ittihatist policy in 1915.

Several attempts were made to decoy one of the leaders of Van Armenians Aram Manukyan and give a short shrift to him, but Aram not only managed to avoid these traps and ambushes, but he also became one of the leaders of the heroic defense of Van in April 1915.

ԵԳԻՊՏՈՍ՝ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՕԱԶԻՍ. ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՃԱՄԲԱՐԸ ՊՈՐՏ ՍԱԻԳՈՒՄ  
1915 – 1919 ԹԹ.

*Մ. ՌԻՖԱԹ ԱԼ ԻՍԱՄ, պատմական գիտությունների դոկտոր,  
Ալեքսանդրիայի (Եգիպտոս) համալսարանի Դամանհուրի մասնաճյուղի  
Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ժամանակակից և նորագույն  
պատմության պրոֆեսոր*



Ամբողջ տասնիններորդ դարի ընթացքում Եգիպտոսն ընդունել է հայերին, որոնք իրենց կամքով գնացել են այնտեղ մենակ կամ ընտանիքով՝ ներդրումային պայմաններից, աշխատանքային հնարավորություններից օգտվելու և Եգիպտոսում ապահով կյանք վարելու մտադրությամբ: Սակայն տասնիններորդ դարի ինստուակական թվականների կեսից հայերը, ստիպված լինելով հեռանալ իրենց հայրենի հողից, խումբ-խումբ գաղթել են Եգիպտոս 1894 – 1896 թթ., Օսմանյան կայսրության իշխանությունների՝ Մուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի բռնակալական վարչակարգի (1876–1909 թթ.) իրագործած հայերի կոտորածների պատճառով: Այդ կոտորածների ընթացքում Կահիրե և Ալեքսանդրիա ժամանեցին 2300 հայեր, որոնք Ալեքսանդրիա եկան խեղիվական (եգիպտական), ինչպես նաև ռուսական և ավստրիական նավերով:

Թեև Ստամբուլին առավել մոտ կանգնած և նրա նկատմամբ լոյալ քաղաքական շրջանները դեմ էին Եգիպտոսում հայ գաղթականների առկայությանը, սակայն կային նաև մարդիկ, որոնք կողմ էին նրանց ներկայությանը և Եգիպտոսի կառավարությանը կոչ էին անում նրանց թույլ տալու մնալ եգիպտացիների հետ: Այսպես. «*Կահիրեի հասարակական կարծիք*» հանդեսը 1896 թ. սեպտեմբերի 18-ին դիմեց Եգիպտոսի կառավարությանը՝ հորդորելով չնմանվել այն ստոր ոճրագործներին, որոնք մարդկության թշնամիներն են, ու չարիք չգործել և անմարդկային քայլեր չձեռնարկել հայերի դեմ, որոնք փախչում են Ստամբուլից՝ այդ «*Դժոխսային տնից*», կամ «*Սատանայի տնից*», որպեսզի փրկվեն կոտորածից: Օսմանյան պետությանը Եգիպտոսի անվանական ենթակայությունը բոլորովին էլ չէր նշանակում անարդարության կամ ստորության մեջ ևս ենթակա լինել Մուլթանին կամ նրա կառավարությանը և ոչ էլ Եգիպտոսի ժողովրդին պարտադրում էր մերժել առաքինությունը, ինչպես դա արեցին թուրքերը: Հետևաբար, անհրաժեշտության պետության մեջ իրագործված արյունահեղ ջարդից, կոտորածից և կրած ցավերից հետո հայերը Եգիպտոսում հանդիպել էին սիրալիրության ու ողորմածության (Լիսան ալ Արաբ, 1896 թ., հոկտեմբերի 13):

Եգիպտոսի գաղթական հայերը, ոգեշնչվելով Թուրքիայում Կանանց իրավունքների ընդլայնման շարժման և Օսմանյան սահմանադրության բարեփոխումների հաջողությամբ (1908 թ., հուլիսի 24), ծավալեցին վերադարձի ակտիվ

շարժում: Նրանք շտապում էին ժամ առաջ վերադառնալ իրենց երկիրը, որպեսզի հանդիպեն իրենց հարազատներին և ընկերներին, սակայն, վերադառնալու այդ ոգևորությունը երկար չտևեց, քանի որ Ստամբուլում իշխող «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հայերի նկատմամբ շարունակեց նույն դաժան քաղաքականությունը, ինչի հետևանքը եղան Ադանայի ջարդերը (1909 թ., սպրիլ), որոնք ստիպեցին մի մեծ հայ բազմության հուսահատության և խիստ կարիքի մեջ փախուստի դիմել դեպի Եգիպտոս:



Մուսալեռցիների տարահանումը

### ՍՎԵՂԻԱՅԻ ԳՅՈՒԼԵՐԸ

Թեև դաշնայիններին հաջողվեց գաղթեցնել Կիլիկիայի մեծաթիվ հայ բնակչությանը, սակայն Անատոլիայի իրավասության տակ գտնվող Սվեղիայի շրջանի Մուսա լեռան շրջակա վեց գյուղերի բնակիչները հրաժարվեցին ենթարկվել 1915 թ. հուլիսի 13-ին իրենց կառավարչի տված արտագաղթի հրամանին: Այնտեղի հայերը Մուսա լեռան մոտ մղեցին ինքնապաշտպանական մարտեր, և նրանց հաջողվեց հակահարված տալ Օսմանյան զորքին, որը գրեթե մեկ ու կես ամիս շրջապատեց լեռը ցամաքի կողմից մինչև այն պահը, երբ ֆրանսիական ռազմածովային ուժերը փրկեցին հայերին և տեղափոխեցին Եգիպտոսի Պորտ Սաիդ քաղաքը, որտեղ նրանք մնացին 1915 թ.

սեպտեմբերի կեսից մինչև 1919 թ. նոյեմբերի 24-ը:

Հայկական գյուղերը ձգվում էին Անատոլիայի արևմուտքից մինչև Միջերկրական ծով՝ անցնելով Մուսա լեռան լանջերով: Դրանք էին Բիթիաս (Բիթիոս), Հաջի Հաբիբլի (Հաբլաք), Յողունլուք, Քաբուսիե (Քաբիսկ), ինչպես նաև Խոլբեկ (Խոլեիր) և Վազֆ գյուղերը. վերջին երկուսը գտնվում էին Յողունլուքից դեպի հարավ-արևմուտք: Սվեղիայի բնակիչների հիմնական զբաղմունքը այգեգործությունն էր. մասնավորապես, աճեցնում էին թթի ծառեր, որոնք իրենց հերթին ծառայում էին շերամաբուծությանը: Հայերի հիմնական զբաղմունքներից էր ձիթապտղի յուղ ստանալը: Տարածված արհեստներն էին սանրագործությունը (Յողունլուք և Խոլբեկ), գոլազգործությունը (Բիթիաս և Հաջի Հաբիբլի), գործում էին մի քանի մետաքսագործական ֆաբրիկաներ, կային ոսկերիչներ, դարբիններ, հյուսներ, գորգագործներ, կոշկակարներ, սափրիչներ, վանդակագործներ (ցանցագործներ) և առևտրականներ:

Սվեղիայի հայերի մեծամասնությունը քրիստոնյա առաքելական էր, կային նաև կաթոլիկ և բողոքական փոքրամասնություններ: Յուրաքանչյուր ուղղություն

ուներ իր եկեղեցիները և դպրոցները, սակայն դպրոցները անբարեկարգ և խղճուկ վիճակում էին, բացի այդ, ուսումնական գործընթացը շարունակական չէր:

1915 թ. կեսերին Սվեդիայում կար 1235 հայ ընտանիք, իսկ բնակչության ընդհանուր թիվը 6349 էր: Երբ այդտեղի հայերին հասան լուրերն այն ողբերգական ճակատագրի մասին, որին արժանացել էին Ջեթունի և Դիարբեքի իրենց հայրենակիցները, նրանք համոզվեցին, որ արտագաղթը նշանակում է տառապանք ու մահ: ՌԻստի, երբ Անատոլիայի կառավարիչը 1915 թ. հուլիսին հրապարակեց արտագաղթի հրամանը, երկու սեռերի տարբեր տարիքի 4271 հոգի, այսինքն՝ բնակչության 67,3 %-ը, հրաժարվեց այդ հրամանը կատարելուց և փախավ դեպի Միջերկրական ծովի ափին վեր խոյացող Մուսա լեռան ժայռապատ լանջերը, իսկ 2078 հոգի, կամ բնակչության 32,7 %-ը, նախընտրեց մնալ իր գյուղերում, մնացածներն էլ ենթարկվեցին արտագաղթի հրամանին կամ էլ հավաքագրվեցին Օսմանյան բանակ:



Մուսա լեռից տարահանված երեխաները  
Պորտ Սաիդում, 1915

**ՃԱՆԱՊԱՐՀ ԳԵՊԻ ՊՈՐՏ ՍԱԻԴ**

Սվեդիայի հայերը մնացին Մուսա լեռան վրա գրեթե 45 օր: Այդ ընթացքում նրանք դիմակայում էին Օսմանյան կանոնավոր զորքին և հրոսակներին: Ձինված հայերի թիվը հասնում էր շուրջ 700-ի, դրանք լավ կռվող տղամարդիկ էին, որոնք զինված էին վատորակ հրացաններով՝ ինքնաշեն վառոդե փամփուշտներով: Ինչ վերաբերում է օսմանյան կանոնավոր զորքին, ապա այն ղեկավարում էին գերմանացի սպաները: Չորքի թիվը հասնում էր 500-ից 600-ի, նրանք զինված էին

գերմանական ինքնալիցքավորվող ակոսավոր հրացաններով: Հալելայից եկած որոշ մոլեռանդ մահմեդականներ միացան այդ զորքին, սակայն նրանք զինված էին միայն մահակներով:

Մինչև 1915 թ. օգոստոսի 7-ը հայերին հաջողվում էր հետ մղել օսմանյան զորքի անընդմեջ հարձակումները: Նրանք կարողացան գրավել Մուսա լեռան՝ դեպի Միջերկրական ծով ձգվող լանջերը: Թեև նրանք ծովի միջոցով ազատ կապ ունեին արտաքին աշխարհի հետ, սակայն լիովին շրջապատված էին ցամաքում: Թուրքերը, հանդիպելով նման դիմադրության, համալրեցին իրենց ուժերն այն պահին, երբ հայերի զինամթերքն սկսեց սպառվել:

1915 թ. սեպտեմբերի 5-ին հայերը դորշներ բարձրացրին և օգնության կոչեր արեցին: Այդ ժամանակահատվածում ֆրանսիական երրորդ ռազմական նավատորմը շարժվում էր սիրիական ափի ուղղությամբ՝ այն պաշարելու նպատակով: Այստեղ «Գիշեն» հաժանավի նավապետը նկատեց այդ դորշները և շտապեց

փրկել հայերին: Դա էլ իր հերթին հանգեցրեց թուրքերի և ֆրանսիացիների միջև ընդհարումների՝ կորուստներ պատճառելով երկու կողմերին: Այդ ժամանակ սիրիական ափի մոտ գտնվող ֆրանսիական երրորդ նավախմբի հինգ ռազմանավերը փոխձովակալ Դարտիժ դյու Ֆուռնեի (*Dartige du Fournet*) հրամանատարությամբ սպասում էին Ֆրանսիայի կառավարության հրամաններին:

Սեպտեմբերի հինգի կեսօրին հայկական ուժերի առաջնորդ Պետրոս Տնլաքյանը հանդիպեց «Գիշեն» հաճախարակի նավապետի հետ: Նա ներկայացրեց հայկական ուժերի ծանր կացությունը: Հաջորդ օրը Տնլաքյանը խոսեց փոխձովակալ դյու Ֆուռնեի հետ՝ կանանց, երեխաներին, ծերերին Կիպրոս տարահանելու անհրաժեշտության մասին: Նա նավապետին խնդրեց նաև տրամադրել շուրջ 300 հրացան և զինամթերք, ինչպես նաև 100 պարկ ալյուր և 50 պարկ աղ՝ լեռան վրա գտնվող զինյալների համար: Սեպտեմբերի 7-ին ֆրանսիացի ռազմածովայինները բանակցություններ վարեցին Կիպրոսում Մեծ Բրիտանիայի գերագույն հանձնակատար Ջոն Բլաուզենի հետ այն հարցով, թե արդյոք նա կարող է ընդունել հայ գաղթականներին: Պատասխանը ժխտական էր:

Այն ժամանակ, երբ Կիպրոսում Մեծ Բրիտանիայի գերագույն հանձնակատարը հրաժարվեց հայերին սպաստան տրամադրելուց, Տնլաքյանը բացատրեց «Դը Սեյե» ռազմանավի հրամանատարին, որին վստահված էր Մուսա լեռան հսկողությունը, որ հայերն ունեն ընդամենը երկու օրվա պաշար, և որ օսմանցիների ցանկացած հարձակում կստիպի նրանց դուրս գալ իրենց թաքստոցներից, և լեռան լանջերին ապաստանած կանայք, երեխաները և ծերերը կենթարկվեն կոտորածի: Այդ պատճառով ֆրանսիացի ռազմածովայինները հրետանային ռմբակոծության ենթարկեցին որոշ օսմանյան բնակավայրեր՝ օսմանյան գորքի մարտական ուժին կոտորելու և նրանց առաջխաղացմանը խանգարելու նպատակով: Մինչդեռ հայերի տարահանումը օրհասական էր:



Պետրոս Տնլաքյան  
(1887 – 1920)

Քանի որ Կիպրոս հայերի տեղափոխումը դժվար իրագործելի էր, Դարտիժ դյու Ֆուռնեն իր կառավարությանը տեղեկացրեց հայերի վիճակի մասին: Մինչև ժամանակ նա դիմեց բրիտանական իշխանություններին՝ հայերին Եգիպտոսում կացարանով ապահովելու խնդրանքով, սակայն մինչև 1915 թ. սեպտեմբերի 11-ի առավոտը նա որևէ հրահանգ չստացավ ո՛չ Ֆրանսիայի, ո՛չ էլ Մեծ Բրիտանիայի կառավարություններից: Այդ ընթացքում «Դը Սեյե» ռազմանավի հրամանատարը տեղեկացրեց փոխձովակալ դյու Ֆուռնեին, որ տարահանումն անհրաժեշտ է կատարել հաջորդ առավոտյան՝ պայմանավորված օսմանյան գորքի թվի զգալի ավելացմամբ: Նա առաջարկեց սկզբում տարահանել երեխաներին, կանանց և ծերերին, ապա նոր՝ մարտիկներին, որոնց զինամթերքը վերջացել էր: Ուստի ֆրանսիական երրորդ նավախմբի հրամանատարը իր պատասխանատվությամբ հրամայեց 1915 թ. սեպտեմբերի 12-ի առավոտյան տարահանել հայերին:

Միևնույն ժամանակ, Դարտիժ դյու Ֆուռնեն կրկին կապ հաստատեց Եգիպտոսում Բրիտանիայի իշխանությունների հետ, որոնք այս անգամ դժկամությամբ, սակայն թույլ տվեցին հայերին ժամանակավոր ապաստան տրամադրել Պորտ Սաիդում: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ ֆրանսիական նավատորմի պաշտոնյաները դիմեցին Պորտ Սաիդում բրիտանական զորքերի հրամանատար գնդապետ Էլզուդին և առաջարկեցին հայերին ապահովել կացարանով Սուեզի ջրանցքի ասիական ափին՝ Պորտ Սաիդ քաղաքում:

Հայերի տեղափոխումը Մուսա լեռից դեպի Պորտ Սաիդ սկսվեց 1915 թ. սեպտեմբերին 12-ի առավոտյան և շարունակվեց մինչև սեպտեմբերի 14-ի ուշ երեկո: Այդ գիշերը բրիտանական ռազմական իշխանությունները ֆրանսիական նավատորմին տրամադրեցին վրաններ, որպեսզի ճամբար հիմնեն կարանտինային գոտում՝ Պորտ Սաիդից հինգ կիլոմետր հեռավորության վրա, ջրանցքի ասիական ափին, և Լոնդոնից սպասեն խնդրի վերջնական լուծման և նոր հրամանների:

Այսպիսով՝ Մուսա լեռան հայերին մահից փրկելու գործը հաջողվեց՝ ֆրանսիացի ռազմածովայինների մարդասիրության և իրենց պատասխանատվությամբ տարահանման որոշում ընդունելու խիզախության, ինչպես նաև նման որոշումն իրականացնելու և առաջացող դժվարությունները հաղթահարելու գործում նրանց հետևողականության շնորհիվ, քանի որ ֆրանսիացի ռազմածովայինների և նրանց կառավարության միջև նամակագրությունից պարզ էր, որ եթե սպասեին կառավարության որոշմանը, Սվեդիայի բոլոր հայերը կոչնչանային՝ լեռան լանջերին կսպանվեին կամ սովամահ կլինեին:

Սեպտեմբերի 12-ին ֆրանսիական նավերի վրա հայերին տեղավորելու պահից մինչև ֆրանսիացի ռազմածովայինների ու բրիտանացի սպաների կողմից նրանց Պորտ Սաիդում ապաստան տալը՝ Լոնդոնի կառավարությունը շարունակում էր պնդել, որ Եգիպտոսում նրանց մշտական ապաստան չհատկացվի, և կոչ էր անում Ֆրանսիայի կառավարությանը՝ նրանց որքան հնարավոր է շուտ տեղափոխել որևէ այլ վայր:

Այդպիսի որոշում ընդունելիս Լոնդոնի կառավարությունը միանգամայն անտեղյակ էր այն պայմաններից, որոնք ստիպեցին ֆրանսիացի հրամանատարին ստանձնել գաղթականներին տեղափոխելու պատասխանատվությունը, թեև Եգիպտոսը գերբնակեցված էր փախստականներով, որոնք եկել էին Օսմանյան կայսրության բոլոր մասերից: Հետևաբար, այդքան մեծ թվով հայերի համար (ավելի քան 4000 հոգի) տեղ չկար: Լոնդոնը հրաժարվեց հայերին նաև Կիպրոս տեղափոխելուց՝ գրեթե մույն պատճառներից ելնելով:

Լոնդոնը Փարիզին առաջարկեց հայերին ապաստան տալ Թունիսում, Ալժիրում կամ Մարոկկոյում, սակայն այդ երկրների իշխող շրջաններն այդ հարցը դժվար իրագործելի համարեցին՝ վերը նշված վայրերում հայերի դեմ թշնամանքի տարածման, ինչպես նաև գործազրկության բարձր մակարդակի պատճառով: Հայերին Հռոդոս կղզի տեղափոխելու ֆրանս-բրիտանական առաջարկություն եղավ Իտալիայի կառավարությանը, սակայն այդ առաջարկությունը մերժվեց կղզու՝ փախստականներով գերբնակեցված լինելու պատճառով: Այնուհետև Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարություններն առաջարկեցին հայերին Սեր-

քիայով ու Ռումինիայով Կովկաս տեղափոխել՝ հուսալով, որ նրանք անհրաժեշտ օգնություն և աջակցություն կստանան իրենց դավանակից եղբայրների կողմից, սակայն այս առաջարկությունն էլ մերժեց Ռուսաստանի կառավարությունը:

### ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Այդ առաջարկությունների ձախողման պատճառով Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի ռազմական իշխանություններն ստիպված եղան ընդունել հայ գաղթականներին, որոնց նյութական միջոցները և ուժերն սպառվել էին: Նրանք սկսեցին միջոցներ ձեռնարկել հայերին ապաստան տրամադրելու համար և նյութական օժանդակություն ցույց տալ՝ սպասելով ընթացող պատերազմի արդյունքներին:

Կահիրեից բերված վրանները տեղ հասան 1915 թ. սեպտեմբերի 14-ի երեկոյան: Հաջորդ օրվա առավոտից մինչ սեպտեմբերի 17-ի երեկոն Պորտ Սաիդում ֆրանսիական նավատորմի և բրիտանական ռազմական իշխանությունների միասնական ջանքերով այդ վրանները տեղակայվեցին նախապես համաձայնեցված տարածքում: Դրանից հետո նավերն ափ հասան, և գաղթականներին պատահական ընտրության սկզբունքով տեղաբաշխեցին վրաններում: Ինչ վերաբերում է հայերի սննդին, նշենք, որ, ֆրանսիացի ռազմածովայիններն էին զբաղվում այդ հարցով՝ սկսած նրանց տեղափոխումից մինչև սեպտեմբերի 17-ի ուրբաթ երեկոյան վրաններում տեղավորելը: Դրանից հետո այդ պարտավորությունն ստանձնեցին բրիտանական իշխանությունները:

Այսպիսով՝ Սվեդիայի հայկական վեց գյուղերի բնակիչները հաստատվեցին Պորտ Սաիդում՝ Սուեզի ջրանցքի արևելյան ափին, որտեղ նրանք հասել էին, հետևյալ թվաքանակներով. Յողունուլոք՝ 1216, Խդդբեկ՝ 1084, Հաջի Հաբիբի՝ 900, Բիթիաս՝ 600, Վագֆ՝ 315, Քարուսիե՝ 85, ընդամենը՝ 4200:

1915 թ. սեպտեմբերի 14-ին Սվեդիայի հայերի մասին լուրը Կահիրեի Հայ առաքելական առաջնորդանիստ եկեղեցի հասավ բժիշկ Արշարունու միջոցով, որն աշխատում էր Պորտ Սաիդի կառավարական հիվանդանոցում: Բրիտանական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Մաքսվելը տեղեկացրեց առաջնորդանիստ եկեղեցուն, որ բրիտանական կառավարությունը կհոգա նրանց կենցաղային կարիքները, իսկ հայ ժողովուրդը պետք է հոգ տանի հագուստի և այլ կարիքների մասին: Մաքսվելը առաջնորդանիստ եկեղեցուն խորհուրդ տվեց դիմել Մեծ Բրիտանիայի Գերագույն հանձնակատար Հենրի Մակ-Մահոնին, որպեսզի նա զբաղվի գաղթականների կարգավիճակի հարցով և հոգա նրանց կարիքները:

Հաջորդ օրը Կահիրեում Հայ առաքելական եկեղեցու թեմական ժողովի որոշմամբ ժողովի երեք անդամներ մեկնեցին Պորտ Սաիդ, որպեսզի ձեռնարկեն փախստականների համար անհրաժեշտ ընթացակարգերը և ժողովին տեղեկություն հաղորդեն նրանց կացության մասին: 1915 թ. սեպտեմբերի 16-ին Պորտ Սաիդ ժամանեց հայ համայնքի առաջնորդների պատվիրակությունը՝ Եգիպտոսում Հայ առաքելական եկեղեցու առաջնորդ (1914–1931 թթ.) Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի գլխավորությամբ: Արքեպիսկոպոսն ուղարկեց ֆրանսիական երրորդ նավախմբի հրամանատարի տեղակալ փոխծովակալին մի կարճ հաղոր-

դագրություն, որում իր և հայ ժողովրդի անունից խորին շնորհակալություն էր հայտնում Նորին գերագանցություն Ֆրանսիայի Նախագահին, Ֆրանսիայի կառավարությանը և ռազմածովային ուժերին՝ Մուսա լեռան հայերին փրկելու և նրանց մասին հոգ տանելու համար: Արքեպիսկոպոսը Պորտ Սաիդում ապրող հայերի հետ ձեռք բերեց որոշ պայմանավորվածություններ և ստեղծեց մի հանձնաժողով՝ քաղաքի և հարակից քաղաքների բնակիչների կողմից գաղթականների համար կանխիկ գումարի և նյութական նվիրատվությունների հանգանակման նպատակով:

Կահիրե արքեպիսկոպոսի վերադառնալուց հետո թեմական ժողովը գաղթականներին օգնության նախնական ծրագիր մշակելու նպատակով 1915 թվականի սեպտեմբերի 18-ին գումարեց ժողով: Խորհուրդը որոշում ընդունեց հայկական թերթերի միջոցով հայտարարություններ տարածել, որոնցով հայերին պետք է կոչ արվեր կարիքավորների համար նվիրաբերել տղամարդու, կանանց և մանկական նոր կամ օգտագործված հագուստ, ներքնագգեստ կամ արտահագուստ: Այդ նվիրատվությունները պետք է ուղարկվեին Բուլակում գտնվող հայկական դպրոց կամ Բին էլ Սուրիհի առաջնորդարան: Տեղի Հայկական Կարմիր Խաչի կազմակերպությունը պետք է տեսակավորեր ու բաշխեր դրանք: Առաքել բեկը՝ Պողոս Նուբարի որդին, էլ Բահր փողոցում գտնվող իր տունը հատկացրեց փախստականների հագուստի ապահովման հարցով զբաղվող կոմիտեին:

Պորտ Սաիդ Սվեդիայի հայերի ժամանելուց մոտ մեկ շաբաթ անց Սուեզի ջրանցքի ասիական ափին կարանտինային գոտում հայտնվեցին անկանոն կերպով խփված վրաններ: Կազմակերպման գործընթացը վատահված էր Սուդանում գտնվող բրիտանական զորքերի սպա մայոր Փիրսոնին: Փիրսոնն այդ տարածքը բաժանեց վեց ճամբարային ավանների՝ ըստ հայրենիքում հայերի բնակության վայրերի: Յուրաքանչյուր գյուղական բաժանվեց շրջանների, որոնց տրվեց A-ից S լատինատառ նիշերով համարակալում: Այսպիսով՝ շրջանների թիվը հասավ 19-ի: Յուրաքանչյուր շրջանում կար 25 վրան՝ յուրաքանչյուր գծի երկայնքով՝ 5-ը, ընդամենը 5 գծով հյուսիսից հարավ դասավորված և անցուղիներով առանձնացված: Վրանների ընդհանուր թիվը կազմեց 475: Ամեն մի վրանում ապրում էր ութինը հոգի: Փիրսոնը հավաքեց Սվեդիայի վեց գյուղերի բնակիչներին մեկ ճամբարային գյուղում: Բիթիաս, Հաջի Հաբիբլի, Քաբուսիե և Վազֆ գյուղերի բնակիչները զբաղեցրին A-ից մինչև H տառերով նշագրված առաջին ութ շրջանները, իսկ Յողունուլուք և Խդրբեկ գյուղերն զբաղեցրին I-ից S տառերով նշագրված 11 շրջանները: Այսպիսով՝ թվում էր, թե ճամբարը բաժանված է երկու տարբեր մասերի: Հետագայում Փիրսոնը ամեն գյուղի մոտակայքի ազատ տարածքը հատկացրեց որպես զբոսավայր ու երեխաների համար խաղահրապարակ: Բացի այդ, հատկացվեց մի առանձին տարածք՝ որպես տարեց մարդկանց հանգստի վայր, որտեղ նրանք կարող էին հանդիպել ու ժամանակ անցկացնել:

Ահա այսպես Փիրսոնին կարճ ժամանակամիջոցում հաջողվեց լազարեթային բարաքների ավազուտը մի անօգտագործելի վայրից վերածել կանոնավոր ճամբարային ավանի՝ դասավորված անգլիական ճամբարների օրինակով: Այսպիսով՝ Սվեդիայի հայ գաղթականների համար նա դրեց այն անկյունաքարը, որի



հիման վրա նրանք բնակություն հաստատեցին այդ տարածքում, որն սկսեցին անվանել «Պորտ Սաիդի հայ գաղթականների ճամբար»: Այլ կերպ ասած՝ այդ վեց հայկական գյուղերը Մուսա լեռան մոտակայքից տեղափոխվեցին Սուեզի ջրանցքի արևելյան ափ՝ Պորտ Սաիդ:

Դրանից հետո անցկացվեց նաև ճամբարի բնակչության մարդահամար, որպեսզի պաշտոնյաները կարողանային կազմակերպել մարդկանց բնակեցման ու պատվաստումների հարցերի լուծումը, օգնություն բաժանեին նրանց: Ինչպես նշել էր ժողովի անդամ Թորքաթլյանն թեմական ժողովին հղած իր նամակում, գաղթականների թիվը հասնում էր 4199-ի, որոնք խմբավորված էին հետևյալ կերպ.

Կարգավիճակը	Թիվը	Տոկոսը
14 տարին անց՝ իգական սեռի անձինք	1408	33.5
14 տարին անց՝ արական սեռի անձինք	914	21.8
4–14 տարեկան՝ իգական սեռի անձինք	539	12.8
4–14 տարեկան՝ արական սեռի անձինք	702	16.7
4 տարեկանից ցածր երեխաներ (աղջիկ և տղա)	636	15.2
Ընդամենը	4199	100

Այսպիսով, վերոնշյալ տվյալների հիման վրա Պորտ Սաիդի հայ գաղթականության տարիքային բուրգը ձևավորվում է հետևյալ կերպ. -բուրգի գագաթ. մինչև 4 տարեկան երեխաների խումբը՝ 15,2 %, -բուրգի մեջտեղ. 4 տարեկանից բարձր արական սեռի անձինք՝ 38,2 %, -բուրգի հիմք. 4 տարեկանից բարձր իգական սեռի անձինք՝ 46,3 %:

Սվեդիահայերի այս մեծաքանակ բնակչությանը հարկավոր էր ապահովել բոլոր հարմարություններով և կյանքի համար անհրաժեշտ պայմաններով: Եվ իրոք, բնակավորումն ավարտելուց հետո խմելու մաքուր ջուր հասցվեց ջրանցքի արևմտյան ափից: Յուրաքանչյուր շրջան ուներ խմելու ջրի իր աղբյուրը՝ բազմաթիվ ծորակներով, և մի փայտաշեն բաղնիք, որտեղ կային սառը ջուր և առանձնացված բաժիններ տղամարդկանց ու կանանց համար: Մի մեծ տարածք հատկացված էր լվացք անելու և չորացնելու համար: Յուրաքանչյուր շրջանի համար փորվեցին ջրահեռացման համակարգով առանձին զուգարաններ:

1915 թվականի հոկտեմբերի 20-ին այնտեղ բացվեց հացի փուռ՝ մարդկանց մեծ քանակով լավ ու էժան հացով ապահովելու համար: Վիկտորիա Արշարունին, հիշատակված բժիշկ Արշարունու կինը, խոհանոց ու ճաշարան բացեց՝ մեծ թվով երեխաների, կանանց, տարեցներին և տկարներին սնունդով ու խնամքով ապահովելու համար: Ի լրումն դրա՝ ճամբարն ուներ նաև մեկ ընդհանուր խոհանոց: Ժամանակի ընթացքում ճամբարի հրապարակում բացվեցին տաղավարներ, որտեղ առևտուր էին անում Պորտ Սաիդի վաճառականները, բացվեցին նաև վարսավիրանոցներ և այլ խանութներ:

Այդ ամենից բացի, Հայկական Կարմիր խաչը Պորտ Սաիդի Առողջապահական վարչության հովանավորությամբ ճամբարում հիմնեց մի հիվանդանոց, որտեղ աշխատում էին մեծ թվով բրիտանացի և հայ բժիշկներ, ինչպես նաև մի

խումբ այլազգի կամավոր բուժքույրեր: Եգիպտոսում գտնվելու շրջանում ճամբարի հիվանդների բուժման համար Հայկական Կարմիր խաչը ծախսեց 5337 ոսկե ֆունտ: Բացվեցին արհեստանոցներ, որտեղ չափահաս տղամարդկանց ու կանանց տարբեր արհեստներ էին սովորեցնում: Երեխաների համար բացվեց Սեավանի դպրոցը: Յուրաքանչյուր կրոնական ուղղություն դավանողներին հատկացվեց մեկ վրան, որտեղ կատարվում էին արարողություններ և մատուցվում էին պատարագներ: Քանի որ Առաքելական հավատքին պատկանողների թիվը շատ մեծ էր, 1916 թվականի մարտին նրանց համար վրանի փոխարեն կառուցվեց մի փոքրիկ փայտե եկեղեցի:

Մահացած սվեդիսահայերին թաղում էին ճամբարին հարակից մի տարածքում, որը պատկանում էր Սուեզի ջրանցքի ընկերությանը, իսկ վերջինս կառավարությանը բողոքեց իրեն պատկանող տարածքում մարդկանց հուղարկավորելու դեմ: ՌԻՖԱԹ, ներքին գործերի նախարարի խորհրդական Ռ. Գրեհեմը 1916 թվականի փետրվարի վերջին դիմեց կառավարության Փախստականների հարցերով վարչությանը՝ մահացածների աճյուններն Ընդհանուր գերեզմանոց տեղափոխելու և նոր մահացած մարդկանց այնտեղ հուղարկավորելու խնդրանքով: Եվ նրա խնդրանքը բավարարվեց:

Այսպիսով՝ մի քանի փութաջան անգլիացի պաշտոնյաների և եգիպտահայերի օգնությամբ մոտ մեկ ամսվա ընթացքում հաջողվեց Պորտ Սահիդում ստեղծել սվեդիսահայերի ճամբար և այն ապահովել հիմնական հարմարություններով ու մատակարարմամբ: Հարկ է նշել, որ Պորտ Սահիդի բրիտանական իշխանությունները, ինչպես վկայում է Էլգուդը, այդ ճամբարը կազմակերպեցին մեկ-երկու շաբաթվա ընթացքում, ապա դրա կառավարումը հանձնվեց Կահիրեի Հայ առաքելական եկեղեցու թեմական ժողովին՝ Եգիպտոսի կառավարության Փախստականների հարցերով վարչության և նրա գլխավոր վերահսկիչ Հորեն Բլաուզի վերահսկողությամբ:

Առաջնորդարանը նշանակեց ճամբարում իր ներկայացուցչին, որը պետք է զբաղվեր գաղթականների հարցերով և դառնար միջնորդ մի կողմից՝ Արքեպիսկոպոսարանի և ճամբարի, իսկ մյուս կողմից՝ Փախստականների հարցերով վարչության և առաջնորդարանի միջև: 1915 թվականի հոկտեմբերի 8-ին թեմական ժողովը Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերի մասնակիցներից ստեղծեց մի վերահսկիչ հանձնաժողով՝ բաղկացած 17 հոգուց: Այդ հանձնաժողովի խնդիրն էր լուծել գաղթականների միջև տարաձայնությունները՝ կապված բոլոր նյութական ու ֆինանսական կարիքների հետ, ինչպես նաև վառ պահել հայրենիքի նկատմամբ սերն ու նրանց միջև եղբայրական ջերմությունը: Հանձնաժողովը պետք է թեմական ժողովին ներկայացներ իր գործունեության մասին գրավոր հաշվետվություններ և խորհրդին դիմեր այն հարցերով, որոնք իր վաստություններից դուրս էին: Այդ հանձնաժողովից բացի, Փախստականների հարցերով վարչությունը նշանակեց ճամբարի զինվորական կառավարիչ: Այդ պաշտոնին նշանակվել են երկու անգլիացի: Առաջինը Ֆրեդն էր, որն այդ պաշտոնը վարեց ճամբարի ստեղծման օրվանից մինչև 1916 թվականի հունիսի 14-ը: Նրա պաշտոնավարման ժամանակահատվածը կարելի է բնութագրել որպես կազ-

մակերպված աշխատանքի ժամանակաշրջան: Հետո նրան փոխարինեց մեկ այլ անգլիացի՝ ավելի տարեց Հեյջը, որը և՛ գործունյա էր, և՛ բոլորի կողմից հարգված: Իր պաշտոնում նա մնաց մինչև 1919 թվականի նոյեմբեր, երբ մարդիկ հեռացան ճամբարից: Քանի որ նա խոսում էր թուրքերեն և ուներ Արևելքում աշխատելու մեծ փորձ, ապա կարողացավ հաջողությամբ կատարել իր գործառույթները:

Ճամբարը պաշտպանում էր մեկ ենթասպայի հրամանատարությամբ 10 անգլիացի զինվորներից կազմված ոստիկանական ջոկատը: Այդ ջոկատին օգնում էր Սվեդիայի հայերից կազմված մի պահակախումբ: Ջոկատի առաջադրանքն էր՝ ապահովել ճամբարի անվտանգությունը, հետևել կարգապահությանը և մաքրությանը, կիրարկել օրինապահների վճիռները, գանձել տուգանքները, լուծել այլ հարցեր: Ամեն օր կապ էր հաստատվում Պորտ Սաիդի հետ՝ գաղթականների կարիքների համար անհրաժեշտ պարագաներ հայթայթելու և փոստն ուղարկելու համար, ինչն արվում էր Սուեզի ջրանցքի ընկերության կողմից այդ նպատակով հատկացված մի նավով: Ճամբարից դուրս գալու և կրկին ներս մտնելու համար անհրաժեշտ էր զինվորական կառավարչի թույլտվությունը՝ «անցագիր»:

Ճամբարը հիմնական հարմարություններով ու ծառայություններով սարքավորելուց, ինչպես նաև անվտանգությունն ապահովելուց ու վարչական կառուցվածքը կանոնավորելուց հետո միակ բանը, որ մնում էր անել, առօրյա սպառման և գոյության պահպանման համար անհրաժեշտ միջոցների ու կարիքների բավարարումն էր, մինչդեռ բրիտանական իշխանությունների հատկացրած օրական ուտելիքը բավարար չէր Սվեդիայի հայերի համար. դրանով նրանք կարող էին հագիվ կենդանի մնալ: Բացի այդ, կային բազմաթիվ լրացուցիչ պարագաներ, որոնցով զինվորական իշխանությունները չէին կարող նրանց ապահովել:

Ուստի Կահիրեի Հայ առաքելական եկեղեցու թեմական ժողովն ստանձնեց գաղթականների գոյության պահպանման համար անհրաժեշտ հիմնական պարագաների և կարիքների բավարարման միջոցների հայթայթման գործը: Մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո 1915 թ. սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 8-ը ժամանակահատվածում ժողովը կազմեց պաշտոնական հաշվետվություն, որում նշված էին ճամբարի բնակիչների կենսական պահանջները, այն է՝ 1500 փայտե մահճակալ, 1000 բամբակյա վերմակ, 1000 հատ ափսե, 1000 հատ կավե բաժակ, 1 լիտր տարողությամբ 1000 հատ գավաթ, տարբեր չափերի 4000 հատ գդալ, 1400 կանգուն\* գործվածքեղեն՝ հագուստ կարելու համար, 4000 կտոր ներքնահագուստ՝ տարբեր տարիքի մարդկանց համար, 500 ծղոտե ներքնակ դպրոցական վրանների համար, 2000 գույգ կոշիկ, 6 կարի մեքենա, 1000 հատ մանկական գլխարկ: Այդպիսի իրերի հայթայթման պատասխանատվությունը հավասարաչափ կիսեցին Հայ առաքելական եկեղեցու՝ Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական ժողովները: Երկու ժողովներն էլ գրեթե մեկ շաբաթվա ընթացքում ապահովեցին պահանջվող իրերով: Այդ ձեռնարկումներին զուգահե-

\* Անգլիական կանգուն, կամ, էլ (*ell*-բազուկ), չափման միավոր՝ հեռավորությունը միջնամատի ծայրից մինչև ուտը, հավասար է 1143 սմ-ի. – *Խոթ.*:

առբար՝ առաջնորդարանը հայկական թերթերի էջերում գաղթականներին փրկելու կրկնվող կոչերով դիմում էր հայերին և տարբեր հայկական կառույցների՝ նշելով խնդիրները: Ճամբարի ղեկավարությունը դիմեց առաջնորդարանին, և շատ չանցած՝ նա բավարարեց սնունդով, հագուստով, դեղորայքով և կահույքով ապահովելու նրանց խնդրանքը: Որպեսզի սվեդիահայերի կարիքները հնարավոր լիներ պատշաճ կերպով բավարարել, նրանք առաջնորդարանին խնդրեցին նաև այդ նվիրատվությունների հարցում չսահմանափակվել միայն հայերին ուղղված դիմումներով, այլ դիմել նաև այլազգիների: Այսպես, առաջնորդարանը հայտարարություն տարածեց ճամբարի բնակչության այնպիսի կարիքների բավարարման մասին, ինչպիսիք էին սնունդի, դեղորայքի, բժշկական պարագաների, հագուստի, կենցաղային գործիքների, կահույքի, քնելու համար անհրաժեշտ պարագաների, զուգարանային կարիքների և անձնական իրերի, ինչպես նաև աշխատանքային գործիքների ու դպրոցական պարագաների հայթայթման հարցերը: Փաստացի, ոչ միայն վերնախավի, այլև ստորին խավերի և արհեստավոր հայերը նույնպես արձագանքեցին առաջնորդարանի կոչերին՝ տրամադրելով ֆինանսական և նյութական օգնություն, բայց ամենամեծ նվիրատվությունները կատարեցին հայ գործարարներն ու խոշոր առևտրականները: Օրինակ՝ 1915 թվականի հոկտեմբերի 12-ին կապալառու Հակոբ Հակոբյանը նվիրեց 100 գաղթականի համար 50 երկտեղանի մահճակալ՝ իրենց պարագաներով հանդերձ: Մելքոնյան ծխախոտի գործարանի տերեր Կարապետ և Գրիգոր Մելքոնյանները 1915 թվականի հոկտեմբերի 15-ին նվիրեցին 800 հատ վերմակ:

Հարկ է նշել, որ նվիրատվություններ կատարեցին ոչ միայն մեծ հայկական համայնքներ ունեցող Կահիրեի, Ալեքսանդրիայի և Չակազիկի հայերը, այլև եգիպտական այլ քաղաքներում բնակվող փոքրաթիվ հայկական համայնքներից ևս: Մենք պարզեցինք, որ Տանտայի հայերը հատկացրել էին նոր և օգտագործված շորեր, օճառ, սրբիչներ, վերմակներ, կոշիկներ, գլխարկներ, անձնական իրեր: Մանսուրայի և Միթ Ղամրի հայերը նույնպես ուղարկել էին գրեթե նույն կարգի իրեր:

Թեև Վերին Եգիպտոսում հայերը սակավաթիվ էին, Մալավիի և Բանի Մազարի հայությունը նույնպես փութաց օգնության ձեռք մեկնել ճամբարի բնակչությանը՝ կազմակերպելով մի կինոփառատոն, որի եկամուտը հատկացվեց գաղթական հայերին: Ալ Ֆայումի հայերը նոր հագուստներ նվիրեցին: Ինչ վերաբերում է Սոհազի հայերին, որոնք ընդամենը հինգ ընտանիք էին, նրանք օգնեցին կանխիկ գումարով և նյութական նվիրատվությամբ: Ավելին, նրանք նվիրատվություն հավաքեցին Սոհազի բնակիչներից՝ անկախ նրանց ազգային կամ կրոնական պատկանելությունից:

Ճամբարի հայերին ապահովելու հարցում կարևոր դեր խաղացին Եգիպտոսի հայկական հիմնադրամները, մասնավորապես՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Եգիպտոսի Հայկական կարմիր խաչի կազմակերպությունը: Հայկական կուսակցությունների Եգիպտոսի մասնաճյուղերը, ինչպես նաև Եգիպտոսում մի շարք եվրոպական և ամերիկյան կազմակերպությունների և ըն-

կերությունների ներկայացուցչությունները նույնպես Սվեդիայի հայերին օգնելու համար նվիրատվություններ կատարեցին:

Այսպիսով՝ Կահիրեի Հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանը Ալեքսանդրիայի թեմական ժողովի և հայկական հիմնադրամների հետ համագործակցությամբ, ինչպես նաև տեղական աջակցությամբ կարողացավ մինչև նոյեմբեր ամիսը ճամբարի հայ գաղթականներին ապահովել զանազան անհրաժեշտ իրերով:

Հում մթերքը պահվում էր պահեստ կոչվող մի հատուկ տեղում, որը խիստ կերպով պահպանվում էր Հայկական կարմիր խաչի վերահսկողությամբ: Այդուհանդերձ, մնամատիպ օգնությունը չէր ուղարկվում մեծ քանակով: Այն ուշացել էր միայն մի անգամ, երբ գաղթականների բնակեցումից ավելի քան մեկ ամիս անց օգնությունը դեռ չէր եկել, ինչը մարդկանց մեջ մեծ խուճապ էր առաջացրել, մանավանդ, որ ճամբարի տարածքն աղքատիկ անապատային միջավայր էր:

Ինչևէ, ճամբարի ստեղծումը կարելի եղավ ավարտված համարել այն ժամանակ, երբ լուծվեցին մարդկանց գոյատևման համար անհրաժեշտ ամենօրյա կարիքների ապահովման հարցերը: Ճամբարի կառավարման համար պատասխանատու էին Հայ Առաքելական Եկեղեցու և Կահիրեի, և Ալեքսանդրիայի թեմական ժողովները, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Կահիրեի առաջնորդարանի վերահսկողության տակ գործող Հայկական կարմիր խաչը:

Պորտ Սաիդում հայերն ապրում էին լիարժեք կյանքով: Նրանցից կազմավորվեց Արևելյան լեգեոնը, որը մարտնչեց Դաշնակից զորքերի կողմից և Պաղեստինում պարտության մատնեց թուրքերին 1918 թվականի սեպտեմբերի 19-ին կայացած Արարայի ճակատամարտում: Առաջին համաշխարհային պատերազմի վերջին տարիներին՝ 1917–1918 թվականներին, Պորտ Սաիդ ժամանեցին նոր հայ գաղթականներ, և ճամբարի բնակչության թիվը 1919 թվականի հունիսի կեսին հասավ 8144-ի: 1919 թվականի օգոստոսից Սվեդիայի հայերն սկսեցին Եգիպտոսից վերադառնալ իրենց հայրենիք, ընդ որում, մեկնեց 6832 մարդ՝ ճամբարի ընդհանուր բնակչության 84 տոկոսը, իսկ մնացածները ցրվեցին Կահիրեում, Ալեքսանդրիայում և Պորտ Սաիդում: Հայկական Կարմիր խաչի բժիշկներն ու բուժքույրերը վերջինը լքեցին ճամբարը 1919 թվականի նոյեմբերի 24-ին, այն բանից հետո, երբ ապասարկվեցին բոլոր շինությունները՝ դպրոցը, արհեստանոցները, խոհանոցները, եկեղեցին... Ամեն ինչ:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

##### Անտիպ փաստաթղթեր

1. Կահիրեի Հայ Առաքելական Եկեղեցու թեմական ժողովի նիստերի արձանագրություններ. գիրք հմ. 24, 1914 թ. հունիսի 19 – 1916 թ. մարտի 29, գիրք հմ. 25, 1916 թ. մայիսի 10 – 1918 թ. մարտի 01, գիրք հմ. 26, 1918 թ. ապրիլի 08 – 1920 թ. մայիսի 13:
2. Հայ Առաքելական Եկեղեցու Կահիրեի թեմական ժողովի խորհրդի նիստերի արձանագրություններ, գիրք հմ. 43, 1911 թ., փետրվար – 1922 թ., հուլիս:
3. Գործ հմ. 990, մաս 12:

Տպագիր նյութեր

4. *Arthur Beylerian. Les Grandes Puissances, L'empire Ottoman et les Arméniens Dans les Archives Français* (1914 – 1918). Paris, 1983.
5. *Մուրհան Պարթևյան*, Եգիպտահայերի տարեգիրք 1914–1916 թթ.: Կահիրե:

Գրքեր, ստեղծագործություններ և ուսումնասիրություններ

6. *Խաթիշեհ Մադրասյան*, Պորտ Սաիդի հայկական ճամբարը: «Մուսա լեռան հայերի հուշամատյան»: Բեյրութ, 1972:
7. *Տիգրան Անդրեասյան*, Սվեդիայի հայերը: *Ալիա Ջենրոլ, Խելիա Ջենրոլ*, ճամբարի հայ բնակչության տարեգիրք: Ալեքսանդրիա, 1919:
8. *Կոշա Գեգյան*, Մուսա լեռան հայերը 1875 -1939 թթ.: Բեյրութ, 1988:
9. *Ն. Մ. Թորաթրեան*, Պորտ Սաիդի սվեդիահայերի ծագումը: «Մուսա լեռան հայերի հուշամատյան»: Բեյրութ, 1972:
10. *Հակոբ Թորոսյան*, Հայկական կորպուսը: «Մուսա լեռան հայերի հուշամատյան»: Բեյրութ, 1972:
11. «Ճամբարի օրագիրը 1915-1919 թվականներ»: *Ալիա Ջենրոլ, Խելիա Ջենրոլ*, ճամբարի հայ բնակչության տարեգիրք: Ալեքսանդրիա, 1919:
12. *P. G. Elgood. Egypt and The Army*. London, 1924.
13. *Armin Albert Kredian. The Armenian Community in Egypt During The First World War*. The American University in Cairo, 1997.
14. *Մոհամեդ Ռեֆաթ Էլ-Իմամ*, Հայերը Եգիպտոսում 1961-1986 թվականներին: Կահիրեի Հայկական բարեգործական ընդհանուր միություն: Կահիրե, 2003 (արաբերեն):

Թերթեր և պարբերականներ

15. «Արև»: Կահիրե, 1915–1919:

ЕГИПЕТ – ОАЗИС БЕЗОПАСНОСТИ: ЛАГЕРЬ АРМЯНСКИХ  
БЕЖЕНЦЕВ В ПОРТ-САИДЕ В 1915 – 1919 ГГ.

*М. РИФАТ АЛЬ-ИМАМ, доктор исторических наук, профессор современной и новейшей истории факультета гуманитарных наук Даманхурского филиала Александрийского университета (Египет)*

РЕЗЮМЕ

В течение всего XIX века армяне в одиночку или семьями переезжали из Турции в Египет, чтобы, пользуясь благоприятными инвестиционными условиями и широкими возможностями трудоустройства, вести более или менее обеспеченную жизнь. Однако во второй половине 1890-ых годов они стали перебираться в Египет группами, спасаясь от резни и преследований режима султана Абдула Гамида Второго. Поток беженцев-армян возрос после резни в Адане (апрель 1909 г.), осуществленной уже при правительстве младотурок.

В июле 1915 года население шести армянских сел Сведии (около 4300 стариков, детей, женщин и мужчин, в том числе 700 человек, вооруженных

ружьями старого образца) отказалось повиноваться приказу турецких властей о депортации и, укрепившись на горе Муса, в течение почти полутора месяцев оказывало ожесточенное сопротивление турецким регулярным войскам (по разным источникам – от 700 до 3000 человек) и ополчению (от 3000 до 15000 человек). Когда боеприпасы у оборонявшихся уже кончались и было принято решение обратиться за помощью к союзникам, в море показался французский броненосный крейсер «Гишен». Капитан Жозеф Бриссон, услышав историю мусалерцев, телеграфировал на флагман «Святая Жанна Д'Арк» командующему эскадрой вице-адмиралу Луи Дартижу дю Фурне. Чудом спасенные армяне (числом порядка 4200 человек) на пяти кораблях (4 французских и подошедшем английском крейсере) были в сентябре 1915 года перевезены в Порт-Саид и размещены в специально оборудованном для них лагере на азиатском берегу Суэцкого канала.

Бытовые условия в лагере обеспечивало британское правительство, а материальные нужды беженцев – епархиальные собрания Армянской Апостольской церкви в Каире и Александрии, возглавляемые духовным предводителем архиепископом Торгомом Гушакяном. Все армяне Египта живо откликнулись на призывы епархиальных собраний оказать посильную помощь армянам-беженцам.

В дальнейшем около 500 беженцев из лагеря вступили в Восточный (позднее Армянский) легион, который сражался в Палестине и особо отличился в сражении при Арара 19 сентября 1918 г., фактически предпривившем исход Первой мировой войны на Палестинском фронте.

В 1917–1918 годах в Порт-Саид прибыли новые беженцы, и в июне 1919 года их число достигло 8144. С августа 1919 года беженцы начали отбывать из Египта на родину, уехало 6832 человек, остальные рассеялись по городам Египта, обосновавшись в основном в Каире, Александрии и Порт-Саиде. Последний человек покинул лагерь 24 ноября 1919 года.

## EGYPT, OASIS OF SAFETY AND SECURITY. CAMPSITE OF THE REFUGEE ARMENIANS IN PORT SAID. 1915 – 1919

*M. REFAAT Al-EMAM, Doctor of History, Professor of Modern and Recent History,  
Faculty of Arts – Damanshour University – Egypt*

### SUMMARY

Throughout the 19th century, Egypt received the Armenians from Turkey who came to it individually or in families for the purpose of utilizing the investment conditions and work opportunities, and live a more or less secure life in Egypt. However, since the second half of the 1890s, they began to emigrate to Egypt in groups to escape the persecution and massacres they suffered from the

regime of Sultan Abdel Hamid the Second. The flow of the Armenian refugees increased after Adana massacres (April 1909) perpetrated by the Young Turk government.

In July 1915, the population of six Armenian Svedia villages (about 4300 old people, children, women and men, 700 of whom armed with rifles of the old model) refused to obey the expulsion orders of the Turkish authorities and, carrying out a sit-in on Moses Mountain, for nearly one and a half month succeeded to fiercely repel the Regulars (according to various sources, from 700 to 3000 people) and Guerrillas (from 3000 to 15000 people) of the Ottoman Troops. When the ammunition of the defenders started to run out, and they had decided to turn to the Allied Powers for help, there appeared the French protected cruiser Guichen in the sea. Captain Joseph Brisson, having heard the story of the Moses Mountain dwellers, sent a wireless to the flagship "Ste. Jeanne D'Arc", to the Commander-in-Chief Vice Admiral Louis Dartieg De Fornei. In September 1915 the miraculously saved Armenians (about 4200 people) were brought to Port Said aboard five cruisers (4 French and one British having just approached) and given shelter in the camp specially equipped for them on the Asian bank of the Suez Canal.

The British government procured the supplies and the requirements of Armenians' lodging and living in the camp, and the Board of the Archbishopric of the Armenian Apostolic (Orthodox) Church in Cairo and Alexandria under the chairmanship of the spiritual leader Archbishop Torgom Gushakian met the material needs of the refugees. All the Egyptian Armenians actively responded to the appeals of the Board of the Archbishopric to give the Armenian refugees a hand.

Later on, about 500 refugees from the camp joined the Eastern (later Armenian) Corps, which fought in Palestine and particularly distinguished itself at Arara Battle on 19 September 1918, which, in fact, predetermined the outcome of the World War I on the Palestinian front.

In 1917 – 1918, new refugees arrived in Port Said, and in June 1919, their number reached 8144. Since August 1919, the refugees began to return back to their homeland from Egypt, 6832 inhabitants of the camp departed it, while the remaining spread throughout the cities of Egypt, settling down mainly in Cairo, Alexandria and Port Said. The last person left the camp on 24 November 1919.



ՄԻ ԷՋ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ (ԹՈՒՐՔ, ՔՈՒՐԴ  
ԵՎ ԱՅԼՆ) ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՄՈՒԹ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԱԼԱԹԻԱՅԻ ՕՐԻՆԱԿԸ

Ս. ՉԵԹԻՆՕՂԼՈՒ\*, պատմության մագիստրոս



Պատմական Հայաստանի շրջաններից մեկը՝ Մալաթիան, կարևոր օսմանյան նահանգ էր, որտեղ ունևոր հայության հետ մեկտեղ բնակչության մի զգալի հատված էին կազմում թուրքերը, քրդերը, ղզբաշները:

Բացի այդ, 1915 թ. ցեղասպանության ժամանակ մահվան ճամփորդության հանված հայերի համար Մալաթիան դարձավ տարանցիկ ճանապարհի և կենտրոնացման շրջան: Սակայն Մալաթիան մի հասարակ տարանցիկ վայր չէր, այլ մեծ տեղահանության ճանապարհների միջին հատվածում գտնվող խաչմերուկ էր, որը յուրաքանչյուր ուղղությունից ժամանածների համար դարձել էր և՛ ցրման կարևոր կենտրոնակայան, և՛ յուրատեսակ համակենտրոնացման ճամբար: Իրականում Մալաթիայի շրջակայքում դրանք երկուսն էին:

Առաջին կենտրոնացման ճամբարը Եփրատին արևմուտքից միացող Թոհմա գետի Քիրբոզոզ (քառասուն աչք) կոչվող կամուրջն ու դրա հարակից բաց տարածքն էին: Այստեղ կենտրոնացվում էին Ամասիայից, Թոքթաթից, Սվազից, Սամսունից, Տրապիզոնից, Շապին Գարահիսարից, Էրզինջանից, Էզինից (Ակն), Արաբկիրից և այլ վայրերից եկածները, դա մի բաշխման կետ էր, որտեղ տղամարդկանց ոչնչացնում էին, իսկ կանանցից և երեխաներից Սիրիայի անապատներն ուղարկվող նոր քարավաններ էին կազմում: Մալաթիայից դեպի Հարպուտ տանող Ֆերենջիլար (փռեր) կոչվող ճանապարհի եզրին տարածվող մեծ հարթավայրը օգտագործվում էր որպես երկրորդ ճամբար: Ամառվա տապին, սոված-ծարավ տեղահանվածները հիվանդանում էին, օրական հարյուրավոր դիակներ էին նետվում ջուրը: Բացի այդ, Ֆերենջիլար ճամբարը մի վայր էր, որտեղից թուրքերը և քրդերը առևանգում էին երիտասարդ աղջիկներին, իսկ երեխաների մի մասին ուղարկում էին մահվան՝ ասելով, թե նրանց տեղափոխում են որբանոց: Այստեղ բավական նոսրանալուց հետո ողջ մնացածներից կազմված քարավանների մի մասը գնդակահարվում էր Բեյդազի գաղթափում, մյուսն առաջ էր շարժվում, Քահթայի պես զանգվածային կոտորածի վայրերով անցնելիս թվապես նվազում, բայց շարունակում էին իրենց ճանապարհը:

Համակենտրոնացման այլ ուղղություններ և կետեր ևս կային, սակայն Ֆե-

\* Ս. Չեթինօղլուն թուրք հետազոտող է, որի գիտական հետաքրքրությունների ոլորտում են Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում քրիստոնյաների ունեցվածքի բռնագավթման (լքված գույքի) հետ կապված հարցերը: Հոդվածը թուրքերենից թարգմանել է սույն ժողովածուի գիտական խմբագիրներից՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Գ. Ավագյանը:–*Խոլք.*

րենջիլար անունը այդ տեղով անցած բոլոր տեղահանվածների հուշերում մեծ ողբով ու սգով է հիշվում. շատերն անցան՝ այստեղ կորցնելով իրենց զավակներին: Այսօր Ինենյուի անվան համալսարանի գիտավանի (կամպուս) տարածքը բաց երկնքի տակ տասնյակ հազարավորների մահվան վայր դարձած գերեզմանոց է, որտեղով հարյուր տարի առաջ հարյուր հազարավոր հայեր տանջանքներով անցան դեպի իրենց Գողգոթան<sup>1</sup>:

Մալաթիան կարևոր տեղ է զբաղեցնում Չավեն պատրիարքի բնաջնջողները «*Exterminators*» ցուցակում: Չավեն պատրիարքի ցուցակում նահանգի զանգվածային կոտորածների կազմակերպիչներից նշված են այնպիսի անձինք, ինչպիսիք են մյութեսարիֆը՝ բիթլիսցի քուրդ Քել Ռեշիդը, Մալաթիայի պատգամավոր Հաշիմ բեյը\*, Հաշիմ բեյի որդի Մեհմեդը\*\*, Հաջի Բեդիր աղան\*\*\* և նրա եղբայր Չեյնեյը\*\*\*\*: 1919 թ. Չավեն պատրիարքը Մեհմեդ բեյի վերաբերյալ հետևյալ տեղեկություններն է հաղորդել. Մեհմեդ բեյը Բեհաեդդին Շաքիրի հորդորներով հրոսակախմբեր կազմեց և Մալաթիայի ու Հարպուտտի շրջաններում 60000 հայի սրի քաշեց: Այժմ գտնվում է Մալաթիայում՝ իր մոտ պահելով մի քանի հայ աղջկա, թալանել է 200000 թուրքական լիրա արժողությամբ ունեցվածք, դատապարտվել է մեկ ու կես տարվա ազատագրկման, բայց Բեհաեդդին Շաքիրի միջնորդությամբ դատավճիռը ի կատար չի անվել: Համընդհանուր գորակոչի առաջին օրը Մեհմեդը զինվորագրվել է և մեկնել Կովկասյան ռազմաճակատ: Այնտեղ հանդիպել է Բեհաեդդին Շաքիրի հետ և բանտերից փախածներից հրոսակախմբեր կազմելու համար վերադարձել Մալաթիա: Մեհմեդը մասնակցել է ոչ միայն Մալաթիայի, այլև ուրիշ վիլայեթներում հայերի զանգվածային բնաջնջմանը: Մեհմեդը «Միություն և առաջադիմության»

<sup>1</sup> Տես *Hovsep Hayreni*. 1915, *Özür ve Sembol Mekanlar Üzerine*, 01 Aralık 2014 (<http://gelawej.net/index.php/yazarlar/hovsep-hayreni/1198-1915-ozur-ve-simbol-mekanlar-uzerine>):

\* Մալաթիաի պատգամավոր Հաշիմ բեյը ծնվել է 1851 թվականին Կարսում, եղել է ֆինանսական հարցերով կայնական (վարչատարածքային միավորի ղեկավար): Թուրքիայի խորհրդարանի գրանցամատյանում նշված է, որ պատգամավոր է ընտրվել Մալաթիայից 93 ձայնով:

\*\* Մեհմեդ բեյ, Մալաթիայի պատգամավոր, Հաշիմ բեյի որդին:

\*\*\* Հաջի Բեդիր Աղա (Ֆերաթ) 1872 թ. Քահթա (Ադեյաման): Հաջի Բեդիրը 21 ճյուղի բաժանվող Ռիշվան աշիրեթի աշիրեթապետն (ռես) էր: Քենավական շրջանում Հաջի Բեդիրը 1-ին և 2-րդ գումարման խորհրդարաններում Մալաթիայի պատգամավոր էր, 3-րդ գումարման ժամանակ՝ Կարսի պատգամավոր: 1920 թ. ապրիլի 23-ին առաջին խորհրդարանի բացման աղոթքի ժամանակ կանգնած էր Մուստաֆա Քեմալի կողքին: Գրել-կարդալ չիմացող Հաջի Բեդիրի համար հատուկ որոշում է կայացվել, որ անտառաճանաչը ևս կարող էր պատգամավոր ընտրվել: Չավեն պատրիարքը նշում է, որ Հաջի Բեդիրը հայերի զանգվածային կոտորած է կազմակերպել Էրզերումում, Էրզինջանում, Սվազում և շրջակա վայրերում: Հաջի Բեդիր աղային բնակեցրին Ադանայում՝ լքյալ գույքից ազարակի, տան և խանութների հատկացմամբ: Ընտանիքը այսօր էլ այդ ազարակից է օգտվում:

\*\*\*\* Հաջի Բեդիր աղայի եղբորը նույնպես բնակեցրին Ադանայում՝ լքյալ գույքից տան և խանութների հատկացմամբ:

կուսակցության կենտրոնական կոմիտեին էր ուղարկել տեղահանվածներից գո-  
ղացած փողերի և զարդերի կեսը, մյուս մասը բաժանել էր իր և ծառայություններ  
մատուցած այլ հանցագործների միջև: Թալեաթ փաշայի կառավարության օրոք  
Մեհմեդ բեյը և Մալաթիայի վալի բիթլիսցի Քել Ռեշիդը (1915 թ. հունիսի 7-ին  
պաշտոնանկ է արվել և մինչև 1915 թ. սեպտեմբերի 17-ը եղել է Մալաթիայի մյու-  
թեսարիֆ) դատապարտվեցին 18 ամսվա ազատազրկման, սակայն բանակային  
կորպուսի հրամանատարը ի կատար չածեց դրոշումը<sup>2</sup>: Այդ դատապարտման  
պատճառը ոչ թե զանգվածային ռճրագործություններին մասնակցությունն էր, այլ  
հայերի ունեցվածքը թալանելու, ու բաժանելու ժամանակ տեղի ունեցած վեճերն  
ու չարաշահումները:

Սանջակում ցեղասպանությունն իրականացնում էր «Միություն և առաջադի-  
մություն» կուսակցության պատասխանատու քարտուղար ռեսնացի\* Նազիմ բե-  
յը: Նրա ամենակարևոր օգնականներն էին մյութեսարիֆ բիթլիսցի Քուրդ Քել Ռե-  
շիդն ու պատգամավոր Հաշիմ բեյի որդի Մեհմեդ բեյը:

Մալաթիայում մի հետաքրքրական դրվագ կապված է քաղաքապետ Մուս-  
տաֆա աղայի (Ազիզօղլու) հետ: Քաղաքապետը, լինելով բարեպաշտ մահմեդա-  
կան, դեմ էր հայերի նկատմամբ իրականացվող միջոցառումներին: Թեև նա չու-  
ներ տեղահանությանը խոչընդոտելու իրավասություն, սակայն նրան հաջողվեց  
իր տանը թաքցնել որոշ մարդկանց: Նրա կյանքը ողբերգական ավարտ ունեցավ:  
«Գյավուրներին (անհավատներին) պաշտպանելու» համար նա սպանվեց իր որ-  
դու ձեռքով, որը «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ էր:

Մույն հակիրճ հոդվածում մենք որպես օրինակ վերցրել ենք Մալաթիայի նա-  
հանգում հայկական ունեցվածքի թալանը: Մալաթիայի ընտրությունը պայմանա-  
վորված է նահանգի՝ թուրք-քրդական սահմանին գտնվելու և թուրք-քուրդ-ղվաշ  
խառը բնակչություն ունենալու հանգամանքներով\*\*։ Մինչև 1915 թ. Մալաթիայի  
սանջակն ուներ սովոր հայկական բնակչություն, Գևորգյանն ու Փափուշյանը  
նշում են, որ 1914 թ. դրությամբ սանջակում ապրում էին 38705 հայեր, որոնք  
ցրված էին 96 բնակավայրերում<sup>3</sup>:

Մեզ համար որպես աղբյուր ծառայել են Մալաթիա նահանգի պաշտոնական  
թերթի հայտարարությունները: Կարծում ենք, որ նույնիսկ ստորև ներկայացվող  
սահմանափակ թվով օրինակները բավարար են հայերի ունեցվածքի թալանի մա-  
սին հանգամանալից պատկերացում կազմելու համար: Հայերին մահվան ճամփա  
հանելու հետ մեկտեղ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ-  
ները հափշտակեցին նրանց ունեցվածքը, այն բաժանեցին իշխանության կողմ-  
նակիցների միջև: Քեմալական ժամանակաշրջանում (երիտթուրքական երկրորդ

<sup>2</sup> Տես *Sait Çetinoğlu*. Patrik Zaven'in Ermeni Soykırımı Örgütleyicilerinin Listesi - Exterminators Yok Ediciler ve Erdemli Müslümanlar. İstanbul, 2011:

\* Ծագումով Մակեդոնիայի Ռեսնա քաղաքից էր:

\*\* Վիթալ Գյունեթը (Vital Guinet) նշում է, որ սանջակում մահմեդականների թվաքանակը  
112000 էր, որից քրդերինը՝ 22000, զղվաշներինը՝ 66000:

<sup>3</sup> Տես *R. Kévorkian, P. Paboudjian*. 1915 Öncesinde Osmanlı İmparatorluğu'nda Ermeniler. Mayda Saris. İstanbul, 2012, s. 392:

շրջան) մնացած ունեցվածքը բաժանվեց իշխանական մարմինների (Ժողովրդահանրապետական կուսակցության (ԺՀԿ), Ժողովրդական տների, Թուրքական օջախների, Կարմիր մահիկի կարգի), առևտրական պալատների, կառույցների, մասնավոր անձանց, մասնավոր կառույցների, վակֆերի տնօրինության, ֆինանսական կառույցների, քաղաքապետարանների միջև: Մնացածի աստիճանաբար վաճառքով եկամուտ ապահովվեց գանձապետարանի համար: Իշխանական համակարգին հատկացված անշարժ գույքը և անհրաժեշտության դեպքում այդ կառույցների կողմից դրա վաճառքից ստացված եկամուտը նույնպես անհրաժեշտ է դիտել որպես հայերի ունեցվածք: Այս իրավիճակը, նկատի ունենք մի ժողովրդի մահվան ճանապարհորդության ուղարկելով նրա արժեքներին (երեխաներին, կանանց, ապրանքներին, հողային սեփականությանը) տիրանալը, անցյալում հարստանալու ամոթալի աղբյուր չէր: Դա շարունակվում է մինչև մեր օրերը:

ՈՒշագրավ է մեր օրերում Հաջի Հակոբ Քունդուբեքյանի հետ պատահաձր: Քունդուբեքյանը մի գործով ֆինանսական վարչություն գնալու ժամանակ պատին փակցված հայտարարությունից տեղեկանում է, որ իր տունը աճուրդով վաճառվում է որպես լքյալ գույք: Ամմիջապես դիմելով համապատասխան բաժին՝ ասում է. «Իմ տունը լքյալ գույք է, ես այդ տանը բնակվում եմ: Ինչպե՞ս եք այն վաճառում»: Չի կարողանում համոզել: Ավելին. նրան ծեծի են ենթարկում: Տուն վերադառնալուց հետո նրան մնում է միայն դիտել, թե ինչպես են վաճառում իր տունը: Տունը գնում են Թուրքիայում չրեղենի ամենամեծ շուկայի՝ Մալաթիայի շուկայի սեփականատերերը: Հակոբը երկու տարի իր տանը վարձով է ապրում: Հետո տեղափոխվում է իր կառուցած գեջեքոնդուն (անբարեկարգ ապօրինի շինություն): Որոշ ժամանակ անց, թողնելով Մալաթիան, անցնում է Ստամբուլ, այնտեղից էլ մեկնում Կանադա՝ լքելով իր պատմական հայրենիքը:

Ոչ մի հայկական կառույց կամ հողային սեփականություն չէր կարող փրկվել թալանից: Բնականաբար, նույն ճակատագրին էր արժանացել նաև հայկական գերեզմանոցը. Մալաթիայի հայկական գերեզմանոցի քարերը օգտագործվեցին Մալաթիայի Ժողովրդական տան կառուցման ժամանակ: Այդ գործի կատարումը նահանգապետարանը հանձնում է Սիիրան Օզբաշչի, Վերեռնիա Թաշչի և Գևորգ Բելգեն անուններով հայ վարպետների: Նրանց հանձնարարվում է հարազատներ չունեցող մարդկանց գերեզմանները համարակալել, քանդել, քարերը հանել և օգտագործել նոր շինարարության համար: Թեև վարպետներն զգուշացված էին, որ օգտագործվող քարերի վրայից պետք է ջնջել հայերի անունները, սակայն նրանք գրվածքին ձեռք չտվին, այլ դրանք թաքցնելով՝ քարերն օգտագործեցին Ժողովրդական տան շինարարության համար: Ժողովրդական տան չորս պատերն էլ կառուցված են քանդված հայկական գերեզմանոցի քարերով: Ժողովրդական տունն այսօր օգտագործվում է որպես Աթաթյուրքի տուն: Գերեզմանոցի և Աթաթյուրքի տան միավորման փաստը իրավիճակի վառ արտահայտություն է: Գերեզմանոցի ավերված մասի վրա թույլ տրվեց շինարարություն կատարել: Հայկական համայնքը փորձեց պահպանել գերեզմանոցի մնացած մասը՝ վաթսունական թվականներին մի պատ կառուցելով, որն այն առանձնացրեց մնացած մասերից:

Ընթերցողը, տեսնելով Մալաթիայի հայկական ունեցվածքի թալանը, կարող է ասել՝ «բավարար է», սակայն դա սառցասարի միայն մի փոքր տեսանելի հատվածն է:

1. Հայերի ունեցվածքը, ինչպես ակնհայտ է դառնում ստորև ներկայացված հայտարարությունից, «ազգային գույք» էր<sup>4</sup>: Հասարակության յուրաքանչյուր խավ կարող է օգտվել այդ կարգի գույքից: Գոյություն ունեն այդ խնդրի վերաբերյալ բազմաթիվ հայտարարություններ, սակայն մենք, ընթերցողի դյուրության համար, ընտրել ենք միայն այս կարճ հայտարարությունը: Ազգային ուխտի սահմաններում գտնվող հայկական ունեցվածքը ազգայնացվեց: Մալաթիացի Քրդուքաչղիի որդու Կարապետի և նրա որդի Հովհաննեսի, քարտաշ Մարդիկի որդիների՝ Ավետիսի և Սարգսի, Փարսիիի որդիներից Մարտիրոսի, Գալուստի որդի Սարգիս Թահիլի և Իհսապետի, Օջաքլիի որդի Գրիգորի և Արթինի, Գևեջի (ուղտապահ) ՈՒՆԱՆԻ որդի Հակոբի, Կարապետի հողային տարածքները Ազգային ուխտի սահմաններում գտնվող այլ հայկական ունեցվածքի նման ազգայնացվեցին, և ազգային գույք համարվող այս 7 կտոր հողային սեփականությունը 1929 թ. սեպտեմբերի 1-ին վաճառվեց պետության կարիքները հոգալու համար:

Մալաթիայի վիլայեթի ֆինանսական մասին անշարժ գույքի վաճառքի մասին հայտարարություն

<i>տեսակը</i>	<i>գրնվելու վայրը</i>	<i>նախորդ սեփականատերը</i>
Տուն և այգի	Սինավեր	Քրդուքաչղիի որդի Կարապետը և Հովհաննեսը համատեղ
Տուն և այգի	Սինավեր	քարտաշ Մարդիկի որդիներ Ավետիսը և Սարգիսը
Տուն կառուցելու համար հողատարածք և այգի	Սինավեր	Պարսիիի որդիներից Մարտիրոսը և համատեղ սեփականատերեր
Տուն կառուցելու համար հողատարածք և այգի	Մուստաֆա փաշա	Գալուստի որդի Սարգիս Թահիլը և Իհսապետը
Տուն կառուցելու համար հողատարածք և այգի	Շիֆա	Օջաքլիի որդի Գրիգորը և Արթինը
Հողատարածք	Նիյազի	Գևեջի ՈՒՆԱՆԻ որդի Հակոբը
Այգու հողատարածք	Չեքեմլեր	Չեքեմ մուղղուսի Կարապետը

2. Մալաթիայի պաշտոնաթերթի՝ «Ռեմսի գազեթեսի»-ի (Resmi gazetesi) 1929 թվականի օգոստոսի 15-ի համարից տեղեկանում ենք, որ միակուսակցական կառավարման շրջանում ԺՀԿ-ն օգտվում էր ազգային գույքից: Քաղաքականությունը ֆինանսավորվում էր հայերի ունեցվածքով: Գյոք սոքո

<sup>4</sup> Տես «Resmi Gazetesi», 1 Eylül 1929:

թաղամասից Առաքելի, Ջուրջուր թաղամասի Ղազարի որդիներից Ներսես Արթին Կարապետի և Հովհաննեսի, Ֆոսի որդի Հովհաննեսի դուստր Մարգրիտի և Վարդ խաթունի, Գերասի որդի Հովսեփի և Հակոբի, Մինասի անշարժ գույքի վաճառքից ստացված գումարներով ֆինանսավորվել է Ժողովրդահանրապետական կուսակցությունը:

Ժողովրդահանրապետական կուսակցության Մալաթիայի վիլայեթի ղեկավար խորհրդից

<i>համար</i>	<i>դասակ</i>	<i>գյուղ/կոմսիայրը</i>	<i>նահանգի սեփականատերերը</i>	<i>սահմանը</i>
1.	դաշտ	Միլիսի	Գյոթ սոքու թաղամասից Առաքելը	Օտարվածի հարևանությամբ և Հակոբի տարածքի կողքով անցնող ճանապարհը
2.	դաշտ	Սեղերիք	Ջուրջուր անկյունային թաղամասից Ղազարի որդիներից Ներսես Արթին Կարապետը և Հովհաննեսը	Սահմանափակվում է Ղազարի որդի Արթինի և եղբայրների տարածքի, Սեղերի ճանապարհի և Դեփանոսի (Ստեփանոսի) միջև
3.	դաշտ	Թառլա	Ֆոսի որդի Հովհաննեսի դուստր Մարգրիտը և Վարդ խաթունը	Արևելքից՝ Հակոբի, արևմուտքից՝ Վարդանի տարածքները, հյուսիսից՝ ճանապարհը, հարավից՝ Հասանի տարածքը
4.	դաշտ	Թառլա	Ֆոսի որդի Հովհաննեսի դուստր Մարգրիտը և Վարդ խաթունը	Արևմուտքից՝ Հակոբի, հյուսիսից՝ Հաջի Մեհմեդի, հարավից՝ Գոքչուի որդու հողատարածքները, արևելքից՝ ճանապարհը
5.	դաշտ	Բաբուիթ ուօրեն	Գյոթ սոքու թաղամասից Ջերասի որդի Հովսեփը և Հակոբը	Սահմանակից է Հովսեփի և Հակոբի դաշտերին և Խաչիկի տարածքին ու ճանապարհին
6.	դաշտ	Փնար	Ջանկոչ թաղամասից Չիլ Արսլանի որդի Հակոբը	Սահմանակից է Դեփանոս Պետրոսի գետակի և քոր Դադայի որդի Գրիգորի տարածքին
7.	դաշտ	Չարմուզ ուբայր	Ջանկոչ թաղամասից կաթուղի դերձակ Յափի որդի Մինասը	Արևելքից՝ ճանապարհը և ոսկերիչ Փիլոյի տարածքը, հյուսիսից և հարավից՝ քելեցի Հալիլի տարածքը
8.	դաշտ	Չալիք	Ջանկոչ թաղամասից կաթուղի դերձակ Յափի որդի Մինասը	Հալոյի փեսա Դերվիշի տարածքը, գետակը և Աշիք Օմերի որդու տարածքը

Վերը նշված ութ կտոր հողատարածքները հայտարարության օրվանից հաշվված քսան օրվա ընթացքում աճուրդով վաճառվել էին, և ստացված գումարը հանձնվել էր կուսակցության գանձարան:

3. «Յենի Մալաթիա» («Նոր Մալաթիա» («*Yeni Malatya*»)) թերթի 1930 թ. հուլիսի 7-ի համարից տեղեկանում ենք, որ կապիտալի ավելացման համար ընկերությանը նվիրաբերված հայկական ունեցվածքի մի մասը աճուրդի է հանվել: Մենք չենք կասկածում, որ ընկերությունը նախկին երիտթուրքերից կազմված կառույց էր, և չենք ստուգել առևտրական կազմակերպությունների գրանցամատյանը: Հայտնի է, որ իթթիհատականները և նրանց ժառանգորդ քեմալականները՝ որպես այդ ժամանակ իշխանություն ունեցող բյուրոկրատական բուրժուազիա (զինվորական-քաղաքացիական), քրիստոնյաներին իրենց պատմական տարածքներից տեղահանելով և նրանց ունեցվածքին տիրանալով, վերածվեցին առևտրական և արդյունաբերական բուրժուազիայի: Ի լրումն նախարարների խորհրդի 1926 թ. հոկտեմբերի 29-ի հմ. 4573 որոշման, որով հայերից բռնագրավված ունեցվածքը հանձնվեց մասնավոր հատվածին, այդ հատվածի զարգացման համար այն ֆինանսավորվեց նաև 1928 թ. օգոստոսի 5-ի որոշմամբ հայկական ունեցվածքի նոր հատկացումների շնորհիվ: Առաքելի որդի Պողոսի, նրա տիկին Հորեսայիմայի, դստեր՝ Աղավնու և Վարդի ու որդի՝ Հովհաննեսի, Քարա օղլանի որդի Կարապետի որդի Չավենի և Քարա օղլանի որդի Արթինի, Արոնի և Թորոսի, Թորոսի թոռների՝ Թորոսի և Աննայի, Կարապետի որդի Գրիգորի և մյուսների, Սիմոնի որդի Հակոբի ու Մանվելի և Ահաբետի ու մյուսների ունեցվածքն օգտագործվեց Մալաթիայի թուրքական արդյունաբերական բաժնետիրական ընկերության ֆինանսավորման համար: Նրանց անշարժ գույքը (հողատարածքներ) 1930 թ. օգոստոսի 3-ին վաճառքի հանվեց:

Մալաթիայի թուրքական արդյունաբերական բաժնետիրական ընկերության խորհրդի որոշումից.

գրանցամատյանի էջ	նախկին սեփականատեր	տեսակը	անվանումը	գրնվելու վայրը	սահմանը
60-2	Առաքելի որդի Պողոսը և կինը՝ Հորեսայիման, նրանց դստեր Աղավնին և Վարդը և որդի Հովհաննեսը	ռոռզվող դաշտ	Չարմուզու	գերեզմանոցի մոտ	սահմանափակվում է. արևելքից և արևմուտքից՝ ճանապարհով, հյուսիսից՝ Թարաքչիի որդի հաջի Ֆեյզուլահի, հարավից էլ՝ Թանիլի տարածքներով
61-2	Քարա օղլանի որդի Կարապետի որդի Չավենը և Քարա օղլանի որ-	ռոռզվող դաշտ	Սիլբիսի	Դելիքլի թաղ	Սահմանափակվում է. արևելքից՝ Թոփալ Հաֆեզ գաղեի, արևմուտքից՝ Քուստուքի

Ա. ՉԵԹԻՆՕՂԼՈՒ

	ղիներ Արթինը և Ահարոնը և Թորոսի թոռներ Թորոսը և Աննան, Կարապետի որդի Գրիգորը և մյուսները				որդու տարածքներով, հյուսիսից՝ ընդհանուր ճանապարհով, հարավից՝ Աթմալե գաղեի տարածքով
63-2	Ավետիկի որդի Կարապետի դուստր Վարդերը	ռոռզվող դաշտ	Չարմուգու	Քիրաչ	սահմանափակվում է. ճանապարհով և Մազլումի որդիների տարածքով
64-2	Պետրոսի կնոջ Վարդերը և որդի Մանուկը	ռոռզվող դաշտ	Քոլիք դուք	Սիլբիսի	սահմանափակվում է. մուխթար Քեփոյի, արևմուտքից՝ Փիլոնի տղաների դաշտով, հյուսիսից՝ դարձյալ Փիլոնի որդիների դաշտով, հարավից՝ ճանապարհով
65-2	Փիլոնի որդիներ Գրիգորը, Գիփանուսը և Թորոսը	ռոռզվող դաշտ	Սիլբիսի	Քոլիք դուք	Սահմանափակվում է. արևելքից՝ մուխթար Քեփոյի և մասամբ Թամբուրաչիի որդի Խաչոյի, մասամբ Վարդերի և Մարգրիտի տարածքներով, արևելքից՝ ռոռզման առվով, հյուսիսից՝ Համաջի գաղե Աբդուլահի տարածքով, հարավից՝ մասամբ ռոռզման առվով և ճանապարհով մասամբ՝ Մարգրիտի և Վարդերի տարածքով
66-2	Արթինի որդի Կարապետի կինը՝ Ջևհերը, Գրիգորը և աղջիկները՝ Աննան և Մարիամը, վերջինիս որդի Կարապետը	ռոռզվող դաշտ	Սիլբիսի	Քոլիք դուք	Արևելքից՝ Տեր-Թավիթյան Նազարեթ աղայի դաշտն ու առուն, հարավից՝ Թիստանի որդու, հյուսիսից՝ Բաղդասարի որդու տարածքները
67-2	Բաջաքսուզ (ամուսն) Փիլոնի	ռոռզվող դաշտ	Սիլբիսի	Օրեն	սահմանափակվում է. Մուխարեմի որդու,



	տղաները՝ Բաբիկը, Սիմոնը և Դավիթը				Մագիչիի որդու և Տիստամի որդու տարածքներով
69-2	Ուլիանյիի որդիներ Սերոբը, Քերոբը, Դիփանու Ահաբետը	ռոռզվող դաշտ	Բարասնա	Փալաս դուք	սահմանափակվում է. հաջի Մեհմեդի և Հատյի դաշտերով
71-2	Փահարի որդիներ Դիփանոսը և Գյուլբենկը, դատրեր Ահաբետն ու Լյուսինան, որդիներ Նապոլեոնը և Գենան	ռոռզվող դաշտ	Սիլբիսի	Օրեն	Սահմանափակվում է. արևելքից՝ Սիմոնի տարածքով, արևմուտքից՝ առվով, հյուսիսից՝ Ֆասբույուքի որդու և Տեր-Գավիթյան Նազարեթի, հարավից՝ Կոստամի Գրիգորի տարածքներով
74-2	Թոփալ Խաչոյի որդի Սարգիսը	ռոռզվող դաշտ	Սիլբիսի	Մեղեր յոլու	Սահմանափակվում է. Հալեպի պողոտայով և ճանապարհով, առվով ու Միչոյի տարածքով
75-2	Թանբուրաջիի որդի Ջավենը	ռոռզվող դաշտ	Սիլբիսի	Սիրասողոսք	Արևելքից՝ առու, արևմուտքից՝ քարտաշ Քրմիզեի որդու, հյուսիսից՝ Ավետիսի, հարավից՝ Քորդիի որդու տարածքներով է սահմանափակվում
78-2	Սիմոնի որդի Հակոբ, Մանվել և Ահաբետ	ռոռզվող դաշտ	Բաբուլիթուն	Օրեն	Սահմանափակվում է. արևելքից՝ Մեսեհի, հյուսիսից՝ Ֆասբույուքի որդու, հարավից՝ Սիմոնի որդի Սարգսի տարածքներով, հարավից՝ ճանապարհով

Վերը նշված 12 հողատարածքները 1930 թ. օգոստոսի 3-ից հաշվված քսան օրվա ընթացքում աճուրդի են հանվել: Ցանկացողները դիմում էին ընկերությանը:

4. «Մալաթիա» թերթի 1930 թ. օգոստոսի 27-ի համարից տեղեկանում ենք, որ Մալաթիայի առևտրական պալատին նվիրաբերված հայկական ունեց-

վածքի մի մասը անհրաժեշտության դեպքում վաճառվել է: Կարապետ Տեր-Դավիթյանի որդիներից Ստեփանի, Համբարձումի, Մապիլիոնի և Դավիթյան Ավետիսի, Փալիսարի որդի Թաթոսի և Մսեհի, Թութեյան Հովհաննեսի որդի Ստեփանի և մյուսների գույքը հարստացրել է առևտրական պալատը:

Մալաթիայի առևտրական պալատից.

<i>տեսակը</i>	<i>գտնվելու վայրը</i>	<i>նահտորդ սեփականատերը</i>
ոռոգվող դաշտ	Բաբուիթու	Ֆահրիկի որդի Հակոբը
ոռոգվող դաշտ	Բաբուիթու	Թութեյան Հովհաննեսի որդիները՝ Ստեփանը և մյուսները
ոռոգվող դաշտ	Բաբուիթու	Փալիսարի որդի Թաթոսը և Մսեհը
ոռոգվող դաշտ	Բաբուիթու	Չոփչյան Կոզիկոզը
ոռոգվող դաշտ	Բաբուիթու	Փահսարի որդի Դիվանուսը և Նազարեթը
ոռոգվող դաշտ	Բաբուիթու	Տեր-Դավիթյանի որդիներ Ստեփանը, Համբարձումը, Մապիլիոնը և Թավիթյան Ավետիսը

Առևտրական պալատին պատկանող այս 6 հողատարածքի գնման հայտերն ընդունվում են 1930 թ. սեպտեմբերի 11-ից, իսկ 1930 թ. սեպտեմբերի 21-ից հետո դրանք աճուրդի են հանվում:

Թերթի 1930 թ. նոյեմբերի 12-ի համարում վակֆերի տնօրինության հայտարարությունից երևում է, որ հայերի անշարժ գույքը նաև տրվում է վարձակալության: Ցածր վարձի հանգամանքը բացատրվում է այն բանով, որ այն որպես կապիտալ հանձնվում է մասնավոր անձանց (1930 թ. 1 կգ հսցահատիկն արժեր 4 դուրուշ):

<i>համար</i>	<i>գտնվելու վայրը</i>	<i>տեսակ</i>	<i>վակֆ</i>	<i>նահիկին վարչակալ</i>	<i>գինը լիրայով</i>
0	Էսքիշեհիր (հին քաղաք)	մզկիթ	Ադմինարե	Արաբի որդի Վահաբը	10
0	Էսքիշեհիր	հողատարածք	Հաջի Յուսուֆ	Ջիրոյի որդի Օմերը	17
0	Էսքիշեհիր				14
0	Էսքիշեհիր		Սիլահթար	Աբբասի որդի Հուսեյնը	9
108	Էսքիշեհիր	սրճարան		Թոմոյի որդի Հասանը	30
109	Էսքիշեհիր	փուռ		Արաբի որդի Վահաբը	5
107	Էսքիշեհիր	խանութ		Հուսեյնի որդի Մեմեդը	3

ՄԻ ԷՋ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԱՅՄԵԴԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՍՈՒԹ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆՆԻՑ

106	Էսփիշեհիր			Հալիլ	3
103	Էսփիշեհիր			Բիլիմի որդի Վահաբը	3
104	Էսփիշեհիր			Քալաշ Ռ-գա	3
0	Էսփիշեհիր	հողատարածք	Էսփիսարայ	Հալիլ	3
0	Էսփիշեհիր	այգի	Դաբադիանե		6
0	Էսփիշեհիր	հողատարածք	Բանազիսուլֆա		6
0	Էսփիշեհիր		Դոնբելեք		3
0	Էսփիշեհիր		Բոյաջի		3
25,1	առևտրի շուկա	առևտրատուն	Հաջի Նեքի	Ահմեդ աղա	108
44		խանութ	Սողուբլու	Հաջի Էվլիա Ֆաիք	108
46				Մանդայի որդի Ահմեդը	111
60				Աբդուրահման էֆենդի	24
8			Նասրը բեյ	Հոջա գադե Բեքիրը	42
49	դերձակների շուկա		Մուսթաֆա փաշա	Հաջի Մեհմեդը	15
53	Շիֆա քաղամաս		Սուլուքի գադե	Քադիր էֆենդի	10
50				Սարի Ալի որդի Մեհմեդը	9
	Մուջելիի պողոտա	առևտրատուն	Թահիր բաբա	Բեհիսնիլի Հաջի էֆենդի	84

Թերթի նոյեմբերի 15-ի համարից տեղեկանում ենք քաղաքապետարանին հանձնված գույքի վաճառքի մասին: Ակնհայտ է, որ թալանից օգտվել է քաղաքապետարանի ղեկավարությունը: Անսուլիան Կարապետի որդի Նշանի և Հովսեփի, Քեփի դուստր Բեդահշանի և փեսա Կնոյի, Մարտիրոսի որդիներ Միսակի, Սանթուրի որդիներ Սարգսի և Հովաննեսի ունեցվածքը զավթում է քաղաքապետարանը:

Քաղաքապետարանի նախագահությունից.

<i>գլխավոր վարչը</i>	<i>տեղակի</i>	<i>նախկին սեփականատերը</i>	<i>աճուրդի տարեթիվը</i>
Էրդիբուլ օմուգբուլու	ռոռզվող դաշտ	Չիլարսանի որդի Հակոբը և Քերոբը	13-1-931
Էրդիբուլ օմուգբուլու	ռոռզվող դաշտ	Անսուլյան Կարապետի որդի Նշանը և Հովսեփը	13-1-931
Էրդիբուլ օմուգբուլու	ռոռզվող դաշտ	Անսուլյան Օրիլի որդի Նշանը	13-1-931

Ս. ՉԵԹԻՆՕՂԼՈՒ

Էդրիբուկ օմուգբուլու	ոռոգվող դաշտ	Մուղղուսի Քեպոյի փեսա Քեփոն և դուստր Բեդահշանը	13-1-931
Էդրիբուկ օմուգբուլու	ոռոգվող դաշտ	Ադուրադայի բնակիչներից Վարդանը	13-1-931
Էդրիբուկ օմուգբուլու	ոռոգվող դաշտ	Օրիլյան Կարապետի որդի Նշանը և Անսուռլյան Հովսեփը	13-1-931
Էդրիբուկ օմուգբուլու Գեդիքյերի	ոռոգվող դաշտ	Անսուրցի Մուղղուսի Քեփոյի դուստր Բեդահշանը և փեսա Կևոն	13-1-931
Էդրիբուկ օմուգբուլու Աքփաշ	ոռոգվող դաշտ	Օրիլյան Կարապետի որդի Նշանը և Անսուռլյան Հովսեփը	13-1-931
Էդրիբուկ օմուգբուլու Ուչդուք	ոռոգվող դաշտ	Փալանչի Վարդանի որդի Փիլիկոսը	13-1-931
Էդրիբուկ օմուգբուլու Բեքթաշերի	ոռոգվող դաշտ	Փալանչի Վարդանի որդի Փիլիկոսը	13-1-931
Չեքմեղեի առջևի մասում	ոռոգվող դաշտ	Մաթոսի որդի Նազարեթը, Մաթոսի թոռները	15-1-931
Թիլ արդերե	ոռոգվող դաշտ		15-1-931
Չեքմեղե	այգի	Մանթուրի որդիներ Սարգիսը և Հովհաննեսը	15-1-931
Չեքմեղե	այգի	Գալուստի որդի Գալուստը և Սերոբը	15-1-931
Թեջղե քարաքավակ	այգի	ուկերիչ Փիլոյի որդի Իբրահիմը և մյուսները	15-1-931
Չարմուզու կենտրոն	այգի	Դարբոնի որդի Մարտիրոսի որդի Սարգիսը	15-1-931
Չարմուզու	այգի	Կլլքեշիչի	15-1-931
կենտրոն	այգի	որդիներից Մարտիրոսի որդի Միսակը	15-1-931
Գելենգեշ	այգի	Եղինցի Արթին Էֆենդիի որդի Պողոսը	15-1-931

Ակնհայտ է, որ 1915 թ. ցեղասպանությունից մինչև այսօր հայերի ունեցվածքը այն ժամանակվա կառավարող կուսակցությունը բաժանել է մունիցիպալիտետներին, վակֆերին, առևտրի պալատներից մինչև մասնավոր հատված, այն ծառայեցրել է մահմեդական կապիտալի ստեղծման նպատակներին:

Բազմաթիվ գիտաժողովներում խոսելով հայերի ունեցվածքի թալանի մասին՝ հարց եմ տալիս. ո՞վ է այսօր զավթել հայերի այդ ունեցվածքը: Բնականաբար, մինչև այսօր պատասխան չեմ կարողանում ստանալ. փնտրտուքը տանում է դեպի 1915 թ.:

**Եվ այսպես. ո՞վ տիրացավ Մալաթիայում հայերի ունեցվածքին, ու՞ր է ապրանքատերը, անշարժ գույքի տերը, այսինքն՝ առաջին սեփականատերը:**

ОДНА СТРАНИЦА ИЗ ТЕМНОЙ ИСТОРИИ МУСУЛЬМАНСКОЙ  
(ТУРЕЦКОЙ, КУРДСКОЙ И Т. Д.) БУРЖУАЗИИ: ПРИМЕР  
МАЛАТИИ ВО ВРЕМЯ ГЕНОЦИДА

*С. ЧЕТИНОГЛУ, магистр истории*

РЕЗЮМЕ

Одна из исторических областей Армении Малатия была важной османской провинцией, в которой, наряду с турками, курдами и кызылба-шами, значительную часть населения составляли богатые армяне (в 1914 году в 96 населенных пунктах Малатии проживало 38705 армян).

Во время Геноцида армян 1915 года Малатия стала транзитным путем и концентрационным пунктом, куда стекались караваны армян, депортиро-ванных из Амасии, Токата, Сваза, Самсуна, Трапизона, Шапин-Гараисара, Эрзинджана, Эгина, Арабкира и других мест. Здесь мужчины уничтожались, красивые женщины и девушки похищались для гаремов, дети отделялись от матерей, а из оставшихся составлялись новые караваны, которые направля-лись дальше в Сирийскую пустыню.

В статье на основе одних только объявлений, публикуемых на страни-цах официальных газет провинции Малатия за 1929–1930 г., рассматри-ваются конкретные факты разграбления имущества армян с указанием конкретных лиц (как жертв – прежних собственников, так и грабителей) и перечислением конфискованного имущества. Из упомянутых источников со всей очевидностью следует, что:

– конфискованное имущество армян шло в государственную и пар-тийную казну (младотурок, а затем Народно-республиканской партии) – за исключением той значительной части имущества, которая в процессе экспроприации разворовывалась;

– суммы, вырученные от распродажи и сдачи в аренду недвижимого имущества армян, выделялись на финансирование развития в Турции част-ного сектора.

Таким образом, младотурки и их преемники кемалисты, депортируя христиан с их исторической родины и завладевая их имуществом, за счет награбленного капитала из бюрократической буржуазии трансформиро-вались в торгово-промышленную буржуазию.

A PAGE IN THE DARK HISTORY OF THE MUSLIM (TURKISH,  
KURDISH, ETC.) BOURGEOISIE: THE EXAMPLE OF MALATYA  
DURING THE GENOCIDE

*S. CHETINOGLU, Master of History*

SUMMARY

One of Armenia's historical regions, Malatya, was an important Ottoman province, the considerable part of population of which, along with the Turks, Kurds and Qizilbashs, was rich in Armenians (38705 Armenians lived in 96 communities of Malatya in 1914).

During the Armenian Genocide of 1915 Malatya became a transit route and concentration point where caravans of the Armenians deported from Amasya, Tokat, Svaz, Samsun, Trabzon, Shabin Karahisar, Erzincan, Eğin, Arabkir and other places thronged to. Here the men were exterminated, beautiful women and girls were abducted for harems, the children were separated from their mothers, and the survivors made up new caravans, which headed for the Syrian Desert.

Just on account of the reports published in the official newspapers of Malatya Province in 1929–1930, the article considers explicit facts of plundering the Armenians' property with indication of certain names of both victims (the former owners) and robbers, and the list of the seized property. From the mentioned sources It clearly follows that:

– the seized property of the Armenians went to the state and party treasury (of the Young Turks, and then of the Republican People's Party), except for that considerable part of the property, which was plundered in the expropriation process;

– the amounts of the proceeds from the sale and rental of the Armenians' real estates were allocated for financing the development of the private sector in Turkey.

Thus, the Young Turks and their successors – the Kemalists, deporting the Christians from their historical homeland and taking possession of their property, transformed from the bureaucratic bourgeoisie into the commercial and industrial bourgeoisie due to the looted capital.

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԵՎ ԼԵԶՎԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ Է

*Ջ Ա ԲԱՌՆԱՍՅԱՆ, քանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող*



Հայոց լեզուն միշտ հարուստ է եղել բարբառներով: Բարբառն ընդհանուր համաժողովրդական լեզվի տարբերակ է, որն ունի իրեն հատուկ բառային կազմ, շարահյուսություն, հնչյունաբանություն և գործածվում է որոշակի տարածքում: Բարբառները մասնություններով և ընդհանրություններով հանդերձ իրարից տարբերվում են հնչյունական, բառային, ձևաբանական, շարահյուսական առանձնակի կամ համակարգային հատկանիշներով<sup>1</sup>: Բարբառները կարող են ունենալ ենթաբարբառներ և խոսվածքներ:

Մինչև 20-րդ դարի սկիզբը հայ բարբառների տարածման սահմանը եվրոպական երկրներից, Թուրքիայից, Իրանից, Հնդկաստանից հասնում էր մինչև հեռավոր Ավստրալիա, Կանադա, ԱՄՆ և այլն: Մեծ եղեռնից հետո հայ բարբառների աշխարհագրությունն էլ ավելի ընդարձակվեց:

Կասկածից վեր է, որ պատմական ճակատագրի բերումով մեր ժողովրդի անթիվ-անհամար տեղաշարժերը անդառնալի կորուստներ են պատճառել հայ ազգագրությանը, բանահյուսությանը, բարբառներին, մեր նյութական և հոգևոր մշակույթին: Որոշ բարբառների՝ որպես հայ ժողովրդի ոչ նյութական մշակույթի հիանալի նմուշների կորուստը ցեղասպանության հետևանքներից է: Ցեղասպանության կործանարար ազդեցությունը հատկանշվում է ոչ միայն ֆիզիկական բնաջնջմամբ, այլև բարբառի, մայրենի խոսվածքի կրողների տարագրությամբ և դրա աստիճանական կորստով: Այսինքն՝ բնօրրանից կտրվելով, այլ լեզվական միջավայր տեղափոխվելով (կարևոր չէ՝ օտարալեզու, թե հայախոս), բարբառակիր հանրությունը կարող է փրկվել ֆիզիկապես, որոշ ժամանակ հաղորդակցվել դրանով գոնե ներընտանեկան միջավայրում, սակայն հաջորդ սերունդների լեզուն արդեն չի լինի մայրենի խոսվածքը:

Ընտրողաբար ներկայացնենք հայերենի մի քանի բարբառներ, որոնց կրողները, հայրենի բնօրրանից տարագրվելով, ցաքուցրիվ են եղել աշխարհով մեկ, իսկ բարբառները, բարբառախոս միջավայրից զրկվելով, աստիճանաբար մահացել են:

*Վանի բարբառ:* Այն հաղորդակցման միջոց էր Վանա լճի արևելյան ափին գտնվող Վան քաղաքում և շրջակա գյուղերում, Մոկսում, Ոգմում, Ոստանում, Խոշաբի, Բերկրիի, Արճեշի գավառներում: Հերոսամարտից

<sup>1</sup> Տես Ա. Ղարիբջյան, Հայ բարբառագիտություն: Ե., 1953:

հետո Վանի անկումն ունեցավ ցավալի հետևանքներ: Կոտորածներից փրկվածները թեև շատ չէին, սակայն գաղթի քարավանները տարածվեցին ամենատարբեր ուղղություններով: Համեմատաբար հարուստ շատ վանեցիներ գաղթեցին ու բնակություն հաստատեցին եվրոպական երկրներում, մասնավորապես՝ Ֆրանսիայում, Իտալիայում, ինչպես նաև Իրաքում, Լիբանանում: Արևելյան Հայաստան գաղթածների մի մասը ապաստան գտավ Արարատյան դաշտի գյուղերում, նաև՝ Երևանում (հատկապես՝ Կոնդ քաղամասում), գերդաստաններ կային Աշտարակում և շրջակա գյուղերում, մի սովոր գանգված էլ գաղթեց Ռուսաստանի տարբեր քաղաքներ, և այդ ճանապարհին որոշ գերդաստաններ մնացին Թիֆլիսում:

Նման ցրվածությունն անհետևանք չմնաց: Անգամ Մայր հայրենիքում, ասենք՝ Երևանում, վերաբնակված վանեցիները Երևանի բարբառի և գրական արևելահայերենի ազդեցությամբ կորցրին բարբառը պահպանելու հիմքերը: Բարեբախտաբար, մեր մեծ լեզվաբան Հ. Աճառյանը Գևորգյան ճեմարանում դասավանդելու ժամանակ ունենալով Վանից նոր գաղթած տասնյակ բարբառախոս ուսանողներ, 20-րդ դարի սկզբին կատարեց բարբառի քննությունը: Նրա գրքում կան բանահյուսական պատառիկներ՝ գրառված կենդանի բարբառախոսներից, ինչպես նաև նմուշներ 19-րդ դարի երկրորդ կեսին Պոլսում հրատարակած Գ. Սրվանձտյանի «Մանանա», «Համով-հոտով» ժողովածուներից, Թիֆլիսում՝ Շերենցի «Վանա սագ» ժողովածուից և այլն: 46 տարի անց մեծ գիտնականը հնարավորություն ունեցավ ծնունդով վանեցի մի դասախոսի օգնությամբ մշակելու և 1952 թ. հրատարակելու իր այդ հույժ կարևոր ուսումնասիրությունը<sup>2</sup>: Հետագայում, երբ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտում կատարվեցին հայ բարբառների հավաքչական աշխատանքներ, մենք՝ բարբառագետներս, հատուկ մշակված հարցարանների օգնությամբ գրառեցինք բազմաթիվ խոսվածքային միավորներ Վանի բարբառն իրենց ծնողների մայրենի բարբառը համարող բարբառախոսներից, այսինքն՝ վանեցիների 2-րդ, 3-րդ սերնդի ներկայացուցիչներից: Հիմա արդեն անհնար է գտնել բարբառին տիրապետողի, պետք է բավարարվենք բանահյուսական պատառիկների, զվարճախոսությունների, պարերգերի շտեմարաններից քաղված նյութերով: Այդ ճոխ ու հնամենի բարբառն արդեն կարելի է մեռած համարել: Այլ խոսքով՝ ոչ նյութական մշակույթը՝ լեզուն, բարբառը, մեռնում են բնօրրանը կորցնելու հետևանքով:

Հեռավոր գաղթօջախներում մայրենի բարբառների արձագանքներ փնտրելը Հ. Աճառյանը համարում է ոչ այնքան արդյունավետ աշխատանք: Նա իր «Հայոց լեզվի պատմություն» հիմնարար աշխատության մեջ, քննելով Հայաստանից դուրս գտնվող հայկական գաղթօջախների

<sup>2</sup> Տես Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի: Ե., 1952:



բարբառները, ցավով նշում է. «Մենք չգիտենք, թե մեր ո՛ր գաղութը Հայաստանի ո՛ր գավառից դուրս եկավ. միայն գիտենք, որ այսօրվա մեր ոչ մի արտաքին բարբառ ոչ մի ներքին բարբառի հետ ամբողջապես նույնը չէ»<sup>3</sup>:

Սասունի բարբառը, որը կարելի է ասել, որ բնօրրանից դուրս համեմատաբար լավ պահպանված բարբառներից է: Հայտնի իրողություն է, որ Արաքսից այս կողմ հանգրվանած արևմտահայերը նոր բնակատեղի ընտրելիս հիմնականում ապրել են գերդաստաններով, կորցրած բնօրրանին մոտիկ գյուղերի բնակիչներով, ինչն էլ նպաստել է մայրենի խոսվածքներն իբրև հաղորդակցման միջոց գործածելուն ու պահպանելուն: Մեծ եղեռնի տարիներին Անդրանիկի գործի ուղեկցությամբ Արևելյան Հայաստանում իրենց փրկությունը գտած մշեցիների մի ստվար զանգված բնակություն հաստատեց Շիրակի դաշտավայրի գյուղերում: Ակնառու փաստ է, որ Մշո բարբեր դաշտավայրի գյուղերից գաղթածները ձգտել են հարթ, սևահողային տարածքներում վերաբնակվելու, մինչդեռ Լեռնային Սասունից գաղթածները գերադասեցին Արագածոտնի քարքարոտ սարահարթը՝ կորցրած բնօրրանին հնարավորինս նման տարածքում ապրելու համար: Նշենք նաև, որ գաղթականները բնակություն էին հաստատում սահմանին որքան հնարավոր է մոտիկ՝ առաջին իսկ հնարավորության դեպքում Էրզրի վերադառնալու հույսով:

Նկատելի է, որ եթե միևնույն գյուղից կամ հարևան գյուղերից գաղթած ընտանիքներով վերաբնակեցված գյուղերում լավ են պահպանվել այս կամ այն բարբառի խոսվածքները, ապա նույնիսկ երբ տարբեր բարբառներով խոսող վերաբնակները առանձնացել են միևնույն բնակավայրի տարբեր թաղերում, այնուամենայնիվ տասնամյակների ընթացքում առաջացել են միջբարբառային խոսվածքներ:

Ներկայիս Արագածոտնի մարզի Թալինի և Աշտարակի շատ գյուղեր բնակեցվել են բացառապես Սասունի տարբեր գյուղերից գաղթածների գերդաստաններով: Թեև այդ տարածաշրջանում մտավորականությունն զգալի թիվ է կազմում, բայց ներընտանեկան հաղորդակցման լեզուն, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, Սասունի բարբառն է: Վերջին տարիներին իբրև զբոսաշրջիկ Թուրքիա այցելած մի խումբ մտավորականներ իրենց պապենական բնօրրանում՝ Սասունի Փեթար գյուղում, գտել էին քրդախոս սասունցիների, որոնք մասամբ պահպանել էին մայրենի խոսվածքը:

Դեռ անցյալ դարի 80-ական թվականներին Հայաստանի ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատողները, առաջնորդվելով այն սկզբունքով, որ առաջին հերթին պետք է գրանցել և հավանական

<sup>3</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2: Ե., 1951, էջ 438:

կորստից փրկել Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից գաղթածների մայրենի խոսվածքները, գիտարշավի էին մեկնել Աշտարակի, Թալինի, Նաիրիի, Բաղրամյանի շրջանների գյուղերը: Բարեբախտաբար, Սասունի բազմաթիվ բնակավայրերից գաղթածների մայրենի խոսվածքները գրառվել են: Վերջին քառորդ դարում կատարված հավաքչական աշխատանքի շնորհիվ կուտակված նյութերից, ատլասի քարտեզների կազմման համար պահանջվող խտությունը կարող են ապահովել հատկապես Մուշի, Սասունի, Վանի բարբառները:

Հայտնի է, որ Մեծ եղեռնից հետո Սիրիայում հանգրվան գտան կոտորածներից և Դեյր Չորի (Դեր Չոր) տառապանքներից մազապուրծ եղած հազարավոր հայեր, այդ թվում՝ նաև սասունցիներ: Սասունի բարբառը բավական անխաթար կերպով պահպանած ընտանիքներ կային Սիրիայի Հալեպ քաղաքում, որտեղ եղանք 2001 թ.՝ այնտեղից Քեսաբ մեկնելու և տեղի խոսվածքը գրառելու նպատակով: Մեզ հաջողվեց Առաջնորդարանի և Քառասուն մանկանց եկեղեցու հարևանությամբ գործող «Տարոն-Սասուն» հայրենակցական միության անդամներից տեղեկություններ քաղել սիրիահայերի մայրենի խոսվածքների մասին: Գրական արևմտահայերենի ազդեցությունը, բնականաբար, շատ մեծ էր, սակայն ընտանեկան հարկի տակ սասունցիները հաղորդակցվում էին հնարավորինս մայրենի խոսվածքով: Դեր Չոր գեհեռնից փրկված և սկզբնապես Հալեպում հաստատված սասունցի շատ գերդաստաններ տասնամյակներ անց փոխադրվել են Դամասկոս, Լաթաքիա, Քեսաբ: Հիմա արդեն՝ վերջին տարիների ողբերգական իրադարձություններից հետո, դժվար է որոշակի կարծիք հայտնել սիրիահայության լեզվի ապագայի մասին:

Եվ այսպես. գաղթ ու ավեր տեսած ամեն հայ մարդու մեջ արթնացող ինքնապահպանական բնագոյի ամենաբնորոշ արտահայտությունը մայրենի բարբառը զոնե ընտանեկան հարկի տակ սերնդեսերունդ փոխանցելն է: Սակայն այլ լեզվական միջավայրում (լինի դա նույն լեզվի այլ բարբառ կամ գրական տարբերակը, թե որևէ ուրիշ լեզու) այդ գործը օբյեկտիվ պատճառներով էապես դժվարանում է, և բարբառը հետզհետե մեռնում է: Ուստի և հայ ժողովրդի արդարացի պահանջատիրության հիմքում դրվող գիտական անժխտելի փաստերի մեջ կայուն տեղ պետք է ունենա ցեղասպանության և դրա հետևանքով աշխարհով մեկ սփռման պատճառով հայ բարբառների ոչնչացման հարցը:

Այսպիսով՝ անբեկանելի ենք համարում այն դրույթը, որ ***ցեղասպանությունը նաև լեզվասպանություն է:***

## ГЕНОЦИД – ЭТО И ЛИНГВОЦИД

*Дж. А. БАРНАСЯН, кандидат филологических наук, доцент,  
старший научный сотрудник Института языка НАН РА*

### РЕЗЮМЕ

Геноцид армян в Османской империи выразился не только в форме умерщвления коренного населения Западной Армении, но и массового бегства со своей родины чудом спасшихся от резни, голода и болезней. Оказавшись в иной социокультурной, в особенности – языковой, среде они по вполне объективным причинам стали терять не только свой территориальный традиционный уклад, но и социокультурные особенности, в первую очередь – диалект. Примером исчезнувшего диалекта армянского может служить ванский диалект, на котором говорили армяне, проживавшие на берегах озера Ван, в Моксе, Возме, Востане, в уездах Хошаб, Беркри, Арчеш. После резни часть выжившего населения эмигрировала в села Араратской долины, а также в города Ереван и Аштарак. В Ереване, например, под воздействием ереванского диалекта и литературного армянского языка они перестали употреблять ванский диалект. Однако выдающийся армянский языковед Г. Ачарян посвятил ряд ценных работ изучению ванского диалекта, что позволило зафиксировать его в научной литературе.

Относительно хорошо сохранился Сасунский диалект, часть носителей которого в годы геноцида эмигрировала в Ширакскую долину Восточной Армении. Их потомки сегодня компактно проживают в марзе Арагацотн Республики Армения, в селах около Талина и Аштарака. Еще с конца 1980-ых годов были организованы научные экспедиции диалектологов Института языка НАН РА в указанные населенные пункты с целью фиксации и изучения говоров носителей сасунского диалекта.

Таким образом, диалекты, в случае переселения их носителей в инородную языковую среду, по ряду объективных причин подвержены реальной угрозе вымирания уже во втором или третьем поколении. В связи с этим в ряду научных обоснований справедливости требований армянского народа в отношении международного признания факта Геноцида армян в Османской империи постоянное место должно принадлежать проблеме вымирания диалектов в результате геноцида, т. е. геноцид является одновременно и лингвоцидом.

## GENOCIDE IS ALSO LINGUOCIDE

*J. A. BARNASYAN, PhD in Philology, Associate Professor, Senior Research Fellow,  
Institute of Language, NAS, RA*

### SUMMARY

The Armenian Genocide in the Ottoman Empire revealed itself not only in the form of killing the indigenous population of Western Armenia, but also of a mass exodus of the people miraculously saved from slaughter, starvation and diseases from their homeland. Coming to be in a different socio-cultural, particularly verbal, environment, for quite objective reasons they began to lose not only their territorial traditional setup, but also socio-cultural features and in the first place – the dialect. An example of the extinct dialect of the Armenian language can be the Van dialect spoken by the Armenians living on the shores of Lake Van, in Moks, Vozm, and Vostan, in the districts of Khoshab, Berkri, and Archesh. After the massacre a part of the survived population emigrated to the villages of the Ararat Valley, as well as the cities of Yerevan, and Ashtarak. In Yerevan, for example, they stopped speaking the Van dialect under the influence of the Yerevani dialect and the literary Armenian language. However, the outstanding Armenian linguist H. Acharian devoted a number of valuable works to the study of the Van dialect and that allowed to fix it in academic literature.

The Sasun dialect was relatively well-preserved; a part of its informants emigrated to the Shirak Valley of Eastern Armenia during the Genocide. Today their descendants compactly reside in Aragatsotn Province of the Republic of Armenia, in the villages near Talin and Ashtarak. Since the late 1980s, research expeditions to the mentioned communities were organized to fix and study the dialect of native speakers of the Sasun dialect by dialectologists of the Institute of Language, NAS, RA.

Thus, the dialects, in the case of migration of their informants to the heterogeneous verbal environment, are subject to a real threat of extinction by the second or third generation for a number of objective reasons. In these terms, among the academic bases of just demands of the Armenian people for the international recognition of the Armenian Genocide in the Ottoman Empire a permanent place should be given to the problem of the extinction of dialects as a result of the Genocide, i. e. the genocide is also linguocide.

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ  
ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ  
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Ա. Ն. ՀԱՅՐՈՒՆԻ, պատմական գիտությունների դոկտոր,  
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր



Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Յ. Լեփսիուսը շարունակում էր իր ամբողջ ավյունն ի սպաս դնել հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործությունների դատապարտմանն ու նրա արդարացի հատուցմանը նպաստելու գործին: Իր հիմնադրած պարբերականի՝ 1918 թ. սեպտեմբեր-դեկտեմբերի համարում նա հրապարակեց մի ծավալուն հոդված «Ի՞նչ են արել հայերի հետ» վերնագրով<sup>1</sup>: Հոդվածի առաջին՝ «Խոսելու ժամանակը եկել է», հատվածում պարզաբանումներ էին արվում Մեծ Եղեռնի չափերի և հետևանքների վերաբերյալ:

Հայ ժողովուրդը, որի թվաքանակը Թուրքիայում պատերազմից առաջ հասնում էր մեկ ամբողջ երեք քառորդ միլիոնի, նշում էր Լեփսիուսը, պատերազմի ժամանակ թուրքական կառավարության կողմից Հայկական լեռնաշխարհի, Անատոլիայի, Կիլիկիայի և Սիջագետքի իր բնակավայրերից ամբողջությամբ տեղահանվել է, գրկվել ունեցվածքից, աքսորվել արաբական անապատներ և մասամբ ճանապարհին մորթվել, մասամբ, աքսորվալի հասնելով, «կանոնավոր կերպով» սովամահության է ենթարկվել: Գերմանական հյուպատոսների գնահատմամբ զոհերի թիվը կազմում էր 1 միլիոն, որի մոտ կեսը կանայք և երեխաներ էին: Բռնությամբ իսլամացված քառորդ միլիոն կանանց և աղջիկների քարշ են տվել թուրքական և քրդական հարեմներ: Եվս այդքանը որպես մուրացիկ փախել է Կովկաս: Անապատներում հավանաբար դեռ 150 հազար մարդ կարող էր կենդանի մնացած լինել և փրկվել, եթե ամենակարճ ժամկետում օգնություն ստանար<sup>2</sup>:

Թեև հայ ժողովրդի բնաջնջման հարցում Գերմանիայի ուղղակի մեղսակցության խնդիրը պետք է պարզվեր միայն դիվանագիտական փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո, այնուամենայնիվ, Լեփսիուսի համոզմամբ, Գերմանիան գրեթե ոչինչ չէր արել՝ գործնականում հերքելու ամբողջ աշխարհի կողմից հնչող այն մեղադրանքները, որ նա եթե ոչ «դրաման», ապա «հանդուրժողականության և փոքրոգի անգործունեության միջոցով» մեղսակից է դարձել մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի կործանմանը<sup>3</sup>: «Այն ամենը, ինչ ես պատերազմի տասնա-

<sup>1</sup> Stü J. Lepsius. Was hat man den Armeniern getan? «Mitteilungen aus der Arbeit von D. Dr. Johannes Lepsius», 1918, S. 113–118:

<sup>2</sup> Տես նույն տեղում, էջ 114:

<sup>3</sup> Տես նույն տեղում, էջ 116:

պատիկ ծանրացուցիչ հանգամանքներում կարողացա անել... շատ էր զիջում այն բանին, ինչ կարող էր արվել: Ոչ ոք չփորձեց անել հնարավորը...»<sup>4</sup>- նշում էր Լեփսիուսը: Ընդհակառակը, շեշտում էր նա, գերմանական մամուլը նախապատրաստեց հեշտությամբ հավատ ներշնչող պատրվակներ. ««անգլիական ստեր», «դավաճանություն հայրենիքի շահերին», զինակցի նկատմամբ աչքերը փակելու պարտավորվածություն: Բոլոր նրանք, ովքեր նման ամոթալի հիմնավորումներով իրենց խիղճը հանգստացրել են, այսօր այլևս ոչ մի պատրվակ չունեն»<sup>5</sup>:

Լեփսիուսի համոզմամբ՝ Գերմանիան գոնե զինադադարից հետո պետք է սպացուցեր, որ կամենում էր իրեն մաքրել մեղակցության արատից, ուստի նրա հողվածի երկրորդ՝ «Օգնելու ժամանակը եկել է» վերնագիրը կրող, հատվածը մի ազդու կոչ էր՝ ուղղված ամբողջ Գերմանիայի քրիստոնյաներին. «Արեք, ինչ կարող եք, մեր ժողովրդին բեռնաթափեք անասելի ոճրից: Մեր՝ քրիստոնյաների անունները ազատեք այն նախատիքից, որ մենք Աբելի սպանության համար միայն Կայենի խոսքերն ունեինք: Դեռ ապրում է արքայված ժողովրդի մնացորդը, որին, կանանց և երեխաների հետ՝ թվով 1,5 միլիոն, քշեցին անապատները: Ճանապարհին սպանված տասնյակ հազարավորների դիերը թունավորեցին օդը, վարակեցին Անատոլիայի և Սիջազետքի՝ թիկունքային ճանապարհները: Անապատի ավազը ծածկում են հարյուր հազարավոր սովամահ եղածների դիերը: Հավանաբար դեռ 150 հազար հյուծված կանայք, երեխաներ, զառամյալներ, մուրացիկների մի բազմություն, մահին ընդառաջ է գնում: Դա խղճուկ մնացորդն է մի՛ նախկինում ջանասիրությամբ և տոկուն աշխատանքով վեր խոյացած ժողովրդի, որն իր քրիստոնյա հավատը պահպանեց երկու հազարամյակ: Մի՞թե գեթ նրանք չպիտի իրավունք ունենան կենդանի մնալու: Մի՞թե տասնյակ հազարավոր աղջիկներն ու երեխաները, որոնց որպես հեշտ ավար քարշ տվեցին թուրքական քաղաքներ ու քրդական գյուղեր, ազատության իրավունք չունեն: Մի՞թե պետք է շարունակի մնալ հարյուր հազարավոր քրիստոնյաների հարկադրված օտար հավատը: Պե՞տք է, արդյոք, ամբողջ աշխարհը իրավացի դուրս գա այն հարցում, որ միայն Գերմանիան ոչ մի զգացում չունի քրիստոնյայի անվանն ու մարդկային արժանապատությանն ուղղված մման նախատիքի հանդեպ: Եթե դուք մեղսակից չեք եղել, ապացուցեք, որ չեք կամենում մեղսակից դառնալ: Չեզ ցավ չե՞ն պատճառում տասնյակ հազարավոր որբերը: Արեք, ինչ ձեր ուժերի սահմաններում է: Օգնեք փրկել մնացած թշվառներին...»<sup>6</sup>:

Գրաքննության վերացումից հետո Լեփսիուսը վճռեց վերահրատարակել նաև իր՝ «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության վերաբերյալ» աշխատությունը\*։ Մինչ այդ, սակայն, նա անհրաժեշտ էր համարում կատարել լրացու-

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 116–117:

\* Հայ ժողովրդի՝ տեղահանման և բնաջնջման սուկայի իրադարձությունները ներկայացնող այդ գիրքը, որը Լեփսիուսը 1916 թ. 20500 տպաքանակով հրատարակել և գաղտնի առաքել էր Գերմանիայի կրոնական, հասարակական և պետական շրջաններին, խիստ մեծ դեր խաղաց հանրությանը հայության վիճակի մասին իրազեկելու և հայ ժողովրդի բարեկամ-

ցիչ քննություն համեմատելով իր աշխատությունում ամփոփված տեղեկությունները և գերմանական դեսպանության ու հյուպատոսությունների տեղեկագրերը, որոնք աշխատության առաջին հրատարակության ժամանակ իրեն մատչելի չէին եղել: Դրանց ուսումնասիրությունը Լեփսիուսը կարևորում էր նաև հայ ժողովրդի բնաջնջման հարցում Գերմանիայի պաշտոնական դիրքորոշմանը ծանոթանալու համար<sup>7</sup>: Ուստի նա, 1918 թ. նոյեմբերի վերջին Հաագայից վերադառնալով Բեռլին, դիմեց ԱԳ-Ն պետքարտուղար դոկտոր Ջոլֆին՝ խնդրելով իրեն թույլատրել ծանոթանալ ԱԳ-Ն և Կ. Պոլսում դեսպանության դիվանագիտական փաստաթղթերին: Ջոլֆը նրան ոչ միայն չներժեց, այլև, տեղեկացնելով Հայկական հարցի վերաբերյալ «Սպիտակ գիրք» հրատարակելու ԱԳ-Ն մտադրության մասին\*, նշեց, որ նախարարությունը այդ գրքի հրատարակումից կհրաժարվի. եթե Լեփսիուսն ընդունի Հայկական հարցի վերաբերյալ Գերմանիայի դիրքորոշումը պարզաբանելու առաջադրանքը: Լեփսիուսը համաձայնվեց՝ այն պայմանով, որ փաստաթղթերն իրեն մատչելի դարձվեն ամբողջությամբ<sup>8</sup>: Նա այդ պայմանի սպահովումը անհրաժեշտ էր համարում քանի որ՝ միայն իրեն էր վստահում թուրքական կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ իրականացված մեծ ոճիրի և այդ հարցում Գերմանիայի պաշտոնական դիրքորոշման պարզաբանումը: «Այսօր էլ ես իմ արտոնությունն եմ համարում դառնալու մի ժողովրդի դատապաշտպանը որը թեև պատերազմի պատճառների մեջ չխճճվեց, սակայն նրան զոլվյալ բարբարոսության հետևանքով տասնապատիկ ավելի տառապեց, քան աշխարհի ցանկացած այլ ժողովուրդ»<sup>9</sup>. հայտարարում էր նա<sup>9</sup>:

ԱԳ-Ն-ն ընդունեց\*\* Լեփսիուսի պայմանը, և նա ձեռնամուխ եղավ փաստաթղթերի ուսումնասիրության ու հրատարակության պատրաստման գործին, որը տևեց ավելի քան 5 ամիս<sup>10</sup>: «Գերմանիան և Հայաստանը 1914–1918 թվականներին» վերնագրով ժողովածուն լույս տեսավ 1919 թ. մայիսին և ամփոփում էր ոչ միայն գերմանական դիվանագիտական աղբյուրների տեղեկությունները հայ ժողովրդի տեղահանման ու աքսորի վերաբերյալ, այլև այդ իրադարձությունների և առհասարակ Հայկական հարցի առնչությամբ Գերմանիայի դիրքորոշումը պարզաբանող բազմաթիվ կարևորագույն նյութեր. 444 փաստաթուղթ, որոնք

ների թիվը, համապատասխանաբար նաև հայերին Լեփսիուսի կողմից իրականացվող օգնության ծավալը մեծացնելու հարցում:

<sup>7</sup> Տես J. Lepsius. Mitteilungen. «Der Orient», 1919, S. 40:

\* ԱԳ-Ն-ն այդ որոշմանը հանգել էր՝ ցանկանալով հերքել Անտանտի երկրների լրատվական միջոցներում շարունակ արժարժվող այն տեսակետը, որ հայ ժողովրդի տեղահանությունը և կոտորածները դրդել և կազմակերպել էր Գերմանիան:

<sup>8</sup> Տես J. Lepsius. Mitteilungen, S. 40:

<sup>9</sup> J. Lepsius. Was hat man den Armeniern getan? «Mitteilungen...», S. 118.

\*\* ԱԳ-Ն-ն, սակայն, Լեփսիուսին իրականում տրամադրել էր փաստաթղթերի մի մասը, ինչը հայտնի դարձավ նրան միայն ժողովածուի հրատարակումից հետո:

<sup>10</sup> Տես J. Lepsius. Mitteilungen. S. 40:

ընդգրկում էին 1913 թ. սեպտեմբերից մինչև 1918 թ. հոկտեմբեր ժամանակահատվածը և լույս տեսան Լեփսիուսի հեղինակած ներածության հետ<sup>11</sup>:

Բացառելու համար այն կասկածները, թե հրատարակության հարցում կարող էր որոշակի միտում դրսևորված լինել, Լեփսիուսն այնպիսի ընտրություն կատարեց, որով ապահովվում էր թղթակցությունների ժամանակագրական և ներքին բովանդակային շարունակականությունը: Փաստաթղթերն այնքան «խոսուն» էին և այնքան ամբողջական էին ներկայացնում եղելությունը, որ Լեփսիուսն ավելորդ համարեց կատարել լրացուցիչ մեկնաբանություններ և աշխատության ներածականում նշեց. «Ես իմ առաջադրանքը չեմ համարել որևէ առումով ստանձնել մեղադրողի, պաշտպանողի կամ դատավորի դերը: Ես համոզված էի, որ լավագույնս կծառայեմ ճշմարտությանը, եթե սահմանափակվեմ այն բանով, որ հնարավորություն տամ խոսելու փաստաթղթերին, որոնց հիման վրա յուրաքանչյուր ոք կարող է կարծիք կազմել փաստերի և մեղավորության հարցի վերաբերյալ»<sup>12</sup>:

ԱԳՆ տրամադրած տեղեկագրերի ուսումնասիրության շնորհիվ Լեփսիուսին պարզ դարձավ, որ հայ ժողովրդի բնաջնջմանը դրդելու և այն կազմակերպելու վերաբերյալ Գերմանիայի հասցեին Անտանտի մամուլում ի հայտ եկող մեղադրանքներն իրականությանը չէին համապատասխանում<sup>13</sup>, և որ դրա կազմակերպման և իրականացման պատասխանատվությունը ծանրանում էր բացառապես թուրքական կառավարության վրա: Այդուհանդերձ, նա շարունակում էր իր հրապարակումներում շեշտել, որ Գերմանիան կրում է բարոյական պատասխանատվություն իր դաշնակցի արարքների համար ու, հետևաբար, պետք է իրեն պարտավորված զգա և ամեն ջանք գործադրի՝ հայ ժողովրդի դեռ կենդանի գավակներին նեցուկ կանգնելու համար: «Այդ ծրագրված զանգվածային սպանդի, մեկ միլիոն քրիստոնյաներին սովամահության ենթարկելու նենգ քաղաքականության, բոլոր հարյուրամյակների հալածանքների պատմության մեջ դեռ իր նմանը չունեցող այդ խայտառակության մեջ ողբերգականը մեզ՝ գերմանացիներին համար այն է, որ պատերազմի ժամանակ համաշխարհային քաղաքականության շղթայակցումը մեզ կարծես թե դարձրել է մեր զինակցի արյունախում մոլեռանդության մասնակիցը: Թեև փաստաթղթերը մեզ իրավունք են ընձեռում հերքելու մեղսակցության այն մեղադրանքը, որ աշխարհը բարդում է մեզ վրա, սակայն մեր խիղճը ճնշում է մեր զինակցի հանցագործության համար անուղակի բարոյական պատասխանատվությունը: Մենք չենք կարող հետ բերել այն, ինչ կատարվել է, բայց գոնե պարտավոր ենք որպես բոլոր քրիստոնյա ժողովուրդներից առաջինը կենդանի պահել այն, ինչ դեռ մնացել է այդ նզովյալ արարքի գոհերից», նշում է նա<sup>14</sup>: «Փաստագրական նյութերը, – գրում է նա մեկ այլ տեղ, – մեղավորության հարցը և կոտորածները վերապրած հարյուր հազարավոր կա-

<sup>11</sup> Stü J. *Lepsius*. Deutschland und Armenien 1914–1918: Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam, 1919:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ VII:

<sup>13</sup> Stü J. *Lepsius*. Ich bitte alle Leser dieser Zeitschrift .... «Der Orient», 1919, S. 1:

<sup>14</sup> Stü R. *Schäfer*. Geschichte der Deutschen Orient-Mission. Potsdam, 1932, S. 104:



մանց ու երեխաների թշվառությունը, իմ հրապարակումներում աշխարհի աչքի առջև եմ: Ավետարանական Գերմանիայում ես սպասում եմ գթասրտության մեծ շարժման, որը նույնիսկ մեր գրկանքի պատճառով չի կարող խեղդվել»<sup>15</sup>:

Հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ոճիրը փաստաթղթերի հրապարակման շնորհիվ այնքան հստակ կերպով էր փաստարկված, որ Լեփսիուսի համոզմամբ՝ նույնիսկ «ամենաարմատական թերահավատն ու թուրքասերը» չէր



Յոհաննես Լեփսիուս  
(1858–1926)

կարող «փաստերի ճշմարտացիության և ստակալիության վրա աչք փակել»<sup>16</sup>: Մակայն նա մտադիր չէր այդքանով սահմանափակվելու և անընդմեջ իր բոլոր հնարավորությունները գործի էր դնում հայանպաստ քարոզչությունը շարունակելու և զարգացնելու համար: Փաստաթղթերի ուսումնասիրությունը հաստատեց, որ 1916 թ. գարնանը Լեփսիուսի հրատարակած գաղտնի տեղեկագրի նյութերը միանգամայն համապատասխանում էին իրականությանը<sup>17</sup>: Ուստի նա ձեռնամուխ եղավ այդ աշխատության վերահրատարակմանը և այն լույս տեսավ «Հայ ժողովրդի մահուղին» վերնագրով՝ փաստաթղթերի հրապարակումից կարճ ժամանակ անց՝ 1919 թ.<sup>18</sup>: Վերահրատարակված աշխատության

բովանդակությունը որևէ փոփոխություն չէր կրել, համարվել էր միայն մի ներածությամբ, որում հեղինակը ներկայացնում էր գրքի նախապատմությունը և առաջին հրատարակության ու առաքման հարցում ի հայտ եկած խոչընդոտները:

Լեփսիուսն իր հրապարակախոսական գործունեությունը շարունակեց նաև թուրքիկների միջոցով, որոնք հրատարակվում և ցրվում էին մեծ տպաքանակով: Միայն 1919 թ. հունվար-մարտ ամիսներին նա կարողացավ հրատարակել ու ցրել չորս տարբեր թուրքիկներ<sup>19</sup>: Ուշագրավ է, որ նրանք, ովքեր հետագայում ևս ցանկություն էին հայտնում տարածման կամ զանազան միջոցառումների ժամանակ օգտագործման համար ունենալու թուրքիկներ, կարող էին դրանք ցանկացած պահի ու ցանկացած տպաքանակով պատվիրել և ստանալ Լեփսիուսի «Օգնության գործի» գրասենյակից<sup>20</sup>: Տեղեկատվության ծավալն էլ ավելի ընդլայնելու և

<sup>15</sup> J. Lepsius. Ich bitte alle Leser dieser Zeitschrift ..., S. 1:

<sup>16</sup> Տես Ռ. Շեֆեր, Նշ. աշխ., էջ 104:

<sup>17</sup> Տես J. Lepsius. Was hat man den Armeniern getan? «Mitteilungen...», S. 118:

<sup>18</sup> Տես J. Lepsius. Der Todesgang des Armenischen Volkes. Potsdam, 1919:

<sup>19</sup> Դրանք ունեին հետևյալ վերնագրերը. «Կարելի՞ էր այդ մասին լռել», «Քրիստոնյա ժողովրդի կործանումը», «Կեմախ Բողազիի՝ անեծքի հովտում», «Մի քրիստոնյա ժողովրդի մահվան ճանապարհը» (տես «Zur Beachtung». «Der Orient», 1919, S. 47): Մինչ այդ՝ 1918 թ. վերջին, առաքվել էր նա մեկ թուրքիկ, որ կրում էր «Ի՞նչ եմ արել հայերի հետ» անվանումը (տես «Zur Beachtung». «Mitteilungen ...», S. 152):

<sup>20</sup> Տես «Zur Beachtung», S. 47:

բարեկամների հետ կապն ամրապնդելու նպատակով Լեփսիուսը 1919 թ. մայիսին իր «*Mitteilungen...*» պարբերականի անվանումը փոխում է «*Der Orient*»-ի, որն ի տարբերություն նախորդից, տպագրվում էր անհամեմատ ավելի մեծ ծավալով և ամեն ամիս<sup>21</sup>:

Հասարակության ուշադրությունը բևեռելով բազմահազար հայ որբերի աղետալի վիճակի վրա\* և շարունակելով իր օգնության աշխատանքները Լեփսիուսն ամենայն աչալքջությամբ հետևում էր խաղաղության գործընթացի զարգացմանը, որը պետք է բախտորոշ նշանակություն ունենար հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործության դատապարտման և տասնամյակներ շարունակ շահարկված Հայկական հարցի լուծման համար: Հատկանշական է, որ դա զինադադարից հետո որքան էլ մոտ և անխուսափելի էր թվում, այնուամենայնիվ Լեփսիուսը չէր շտապում կիսել հայկական վեց վիլայեթների սահմաններում նոր Հայաստանի ստեղծման հայկական շրջաններում թևածող հույսերը: «Արդյոք փախստականների զանգվածներին երբևէ կվիճակվի<sup>6</sup> վերադառնալ Թուրքիայի հին հայկական

<sup>21</sup> Տես «Mitteilung». «Der Orient», 1919, S. 131:

\* Լեփսիուսը վարում էր ակտիվ հրապարակախոսական գործունեություն՝ օգնության աշխատանքներին համայնքների մասնակցությունն առավելագույնս ընդլայնելու նպատակով: Օրինակ՝ 1919 թ. մայիսի 1-ին նա Գերմանիայի ավետարանական քահանաներին հղեց մի ընդարձակ ուղերձ, որում, սրտառուչ տողերով ի մի բերելով հայ ժողովրդի ողբերգությունը, կոչ էր անում հիշելու այն բարոյական պարտքն ու պատասխանատվությունը, որ նրանք ունեին հայերի նկատմամբ: Քսաներորդ դարում աշխարհը տեսավ քրիստոնյաների՝ բոլոր ժամանակների մեծագույն հալածանքը, և Գերմանիան մնաց դրա «լուռ վկան», հայտարարում էր նա: «Այն օգնությունը, որ ես պատերազմի ժամանակ հակառակ բոլոր խոչընդոտներին, իրականացրել եմ, անասելի թշվառության մեծության համեմատությամբ չափազանց խղճով էր: Անհնար էր ավելի բարձր ձայնել, քան ես արեցի: Եթե նույնիսկ քարերն աղաղակեին, գրաքննությունը կլռեցներ նրանց... Այժմ, սակայն, երբ մարդկային սերը դարձյալ իրավունք ունի խոսելու, Գերմանիան պետք է ապացուցի, որ իր սիրուն այս աշխարհի տառապանքների նկատմամբ չի քարացել: ՈՒՍտի ես ձեզանից ակնկալում եմ, պարտնայք և եղբայրներ, որ դուք կդիմեք ձեր համայնքներին. «Դա տեղի է ունեցել: Մենք դրան չկարողացանք խանգարել: Բայց մենք ամաչում ենք որպես քրիստոնյաներ, որ դաշնակցել ենք քրիստոնյաների արյունը հեղող ժողովրդի հետ... Մենք ամաչում ենք, որ երբ դեռ հնարավոր էր օգնել, օգնության պատրաստների ձեռքերը կապեցինք և ականջ դրեցինք ստրկական երկյուղին: Մենք հիմա այլ բան չենք կարող անել, քան ուղղել այն, ինչը դեռ կարելի է ուղղել, փրկել, ինչը դեռ կարելի է փրկել, և բոլոր ուժերով, որ մենք դեռ պահպանել ենք մեր գրկանքներից հետո ձեռք զարկել եղբայրական ժողովրդի վերակենդանացմանը, որը դարձավ մուրացիկների բազմություն, քույր եկեղեցուն, որը վերածվեց փլատակների մի կույտի: Մեր պարտքն է դա՝ Տիրոջն արժանի լինելու համար, մեր պարտքն է դա՝ մեր գերմանացի ժողովրդի կոխկրտված արժանապատվությունը վերականգնելու համար... Միթե<sup>6</sup> շատ կհամարվեր, եթե յուրաքանչյուր ավետարանական համայնք հոգ տաներ գեթ մեկ հայ որբ երեխայի համար...» (տես *Ռ. Շեֆեր*, Նշ. աշխ., էջ 104–105): Այդ և բազում այլ հրապարակումների միջոցով ձեռք բերելով բավականաչափ բարեկամներ և նյութական աջակցություն՝ Լեփսիուսը նախ Ութնհայում, իսկ հետագայում՝ Թուրքիայից հայության վերջնական վտարումից հետո, Սիրիայում և Լիբանանում անընդմեջ շարունակեց հայերին օգնության աշխատանքը, որի մասին մենք այստեղ հանգամանալից կերպով չենք խոսի:

գավառները, արդյոք հայերին տրված խոստումները, որ գոնե արևելյան Անատոլիայի՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Տրապիզոնի և Սվազի մարզերը, հայկական Կովկասի հետ միանալով պիտի դառնան մի անկախ Հայաստան, երբևէ կիրականանա՞ն, գիտեն միայն Փարիզի աստվածները», գրում էր նա 1919 թ. վերջին<sup>22</sup>:

Լեփսիուսի համոզմամբ՝ Անգլիայի շահերից էր բխում Թուրքիային իր ազդեցության տակ պահելը և «շատ չմասնատելը»: ԱՄՆ-ն իր հերթին ի նպաստ հայության միջամտելու միտում չէր դրսևորում: Այդ իրավիճակում նա իրատեսաբար կասկածելի էր համարում, որ հայերի ցանկություններն ամբողջությամբ կիրականանան, և վեց հայկական մարզերը կհատկացվեին նրանց: Այնուհանդերձ, Լեփսիուսի կարծիքով՝ եթե նույնիսկ ոչ այդ մարզերն ամբողջությամբ, ապա գոնե դրանց «մեկ երրորդն» անպատճառ հատկացվելու էր Հայաստանի Հանրապետությանը, որն ի վիճակի չէր կերակրելու իր տարածքում կուտակված հարյուրհազարավոր փախստականների ու որբերի և, «իր նեղ սահմաններում պարփակված», սպասում էր Խաղաղության վեհաժողովի որոշումներին: Նա նկատի ուներ, մասնավորապես, Վանի վիլայեթի մի մասը, Բիթլիս քաղաքը, Մուշի հարթավայրը և որոշ հատվածներ Էրզրումի վիլայեթից՝ Էրզրում քաղաքով հանդերձ<sup>23</sup>:

Սակայն Սևրի հաշտության պայմանագրի դրույթները, աշխարհաքաղաքական ուժերի վերաձևման պայմաններում, ինչպես հայտնի է չկատարվեցին: 1921 թ. Լոնդոնում տեղի ունեցած խորհրդաժողովում դրանք փոխարինվեցին Թուրքիայի արևելյան սահմանների մոտ, այսպես կոչված, Ազգային օջախի ստեղծման գաղափարով, որը 1923 թ. Լոզանի պայմանագրով նույնպես մերժվեց, և Հայկական հարցը վերջնականապես դուրս եկավ մեծ տերությունների քաղաքական օրակարգից<sup>24</sup>:

Հույների և հուսախաբությունների այդ դաժան շրջապտույտում Լեփսիուսը շարունակ հայ ժողովրդի հետ էր՝ հրապարակախոսի, վերլուծաբանի և անաչառ քննադատի իր անհատնում ավյունն ի սպաս դնելով նրա շահերի պաշտպանությանը: ՌԻշագրավ է, որ Սևրի պայմանագիրը համարելով Թուրքիայի՝ որպես մեծ տերության, փլուզման անշրջելի վկայություն<sup>25</sup>, նա, այնուամենայնիվ, մեծ խորագրացությամբ նախագուշակում էր նախապես չոգևորվել, քանի որ եթե ԱՄՆ-ը չստանձնի Հայաստանի մանդատը, ապա վերջինս ստիպված կլինի ապավինելու ինքն իրեն և միայնակ, իր ուժերով տիրանալու իր տարածքներին. մի բան, որ եթե ոչ տակավին անհնար, ապա գոնե խիստ անհավանական էր: Ավելին. նա «Հայաստանը և տերությունները» հողվածում նշում էր, որ եթե նույնիսկ Վիլսոնը որոշեր Հայաստանին տրվող տարածքների սահմանները, ապա հայերը դարձյալ հարկադրված կլինեին դրանք Թուրքիայից զենքով նվաճելու, եթե չէին կամենում

<sup>22</sup> Տես *J. Lepsius*. Not und Hilfe. «Der Orient», 1919, S. 134:

<sup>23</sup> Տես *J. Lepsius*. Die armenische Republik. «Der Orient», 1920, S. 2:

<sup>24</sup> Տես *J. Lepsius*. Die armenische Frage in Lausanne. «Der Orient», 1923, S. 2:

<sup>25</sup> Տես «Der türkische Friedensvertrag». «Der Orient», 1920, S. 32:

«սահմանափակված մնալ Արարատի ստորոտի Կովկասյան հանրապետության չափազանց նեղ տարածքում»<sup>26</sup>:

Ուշագրավն այն է, որ Լեփսիուսն այդ կանխատեսումներն արեց 1920 թ. ամռան սկզբին՝ պայմանագրի ստորագրումից ամիսներ առաջ:

Լոնդոնի 1921 թ. քանաձևի ընդունմամբ պարզ դարձավ, որ Լեփսիուսի վերապահությունները միանգամայն հիմնավոր էին, և «փոքր ազգերի ազատարարները», որոնք հայերին «ոսկու լեռներ» էին խոստանում, այժմ նրանց պահանջներին գոնե մասնակիորեն բավարարելու մտադրություն չունեին: Ինչ վերաբերում



Գեներալ ֆոն Չեկտը առաջին համաշխարհային պատերազմի տարիներից  
Էնվեր փաշայի հետ, իսկ պատերազմից հետո՝  
նացիստական Գերմանիայի ֆյուրերի հետ

էր այդ քանաձևով խոստացվող «Ազգային օջախին», ապա Լեփսիուսի համոզմամբ, Թուրքիայում ոչ անկախ մնան վարչատարածքային միավորի ստեղծումը և գոյատևումը անիրատեսական և անիրագործելի էր: «Ռ՞վ պետք է հոգ տանի, որ Կովկասի սովահար 300-400 հազար հայ փախստականները հետ տարվեն իրենց այդ «հայրենիքը», – գրում էր նա 1921 թ. մայիսին հրատարակած «Խաբված Հայաստանը» հոդվածում, – ոչ ոք: Թուրքերն, անկասկած, տեղի չեն տա: Ռ՞վ նրանց կհարկադրի: Ոչ ոք: Ուրեմն հայերը ստիպված պետք է լինեն իրենք նվաճելու իրենց «Ազգային օջախը» (որը պետք է լինի թուրքական ենթակայության ներքո)»<sup>27</sup>: Սակայն, եթե հայերը նույնիսկ փորձեն դա անել, շարունակում էր իր միտքը Լեփսիուսը, ապա Անտանտը, անկասկած, այդ կհամարի խաղաղության ոտնահարում, քանի որ անգլիացիները և ֆրանսիացիները կամենում են թուրքերի հետ կատարել գործարքներ և իրականացնել իրենց այն «սուրբ երդումը», թե թուրքերն այլևս չպետք է իշխեն քրիստոնյա ազգերի վրա: Հետևաբար, ըստ

<sup>26</sup> J. Lepsius. Armenien und die Mächte. «Der Orient», 1920, S. 38.

<sup>27</sup> J. Lepsius. Das betrogene Armenien. «Der Orient», 1921, S. 53.

Լեփսիուսի, մնա՛ն «Օջախի» ստեղծումն անհնար է, և թուրքերը շարունակելու են երկիրն իրենց պահել, իսկ քրիստոնյաները՝ մնալ վտարանդի<sup>28</sup>:

Ստեղծված իրավիճակը Լեփսիուսին համակել էր նոր աղետների և հուսախաբությունների ծանր նախազգացումով. «Արդյո՞ք քրիստոնյաների խիղճը համաշխարհային պատերազմի պատճառով այն աստիճան է տկարացել և բթացել, որ իրավունքն ու մարդկայնությունը դարձել են դատարկ խոսքեր: ...Արդյո՞ք «դաշնակից և միացյալ տերությունները», որոնք երաշխավոր են եղել Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանության համար, այդ ասելով իրոք այլ բան չեն հասկացել, եթե ոչ մահմեդական գերեզմանափորների և քրիստոնյա զանգվածների գերեզմանների պաշտպանությունը...»<sup>29</sup>:

Հետագա ամիսները զարմանալի ճշգրտությամբ փաստեցին Լեփսիուսի նաև այդ կանխատեսումները: Այնուամենայնիվ, նա Հայկական հարցի վերոնշյալ զարգացումների նկատմամբ հայեցողական կեցվածք չէր որդեգրել, այլ գործադրում էր իր բոլոր ջանքերը՝ անհավանական իսկ հնարավոր դարձնելու և ընդունված որոշումների իրականացմանը հասնելու համար: Այսպես, նրա նախածեռնությամբ, 1922 թ. նոյեմբերի 15-ին Բեռլինից Լոզանի համաժողովին հղվեց 272 ստորագրություններով մի ընդարձակ կոչ, որում ուշադրություն էր հրավիրվում աշխարհասփյուռ հայերի ծանր դրության, նրանց իրավունքների և խոստացված «Ազգային օջախի» ստեղծման անհրաժեշտության վրա<sup>30</sup>: «Նրանք այլևս չեն կարող տանել իրենց տառապանքների բեռը, և մենք էլ այլևս չենք կարող տանել մեր լուռության բեռը ...: Այս հանդիսավոր պահին, երբ վտանգված է մի ամբողջ ազգի գոյատևումը, նյութական, քաղաքական շահերով տարված եսակամությունը ոչ մի գնով չպետք է խեղդի մեր ձայնը: Մենք ավելի շատ համոզված ենք, որ այդ շահերը, որքան էլ դրանք հիմնավորված լինեն, միայն այն դեպքում կարող են օրինական լինել, երբ իրավունքի և մարդկայնության համար կատարվող նախազուշացման կանչը անհետևանք չի կորչում: Այն, ինչ մենք հայերի համար պահանջում ենք, մի անկախ «Ազգային օջախ» է, որի անվիճելի իրավունքը այդ հնագույն ժողովուրդն այսօր ունի ավելի, քան երբևէ... Մենք մեր ձայնը միացնում ենք բոլոր ազգերի՝ հայերի բարեկամների ձայներին՝ այն պահանջով, որ հայ ժողովրդին օգնություն ցուցաբերվի՝ տիրանալու իր իրավունքին: ... Մենք չենք կարող հանդուրժել այն միտքը, որ հայ ժողովուրդը միակն է, որն իր միլիոնավոր զավակներին գոհաբերելուց հետո կարող է դարձյալ զրկված լինել իր իրավունքներից և ազատությունից»<sup>31</sup>:

Կոչի հեղինակները, որոնց թվում էին պրոֆեսոր Ա. ֆոն Հառնակը, Ա. Վեգները, Թ. Մանը, Է. Բանգեն, պրոֆեսոր Յ. Մարկվարտը, դոկտոր Մ. Նիպագեն, պրոֆեսոր Յ. Ռիխտերը և այլ համբավավոր գրողներ, եկեղեցականներ, մշակութային ու քաղաքական գործիչներ, «Սևրի խաղաղության հետ կապված՝ շատ ավելի մեծ

<sup>28</sup> Տես նույն տեղում, էջ 53–54:

<sup>29</sup> Տես «Quo usque tandem?». «Der Orient», 1922, S. 57:

<sup>30</sup> Տես «Aufruf an die Friedenskonferenz zu Lausanne». «Der Orient», 1922, S. 93–96:

<sup>31</sup> Տես նույն տեղում, էջ 93–95:

սպասումներից» հետո «Ազգային օջախի» ստեղծումը համարում էին միակ և վերջին միջոցը, որը կարող էր աշխարհասփյուռ հայությանը հաստատուն ապագա և հայերին ու թուրքերին՝ խաղաղ գոյակցության հնարավորություն ընձեռել: Նրանք դա կարևոր էին համարում մաս հարյուր հազարավոր որբերի ապագան ապահովագրելու առումով, որբերի, որոնք ժամանակավոր կացարաններում սպասում էին խաղաղության հաստատմանը՝ «իրենց խնամքը և դաստիարակությունը նոր հայրենիքում ստանալու համար»<sup>32</sup>:

Այդ սրտառուչ կոչը նույնպես անկարող եղավ հակազդելու «նյութական շահերի» գերակայությանը: Լոզանում, ինչպես հայտնի է, «Ազգային օջախի» հետ կապված վերջին հույսերը ևս հոգս ցնդեցին, իսկ Հայկական հարցը դուրս եկավ մեծ տերությունների քաղաքականության օրակարգից: Լեփսիուսը Հայկական հարցի այդ տխրահոշակ «լուծման» և համաժողովի վերաբերյալ իր նկատառումներն ամբողջականորեն ներկայացրեց «Հայկական հարցը Լոզանում» և «Իրադրությունը Հայաստանում» հոդվածներում, որոնք հրատարակվեցին 1923 թ. սկզբին: Նրա համոզմամբ՝ Լոզանի համաժողովը ոչ այլ ինչ էր, եթե ոչ տասնամյակներ ի վեր դիվանագետների «խաղազնդակը» և մեծ տերությունների «կռվախնձորը» դարձած Հայկական հարցի շահարկումների տրամաբանական ավարտը: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևելքի քրիստոնյաների «հովանավորներն» իրենց քաղաքական շախմատի տախտակի վրա հայ զինվորին շարունակ այս ու այն կողմ էին տանում, որպեսզի, երբ իրենց «եսական» շահը պահանջեր, նրան զոհաբերեին: Եվ այդ զոհաբերման արարողությունը կատարվեց Լոզանում: Հայկական հարցի և հայ ժողովրդի ողբերգությունների պատմությունը սպառիչ կերպով փաստում էր, որ մեծ տերությունների քաղաքագետները, «ճամարտակելով» քրիստոնեության և մարդասիրության մասին, իրականում հետապնդում էին միայն իրենց նյութական շահերը, քաղաքագետներ, նշում էր նա, որոնք «երբ մարդասիրությունից են խոսում, նկատի ունեն իրենց ֆինանսական գործարքները, իսկ երբ արդարությունից են խոսում՝ նավթը»<sup>33</sup>:

Իր մեկ այլ՝ «Շուռ տված խաչակրաց արշավանքը», հոդվածում սպանիչ ծաղրով ներկայացնելով հայ ժողովրդի հովանավորությունն ստանձնած տերությունների խոսքի և գործի հակասականությունը՝ Լեփսիուսը 1895–1923 թթ. նրանց վարած քաղաքականությունը բնութագրում էր որպես ութերորդ խաչակրաց արշավանք, որի կարգախոսը Արևելքի քրիստոնյաների պաշտպանությունն էր, սակայն իրական նպատակը «նավթահանքերի և քարածխի պաշարների ազատագրումն էր»: ՈՒստի, զարմանալի չէր, որ հայ ժողովրդի շահերի այդօրինակ «պաշտպանությունը» շարունակ հանգեցնում էր նրա դրության վատթարացմանը, մի գործընթացի, որն իր հանգուցալուծումն ստացավ աքսորի անապատներում և Լոզանում<sup>34</sup>: «Անտանտի երկրների կառավարությունների համար հավերժական խայտառակություն կմնա այն, որ նրանք, իրենց պատժամիջոցներով և վերահսկիչ հանձնաժողովներով քրիստոնյա Գերմանիայի հետ վարվելով թուր-

<sup>32</sup> Տես նույն տեղում, էջ 94:

<sup>33</sup> J. Lepsius. Die armenische Frage in Lausanne. «Der Orient», 1923, S. 3.

<sup>34</sup> Տես J. Lepsius. Der umgekehrte Kreuzzug. «Der Orient», 1922, S. 98–101:

քաբար, հաղթված Թուրքիային թույլ տվեցին իր քրիստոնյաներին օրենքից դուրս հայտարարել և պատերազմում փորձված աքսորների, կոտորածների ու վտարումների համակարգը մեծագույն մասշտաբներով շարունակել այնքան, մինչև ի վերջո Անտանտի հավանությամբ քեմալականները վերացրին ամբողջ Փոքր Ասիայի քրիստոնյա բնակչությանը»<sup>35</sup>:

Այնուամենայնիվ, Լեփսիուսն այն կարծիքին էր, որ Թուրքիան իր հայահալած քաղաքականությամբ դատապարտվեց տնտեսական փլուզման, քանի որ նրա տնտեսության հիմնական լուծը կրում էին հայերը, որոնք իրենց բնածին տաղանդով դարձյալ կկարողանան ասպարեզ գտնել իրենց «անխոնջ աշխատասիրության համար», և այնքան ամուր արմատներ գցել, որ միայն «Աստված գիտե, թե ով ավելի երկար կյանք կունենա, հայ ժողովուրդը, թե՞ նրա դահիճները»: Ավելին. Լեփսիուսի համոզմամբ՝ Հայկական հարցը Լոզանում ոչ թե վերացվել, այլ միայն հետաձգվել էր, և Թուրքիան չկարողացավ օգտագործել նվազագույն կորուստներով այդ հարցից մեկընդմիջտ ազատվելու՝ իրեն տրված պատմական հնարավորությունը, որի համար նա ապագայում ստիպված պետք է լիներ անհամեմատ ավելին հատուցել. «Թուրքիան հնարավորություն ուներ հայկական հանրապետությանը մի տարածք զիջելով կամ Կիլիկիայի մի մասում հայ փախստականների համար հայկական «Օջախ» ստեղծելով նվազագույն կորուստների գնով հայերին հաշտեցնելու, իր գործած անհրավորությունները որոշ չափով ուղղելու և՛ ամեն դեպքում, ընդմիջտ ազատվելու Հայկական հարցից: Սակայն նա չօգտագործեց այդ նպաստավոր առիթը: Հայկական հարցը հետաձգվել է, բայց չի վերացել, և այն ցանկացած ժամանակ դարձյալ ի հայտ կգա, երբ այս կամ այն պետությանն անհրաժեշտ լինի Թուրքիայում նվաճումներ կատարելու համար այն օգտագործել որպես պատրվակ: Այդ ժամանակ կհիշեցվեն նաև Վիլսոնի սահմանները և հայկական ջարդերը: Քանի դեռ Հայկական հարցը լուծված չէ, այն շարունակ, ինչպես Դամոկլյան սուր, կճոճվի Թուրքիայի գլխավերևում, մինչև վերջապես ասիական Թուրքիայի համար կդառնա նույնը, ինչ Հունական կամ Բուլղարական հարցերն են եղել եվրոպական Թուրքիայի համար»<sup>36</sup>:

1924–1925 թթ. Լեփսիուսի ուշադրությունը բևեռված էր նաև հայկական շրջաններին հուզող մեկ այլ կարևոր հարցի վրա: Թուրքական կառավարությունը, պատերազմի ընթացքում տարագրված և բնաջնջված հայերի ունեցվածքի մի մասը դրամի վերածելով, ներդրել էր Բեռլինի պետական բանկում. ընդհանուր հաշվով՝ 5 միլիոն թուրքական ֆունտ, որը զինադադարից հետո տեղափոխվեց Մեծ Բրիտանիա, և 1923 թ. նոյեմբերի 23-ին Փարիզում ստորագրված մի համաձայնագրով նախատեսվում էր օգտագործել պատերազմի ընթացքում Թուրքիայում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի քաղաքացիների կրած կորուստները հատուցելու համար<sup>37</sup>: 1925 թ. հունվարին, երբ այդ կորուստների հաշվառման նպատակով Փարիզում ձևավորվեց մի հանձնաժողով, Փարիզի Հայ

<sup>35</sup> J. Lepsius. Unser Waisenhausplan. «Der Orient», 1923, S. 37.

<sup>36</sup> J. Lepsius. Die Lage in Armenien. «Der Orient», 1923, S. 18–19.

<sup>37</sup> Տես «Das Schicksal von 5 Millionen türkischen Pfund». «Der Orient», 1925, S. 68–70:

փախստականների կենտրոնական կոմիտեն (ՀՓԿԿ) դիմեց նրան մի կոչով, որում հիմնավորվում էր այդ դրամագլխի բուն պատկանելությունը և կոչ էր արվում դրա գոնե մի մասը վերադարձնելու աքսոր վերապրած հայերին և շուրջ 100000-ի հասնող հայ որբերին<sup>38</sup>:

Լեփսիոսն իր պարբերականում՝ հրապարակեց թե՛ կոչը, թե՛ դրամագլխի առաջացման շարժառիթները փաստող վկայություններն ամբողջությամբ՝ միևնույն ժամանակ իր գորակցությունը հայտնելով ՀՓԿԿ-ին: Նրա համոզմամբ՝ այդ վկայություններից նույնիսկ միայն մեկը՝ Էրզրումի վիլայեթի վալի Թահսին բեյի վկայությունը, բավական էր հայկական կողմի պահանջն արդար համարելու և բավարարելու համար<sup>39</sup>: Լեփսիոսն այս փաստը գնահատեց որպես հայ ժողովրդի զանգվածային տեղահանության և աքսորի մի նոր անառարկելի ապացույց, որը կարող էր օգտագործվել այն հերքելու ջանքեր գործադրող՝ նորագույն շրջանի թուրք պատմաբանների և քաղաքագետների դեմ: «Այդ 5 միլիոն թուրքական ֆունտի ճակատագիրն ունի կարևոր փաստագրական արժեք,– նշում էր նա,– որովհետև Թահսին բեյի նամակում հաստատվում է թուրքերի կողմից հայերի ազգային ունեցվածքի կողոպտումը և, բացի այդ, խոստովանություն է արվում նաև Թուրքիայի հայության զանգվածային աքսորի մասին, որն առանց այդ էլ փաստարկման կարիք չունի: Յանկալի կլիներ, որ ինչպես անմիջապես պատերազմից հետո էր, ազնիվ թուրքերը երիտթուրքական կառավարության անարգ գործերն ընդունեն և դրանով գեթ անձամբ իրենց մաքրեն համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցած մեծագույն հանցագործությանը մեղսակցությունից»<sup>40</sup>:

<sup>38</sup> Տես նույն տեղում:

<sup>39</sup> Խոսքը վերաբերում էր «Ջումհուրիեթի»՝ 1924 թ. դեկտեմբերի 19-ի համարում հրապարակված Թահսին բեյի այն տեղեկությանը, որով նա փորձում էր արդարանալ գողության մեջ մեղադրվելուց. «Մինչև աքսորման հրամանը Էրզրումի հայերն իրենց թանկարժեք քարերը և ոսկին անդորրագրերի դիմաց ավանդ էին հանձնել Օտոմանյան բանկին: Աքսորից հետո ֆինանսների նախարարությունը Օտոմանյան բանկից հետ պահանջեց այդ պահ տված ունեցվածքը՝ վկայակոչելով «լքված գույքի» վերաբերյալ օրենքը: Երբ բանկը հրաժարվեց, սկսվեցին բանկի ղեկավարության և ֆինանսների նախարարության միջև երկարատև բանակցություններ, և ի վերջո, ֆինանսների նախարարության տված նյութական երաշխիքների հիման վրա, վճռվեց, որ Օտոմանյան բանկի Էրզրումի մասնաճյուղում հայերի պահ տված ամբողջ ունեցվածքը փոխանցվի ֆինանսների նախարարությանը: Դրա հետևանքով Ջեմալ բեյի լիազորված գեներալը, Էրզրումի բանկային բաժանմունքի ղեկավար միստեր Բալադյուրը և Ջեյալ բեյը փաթեթները կնքեցին հատուկ կնիքով, ապա Ջեմալ բեյը դրանք տեղափոխեց Կ. Պոլիս և հանձնեց ֆինանսների նախարարությանը՝ վերցնելով մի ստացական, որը դեռ գտնվում է ինձ մոտ, և մի լուսանկար, որը ես պատրաստ եմ հրապարակելու» (տես նույն տեղում, էջ 69–70):

<sup>40</sup> Տես նույն տեղում, էջ 70: Աքսորված հայերի ունեցվածքի բռնագրավումից գոյացած այդ դրամագլխի խնդիրը Լեփսիոսի մահից հետո ևս շարունակում էր մնալ նրա ընկերության տեսադաշտում, և այն հետևողականորեն հանդես էր գալիս տվյալ գումարները հայ որբերի խնամքին հատկացնելու պահանջով (տես «Das Armenische Hundertmillionen-Bankguthaben und England». «Der Orient», 1927, S. 113: Հմմտ. «Der Orient», 1927, S. 132: Հմմտ. «Armenien». «Der Orient», 1928, S. 25):



Թուրք կեղծարարների դեմ պայքարը Լեփսիուսը համարում էր ժամանակի ամենահարատապ պահանջներից մեկը: Այդ առումով նա իր առաջնային խնդիրն էր համարում հայ ժողովրդի հանդեպ գործադրված «ոճրագործությունների» նորագույն՝ 1919–1923 թվականներն ընդգրկող շրջանի լուսաբանումը, երբ եղեռն վերապրած արևմտահայության մնացորդները նույնպես հարկադրված եղան լքել իրենց պատմական հայրենիքը և փրկություն որոնել տարագրության մեջ: «Աքսորյալների ճակատագիրը, որոնք համակենտրոնացման ճամբարներից վերադարձան հայրենիք, և հաղթող տերությունների կողմից բախտի քմահաճույքին մատնված հայերի վերջնական վտարումը Թուրքիայից այդ երկրի պատմության և Եվրոպայի արևելյան քաղաքականության ամենասև գլուխներից է»<sup>41</sup>:

Իր նոր մտահղացումն իրագործելու համար Լեփսիուսը դեռ 1923 թ. վերջին մի ուղերձ հղեց հայ ժողովրդի «բոլոր բարեկամներին» և փորձություններով անցած հայերին՝ խնդրելով ներկայացնել վերոնշյալ շրջանին վերաբերող իրենց ուսումնասիրությունները, եթե այդպիսիք կային, ինչպես և կենսագրական տեղեկություններ, որոնք կարող էին հուսալի «ատաղձ» ծառայել իր ապագա աշխատության համար<sup>42</sup>: ՈՒՀագրավ է, որ նա, թեև նախորդ՝ 1914–1918 թթ., շրջանը համարում էր բավականաչափ լուսաբանված, նկատի ունենալով իր «Հայ ժողովրդի մահուղին» և «Գերմանիան ու Հայաստանը» աշխատությունները, այնուամենայնիվ, չբացառելով, որ կարող էին լինել նաև այդ շրջանի վերաբերյալ իր ուշադրությունից վրիպած նյութեր, խնդրում էր դրանք ևս իր համար մատչելի դարձնել<sup>43</sup>:

Լեփսիուսն ուներ այլ կարևոր ծրագրեր ևս: Դեռ 1924 թ. նա նախատեսում էր բարեգործական աշխատանքներ նախաձեռնել նաև Խորհրդային Հայաստանում, և, ինչը ոչ պակաս ուշագրավ է, Գերմանիայում հիմնել Հայկական ակադեմիա կամ այլ կերպ ասած՝ մի գիտաուսումնական կենտրոն Հայ առաքելական և մյուս հին եկեղեցիներին աջակցություն ցուցաբերելու համար<sup>44</sup>: Ցավոք, Լեփսիուսին վիճակված չէր իրականացնել իր այդ և մյուս ծրագրերը: 1925 թ. նրա առողջական վիճակը կտրուկ վատթարացավ: Աշնանը նա հարկադրված էր բուժման նպատակով մեկնել Իտալիայի Սերանո քաղաքը<sup>45</sup>, որտեղ էլ 1926 թ. փետրվարի 3-ին վախճանվեց:

Անհնար է գերազնահատել մեծ գործչի հայանվեր գործունեությունը: Թեև նա չկարողացավ շուտ տալ պատմության անիվն ու փոխել մեծ տերությունների քաղաքականությունը, բայց և այնպես վճռորոշ դեր ունեցավ արևմտահայության եղերական ճակատագրի լուսաբանման, Հայկական հարցի միջազգայնացման և համապարփակ օգնության աշխատանքների ծավալման համար, ինչի շնորհիվ հազարավոր տարագիրներ, որբեր և այրիներ փրկվեցին անխուսափելի մահից:

<sup>41</sup> J. Lepsius. Eine Bitte. «Der Orient», 1923, S. 41.

<sup>42</sup> Տես նույն տեղում:

<sup>43</sup> Տես նույն տեղում:

<sup>44</sup> Տես J. Lepsius. Orient-Mission. «Der Orient», 1924, S. 36:

<sup>45</sup> Տես Ռ. Շեֆեր, Նշ. աշխ., էջ 118:

ГЕНОЦИД АРМЯН И АРМЯНСКИЙ ВОПРОС  
В ПОСЛЕВОЕННОЙ ПУБЛИЦИСТИКЕ  
ИОГАННЕСА ЛЕПСИУСА

*А. Н. АЙРУНИ, доктор исторических наук, профессор  
кафедры армянской истории ЕГУ*

## РЕЗЮМЕ

После Первой мировой войны Иоганнес Лепсиус продолжал всецело служить делу осуждения преступлений против армянского народа и справедливого наказания за них. В основанном им периодическом издании Лепсиус в 1918 году опубликовал статью «Что сделали с армянами?», в которой отмечал, что армяне, численность которых в Турции до войны достигала 1,75 млн человек, во время войны были депортированы турецким правительством с Армянского нагорья, из Анатолии, Киликии и Месопотамии в арабские пустыни, их имущество было конфисковано и разграблено, население в пути частью было вырезано, частью – в местах высылки – погибло от голода и болезней. Число жертв, по оценкам германского посольства и консульств, достигало 1 млн человек, половину которых составляли женщины и дети. Около четверти миллиона женщин и девушек было подвергнуто насильственной исламизации и помещено в гаремы турок и курдов. Такое же число армян, бросив все свое имущество, бежало на Кавказ. В концентрационных лагерях в сирийской пустыне еще оставалось около 150 тысяч человек, которых можно было бы спасти в случае оказания немедленной помощи.

В мае 1919 года вышел в свет подготовленный Лепсиусом сборник документов «Германия и Армения в 1914–1918 гг.», состоявший из 444 сообщений не только немецких дипломатических источников о депортации, ссылках и резне армян, но и, материалов, свидетельствующих о позиции Германии в Армянском вопросе. На основе изучения этих материалов Лепсиус пришел к выводу, что обвинения в адрес Германии в соучастии в Геноциде армян несостоятельны (следует отметить, что Лепсиусу были предоставлены далеко не все имевшиеся в наличии в МИД Германии документы), однако она несет моральную ответственность за преступления, совершенные своим союзником, и, следовательно, должна помочь оставшимся в живых армянам, в первую очередь – десяткам тысяч сирот.

И. Лепсиус внимательно прослеживал и ход мирного процесса, который должен был иметь судьбоносное значение для армянского народа. В 1923 году он опубликовал свои статьи «Армянский вопрос в Лозанне» и «Обстановка в Армении», в которых констатировал, что политики больших государств, прикрываясь высокомерными речами о гуманизме и защите

христианства, на самом деле преследовали сугубо эгоистические материальные интересы: «говоря о гуманизме, имеют в виду свои финансовые операции, а говоря о справедливости – нефть».

В 1924–1925 гг. в центре внимания Лепсиуса был вопрос той части имущества истребленных армян, которая в денежной форме была помещена в государственный банк Берлина.

Лепсиус считал своей первоочередной задачей также борьбу против турецких фальсификаторов истории.

## THE ARMENIAN GENOCIDE AND THE ARMENIAN ISSUE IN JOHANNES LEPSIUS' POST-WAR PUBLICITY

*A. N. HAYRUNI, Doctor of History, Professor, Chair of the History  
of Armenia, YSU*

### SUMMARY

After the World War I Johannes Lepsius kept thoroughly serving to the cause of condemnation of crimes against the Armenian people and the just punishment for them. Lepsius published an article titled "What did they do with the Armenians?" in 1918 in the periodical founded by him, where he mentioned that the Armenians, whose number in Turkey before the war reached 1.75 million people, were deported during the war by the Turkish government from the Armenian Highlands, Anatolia, Cilicia, and Mesopotamia into the Arabian Desert, their property was confiscated and looted, the population was partly slaughtered en route, partly – in the places of exile – died of starvation and diseases. The number of victims, as estimated by the German embassy and consulates, reached 1 million people, half of which were women and children. About a quarter of a million women and girls were forcibly subjected to Islamization and taken to the Turks' and Kurds' harems. As many of destitute Armenians fled to the Caucasus. About 150 thousand people, who could have been saved if immediate help was provided, were still in the concentration camps in the Syrian Desert.

A collection of documents prepared by Lepsius and titled "Germany and Armenia in 1914 – 1918" was published in May 1919. It consisted of 444 reports not only of the German diplomatic sources on deportation, exiles and massacre of the Armenians, but also of material indicative of Germany's position in the Armenian issue. Based on the study of this material Lepsius concluded that the imputations against Germany of complicity in the Armenian Genocide had been unsound (it should be noted that not all the documents available in the German Foreign Office were given to Lepsius), but it had a moral responsibility for the

crimes committed by its ally, and, therefore, should help the survived Armenians, and in the first place – to tens of thousands of orphans.

J. Lepsius carefully saw to the peaceful process as well, which was supposed to have a crucial significance for the Armenian people. In 1923 he published his articles "The Armenian Issue in Lausanne" and "The situation in Armenia", where he stated that the politicians of great states, taking refuge in arrogant speeches about humanism and the defense of Christianity, in fact pursued purely self-serving material interests, "speaking of humanism, they have in mind their financial operations, and speaking of justice – the oil".

In 1924 – 1925 Lepsius focused upon the issue of that part of property of the slaughtered Armenians, which had been deposited in monetary form in the State Bank of Berlin.

Lepsius considered his top-priority task also the struggle against the Turkish falsifiers of history.

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՍՄԱՆԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Հ. ՓԱՓԱԶՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,  
պրոֆեսոր (ԱՄՆ)



Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում աշխատած տարիներին (1962–1992 թթ.) մեր գրադարանը սփյուռքահայ բարերարների նվիրատվությամբ ստանում էր տարբեր լեզուներով բազմաթիվ գրքեր, այդ թվում նաև օսմաներեն (արաբատառ հին թուրքերեն), տարեգրքեր, նույնիսկ՝ օրաթերթերի հավաքածուներ:

Նշեմ, որ գրադարանի վարիչն ստացված բոլոր օսմաներեն գրքերը պետք է տար ինձ, որպեսզի թարգմանի վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը և այլ անհրաժեշտ տվյալներ:

Մի անգամ ուշադրությունս գրավեց 1916 թ. Ստամբուլում հրատարակված մի սովոր նկարագարող հատոր, որում ընդգրկված էին հայերի կոտորածներին առնչվող նյութեր. վերնագիրն էր՝ «Հայ կոմիտեների հեղափոխական շարժումներն ու ծրագրերը» (*Ermeni komitelerinin amal ve harekati ihtilalyasi*):

Գիրքը լույս էր տեսել այն ժամանակ, երբ համաշխարհային հասարակայնությունը իրագեղ դարձավ հայ ժողովրդի հանդեպ իրագործած ցեղասպանությանը: Իր շարանեց գործունեությունն արդարացնելու նպատակով թուրքական կառավարությունը հրատարակեց այդ գիրքը՝ այնտեղ զետեղելով արևմտահայության հասցեին ամեն տեսակի գրպարտանք և խաբեություն: Այդ գրքում ցուցադրված բազմաթիվ նկարներից 32-ում պատկերված են զանազան զենքեր, որոնք, իբր, բռնագրավվել են հայ հեղափոխականների գաղտնարաններից:

Գրքի վերջում կան նաև մի շարք նկարներ, որոնք պատկերում են, իբր, կոտորածի ենթարկված թուրքերի դիակները: Սա ևս կեղծ է ու շինծու: Ահա, թե ինչ է գրում 1915 թ. հայկական կոտորածների ականատեսներից մեկը՝ ազգությամբ արաբ Ֆայեզ էլ Ղոսեյնը. «Թուրքական կառավարությունը հասկացավ, որ եվրոպական պետություններն առանց հապաղելու իրագեղ կդառնան հայ ժողովրդի ոչնչացմանը, և այդ լուրը կտարածվի աշխարհով մեկ՝ լարելով հասարակական կարծիքը թուրքերի դեմ: Այդ իսկ պատճառով, մեծ թվով հայերի կոտորելուց հետո, կառավարությունը հրահանգ է տվել իր գործակալներին՝ դիակներին քրդի հագուստ հագցնել, զլխներին չալմաներ դնել: Դրանից հետո զալխ էին թուրք կանայք, շրջապատում դիակները, սկսում լաց լինել ու բղավել, թե հայերը սպանել են իրենց ամուսիններին: Այդ ամբողջ տեսարանը նկարահանվել է, որպեսզի հետո ապացուցեն, թե հայերն են հարձակվել քրդերի վրա և սպանել նրանց, իսկ քրդական ցեղերը ոտքի են ելել, որպեսզի վրեժխնդիր լինեն, և որ կառավարությունը այդ ամենին ոչ մի մասնակցություն չի

ունեցել: Սակայն խելամիտ մարդիկ կռահեցին այս խաղը, և այն շուտով հայտնի դարձավ Դիարբեքիում»<sup>1</sup>:

Կարծում ենք, որ այսքանն էլ բավական է՝ հասկանալու համար, թե այդ ժողովածուն ինչ էր և ինչ հետին նպատակներ էր հետապնդում:

Իհարկե, հետագայում շարունակվեց Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը, և այդ նպատակով լույս տեսան բազմաթիվ գրքեր ու հոդվածներ: Վերջերս նույնիսկ տեղեկացա, որ Թուրքիայի 8-րդ դասարանի դասագրքերում հայերը ներկայացվում են որպես թուրքերին ու մահմեդականներին կոտորողներ: Իհարկե, ես շարունակաբար անդրադարձել եմ այդ հարցին և նույնիսկ առանձին գրախոսություններ ունեմ<sup>2</sup>:

Այսուհանդերձ արևմտահայության կոտորածների օրերին եղել են թուրք արդարամիտ գործիչներ, որոնք իրենց օսմաներեն հրատարակություններում ցավով հաստատել են այդ ծանրագույն ողբերգությունը: Ստորև ներկայացնում ենք քաղվածքներ նրանց գրքերից:

*Օսման Նուրի*, զինվորական, պատմաբան. «Անատոլիայից (իմա՝ Արևմտյան Հայաստան, խոսքը 1894–1896 թթ. կոտորածների մասին է – Ա Փ) հասած տեղեկությունները չափազանց աղետալի էին: Ջարդը շարունակվում էր սուկայի չափերով: Քաղաքային և զինվորական իշխանությունների տված հրամաններով քրդերը հարձակվել էին գյուղերի վրա, բայց հետ էին մղվել, ինչից հետո առաջացել էր զինվորական ուժեր ուղարկելու անհրաժեշտություն: Այն ժամանակ զինվորները այրել էին գյուղերը և կոտորել բազմաթիվ մարդկանց: Այդ ջարդը բոլոր պարագաներում մարդկության դեմ մի ահարկու եղեռն էր: Իսկ այս եղեռնի պատճառը, անկասկած, նույն Աբդուլ Համիդ Երկրորդն էր, որը ղեկավարում էր Յըլտըզի\* այդ հրոսակախումբը և կոտորում էր ոչ միայն հայերին, այլև դեպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը»<sup>3</sup>:

*Մեհմեդ Զյամիլ Փաշա*, 1884–1912 թթ. չորս անգամ վարել է մեծ վեզիրի պաշտոնը. «Լոնդոնում տեղի ունեցած մեծ ժողովներում հայերը արդարացվել են իրենց ապստամբության համար, իսկ Օսմանյան կայսրության պաշտոնյաները ենթարկվել են խիստ պարսավանքի: Հայերի ապստամբությունը գնահատվել է որպես վատ կառավարման և, հատկապես՝ կրոնական խտրականության պատճառով կառավարության կողմից հայերի հանդեպ ցուցաբերված դաժանության հետևանք»<sup>4</sup>:

<sup>1</sup> Տես «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու»: Խմբ. Մ. Գ. Ներսիսյան: Ե., 1991, էջ 491:

<sup>2</sup> Տես *Ավերիսի Փափագյան*, Պայքար հանուն արդարության, հ. Ա: Ե., 2003:

\* Բառացի նշանակում է «աստղ»: Այսպես էր կոչվում սուլթան Աբդուլ Համիդի նստավայր կառավարական շենքը (պալատ):

<sup>3</sup> Տես *Osman Nuri, Ahmet Refik*. Abdülhamid sani ve devr-i saltanati. Istanbul, 1911, ss. 828, 858:

<sup>4</sup> Տես «Hatrat-ı Sadr-ı Esbak Kamil Paşa». Istanbul, 1913, s. 181:

*Սայիդ Փաշա*, մեծ վեզիր. «Այս տարի (1896 թ.–*Ս Փ*) Համիդիե\* հեծելազորների զորախաղերի ծախսերը և նրանց ռոճիկը ապահովելու համար ռազմական նախարարությունը 35 հազար լիրա տրամադրելու գեկույց էր ներկայացրել: Ես չեմ հասկանում, թե այս տարի ինչ դրդապատճառներով է ցանկություն առաջացել անցկացնելու «Համիդիե» հեծելազորների զորախաղեր: Հայերի աղետից հետո Անատոլիայի դրությունը բավական բարդացել է, և եթե քրդերը իրենց այս տեղաշարժերով բնակչության ունեցվածքին և անասուններին սպառնացող նոր բռնություններ գործադրեն, ինչը ավելի հավանական է, դա առաջ կբերի մի նոր աղետ»<sup>5</sup>:

*Ջեյալ Նուրի*, իրավաբան. «Թուրքերի մի շարք վատ սովորություններ բնատուր են և զալիս են անցյալի վնասակար բնագրից: Մենք չունենք յուրայինների նկատմամբ ևս գթություն ցուցաբերելու հատկություն: Թուրքերը ոչ միայն հայերի կամ ուրիշների, այլև միմյանց նկատմամբ էլ դաժանություն են ցուցաբերում»<sup>6</sup>:

*Մեվլան Չարե Ռիֆաթ*, լրագրող, պատմաբան. ««Միություն և առաջադիմություն» կուսակցությունը որոշում էր կայացրել (1915 թ. – *Ս Փ*) ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով սպանել և ոչնչացնել հայերին: Այս հրամանը իրականացնելու համար նախագահությունն ստեղծեց Բեհաեդդին Շաքիր, Նազիմ և հանրակրթական նախարար Շյուքրյու Բեյերից կազմված մի հանձնաժողով՝ տալով «երեքի գործադիր կոմիտե» անվանումը»<sup>7</sup>:

*Վեհիբ փաշա*, թուրքական երրորդ բանակի հրամանատար (1915 թ.). «Հայերի նկատմամբ կատարված վայրագություններն ու կոտորածները, նրանց ունեցվածքի թալանն ու կողոպուտը որոշված էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից: Եվ այդ կոտորածների, ինչպես նաև բոլոր զազանությունների իրագործման համար Բեհաեդդին Շաքիր բեյը երրորդ բանակում պատրաստել էր հատուկ մարդասպանների և անձամբ ղեկավարել նրանց»<sup>8</sup>:

*Մուսթաֆա Նեդիմ*, Աբդուլ Համիդի քարտուղարներից. «Իմ տկար գրիչն անգոր է նկարագրելու Դեր Ջորի դեպքերն ու ոճիրները, նրանց նմանները չկան պատմության գրքերում և չեն էլ լինի: «Ալլահը ձեզ ներեց» ասելով՝ Եփրատի ափն անցկացրին քառասուն հազար դժբախտների և այնտեղ իսպառ կոտորեցին: Փոսը լցրին տասը հազարից ավելի երեխաների, նավթ թափեցին նրանց վրա և այրեցին: Աներևակայելի ոճրագործությունների մի շղթա»<sup>9</sup>:

*Նեմրութ Մուսթաֆա Նազիմ փաշա*, 1919 թ. կազմված Ռ-ազմական ատյանի

\* Մուլթան Աբդուլ Համիդի կողմից և նրա անունով կազմակերպված քրդական հեծելազոր, որը ստեղծվեց 1891 թ. հայերին ահաբեկելու նպատակով:

<sup>5</sup> *Said paşa'nın hatıratı*. İstanbul, 1912, c. 2, s. 372:

<sup>6</sup> *Cel al Nuri*. Tarihi Istikbal. İstanbul, 1915, s. 184:

<sup>7</sup> *Mevlan Zud Rifat*. Türkiye İnkilabının iç yüzü, c. I, Halep, 1929, s. 108:

<sup>8</sup> «Takvim-i Vekayi», 27 Nisan, 1919, № 3540 (թուրքական պաշտոնական թերթի հավելված):

<sup>9</sup> *Մուսթաֆա Նեդիմ*, Հայ եղեռնը, իմ վկայություններս: Օսմաներենից թարգմանեց Արշակ Ս. Շալչյանը: Գահիրե, 1925, Սոֆիա, 1936:

հանձնախմբի նախագահ. «Իրականությունն այն է, որ տեղահանության քողի տակ կոտորած են սարքել»<sup>10</sup>:

*Մուրաֆա Նազիմ բեյ*, 1919 թ. Ռ-ազմական ատյանի դատախազ. «Սահմանադրության հռչակումից հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցության թելադրանքով կատարված սպանությունները, ավերածությունները, վայրագությունները, չարաշահումները ծանր հետևանքներ բողեցին ժողովրդի վրա: Օսմանյան պետության համար մեծ աղետ եղան նաև Համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած արյունահեղություններն ու կոտորածները»<sup>11</sup>:

<sup>10</sup> Takvim-i Vekayi, 28 Nisan, 1919, № 3596:

<sup>11</sup> Նույն տեղում, 1919 թ. ապրիլի 27, հմ. 3540:

## ОБ ИЗДАНИЯХ НА ОСМАНСКОМ ЯЗЫКЕ, КАСАЮЩИХСЯ ГЕНОЦИДА АРМЯН

*А. А. ПАПАЗЯН, кандидат исторических наук, профессор (США)*

### РЕЗЮМЕ

В 1916 году в Стамбуле была издана иллюстрированная книга на османском языке с заголовком «Революционные движения и планы армянских комитетов». Турецкое правительство издало эту наполненную клеветой и ложными обвинениями в адрес западных армян книгу, чтобы оправдать свою преступную геноцидальную деятельность в их отношении. В конце книги помещены фотографии якобы убитых армянами турок. Один из очевидцев резни армян, араб Файез аль-Косейн, в 1915 г. писал, что турецкое правительство, дабы предотвратить обвинения в свой адрес со стороны международного сообщества, дало указание своим агентам надеть на трупы армян одежду курдов, после чего турецкие женщины стали оплакивать трупы, будто это – их мужья, якобы убитые армянами. Эта инсценировка была запечатлена на фотографиях, чтобы в дальнейшем можно было представить, будто армяне нападали на курдов, и те только мстили армянам, а правительство просто воздерживалось от вмешательства.

Тем не менее среди турок были и беспристрастные люди, которые в своих статьях, книгах, мемуарах на османском языке с болью констатировали факт этой ужасной трагедии, чему подтверждением служат представленные в статье цитаты из их трудов. В числе таких авторов Мехмед Камиль-паша (в 1884–1912 гг. 4 раза занимал пост Великого визиря), Мехмед Саид-паша (Великий визирь), Мехмед Шапур Челеби, Джелал Нури (юрист), Мевлан-заде Рифат (журналист, историк), Веиб-паша (командующий 3-й турецкой армией в 1915 г.), Мустафа Недим (секретарь султана Абдула Гамида), Немрут Мустафа-паша (председатель комиссии Военного трибунала, созданного в 1919 г.), Мустафа Назим-бей (прокурор Военного трибунала в 1919 г.).



THE PUBLICATIONS IN THE OTTOMAN TURKISH LANGUAGE  
CONCERNING THE ARMENIAN GENOCIDE

*A. H. PAPAŽIAN, PhD in History, Professor (USA)*

SUMMARY

An illustrated book in the Ottoman Turkish language titled "Revolutionary Movements and Plans of the Armenian Committees" was published in 1916 in Istanbul. The Turkish government issued that book full of slander and false accusations against the Western Armenians to justify their criminal genocidal actions targeted on them. The photographs of the Turks allegedly killed by the Armenians were featured at the end of the book. One of the eyewitnesses of Armenian massacres, Arab Fayež Al Koseyn, wrote in 1915 that the Turkish government in order to avert the accusations from the international community, had instructed its agents to put Kurdish clothes on the corpses of the Armenians, whereupon Turkish women began to mourn for the dead bodies as if they were their husbands allegedly killed by the Armenians. This make-believe was imprinted in the photographs for further misrepresenting as if the Armenians had attacked the Kurds and the latter ones were only retaliating against the Armenians, and the government simply refrained from intervening.

Nevertheless, there were impartial Turks who stated with a heavy heart the fact of this appalling tragedy in their articles, books, memoirs in the Ottoman Turkish language. Thus, the citations from their works given in this article are indicative of that. The following authors are among them: Mehmed Kâmil Pasha the Cypriot (he filled the office of Grand Vizier four times in 1884 – 1912), Mehmed Said Pasha (Grand Vizier), Celal Nuri İleri (lawyer), Mevlan Zadeh Rifat (journalist, historian), Vehib Pasha (the Commander of the 3rd Turkish Army in 1915), Mustafa Nedim (the Secretary to Sultan Abdul Hamid II); "Nemrud" Mustafa Pasha (the Chairman of the Ottoman Military Court – also called the "war tribunal of Nemrut Mustafa" – established in 1919), Dr. Mustafa Nazim Bey (Attorney to the Ottoman Military Court in 1919).

ԿԱՏԱՐԵՒԼ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ.  
ՃԱՆԱԶԵՒԼ ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2. ԳԱԼՅՈՆ, Իսրայելի Պետության Կենսետի պատգամավոր,  
«Մերեց» կուսակցության նախագահ



2015 թ. ապրիլի 24-ին աշխարհը կնշի հայ ժողովրդի Յեղասպանության՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանության հարյուրամյակը: Տարբեր երկրներում ապրող մարդիկ կվերհիշեն այդ հրեշավոր հանցագործությունը, երբ Օսմանյան կայսրությունում սրի քաշվեց մեկուկես միլիոն անմեղ հայ, հարյուր հազարավոր հայեր տանջանքի ենթարկվեցին և բռնի տեղահանվեցին: Տարեցտարի մեծանում է ցեղասպանությունը ճանաչած պետությունների թիվը: Ցավոք, այդ

ցուցակում չկա Իսրայելի Պետությունը:

Տարիներ շարունակ «Մերեց» խմբակցության ներկայացուցիչներ Յայիր Ցաբանը, Յոսի Սարիդը, Խայիմ Օրոնը և ես Կենսետի լիակազմ միտսի օրակարգ ենք մտցնում այդ պատմական իրադարձությունը պաշտոնապես ճանաչելու առաջարկությունը: Ես անկեղծորեն համարում եմ, որ այդ քայլը մեր պարտականությունն է: Իսրայելի խորհրդարանն այդ հարցում պետք է արտահայտի իր հստակ դիրքորոշումը: Դա հատկապես կարևոր է Իսրայելի կառավարության բարձրաձայն ու բազմամյա լռության պայմաններում:

Միանգամից նշեմ, որ հայերի Յեղասպանության ճանաչումը քաղաքական հարց չէ: Դա մեր բարոյական պարտքն է, որն ամենևին կապված չէ մեր քաղաքական համակարգի աջ կամ ձախ թևի հետ: Իմ քաղաքական ընդդիմախոսներ ՌԻԳԻ Լանդաուն, Բենի Բեգինը և Ռուվի Ռիվիլինը, որն այսօր զբաղեցնում է Իսրայելի Նախագահի պաշտոնը, քիչ ջանքեր չեն գործադրել այդ հարցն առաջ մղելու համար: Ես այդ փաստը նշում եմ այն պատճառով, որ չափից ավելի երկար տարիներ հայ ժողովրդի ողբերգությունը եղել է Իսրայելի արտաքին քաղաքականության գործիքներից մեկը: Մեր կառավարությունները գերադասում էին գոհաբերել զոհվածների հիշատակը՝ հանուն նեղ ու ցիմիկ շահերի: Իսրայելը նախընտրում է թուրքամետ դիրքորոշումը և հրաժարվում է ցեղասպանության փաստը ճանաչելուց:

Պետք է խստովանենք, որ ինձ համար բավական դժվար է հասկանալ, թե ինչու են թուրքերն առ այսօր հրաժարվում ողբերգության համար պատասխանատվությունն ստանձնելուց: Ես գիտակցում եմ նաև Թուրքիայի Հանրապետության հետ մեր դիվանագիտական հարաբերությունների կարևորությունը: Դրա հետ մեկտեղ, ես չեմ կարող ընդունել այն պատրվակները, որոնք անընդհատ օգտագործում է մեր կառավարությունը, թե իբր չկան «համապատասխան քաղաքական պայմաններ», «ի՞նչ կլինի ռազմավարական հարաբերությունների հետ», «դա պատմաբանների հարցն է» և այլն, և այլն: Այդ ամենի նպատակը մեկն է. խուսափել ճիշտ որոշում կայացնելուց: Բայց այդ ամենից էլ վատ են մեր կառավար-

րության և ամերիկյան հրեական կազմակերպությունների համատեղ փորձերը՝ խոչընդոտելու Հայոց ցեղասպանության ճանաչմանը, ինչի մասին գրում է պրոֆեսոր Յայիր Օրոնն իր «Ժխտում. Իսրայելը և հայերի Յեղասպանությունը» գրքում:

Հաշվի առնելով այդ ամբողջ ցինիզմը՝ ես՝ որպես Ռոջակիզում վերապրած մարդկանց դուստր, չեմ կարող լռել: Ես հավատում եմ, որ հրեա ժողովուրդը, որն անցել է զանգվածային բնաջնջման արհավիրքի միջով, հասկանում է Ռոջակիզման ժխտման հետևանքները և առ այսօր պայքարում է այդ երևույթի դեմ, պարտավոր է կարեկից լինել այլ ժողովուրդների ողբերգությունների հարցում: Դա մեր բարոյական պարտքն է:

*Մենք պետք է բարչրաշայն ասենք. Իսրայելը այլևս չի՝ մասնակցի հայերի Յեղասպանության ժխտման գործին:*

Դրանից ամենևին էլ չի հետևում, թե ես հավասարության նշան եմ դնում եվրոպական հրեության Ադետի և հայ ժողովրդի Յեղասպանության միջև: Չեմ կարծում, թե մարդկության ամբողջ պատմության ընթացքում եղել է որևէ մի իրադարձություն, որ նման լինի այն բանին, ինչ նացիստներն արեցին եվրոպական հրեության նկատմամբ: Սակայն մենք չենք կարող ժխտել փաստերը: Ժողովուրդների զանգվածային սպանություններ կատարվել են անցյալում ու, ցավոք, շարունակվում են նաև այսօր: Այդ իսկ պատճառով մենք, հիմնվելով մեր դատը փորձի վրա, պետք է զգոն լինենք, նախազգուշացնենք և միջազգային հանրության ուշադրությունը հրավիրենք ցեղասպանության ցանկացած դրսևորման վրա:

Մեր կառավարությունը փորձում է ամեն կերպ խանգարել այդ առաջարկության ընդունմանը, սակայն ես հույս չեմ կորցնում, որ շուտով Երուսաղեմում կհնչի հայ ժողովրդի ողբերգական պատմությունը:

«Մավի Մարմարա» նավի հետ կապված դեպքերից հետո Թուրքիայի հետ մեր հարաբերությունները վատթարացան, թեև վերջերս իրավիճակը շտկելու փորձեր են արվում: Ես համոզված եմ, որ դա մեր ռազմավարական շահն է, բայց դրա հետ մեկտեղ մենք մեր թուրք գործընկերներին պետք է հասկացնենք, որ Յեղասպանության ճանաչումը մարտահրավեր կամ սադրանք չէ:

Այդ քայլը հրեա ժողովրդի բարոյական պարտքն է:

## ИСПОЛНИТЬ МОРАЛЬНЫЙ ДОЛГ. ПРИЗНАТЬ ГЕНОЦИД АРМЯН!

*3. ГАЛЬОН, Депутат Кнессета Государства Израиль, председатель  
партии «Мерец»*

В 2015 году, 24 апреля, мир отметит столетие Геноцида армянского народа – первого геноцида XX века. Люди, живущие в разных странах, вспомнят это чудовищное преступление, когда в Османской империи были истреблены полтора миллиона ни в чем не повинных армян, сотни тысяч

замучены и депортированы. Число государств, признавших геноцид, с каждым годом увеличивается. К сожалению, в этом списке отсутствует Государство Израиль.

На протяжении многих лет представители фракции «Мерец» Яир Цабан, Йоси Сарид, Хаим Орон и я выносим на повестку дня пленарного заседания Кнессета предложение официально признать это историческое событие. Я искренне считаю, что этот шаг является нашей обязанностью. Израильский парламент должен озвучить ясную позицию в этом вопросе. Это особенно важно на фоне громкого и многолетнего молчания израильского правительства.

Сразу отмечу, что признание Геноцида армян – вопрос не политический. Это наш моральный долг, который никак не связан с правым или левым крылом нашей политической системы. Мои политические оппоненты, такие как Узи Ландау, Бени Бегин, Руви Ривлин, который сегодня занимает пост президента Израиля, приложили немало усилий к продвижению этого вопроса. Я отмечаю этот факт потому, что на протяжении слишком многих лет трагедия армянского народа служила одним из инструментов внешней политики Израиля. Наши правительства предпочитали принести память о погибших в жертву на алтарь узких и циничных интересов. Израиль предпочитает занимать протурецкую позицию и отказывается признать факт геноцида.

Должна признаться, что мне довольно сложно понять, почему турки до сих пор отказываются взять на себя ответственность за трагедию. Я также осознаю важность наших дипломатических отношений с Турецкой Республикой. Вместе с тем я не могу принять отговорки, которыми постоянно пользуется наше правительство, что «нет подходящих политических условий», «что же будет со стратегическими отношениями», «это вопрос для историков» и т. д. и т. п. Все это с одной целью – уйти от принятия правильного решения. Но хуже всего этого, как пишет об этом в своей книге «Отрицание – Израиль и Геноцид армян», профессор Яир Орон, являются совместные попытки нашего правительства и американских еврейских организаций подорвать признание Геноцида армян.

Учитывая весь этот цинизм, я, как дочь людей, переживших Холокост, не могу молчать. Я верю, что еврейский народ, прошедший через массовое уничтожение, понимающий последствия отрицания Холокоста и борющийся с этим явлением по сей день, обязан быть чувствительным к трагедиям других народов. Это наш моральный долг.

**Мы должны произнести это вслух: Израиль не будет больше принимать участие в отрицании Геноцида армян!**

Из этого вовсе не следует, что я ставлю знак равенства между Катастрофой европейского еврейства и Геноцидом армянского народа. Не думаю, что за всю историю человечества было событие похожее на то, что учинили

нацисты над европейским еврейством. Однако мы не можем отрицать факты. Массовые убийства народов происходили в прошлом и, к сожалению, продолжают и сейчас. Поэтому, основываясь на собственном горьком опыте, мы должны стоять на страже, предупреждать и привлекать внимание международного сообщества к любому проявлению геноцида.

Наше правительство пытается всячески помешать принятию этого предложения, однако я не теряю надежду, что вскоре в Иерусалиме прозвучит трагическая история армянского народа.

После событий, связанных с судном «Мави Мармара», наши отношения с Турцией сошли на нет, хотя в последнее время и делаются попытки поправить ситуацию. Я уверена, что это – наш стратегический интерес, но вместе с тем мы должны дать понять нашим турецким партнерам, что признание Геноцида не является вызовом или провокацией.

Этот шаг – моральный долг еврейского народа.

## TO DO ONE'S MORAL DUTY. TO RECOGNIZE THE ARMENIAN GENOCIDE!

*Z. GAL-ON, Member of the Knesset of the State of Israel, Chairperson of the Meretz political party*

### SUMMARY

On 24 April 2015, the world is celebrating the centenary of the Armenian Genocide – the first genocide of the 20th century. People living in different countries will remember this appalling crime, when one and a half million of innocent Armenians were exterminated, hundreds of thousands – tortured and deported in the Ottoman Empire. The number of states having recognized the genocide is increasing year by year. Unfortunately, the State of Israel is not in this list.

Over the years the representatives of the Meretz faction Yair Tzaban, Yossi Sarid, Haim Oron and the author have been bringing to the agenda of the plenary session of the Knesset the proposal to officially recognize this historic event.

To recognize the Armenian Genocide is not a political issue for Israel. According to the author, it is its moral duty, which has nothing to do with the right or left wings of Israel's political system. The author's political opponents, such as Uzi Landau, Benny Begin, Reuven Rivlin, the incumbent President of Israel, have made great efforts to promote the issue. The author points out this fact because the tragedy of the Armenian people has served as a tool of Israel's foreign policy for too many years. Its governments have

preferred to sacrifice the memory of the perished on the altar of narrow and cynical interests. Israel prefers to take a pro-Turkish stance and refuses to recognize the fact of the genocide. But the worst of all, as Professor Yair Auron writes in his "Denial: Israel and the Armenian Genocide" book, is the joint endeavors of the Israeli Government and American Jewish organizations to undermine the recognition of the Armenian Genocide.


"Given all this cynicism, – the author writes, – I can not remain silent as the daughter of Holocaust survivors. I believe that the Jewish people having passed through mass destruction, understanding the implications of the Holocaust denial and struggling against this phenomenon so far, ought to be sensitive to the tragedies of other nations".

After the events relating to the ship Mavi Marmara, Israel's relations with Turkey have simmered down, although attempts to remedy the situation have lately been made. "I'm sure, – the author writes, – it is our strategic interest, but at the same time we must give our Turkish partners to understand that the recognition of the Armenian Genocide is not a challenge or provocation. This step is the moral duty of the Jewish people".

## 100-ԱՄՅԱԿ ԺԽՏԱՄՄԲ ԵՆՔ ՄՏՆԵԼՈՒ

*Ռ. ՉԱՐԱԲՈԼՈՒՏ\*, քուրքական «Բեկզե» հրապարակչության հիմնադիր  
յրևօրեն, մարդու իրավունքների պաշտպան*

99-ամյակից հետո առաջին անգամ Թուրքիայի վարչապետը ապրիլի 24-ին պաշտոնական ուղերձ հղեց և իր ցավակցությունը հայտնեց 1915 թվականին մահացածների սերունդների կրած զրկանքների համար: Թեև ներդրության մասին խոսք չկար, համենայն դեպս, առաջին անգամ քուրք պետական գործիչը, մարդկային մոտեցում ցուցաբերելով, գոնե ցավակցություն էր հայտնում: Ես սա դիտում եմ որպես կարևոր սկիզբ, նույնիսկ եթե դա շարունակություն չունենա, ինչպես եղավ Դերսիմի կոտորածի համար՝ թեև ձևական, բայց՝ ներդրություն:



Ապրիլի 24-ի ոգեկոչման արարողությունները դարձել են աշխարհի կարևոր արարողություններից մեկը: Թուրքիայում վերջին տարիներին ոգեկոչման հնարավորություն էր ստեղծվել: Դրան սկիզբ դնելու համար պարտավոր ենք շնորհակալություն հայտնել Մարդու իրավունքների շարժմանը:

Այդուհանդերձ, ապրիլի 24-ին հայ մտավորականների կուլեկտիվ ձերբակալությամբ, և սկսված «գաման» գործողությունների (որոնց պրակտիկան և ազդեցությունը, ըստ էության, հասել են մինչև մեր օրերը), աշխարհի առաջին ցեղասպանության զոհերի ոգեկոչման՝ առաջին ոգեկոչման գործընթացի սկիզբը դրվելու էր Ստամբուլ քաղաքում: Ցեղասպանությունից հետո առաջին անգամ հավաքված հայ հասարակությունը 1919 թվականի ապրիլ ամսին հնարավորություն ստացավ զոհերին ոգեկոչելու 3 տարբեր եկեղեցիներում:

Մինչ տեղի էր ունենում ոգեկոչման այս արարողությունը, ցեղասպանությունից փրկված հայ գրող և հրապարակախոս Թեոդիկը տարածելու էր իր «Ապրիլի 11-ի (24-ի) հուշարձանը» վերնագրով գիրքը: Գրքում (որը կարևորություն է ներկայացնում նաև մարդու իրավունքների շարժման տեսանկյունից՝ որպես պատմության մեջ, թերևս, առաջին զանգվածային ձերբակալության և առանց դատավարության ոչնչացմանը վերաբերող փաստաթուղթ) հավերժացվել են կորած, զոհ գնացած հայ մտավորականների, գրողների, լրագրողների, բժիշկների, հրապարակախոսների, դեղագործների, գործարարների և համայնքի ընտրախավը ներկայացնող այլ մասնագիտության տեղ մարդկանց անունները: Այս գիրքը տպվել էր Օսմանյան կայսրության մայրաքաղաքում<sup>1</sup>:

\* Հեղինակը հայտնի է Հայոց ցեղասպանությանը նվիրված աշխատություններով: Նրա գիտական հետաքրքրությունների ոլորտում են հայկական և քրդական հարցերը: Հոդվածը քուրքերենից թարգմանել է սույն ժողովածուի գիտական խմբագիրներից՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Գ. Ավագյանը.–*Խմբ.*

<sup>1</sup> Տե՛ս Teotig. Monument to April 11. Ed. by Rita Soulahian Kuyumjian. Biography of Teotig. Gomidas Institute. London, 2010:

Մայրաքաղաքում տեղի են ունեցել և այլ բաներ: Օսմանյան խորհրդարանը, որի անդամ էր նաև Թալեաթ փաշան, իր համակարգում ստեղծել էր ցեղասպանության հետաքննության հանձնաժողով, պատրաստել էր զեկույց և քննարկումներ անցկացրել:

Մյուս կողմից՝ զինվորական դատարաններում սկսվել էր հայերի բռնագաղթի համար որոշ պատասխանատուների դատավարությունը, նրանք դատապարտվել էին, նույնիսկ նրանց պատիժներն էին ի կատար ածվել: Մինչդեռ հիմնական քաղաքական պատասխանատուները՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կառավարության անդամները, դատվում էին հեռակա կարգով, անգամ Թալեաթ, Էնվեր և Ջեմալ փաշաները դատապարտվել էին մահապատժի: Ավելի լայն մասշտաբով ցեղասպանության իրագործման մեջ կասկածվողները ձերբակալվել և նստեցվել էին բանտ, իսկ հետագայում անվտանգության նկատառումներով տեղափոխվել էին Մալթա կղզի: Սակայն այս «Թուրքական գարունը» երկար չէր տևելու<sup>2</sup>:

### ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Ստամբուլի վերջին սահմանադրական կառավարությունը առաջին համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի կառավարությունների նման սկզբում Անտանտի երկրների հետ կնքեց զինադադար: Հետագայում նա մասնակցեց Փարիզի խաղաղության պայմանագրի քննարկումներին, մի պայմանագրի, որը պետք է հաստատեր հետպատերազմյան նոր միջազգային համակարգը<sup>3</sup>: Իսկ վերջում ընդունեց ծանր պատիժներ նախատեսող Սևրի պայմանագրի պայմանները, ինչպես Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Բուլղարիան էին ընդունել ծանր պայմաններով հաշտության պայմանագրերը: Կային նաև այնպիսի հողվածներ, որոնք նախատեսում էին Հայաստանի և Քրդստանի ստեղծում:

Սակայն, քանի որ այդ ժամանակ դաշնակիցները գրավել էին Ստամբուլը և լուծարել խորհրդարանը, չկար մեջլիս, որ այն վավերացներ: Նոր մեջլիսը բացվեց Անկարայում բռնագավթումից մեկ ամիս անց և հայտարարեց, որ այս պայմանագիրը չի վավերացնի: Այսինքն՝ Սևրի պայմանագիրը ուժը կորցրել էր՝ դեռ չձևված:

«Իր ճակատագիրը որոշելու իրավունքը», որն այդ ժամանակաշրջանում միջազգային հանրության ամենասիրելի հասկացություններից մեկն էր, շրջանառության մեջ էր դրել ԱՄՆ-ի Նախագահ Վիլսոնը: Այս հասկացությունը ձևա-

<sup>2</sup> Տես *Vahakn N. Dadrian. The Documentation of the World War I Armenian Massacres in the Proceedings of the Turkish Military Tribunal. International Journal of Middle East Studies*, 1991, Vol. 23, Issue 24: Տես հատկապես Vartkes Yeghiayan. British Foreign Office Dossiers on Turkish War Criminals. La Verne, CA: American Armenian International College, 1991 (թուրքերեն քարգմանությունը *Vartkes Yeghiayan. Malta Belgeleri, İngiltere Dışişleri Bakanlığı çakı Türk savaş suçluları*) dosyası. İstanbul, Belge Yayınları, 2007):

<sup>3</sup> Տես *Margaret MacMillan. Paris 1919: Six Months That Changed the World. Ransom House, 2003*:



վորել էր նաև խորհրդային հեղափոխությունը և այս սկզբունքի դրոշի տակ իր շուրջը համախմբել տարբեր ազգերի: Այն, որ տվյալ սկզբունքը սահմանադրական դրույթ էր, հեշտացրել էր 1990-ական թվականներին խորհրդային հանրապետությունների կողմից իրենց անկախության հռչակումը:

Մակայն, չնայած այս սկզբունքի համընդհանուր ճանաչմանը, Ավստրո-Հունգարական և Օսմանյան կայսրությունների ժառանգության հիմքի վրա ազգային պետությունների ստեղծումը պետք է ամենաառաջին պլան մղեր «փոքրամասնությունների» հույժ ցավալի հարցը:

Օսմանյան կայսրության ժառանգության հիմքի վրա ստեղծված Թուրքիայի Հանրապետությունն իր միջազգային օրինականությամբ, իր ճակատագիրը որոշելու իրավունքով էր հիմնավորելու և պաշտպանելու՝ իրենց ճակատագիրը որոշելու թուրքերի իրավունքով, այն դրույթը, թե թուրքերն էլ էին կայսրության հալածվող ժողովուրդներից: Նույնիսկ մեկ քայլ առաջ կատարելով՝ նրա իշխանությունները հայտարարելու էին, թե քուրդ ժողովուրդն էլ է ներկայացուցիչ ունենալու, թե իրենք ինքնավարության ծրագիր ունեն, և այդ պատճառով պատերազմից հետո ստանալու էին Հայոց ցեղասպանության համար դատվելու վտանգից երկյուղած քուրդ առաջնորդների մեծամասնության աջակցությունը:

ՌԻստի Անկարայի կառավարությունը, որն իր ստեղծման հենց առաջին օրերից պաշտպանում էր «իրենց ճակատագիրը որոշելու թուրքերի իրավունքը», հենց որ փլուզված բազմազգ կայսրության նախկին հպատակները, բնիկ, տեղի ժողովուրդները պահանջեին այս իրավունքները, հայտարարելու էր, որ նրանք «փոքրամասնություններ» են և չունեն իրենց ճակատագիրը որոշելու իրավունք:

Որպես արդյունք՝ նույն աշխարհագրական տարածքի վրա իրենց իրավունքը պահանջող ժողովուրդների միջև սկսվելու էր արյունալի պայքար, որի մոխիրների վրա առաջանալու էր Թուրքիայի Հանրապետությունը:

Անկարայի կառավարությունը «հակաիմպերիալիստական» պատերազմ մղելու թեզով փորձում էր ապահովել խորհրդային աջակցությունը: Մյուս կողմից էլ՝ հմուտ դիվանագիտության միջոցով կարողացել էր Լոնդոն և Փարիզ հասցնել իր այն խոստումը, թե իրենք լինելու են Խորհրդային Միության և Անգլիայի ու Ֆրանսիայի գաղութատիրական կայսրությունների միջև բախարգելային (բուֆերային) պետություն:

«Հակաիմպերիալիստ» քեմալականները չկարողացան «մեկ համազարկով» ոչնչացնել Անթալիայում ափ իջած իտալական զորամիավորումները, Անատոլիայի հատվածներում ժամանակ առ ժամանակ ափ իջնող անգլիական զորամիավորումները կամ էլ Չանաքքալեի նեղուցի շրջակայքը և Ստամբուլը ռազմական վերահսկողության տակ վերցրած բազմազգ զորամիավորումները: Մակայն այն, որ Ֆրանսիան ցեղասպանությունը վերապրած հայերին հայրենիք վերադառնալու երաշխիք էր տվել, լեգեոններում հայերի հետ մեկտեղ ներգրավել էր նաև աֆրիկացիների, դարձավ «ազգային արժանապատվության» ընդլզման պատճառ: Նման զգացմունքների ընդլզման պատճառ դարձավ նաև այն, որ նախկինում հպատակեցված Հունաստանը զորք էր ափհանել Իզմիրում և հետ կանչել Եգեյան տարածաշրջանից վճռված հույներին: Թուրքական վերնախավն ստիպ-

ված էր համաճայնվել ապրելու այն ժամանակ «մոդայիկ» դարձած ամերիկյան մանդատի ներքո: Ռուսական կայսրության տարածքի վրա նոր ստեղծված Հայաստանի Հանրապետությունը պաշտպանության նկատառումներով նույնպես պատրաստ էր ընդունելու ամերիկյան մանդատը:

1922 թ. քաղաքացիական պատերազմում խորհրդային հեղափոխության՝ տարած հաղթանակը Անկարայի կառավարությանն ապահովեց լուրջ աջակցություն վերջնական հարձակման անցնելու գործում: 1919 թ. խորհրդային հեղափոխության դեմ Անգլիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի միջամտության փորձերն ավարտվեցին անհաջողությամբ: Մյուս կողմից՝ նրանք ստիպված էին դիմագրավել համակարգի դեմ ընդվզումներին հենց իրենց երկրներում<sup>4</sup>: Ամբողջ հետպատերազմյան Եվրոպան դրդում էր համընդհանուր գործադուլներից և ապստամբություններից: Հոգնելով առաջին համաշխարհային պատերազմից՝ հասարակական կարծիքը դեմ էր նոր պատերազմական արկածներին: Ֆրանսիան Սիրիայում խրվել էր արաբական ապստամբությունների ճահճի մեջ, Անգլիան էլ նույն խնդիրներին էր բախվել Իրաքում:

Կարճ ասած՝ ոչ ոք անհանգստացած չէր, թե ինչ ճակատագիր կամ ապագա են ունենալու Անատոլիայում կամ Միջագետքում հազարավոր տարիներ ապրած բնիկ ժողովուրդները: Ռազմաճակատներում քիմիական զենքի անողոք օգտագործումը, Ռուսաստանի քաղաքացիական պատերազմը և սովի ողբերգական հետևանքները Արևմուտքին ստիպելու էին աչք փակել հայերի, հույների, ասորիների, նեստորականների, քաղղեացիների վերապրած ողբերգության վրա, և նրան անտարբեր էին դարձրել Անկարայի կառավարության կողմից ցեղասպանության և էթնիկական զտումների քաղաքականության անխափան իրականացման նկատմամբ: Մինչդեռ նրանց միակ ակնկալիքն արդեն այն էր, որ գտնվի մի «հայրենիք», որտեղ իրենք կարողանան ապրել՝ կոտորածներից ապահով:

Միևնույն ժամանակ, այն առավելագույնը, ինչ նրանք բոլորը կարող էին ստանալ Արևմտյան տերություններից, գաղթողների քվոտաների ավելացումն էր: Բացի այդ, կար արական սեռի բնակչության կորստի պատճառով աշխատուժի կարիք (ցեղասպանությունից հետո ողջ մնացածները Անկարայի կառավարության օրոք երկրորդ անգամ ենթարկվեցին սպանդի և տեղահանվեցին: Դրա հետևանքով, քանի որ Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի քվոտաները լրացված էին, ահագնացող գաղթի ալիքի համար արդեն միակ այլընտրանք էին մնացել Լատինական Ամերիկան և Ավստրալիան):

1919 թվականին Նախագահ Վիլսոնը, որը Փարիզ էր եկել՝ տոգորված «իր ճակատագիրը որոշելու ռոմանտիզմով», այնտեղից վերադառնալու էր՝ մեծ հուսախաբություն ապրած: Փարիզի խաղաղության խորհրդաժողով պատվիրակություններ ուղարկած հայերը, քրդերը և ասորիները փորձում էին այդ խառնաշփոթի մեջ իրենց ցավի մասին պատմել տարբեր պետությունների պատվիրակությունների, մինչդեռ անգլիացիներին այլ բան չէր հետաքրքրում, քան գերմանացիներին ու հունգարացիներին ծանր պատժի ենթարկելը և թալանից ստացված իրենց մասնաբաժինը պաշտպանելը:

<sup>4</sup> Տես *David Mitchell*. 1919: Red Mirage. London, 1970:

«Իր ճակատագրի սկզբունքի» խախտմամբ նոր սահմանները գծվել էին հունգարացիների և ալբանացիների հաշվին Ռումինիայի և Հարավսլավիայի տարածքների արհեստական ընդարձակմամբ, և այս նոր պետությունները խրվել էին այդ պահին լայն տարածում ստացած «փոքրամասնությունների իրավունքների» խնդիրների մեջ:

#### ԱՌԱՋԻՆ «ՀԱՂԹԱՆԱԿԸ» ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎՈՒՄ

Գաշնակիցները գաղտնի կերպով հավանություն էին տվել արևելքում օսմանցիների միակ կազմակերպված բանակի հաստատվելուն, որովհետև այնտեղ անհրաժեշտություն կար Խորհրդային հեղափոխության տարածման վտանգին դիմագրավող ուժի:

Գեներալ Քյազիմ Կարաբեքիրի կազմակերպված զորամիավորումները, որոնք հետագայում դառնալու էին Անկարայի կառավարության միակ կազմակերպված բանակը, փորձելու էին պարտության մատնել նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը և 1920 թ. դեկտեմբերին նրան ստիպելու էին ընդունել խաղաղության ծանր պայմանները: Ըստ էության, մեկ օր անց այնտեղ Խորհրդային Հանրապետություն էր հաստատվելու, և Անկարայի կառավարության ու Խորհրդային Միության միջև 1921 թ. ստորագրված Մոսկվայի պայմանագիրը հավանություն էր տալու նաև դրան: Մոսկվան դեռ վաղուց՝ 1918 թ. Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, Թուրքիային էր զիջել Ռուսական կայսրության մարզեր համարվող Կարսը և Արդահանը, որոնց բնակչության 49 %-ը հայ էր: Իսկ սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Անատոլիայում տեղի ունեցած ցեղասպանության տեղափոխում Կովկաս: Եթե երկրորդ համաշխարհային պատերազմից հետո խորհրդային կառավարությունը կարողացել էր հաջողությամբ ավարտին հասցնել հեղափոխության ծանր տարիներին Լեհաստանին, Ռումինիային, Չեխոսլովակիային և Ֆինլանդիային զիջած լրացուցիչ բոլոր տարածքների վերադարձը, ապա Թուրքիան Բրեստ-Լիտովսկի պայմանագրով չէր կարողանալու վերադարձնել «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության ամունից» զիջած Կարս-Արդահանը, որովհետև «խորհրդային սպառնալիքից» պաշտպանվելու պատրվակով Թուրքիան Հունաստանի հետ հապճեպորեն մտել էր Արևմուտքի հովանու տակ:

1921 թվականին «հայկական սպառնալիքի» չեզոքացումից անմիջապես հետո նորաստեղծ Թուրքիայի կոմունիստական կուսակցության առաջնորդներն սպանվելու էին նախկինում հայերի սպանում դեր խաղացած անձանց՝ Կարաբեքիր-Անկարա համագործակցության միջոցով, Մեջլիսի փոքրաթիվ կոմունիստ պատգամավորները ձերբակալվելու էին, ձախակողմյան «Կանաչ բանակ» կոչվող աշխարհահազորայինների և պարտիզանական ջոկատների խառնուրդը ոչնչացվելու էր: Անկարայի կառավարությունը ցանկանում էր այդ նույն թվականին Լոնդոնում (Անգլիա) մեկնարկող բանակցություններին մեկնել՝ չունենալով որևէ «ձախության» պիտակ: Մինչդեռ Ֆրանսիան առաջին եվրոպական պետությունն էր, որը պաշտոնապես ճանաչել էր Անկարան՝ պայմանով, որ նա դադարեցնելու է իր աջակցությունը արաբական ապստամբությանը:

1921 թվականն այն տարին էր, երբ վերսկսվելու էր հույների և ողջ մնացած հայերի բռնագաղթը: Թեև 1919 թվականի սկզբին Մուստաֆա Քեմալն ընդունել էր հայերի սպանդի նկատմամբ քննադատական դիրքորոշում, նույն տարվա մայիս ամսին «հույների» անվտանգության խնդիրները լուծելու առաջադրանքով Սամսուն ուղարկվելուց հետո իր անվտանգությունն ապահովելու համար որպես իր թիկնազոր էր նշանակելու Թոփալ Օսմանի զինված զորաջոկատները: Հայերի կոտորածներում զգալի դեր խաղացած Թոփալ Օսմանն այդ ժամանակ զբաղված էր հիմնականում հունական գյուղերի վրա հարձակումներով, մարդկանց սպանություններով և տեղահանությամբ: Իսկ 1921 թվականին Կենտրոնական բանակի հրամանատար Սաքալը Նուրեդդին փաշայի հետ Պոնտոսի և Կոչգիրի շրջաններում կարևոր դեր էր խաղալու հույների և ալևի քրդերի դեմ ձեռնարկված բռնություններում: Այս բռնությունները քննադատելու էր նույնիսկ Անկարայի մեջլիսը:

Իսկ ֆրանսիացի լեգեոնականները Մարաշում, Ռերֆայում, Կիլիկիայում և Այնթափում հազիվ էին դիմադրում «Թեշքիլաթի-մահսուսայի» (Հատուկ կազմակերպություն)՝ անկազմակերպ միավորումների հարձակումներին, որովհետև արաբական ապստամբությունների պատճառով թիկունքն էլ անվտանգ չէր:

Անկարայի կառավարությունը արևմտյան պետության՝ Ֆրանսիայի հետ առաջին դիվանագիտական պայմանագիրը կնքել է 1921 թվականի հունիսին: Ֆրանսիան ցեղասպանությունը վերապրածներին կոչ էր անում վերադառնալու իրենց հայրենիք, իսկ այժմ էլ նրանց միայնակ էր թողել, ինչպես որ 1919 թվականին անգլիացիներն էին վարվել հայերի և հույների նկատմամբ... Փարիզի խորհրդածողովից հետո (1919 թվականի ապրիլի 13) Անգլիան զորք էր ուղարկել Կարս և քաղաքը հանձնել Հայաստանի Հանրապետության զինված ուժերին: Անգլիան աջակցել էր, նույնիսկ պահանջել էր, որ 1919 թվականի մայիսի 15-ին Հունաստանի բանակը Իզմիրում ափ իջնի: Մյուս կողմից՝ Ստամբուլի անգլիական իշխանությունները հավանություն էին տվել, որ սուլթան Վահիդեդդինը գեներալ Մուստաֆա Քեմալին ուղարկի Արևելյան Սևծովյան տարածաշրջան՝ «նրան լիազորելով լուծել անցյալում մնացած Հատուկ կազմակերպության խմբավորումների բռնությունների դեմ» իրենց բողոքի ձայնը բարձրացնող «հույն և ոչ հույն բնակչության խնդիրները և պահպանել հասարակական կարգը»: Հետագայում փաշայի Սամսուն մտնելու օրը՝ մայիսի 19-ը, ընդունվելու էր որպես պետական տոն, միևնույն ժամանակ, Պոնտոսի հույների կողմից նույն օրը հռչակվելու էր որպես սգո և Պոնտոսի ցեղասպանության հիշատակման օր:

1921 թվականին Անգլիայի հետ սկսված դիվանագիտական բանակցությունները, Մոսկվայի պայմանագիրը, ֆրանսիացիների հետ համաձայնությունը նշանակում էին, որ թղթի վրա Մեծ Հայք և Փոքր Հայք ստեղծող 1920 թ. Սևրի պայմանագիրը մեկ տարի չանցած նետվել էր աղբարկղ: Խելահեղ 1919 թվականին Անկարայում մոդայիկ էր կարմիր գլխամասով փափախ հագնելը: Ռուսաստանում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմում Խորհրդային հեղափոխությանը ցույց տրվող դիմադրությունը մեծ հույսեր էր ներշնչում ցարական գեներալներին և օտարերկրյա միջամտողներին: Այնպես, ինչպես երկրորդ հա-

մաշխարհային պատերազմում Ստալինգրադի ճակատամարտը հույսեր էր արթնացրել ամբողջ Եվրոպայում: Սակայն 1921 թվականին «սպառնալիք» էին Կարմիր բանակի հետ սահմանակից լինելը և երկրի ներսում բոլշևիկների նկատմամբ առաջացած համակրանքը:

Անկարայի համար ժամանակն էր կողմնորոշումը փոխելու դեպի Արևմուտք: Սակայն 1922 թվականին, երբ անտարբեր դաշնակիցների նավատորմի աչքի առաջ թուրքական բանակը ներխուժել էր Եգեյան շրջան և Իզմիրի քաղաքացիական բնակչության հետ այրել էր Իզմիրը, չէր կարելի անտեսել նաև թիկունքից խորհրդային աջակցությունը:

Հետևաբար, Թուրքիայի տեսանկյունից, առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց ոչ թե 1918 թվականին, այլ 1922 թվականին, և դա ամրագրվեց 1923 թ. Լոզանի պայմանագրով: Որպես արդյունք՝ Թուրքիան հայտնվեց առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակ տարածների շարքում: Իսկ Հայաստանն ու Հունաստանը տանուլ տվեցին՝ թեև գործում էին պատերազմից հաղթանակով դուրս եկած դաշնակիցների հետ: Սա ինչ-որ առումով կարելի է նմանեցնել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո լեհերի ճակատագրին: Երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվել էր «Լեհաստանը փրկելու» համար: Սակայն այն ավարտվեց «Լեհաստանի պարտության»: Ոչ ոք չհարցրեց, թե լեհերն ինչ էին ուզում, ինչպես որ Հունաստանի և Թուրքիայի միջև որպես գերիներ փոխանակված Անատոլիայի քրիստոնյաներին և Բալկանների/Կրետեի մահմեդականներին չհարցրեցին, թե արդյոք նրանք ուզում են թողնել իրենց հայրենիքը: Կամ ինչպես Արևելյան Պրուսիայի կամ Բոհեմիայի գերմանացիներին չէին հարցրել, թե որտեղ են նրանք ուզում ապրել:

### ՇԱՏ ԼԱՎ. ԻՄԿ ԱՐԳԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան կայսրության կառավարությունը դեռ 1916 թվականին ֆրանսերենով արած իր հայտարարությամբ ոչ միայն ընդունել էր Արևմտյան Հայաստանում կամ Արևելքում տեղի ունեցող մարդկային ողբերգության փաստը, այլև բոլոր իրադարձությունների համար պատասխանատվությունը դրել էր հայ հեղափոխականների վրա: Կայսրությունների և ազնվականների այդ դարաշրջանում «հեղափոխական» հասկացությունը հավասարագոր էր այժմյան «սահաբեկիչ» արտահայտությանը, որը կարելի էր ամեն կերպ մեկնաբանել:

Իհարկե, հայ հեղափոխականները, լինեն սոցիալ-դոմոկրատներ, թե ՀՀԴ-ն, թիկունքում կատարած իրենց գործողություններով պատճառ են դարձել հայ քաղաքացիական բնակչության՝ տարածաշրջանից զանգվածային գաղթին, այսինքն՝ տեղահանությանը: Պատերազմը և կլիմայական պայմանները, համաճարակները, տարածաշրջանում կարգուկանոն չլինելը քաղաքացիական բնակչության սպանդի հիմնական պատճառն էին, իսկ սրա համար պատասխանատուն այս տեղահանությունը հրահրած հայ հեղափոխականների գործունեությունն էր: Համենայն դեպս, թուրքական պետության հայտարարություններն ավելի դիվանագիտական էին, և նա պատասխանատվությունը դնում էր ոչ թե հայերի, այլ հեղափոխականների վրա: Սակայն հետագայում պաշտոնական

պատմագրությունը հայերին հայտարարել էր զանգվածաբար դավաճաններ և ասել, թե նրանք արժանի էին այս սպանդին:

Շատ լավ. իսկ ո՞րն էր հայ հեղափոխականների դիրքորոշումը: Մինչև 1914 թ. ՀՀԳ-ն ընտրություններում դաշինքի մեջ էր իշխող «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ: Իսկ 1914 թ. Ռուսաստանի և Գերմանիայի հովանու ներքո ստորագրված «Հայկական բարեփոխումների» մասին բանակցությունները հիմնականում տեղի էին ունենում երկու կուսակցությունների միջև: Սակայն երկու կուսակցությունների միջև առաջին լարվածությունը և առճակատումը նույնպես տեղի ունեցավ այս գործում: Ավելի ուշ՝ 1914 թ. սեպտեմբերին, «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, իր ներկայացուցիչներին ուղարկելով Էրզրումում տեղի ունեցած ՀՀԳ ընդհանուր ժողովին, խոստացել էր, որ եթե նրանք ապահովեն Կովկասում ապագա պատերազմի ժամանակ Ռուսաստանի հայերի ընդվզումը, իրենք հետագայում կճանաչեն նրանց ինքնավարությունը: ՀՀԳ-ն, որը սահմանի երկու կողմում գործող կուսակցություն էր, հայտնվել էր ծանր կացության մեջ: Կուսակցության ռուսաստանյան ղեկավարները բանտարկված էին 1905 թ. հեղափոխության ժամանակ իրենց գործունեության համար: Հստակ էր, որ պատերազմը լինելու է պատմական Հայաստանի տարածքում: Նրանք ջանում էին համոզել «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը՝ չմասնակցել պատերազմին: Հետագայում նրանք որոշեցին կյանքի կոչել իրենց անդամակցած Սոցիալիստական ինտերնացիոնալի ընդհանուր քաղաքականությունը: Իրենց քաղաքացիական պարտքը կատարելով՝ բոլորը բանակ էին մտնելու: Այդ պատճառով հետագայում Հայոց պատրիարքարանի հետ համատեղ օսմանահայ համաքաղաքացիներին կոչ արեցին կատարելու իրենց զինվորական պարտքը:

«Միություն և առաջադիմություն» կուսակցությունը կարծում էր, որ Օսմանյան կայսրության ծանր ժամանակներում հայերը, որոնք որպես մոդել վերցրել էին Բալկանյան երիտասարդ պետությունների առաջացումը, այս բարեփոխումների ծրագիրը պահանջում էին ինքնավարություն, հետագայում նաև անկախություն ստանալու համար: ՌԻստի և վախենում էր արդեն օրինականորեն բաց կուսակցություն համարվող ՀՀԳ-ու ժից:

Իսկ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության անդամ հայերը «Միություն և առաջադիմություն» կուսակցության դեմ դաշինք էին կազմել ինքնավարության կողմնակից Օսմանյան ազատական ընդդիմության և փոքր սոցիալիստական կուսակցության հետ: Այս ընդդիմադիր բոլոր նույնիսկ հայտնի հնչակյան հեղափոխական Փարամազին և նրա ընկերներին աքսորում գտնվող ընդդիմադիր քուրդ փաշա Շերիֆի աջակցությամբ Փարիզից ուղարկել էր Ստամբուլ, որպեսզի նրանք «դավադրություն» կազմակերպեն պետական հեղաշրջման միջոցով իշխանության եկած «Միություն և առաջադիմություն» կուսակցության (այսօրվա տերմիններով՝ խունտայի) դեմ: Սակայն հենց որ նրանք Ստամբուլ ժամանեցին, լավ հետախուզական ցանց ունեցող Հատուկ կազմակերպությունը նրանց ձերբակալեց: Անօրինական արարք կատարելու համար մինչև հինգ տարի ազատազրկման դատապարտված այս խումբը 1915 թվականի

հունիսին, երբ Անատոլիայում սկսվելու էր զանգվածային տեղահանությունը, Ստամբուլի հայտնի Հյուրրիեթ (Բայազիդ) հրապարակում խմբային մահապատժի էր ենթարկվելու: Հունիս ամիսը միևնույն ժամանակ այն ամիսն էր, երբ ապրիլի 24-ին Ստամբուլում խմբային ձերբակալության ենթարկված և Անկարայի մերձակայք քարտրված հայ մտավորականները այսպես կոչված Դիարբեքիրի զինվորական դատարանի վճռով «դավաճանության» մեղադրանքով ճանապարհ էին ընկել, սակայն Հատուկ կազմակերպության խմբավորումները նրանց փոքրիկ խմբերին տարբեր վայրերում սրի էին քաշել:

Ապրիլի 24-ին հայ համայնքի չձերբակալված քաղաքական առաջնորդ, պատգամավոր, գրող և միևնույն ժամանակ օսմանյան բարեփոխումների օրենքները մշակողներից մեկը, Թալեաթ փաշայի հետ միևնույն Մասունական օթյակի անդամ, նույնիսկ նրա հետ նարդի խաղացող գիտնական Ջոհրապը և նույնպես պատգամավոր Վարդգեսը այդ ընթացքում ձերբակալվել էին և իբր դատավարության համար Դիարբեքիր տեղափոխվելիս ՌԻՌՖայի մոտակայքում գազանաբար սպանվել էին Հատուկ կազմակերպության մի խմբավորման կողմից, որի հրամանատարն էր 1912 թվականին ճանաչված թուրք լրագրողի սպանության համար պատասխանատու, հայտնի մայրը Չերքես Ահմեդը:

Այս դեպքը արձագանք ստացավ նաև Օսմանյան խորհրդարանում: Թալեաթ փաշան ապտակեց խորհրդարանում դրա դեմ բողոքող և «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղափարական հիմնադիր Ջոհրապին հարգանքի տուրք մատուցել ցանկացող Ահմեդ Ռ-իզա բեյին, որը սենատի նախագահն էր: Այս աղետից փրկվել էր միայն Բադդադ քարտրված, կրոնական գործադիր խորհուրդը ցրած Հայոց պատրիարք Ջավենը: Փրկվածներից մեկն էլ Գերմանիայում աստվածաբանության դոկտորանտուրայում սովորող Գրիգոր Բալաքյանն էր: Սա էլ անհրաժեշտ պահին կարող էր դիտարկվել որպես փաստարկ, որ նա (Ռ-իզան) շատ էլ լավ կարող էր խանգարել հանցագործություններին: Քանի որ դրանց վերաբերյալ «կողավորված» հրաման չէր տրվել:

Իսկ Չանաքքալեի ճակատամարտերն Ստամբուլը գցել էին խելահեղության մեջ: Մայրաքաղաքում վախենում էին հայկական ապստամբությունից: Դաշնակիցների նավատորմի՝ Ստամբուլ մտնելու սպառնալիքի ներքո նախարարությունները և նմանատիպ կառույցներ նույնիսկ սկսել էին տեղափոխվել Կոնիա: Մարտի 18-ին՝ դաշնակիցների նավատորմի պարտությունից հետո, այն համոզմունքը կար, որ հայ մտավորականների կոլեկտիվ ձերբակալության և Ստամբուլից հեռացնելու համար այլևս ոչ մի խոչընդոտ չի մնացել: Երբ Չանաքքալեի ճակատամարտերը տեղի էին ունենում արդեն ցամաքում, Անատոլիայում հապճեպորեն շարունակվում էր հայերի տեղահանությունը: Անատոլիայի բոլոր հատվածներում ստամբուլյան ձերբակալության նման կոլեկտիվ ձերբակալությունների թիրախ դառնում էին մտավորականները և կրոնական առաջնորդները: Վանում հաջողությամբ էր պսակվել դավադրությունը հայ առաջնորդների դեմ, սակայն դա այնտեղ դիմադրություն էր բորբոքել: Մահմանային քաղաք լինելը հնարավորություն էր տալիս ցեղասպանությունից ավելի շատ մարդկանց փրկվելու: Մակայն սահմանից հեռու գտնվողների դիմադրելու

հնարավորությունները քիչ էին: Իսկ Շապին Գարահիսարի և Ուրֆայի դիմադրություններն էլ որոշ դեպքերում ճնշում էին գերմանական հրամանատարության տակ գտնվող զորամիավորումները: Մինչդեռ մուսալեռցիները, ծովին մոտիկ գտնվելու շնորհիվ, կարողացել էին ֆրանսիական նավերով տարահանվել:



Ռ. Զարաքույուն, ելույթ ունենալով ԱՄՆ-ի Կոնգրեսում  
Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառման ժամանակ,  
կոչ է անում ԱՄՆ-ին՝ պաշտոնապես ընդունելու Յեղասպանությունը  
և վերջ դնելու Թուրքիայի կողմից մերժման քաղաքականությանը.

2014 թ. ապրիլի 9

Հայոց ցեղասպանությունը նորագույն ժամանակաշրջանի՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր: Նորագույն ժամանակաշրջանի հնարավորությունները, ինչպիսիք են հեռագրությունը և գնացքը, լայնորեն կիրառվում էին դրա իրականացման գործում, ինչպես որ առաջին համաշխարհային պատերազմը զանգվածային ոչնչացման զենքերի լայն կիրառման առաջին օրինակն էր... Դա ինչ-որ ձևով նորագույն ժամանակների «հոգու» արտացոլումներից մեկն էր: Սակայն վատության, չար ոգու արտացոլումը: Ժամանակակից տեխնոլոգիաների հետ ռազմատենչության ու ազգայնամոլության համատեղումը մարդկության համար ունեցել է շատ ծանր հետևանքներ:

Այդուհանդերձ, արդիականության առաջ բերած արագ զանգվածային հեռահաղորդակցման հնարավորությունը Հայոց ցեղասպանությունը դարձրել է տեսանելի: Ըստ էության, ամբողջ աշխարհը առանց հապաղման կարող էր հետևել Հայոց ցեղասպանությանը, ինչպես նույն քայլերով իրականացված Ողջակիզմանը: Սակայն աշխարհի տարբեր խմբեր «չեմ տեսել, չեմ լսել» էին խաղում և չէին խոսում: Հայոց ցեղասպանության վերաբերյալ «Նյու Յորք Թայմսը» հրապարակել է մոտ 300 լրատվություն: Այն ժամանակ չկար մարդու իրավունքների պաշտպանության ցանց, սակայն, միևնույն ժամանակ, մարդասիրական թև ունեցող միսիոներական ցանցը փորձում էր խուլ ականջներին լսելի դարձնել տեղի ունեցող համամարդկային ողբերգությունը: Բարեխիղճ վկաները տեղեկացնում էին այն ժամանակ անկողմնակալ ԱՄՆ-ի հյուպատոսությանը և խնդրում, որ գոնե ինչ-որ մեկը միջամտի: Բեռլինը ականջալուր չէր լինում գերմանացի հոգևորական դոկտոր Լեփսիուսի կոչերին: Նույնիսկ հե-



տագայում Հիտլերի ընկերը դարձած Շոյբները, որը նացիստական շարժման առաջին մեծ «նահատակն» էր, փորձում էր տեղեկացնել Էրզրումում տեղի ունեցող բարբարոսության մասին և ակնկալում էր, որ Բեռլինը կասի՝ դադարեցրե՛ք: Բեռլինի միակ միջամտությունը Պաղեստինից տեղահանվելիք հրեաների համար էր: Որովհետև ռազմական տեսանկյունից նրանք նույնպես ուզում էին, որ Արևելյան Անատոլիան «դատարկվի»: Բացի այդ, ո՛վ գիտի, գուցե մի օր Բեռլին–Բադոնադ երկաթգծի շրջակայքում գերմանական գաղութ լիներ: 1916 թվականին ռուսներն էլ էին գոհ մնացել այդ տարածքների դատարկումից, բայց չէին սկսել տարածաշրջանի՝ Վոլգայի կազակների միջոցով գաղութացումը: Ի վերջո, գաղութացում տեղի ունեցավ, սակայն ոչ այդպես: Տեղի ունեցավ Բալկաններից վռնդված ծագումով թուրք կամ ոչ թուրք բալկանյան մահմեդականների գաղութացումը, ձուլումը և նրանց միջոցով թուրքական ազգի և ազգային պետության կառուցումը: Իսկ հայերին և քրդերին չհաջողվեց այս կառուցման գործում ամբողջությամբ ձուլել: Սա էլ լինելու էր թուրքական ազգային պետության մշտապես արյունահոսող վերքը և հող էր նախապատրաստելու հնարավոր նոր ցեղասպանության համար:

Ի՞նչ մոտեցում ունեւ «քաղաքակիրթ» աշխարհը առաջին «ցեղասպանության» օրինակի նկատմամբ, որին կարելի էր հետևել աշխարհի մասշտաբներով: Սկզբում սա վախ, հետո էլ լավ հնարավորություն էր տալու պատերազմական քարոզչության համար: Իրոք, կարելի է ասել, որ Հայոց ցեղասպանության առաջացրած վախը, դրանից հետո Եվրոպայում սկսված զանգվածային ոչնչացման զենքի օգտագործումը, սուզանավային հարձակումների հետևանքով գերմանական ագրեսիայի առաջացրած սպառնալիքի ավելի շոշափելի դառնալը այն գործոններն էին, որոնք ազդեցին առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելու ԱՄՆ-ի որոշման վրա: Իհարկե, նաև այն, որ Ռուսաստանում տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխությունը թուլացրել էր արևելյան ռազմաճակատը:

Երբ 1915 թվականին քննարկվում էր տեղի ունեցող և որպես նոր երևույթ ի հայտ եկած այս նախացեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը, երբ սկզբում առաջարկվել էր այն ճանաչել որպես «հանցագործություն քրիստոնեության դեմ», գաղութային կայսրությունները հրաժարվելու էին դրանից, քանի որ նրանց բնակչության մի զգալի մասը մահմեդականներ էին: Հայտնի է, որ գերմանացիներն էլ ուզում էին, որ Օսմանյան կառավարությունը ջիհադ հայտարարի, որպեսզի այս գաղութային ժողովուրդներին ապստամբության հրահրի, ինչպես նաև, որ այս ապստամբությունները ղեկավարելու համար գերմանական հատուկ ծառայությունները Հատուկ կազմակերպության հետ վարում էին համատեղ աշխատանք: Որպես քարոզչություն բաժանվում էին Վիլհելմ 2-րդի՝ ֆեսով նկարները, նույնիսկ լուրեր էին տարածվում, թե նա «ծպտյալ մահմեդական» է: Աշխարհիկ «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը որպես կրոնական գործիք օգտագործելու հետևանքով Հայոց ցեղասպանությունն ստացավ ավելի դաժան բնույթ, և այդ երևույթն ընդգրկեց ոչ միայն հայերին, այլև ասորիներին, քաղղեսցիներին, նեստորականներին, տեղ-տեղ՝ նույնիսկ արաբ քրիստոնյաներին, Քրդստանի եզդիներին և հրեաներին:

Հենց որ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը գերմանական միլիտարիզմի հետ համագործակցությամբ ձեռնամուխ եղավ մահմեդականությունը որպես «զենք» օգտագործելուն, անգլիացիները ավելի լավ բան ձեռնարկեցին՝ ապստամբության դրդեցին Մուհամեդ մարգարեի հետևորդ Մեքքայի էմիրին: Միևնույն ժամանակ, Մեքքայի էմիրը ջիհադի մասին ֆեթվան (հրովարտակ) չեղյալ հայտարարող ֆեթվա արձակեց, մասնավորապես՝ մահմեդական կրոնի անունից դատապարտեց Հայոց ցեղասպանությունը:

Որպես արդյունք՝ դաշնակիցները ճանաչեցին հայերի դեմ սկսված զանգվածային ոչնչացման քաղաքականությունը որպես ոչ թե հանցագործություն ինչ-որ խմբի կամ կրոնի դեմ, այլ ընդհանրապես «մարդկության դեմ իրականացված հանցագործություն», և հանձն առան պատերազմից հետո դատելու դրա համար պատասխանատուներին:

Մարդկության ապագայի տեսանկյունից սա ծայրաստիճան կարևոր հայտարարություն էր, սակայն, դժբախտաբար, երբեք կյանքի չկոչվեց: Այս հարցում վերջին օրինական Օսմանյան կառավարությունը արեց այն, ինչ իրենից պահանջվում էր: Հավաքված վկայությունների և պատրիարքության կազմած պատասխանատուների ցուցակի հիման վրա կատարեց ձերբակալություններ և ձերբակալվածներին հանձնեց Ստամբուլում դաշնակիցների բանակները ներկայացնող անգլիական բանակին, որը հայտարարում էր, որ նրանց դատելու է միջազգային դատարանը: Այս ձեռնարկումը կատարած ներքին գործերի նախարար Ալի Բեմալը 1922 թ. նոյեմբերին Ստամբուլում Հատուկ կազմակերպության խմբավորման օգնությամբ Իզմիրը նվաճած Սաքալե Նուրեդդին փաշայի կողմից վարսավիրանոցից առևանգվելուց հետո Իզմիրում բազմության կողմից Լինչի դատաստանի էր ենթարկվել: Նորին գերագանցություն փաշան Իզմիրի միտրոպոլիտ Հրիսթոմոսին ևս Լինչի դատաստանի ենթարկելուց անմիջապես հետո հրդեհել էր Իզմիրի քրիստոնեական թաղամասերը, քաղաքացիական բնակչության նկատմամբ մի քանի անգամ ավելի սարսափելի բռնություն էր իրականացրել, քան Պոնտոսի հույների նկատմամբ:

Դրա ոգեշնչողները եղել են «հանցագործություն կատարելու ազատությունը» և «անպատժելիությունը»: Եվ միջազգային դատի սպառնալիքի վերացումը: Մալթայում «մարդկության դեմ հանցագործություն կատարելու» մեջ մեղադրվող ձերբակալվածների մեծ մասը արդեն վաղուց հասել էր Անկարա և սկսել էր նախապատրաստել «քրդի և ազգային փոքրամասնության հակադրության» մասին զեկույցներ: Այն բանից հետո, երբ Ստամբուլի կառավարությունը աճող իթթիհատական սպառնալիքների ազդեցությամբ հեռացրեց Ալի Բեմալին իր պաշտոնից, մնացած փոքրաթիվ պատասխանատուներն սկսեցին ձգձգել հետաքննության ընթացքը:

1920 թվականին Ստամբուլի բարձրագույն կոմիսարիատի լիազոր ներկայացուցիչ Հարի Հ. Լամբը իր զեկույցում իրավիճակը ամփոփ ներկայացրել էր հետևյալ կերպ. 1) կենտրոնական իշխանությունների կամ նահանգապետարանների պաշտոնյաների կողմից այս հարցի հետ կապված հրամանների կամ հանձնարարականների վերաբերյալ որևէ թուրքական փաստաթուղթ ներկայացնելը գրե-

թե անհնար է, 2) դաշնակիցների կառավարությունները երկմտում են, թե արդյոք արժե մասնակցել կոտորածի մեջ կասկածվողների դատավարությանը, 3) Միջին Արևելքում գտնվող լիազոր ներկայացուցիչները բացարձակապես անտարբեր են, 4) վիլայեթներում հայ արական սեռի բնակչության մեծ մասը և գրեթե բոլոր մտավորականները սպանված են, 5) չկա հանրային աջակցություն, որը կարողանար կանխել այն մարդկանց պատժելը, որոնք կարող են հանդես գալ և ներկայացնել ապացույցներ, չկա վատախոսություն, որ դաշնակիցներն ունեն մնան մտադրություններ, 6) հնարավոր է, որ Մալթայում պահվող ձեռքակալվածները վերջում անգլիական կառավարության կողմից պատանդների դիմաց ազատ արձակվեն<sup>5</sup>:

Ի վերջո, Մալթայի դատական ատյանը դիմեց ԱՄՆ-ին, որն ուներ Հայոց ցեղասպանության նյութերի մեծ արխիվ: Այն ժամանակ Վաշինգտոնը, ելնելով Մոսուլի՝ թուրքերին մնալու հնարավորությունից, չէր ցանկանում բաց թողնել Մոսուլի նավթային պաշարներին տիրանալու հնարավորությունը: Իսկ հայերի հովանավոր, նախկին Նախագահ Վիլսոնն արդեն հեղինակություն չուներ:

Որպես արդյունք՝ Մալթայի դատավարության ձախողմամբ բաց էր թողնվել Նյուտնբերգյան տիպի առաջին միջազգային դատարանի ստեղծման հնարավորությունը, մի դատարանի, որը կքններ մարդկության դեմ կատարված հանցագործությունները:

Երբ քեմալականներն առաջին անգամ անգլիացիների հետ մտան շփման մեջ, Բեքիր Սամի բեյը 1921 թ. մարտի 16-ին ստորագրեց փոխանակման պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ նրանք, ովքեր Մալթայից ազատ էին արձակվելու, դատվելու էին Անկարայում այնպես, ինչպես Լալայցիզում դատվել էին գերմանացի ռազմական հանցագործները: Սակայն Բեքիր Սամի բեյը համաձայնությունն առանց Անկարայից թույլտվություն ստանալու ստորագրելու պատրվակով ազատվել էր Արտաքին գործերի նախարարի պաշտոնից: Ի վերջո, 1921 թ. հոկտեմբերի 31-ին թուրք ձեռքակալվածները փոխանակվեցին անգլիացի գերիների հետ: Անգլիացիների տեսակետը հետևյալն էր. «Խորհրդարանի անդամների շրջանում տիրում էր մի ուժեղ հավատամք, որ մեկ անգլիացի պատանդը արժե թուրքերով լցված նավի: Փոխանակումը տեղի է ունեցել այս նկատառումներով»: Իսկ թե հայերի հետ ինչ է կատարվել, արդեն ոչ ոք չէր ուզում հիշել: Չէ՞ որ, Հիտլերն էր ասել Լեհաստանի վրա հարձակմանը նվիրված գաղտնի ժողովի ժամանակ. «Ո՞վ է հիշում հայերին»: Հիտլերն իր ընկեր Շոյբներից շատ էր լսել հայերի գլխին եկածի մասին, ինչպես նաև այն մասին, որ աշխարհը տառապում է հիշողության կորստով...

## ԻՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՈՐՈՇԵ՛Ն, ԱՍԱՅԻՔ

Նորագույն ժամանակների մեկ այլ մոդայիկ գաղափարախոսություն էլ «ազգային պետությունն» էր: Առանց ազգի, առանց ազգային պետության արդիականությունը հնարավոր չէր լինի: Այս մոտեցումից է բխում նաև մեծ տերությունների շահերից ելնող ու լայնորեն տարածված «իր ճակատագիրը որոշելու իրավունքը»:

<sup>5</sup> Sbu FO 371/6500, w.2178, appendix A (dosya 385-118, 386-119):

Այս մտքի ջատագովն էր Վիլսոնը: Սակայն Լենինին էլ դա խորթ չէր: Փլուզված Ռուսական կայսրությունը, թեև ռուսակենտրոն էր, սակայն այս սկզբունքի շրջանակներում ինչ-որ իմաստով վերականգնեց կարգուկանոնը և ապահովեց օրինականությունը: 1936 թվականին Բուխարինի գրած խորհրդային սահմանադրությամբ այս սկզբունքն ամրագրվեց որպես հիմնարար և հնարավորություն ստեղծեց, որ Խորհրդային կայսրության փլուզումը տեղի ունենա համեմատաբար խաղաղ ճանապարհով: Այդ ծրագիրը փոքր ազգերին որոշ չափով հնարավորություն տվեց իրենց գոյությունը պահպանելու ինքնավար ենթակառուցվածքի միջոցով: Նույնիսկ տարածաշրջանում որպես լինգվա ֆրանկա\* հանդես եկող ռուսերենի հեգեմոնիայի պայմաններում:

Ավստրո-Հունգարական և Օսմանյան ժառանգության վրա առաջացան ազգային պետություններ՝ «փոքրամասնություններ» մեծ խնդիրներով: Ըստ էության, Թուրքիան այս շարքի վերջում էր: Հայերը չկարողացան Թուրքիայի մի մասում ստեղծել իրենց ազգային պետությունը, քանի որ 1915 թ. Թուրքիայի նպատակներից մեկն էր հայերին խանգարել բալկանյան օրինակով իր ճակատագիրը որոշելու իրավունքից օգտվելով ստեղծել ազգային պետություն: Միայն խորհրդային հեղափոխության տիրապետության հաստատումից հետո արևելյան մասում առաջացավ Հայաստանը՝ որպես ինչ-որ իմաստով պատմական Հայաստանից մեկուսացված մի «հայրենիք»: Որպես արդյունք՝ բալկանյան պարտության հետևանքով հոգեխցվածք ստացած և նոր ծնվող թուրքական ազգայնականությունը հայ ժողովրդին ստիպեց վճարել նոր ազգային պետությունների իրեն հասցրած՝ Բալկաններից դուրս շարտված լինելու հոգեխցվածքի գինը: Խափանվեց Արևելքում «նոր Բուլղարիայի» առաջացումը: Սակայն ի՞նչ գնով. Նագիմի խոսքերով՝ «ճակատը բծով պատելու» հաշվին: Իսկ ենթագիտակցության մեջ մեղավորության զգացումն ավելի դաժանանալու, դաժանությունը տևական լինելու պատճառ դարձավ: Նրանք (թուրքերը) չկարողացան հաղթահարել Բալկաններից հետո նաև Անատոլիայից դուրս շարտվելու վախը, նույնիսկ հաղթանակ տանելուց հետո: Արևմուտքի կողմից հայերին զանգվածաբար դավաճանելը նրանց երբեմն գցում էր, ինչ-որ իմաստով, մի յուրահատուկ խելացնոր վախի մեջ նաև Արևմուտքի հանդեպ:

Իսկ իրականում ինչ-որ գերբնական ուժով, 1917 թ. հեղափոխության՝ աշխարհում առաջ բերած նոր հավասարակշռությունն օգտագործելով, ոչ միայն պատերազմով, այլև դիվանագիտությամբ նրանք կարողացան անել այնպես, որ մոխրից ծնվի նոր Թուրքիա: Մոռացվել է, որ իրենց արկածախնդրությունը պանթյուրքականությամբ հիմնավորող Թալեթ փաշան ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության այլ առաջնորդներ պատասխանատու են ոչ միայն ցեղասպանությունների, ռազմաճակատներում մղված մարտերի, հարձակումների և սովի հետևանքով ավելի քան մեկ միլիոն հայերի մահվան, ոչ միայն մոտ մեկ միլիոն անատոլիական քրիստոնյաների, այլև մեկ միլիոնից ավելի ազգությամբ

\* *Լինգվա ֆրանկա*. այստեղ՝ բազմազգ պետության լեզուներից մեկը, որը հանդես է գալիս ազգամիջյան հաղորդակցման միջոց. – *Խոյք* .:

քուրդ կամ թուրք կամ այլ ազգի մահմեդականների, ալևիների, եզդիների մահվան համար: Մինչ օրս էլ Թուրքիայի պաշտոնական թեզն է՝ պնդել, թե Հայոց ցեղասպանությունը սովորական ռազմական կորուստ էր: Եվ Հյուրիեթ կոչվող զագաթին կառուցել «Միություն և առաջադիմություն» կուսակցության եռապետության դամբարանները, այն դեպքում, երբ այդ մարդիկ մարդկության դեմ հանցագործություն են կատարել և, միլիոնավոր մարդկանց սպանելով, փլուզել են մի ամբողջ կայսրություն:

Որպես արդյունք՝ «բալկանյան հոգեխոցվածքը», թերևս, հաղթահարվել է, բայց հայերեն կոչվող «Մեծ Եղեռնը» (մեծ մեղքի հոգեխոցվածքը) հնարավոր չի եղել հաղթահարել: Հաղթահարումից բացի, մեղքի յուրօրինակ զգացումը, 1965 թվականից ի վեր Հայոց ցեղասպանությունը համայն մարդկության կողմից ճանաչվելու և հիշողության կորստի մառախուղի քողի տակից դուրս գալու փաստը Անկարային դրդել են՝ ներողության և փոխհատուցման փոխարեն որդեգրելու ագրեսիվ ժխտողական քաղաքականություն: Ժխտումից բացի, ստեղծվել է մի յուրօրինակ ժխտողական արդյունաբերություն: Եվ ստերի տարածմամբ, թույն են ներարկել երիտասարդ սերունդներին: Երիտասարդ սերունդների տեսանկյունից չխոսելը պակաս վտանգավոր էր: Իսկ նախորդ սերունդները, ուզեին, թե չուզեին, զոհն գիտեին, որ տեղի է ունեցել համամարդկային ողբերգություն:

2000 թվականից՝ Էջմիթի - Բահչեղիի ազգայնական կառավարության ձևավորումից հետո, սկսվեց ավելի ագրեսիվ ժխտողական քաղաքականությունը, և Անկարան քարոզչություն վարեց աշխարհի թուրքական համայնքներում: Ատելության հռետորաբանությունը հրահրվում էր և՛ երկրում, և՛ աշխարհում: Մա վերածվեց մի յուրահատուկ քրեական լոբբինգի: Պայթեցվում էին հուշահամալիրները: Անհարգալից կերպով խափանվում էին ոգեկոչման հավաքները: Իրականությունն այն էր, որ թուրքական համայնքներին քարոզչության էին ենթարկում հենց հյուպատոսությունները: Մյուս կողմից՝ որոշ հրապարակումներում առաջ էր քաշվում այն վարկածը, թե այս հարցով ուսումնասիրություններ կատարողներին, ինչպիսիք են Թեսա Հոֆմանը և Թաներ Աքչամը և այլ ուսումնասիրողներ, աջակցություն են ցուցաբերում գերմանական հատուկ ծառայությունները: Իսկ ամենակոշտ քարոզարշավը Գերմանիայում նախաձեռնելու պատճառն այն էր, որ եթե առաջին համաշխարհային պատերազմի և Հայոց ցեղասպանության ժամանակ Թուրքիայի դաշնակից Գերմանիան ճանաչեր և ներողություն խնդրեր, ապա ժխտման շարունակումը կդառնար անհնարին:

Դրա հետ մեկտեղ պաշտոնական ժխտողականությունը ծայրաստիճան մեծ կարևորություն էր տալիս անգլիական և ամերիկյան խորհրդարաններին: Մա կանխելու համար կատարվում էին անհավանական լոբբինգային աշխատանքներ: Մինչդեռ անգլիացիների համար դրա անհրաժեշտությունը չկար: Նրանք դեռ Մաթթայում էին հրաժարվել դրանից: Չնայած դրան, 550 պատգամավոր, այդ թվում՝ Էրդողանը, համատեղ նամակ էին ուղարկել Անգլիայի խորհրդարանին՝ պահանջելով, որ «Կապույտ գիրքը», որը 1915 թվականի կտորածների վերաբերյալ տեղեկությունների և վկայությունների առաջին ժողովածուն է, որպես «պատերազմ քարոզող» նյութ հանվի շրջանառությունից: Թեև այդ քայլի կազ-

մակերպիչ թոշակառու դիվանագետ, պատգամավոր Շյուբրյու Էլեբդադին չհաջողվեց իրականացնել իր մտահղացումը, բայց հաջողվեց անել այնպես, որ «Կապույտ գրքի» թուրքերեն տարբերակի հրատարակիչ Մուզաֆեր Էրդողանին դատապարտեն մեծ դրամական տուգանքի՝ «Էլեբդադին վիրավորանք հասցնելու» հիմքով:

Նույն ատյանը Լինչի դատաստանի արշավներ էր կազմակերպում այդ ժամանակաշրջանում Թուրքիայում, ըստ էության, ծայրաստիճան եզրահանված դասակարգ համարվող միսիոներների դեմ: Եվ դա ուղեկցվում էր պաշտոնական ժխտողական թեզը պաշտպանող անթիվ հողվածներով ու գրքերով, ժխտողական սեմինարներով ու խորհրդաժողովներով, խափանիչ գործողություններով: Իսկ դրա գազաթնակետը լինելու էին Հրանտ Դինքի սպանությունը, միսիոներ և կաթոլիկ հոգևորականների սպանությունները: Ցեղասպանության ժխտումն արդեն դարձել է Թուրքիայի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության ամենակարևոր բաղադրիչներից մեկը: Ցեղասպանության ճանաչումը, ուսումնասիրությունը սպառնալիք են ազգային անվտանգության համար: Շատ լավ, իսկ ինչու՞ էր սրա հետևում կանգնած Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի համակարգման խորհուրդը (ՅԱՊՊՀԽ՝ ASİMİK):

**ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ. ՅԱՊՊՀԽ**

Գործընթացն սկսվել էր որպես արձագանք հայ և թուրք մտավորականների երկխոսության համեստ հավաքին, որը տեղի էր ունեցել Ֆրանսիայի սենատում 2000 թվականին: Այս հավաքում արված հայտարարությունները ընդգրկվել էին թուրքական համալսարաններ ուղարկվող «գաղտնի» բլանկով նամակի մեջ, որում պահանջվում էր դրանց դեմ թեզեր պատրաստել:

Ավելի ուշ՝ 2001 թ. մայիսի 29-ին, կառավարությունը տարածել էր մի շրջաբերական, որում խնդիր էր դրվում «ապահովելու արտերկրում ի վնաս մեր պետության օգուտներ քաղելուն ուղղված, անընդհատ օրակարգում դրվող ցեղասպանության պնդումների հետ կապված ջանքերի չեզոքացումը, այս հարցի մասին իրազեկ՝ հասարակական կարծիք ստեղծելու, որպեսզի հնարավոր լինի մղել ավելի համապարփակ պայքար»: Ըստ շրջաբերականի՝ ՅԱՊՊՀԽ-ն, որը ղեկավարում էր փոխվարչապետը, ընդգրկելու էր Ազգային պաշտպանության, Արդարադատության, Ներքին գործերի, Արտաքին գործերի, Ազգային կրթության և Մշակույթի նախարարությունները, ինչպես նաև Բարձրագույն կրթության խորհրդի նախագահությունը, Ազգային հետախուզության կազմակերպության քարտուղարությունը, Թուրքական պատմագիտական ընկերության նախագահությունը, Պետական արխիվների գլխավոր տնօրինությունը և Կառավարության քարոզչության հիմնադրամի գլխավոր քարտուղարությունը:

Շրջաբերականում նշվում էին խորհրդի հետևյալ պարտականությունները. «Իրականացնել հասարակական կարծիք ստեղծելու ծրագիրը, հասարակական

կարծիքի պլանավորման աշխատանքներ տանել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների տեղեկացման և ուղղորդման նպատակով և հետևել հայերի, ինչպես նաև «Պոնտոսի հույների և ասորիների պնդումների» հետ կապված զարգացումներին և բացահայտել կազմակերպվելիք միջոցառումները»: Խորհրդի առաջին նիստում ընդունվել էր հետևյալ որոշումը. «Ցեղասպանության մասին պնդումների հարցում թուրքական հասարակությանը դպրոցական տարիքից կրթելու և իրազեկելու նպատակով որոշվել է Ազգային կրթության նախարարության Կրթության և դաստիարակության խորհրդի նախագահության համակարգմամբ ստեղծել ՑԱՊՊՀԽ-ի Ազգային կրթության աշխատանքային խումբը»:

Ըստ այդմ՝ ազգային կրթության նախարար Հուսեյն Չելիքը պատմության իշխանամետ մեկնաբանության գերիշխանությունը հաստատելու նպատակով շրջաբերական է ուղարկել. «Միջնակարգ դպրոցի կամ լիցեյի ուսուցիչներն իրենց դասերի ժամանակ պետք է արծարծեն հայերի, Պոնտոսի հույների և ուղղափառ սիրիացիների անհիմն պնդումների հարցը և կազմակերպեն մրցույթներ: Կրթական ծրագրերը և գրքերը պետք է մշակվեն դրան համապատասխան»:

Նույն ժամանակաշրջանում Կրոնական գործերի նախարարությունը մահմեդականներին միսիոներների դեմ հրահրող քարոզներում արտահայտվում էր հետևյալ կերպ. «Ոչ ոք չի կարող հերքել մեր երիտասարդներից մահմեդականությունը արմատախիլ անել ջանացող ժամանակակից խաչակրաց արշավանքի առկայությունը»:

Կրոնական գործերի նախարարն զգուշացնում էր. «Քրիստոնյա միսիոներները ուսուցչի, բժշկի և բուժքրոջ քողի տակ աշխատում էին իրենց չար գործերն իրականացնելու ուղղությամբ»: Իսկ Ռահշան Էջևիթն ասում էր. «Թուրքական տարածքների 272,5 կմ<sup>2</sup>-ը 2007 թվականի ապրիլից վաճառվել է օտարերկրացիներին: Դրա հետևում կանգնած են հայկական և հունական լոբբիները» (13.06.2006-ին տեղի ունեցած մամլո ասուլիս): Միգուցե, տիկին Էջևիթն իրական «լոբբինգ» իրականացնողի անունի՞ց էր խոսում:

Իսկ Թուրքիայի զինված ուժերի 2006 թ. սեպտեմբերի 20-ի զեկույցում միսիոներները թիրախ էին դառնում հետևյալ կերպ. «Քրիստոնեական միսիոներությունը վնաս է պատճառում պետությանը: «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ) պետք է օրենք ընդունի, որպեսզի քրիստոնեությունն ավելի լայն տարածում չստանա: Միսիոներները շահագրգռված են նաև աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխման մեջ»: Ըստ զեկույցի՝ 2020 թվականին Թուրքիայի բնակչության 10 %-ը, հատկապես՝ քրդերն ու ալևիները, դառնալու են քրիստոնյա, տնային եկեղեցիներում ուղեղներ են լվանում:

Իսկ հետախուզության (MIT) 2006 թ. ապրիլի 24-ի զեկույցում ասվում էր հետևալը. «19-րդ դարից ի վեր միսիոներները եղել են ակտիվորեն ներգրավված երկրի մասնատման գործում: Այսօր հայերը աշխատում են եվրոպական եկեղեցիների, Ռեզոլափառների դաշինքի և Եկեղեցիների միջազգային կազմակերպության հետ համատեղ: Թուրքական շրջանները անվանվում են եզդիական, քաղղեական, քրիստոնյա քրդական և հայկական, Պոնտոսը և նույնիսկ Արևմտյան

ափը՝ հինավուրց քրիստոնեական տարածքներ»։ Զեկույցում, մասնավորապես, նշվում է, որ 1998–2001 թթ. ութ միլիոն Ավետարան է բաժանվել։

Համակարգված աշխատանքի շնորհիվ վերջին տասը տարիներին ժխտողական դիրքորոշում ձևավորող սեմինարներ են կազմակերպվել ոչ միայն տարրական և միջնակարգ կրթության ոլորտում, այլև համալսարաններում, պետական պաշտոնյաների համակարգի, դիվանագիտության և զինվորականության տարբեր մակարդակներում։ Հոգևոր գործունեությամբ զբաղվողների և նույնիսկ էքսկուրսավարների սեմինարներին մասնակցելուց հրաժարվելը աչքաթող չէր արվում։ Համալսարաններում կազմակերպվել էին անթիվ ժխտողական «ակադեմիական» խորհրդաժողովներ։

Իսկ հակացեղասպանական ջիհադում հոգով-սրտով պայքարող ակտիվիստները Աշխատավորական և Լուսավորություն կուսակցություններից էին։ Նրանց ղեկավարությամբ ստեղծվել էր «Թալեաթ փաշա» կոմիտե։ Շվեյցարիայում, Բեռլինում, Լիոնում սաղրիչ գործողություններ էին ձեռնարկվել։ Այս շրջանների կողմից պատրաստված ժխտողական գրքերի՝ տարբեր լեզուներով թարգմանությունները տարածվել էին Անկարայի (Էրզեմեկոնի գործով մեղադրվող դրա նախագահն այժմ Ժողովրդահանրապետական կուսակցության կողմից պատգամավոր է, իսկ այդ կուսակցության Ստամբուլի մասնաճյուղի ղեկավարը դատվում է կոռուպցիայի մեղադրանքով) և Ստամբուլի առևտրաարդյունաբերական պալատների միջոցով։

Հազարավոր գրքեր էին գրվում համաքաղաքացիների վրա «սխալ» մտքերի ազդեցությունը կանխելու համար, իսկ մեծ գրախանութներում ստեղծվել էր «Հայ» խորագրով բաժին։

Էջևիթ-Բահչելիի կառավարության սկսած աշխատանքները շարունակվեցին նաև Էրդողանի կառավարության օրոք։ 2007 թ. մարտի 15-ին Աբդուլլահ Գյուլի նախագահությամբ տեղի ունեցած ՅԱՊՊՀԽ-ի 17-րդ նիստից հայտնի դարձավ, որ որոշում է կայացվել Թուրքիային «ստիպել նայելու» «Սարը գելին» վավերագրական ֆիլմը, որն առաջ էր քաշում այն թեզը, թե «հայկական խմբավորումները 1915 թվականից առաջ հարձակվել են թուրքական գյուղերի վրա, սպանել մարդկանց, այրել գյուղերը, խոշտանգումներ իրականացրել»։ Հետաքրքրական է այս որոշման ընդունման ամսաթիվը։

Որոշումն ընդունվել էր այն ժամանակաշրջանում, երբ տենդազին կերպով իրականացվում էին հեղաշրջման նախապատրաստական աշխատանքները, տեղի էր ունեցել Հրանտի դեմ մահափորձ, որոշման կայացումից կարճ ժամանակ անց իրականացվել էր Մալաթիայի կոտորածը, իսկ ավելի ուշ արվել էր ապրիլի 28-ի հայտնի ինտերնետային գրառումը, և Թուրքիան ներքաշվել էր վաղաժամ ընտրությունների մեջ։ Է՛լ ավելի ցավալի էր հատկապես այն, որ այս գործողությունները կատարվել էին Հրանտ Դինքի դեմ մահափորձից հետո։

Որոշման մեջ ընդգծվում էր հետևյալը. «Հասարակական կարծիք ձևավորելու նպատակով օգտագործելու համար արտադրող ձեռնարկությունից «Սարը գելին-Հայոց հարցի էությունը» վավերագրական ֆիլմի տեսասկավառակները



զնվելու և ուղարկվելու են Գլխավոր շտաբ, Ազգային կրթության նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն և Ազգային հետախուզության կազմակերպության քարտուղարություն, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, այլ կառույցներ»:

Այսպիսով՝ Ազգային անվտանգության խորհրդի ենթախորհուրդ ՑԱՊՊՀԿ-ն՝ որպես վնասակար խորհուրդ՝ ստեղծված պահպանողական զինվորականների և բյուրոկրատների կողմից, որոնք լիազորված էին որոշելու, թե ինչն է համաքաղաքացիների համար լավ, և ինչը՝ վատ, համաքաղաքացիների նկատմամբ իր գործառույթներն իրականացնում էր որպես մի «հոգաբարձության խորհուրդ» և իր համար թիրախ էր ընտրել երգիծական ամսագրերը, մասնավորապես՝ վերջերս «Խարակիրի» երգիծական ամսագրի նկատմամբ նշանակված ծանր պատժով այդ իրաշալի երգիծական ամսագրին ստիպել էր խարակիրի անել:

Այս խորհուրդը նախագահած բոլոր մարդիկ էլ «հետաքրքիր» անձնավորություններ են: Հիմնադիր նախագահ Դեյլեթ Բահչելիից հետո նախագահ դարձավ Էրքան Մումջուն, որը ԱԶԿ-ի ներսի տրոյական ձիերից էր և աջակցել էր հեղաշրջմանը: Իսկ հետագայում այդ պաշտոնն զբաղեցրեց Աբդուլլահ Գյուլը, որպեսզի որպես արտգործնախարար սփյուռքի հետ լեզու գտնի... Նրանից հետո, որքան գիտեմ, ընդհանուր առմամբ նախագահել են արտաքին գործերի նախարարները: Սակայն այս հարցում մի հետաքրքիր մութ բան կա. բոլոր նահանգապետարաններում վալիների օգնականներից մեկը իր իրավասությանը ենթակա վիլայեթում համադասում էր խորհրդի գործունեությունը: Մասնավորապես՝ «քաղաքացիական հասարակության» շրջանակներում նույնիսկ կար ընկերություն, որը ձեռնամուխ էր եղել այս պայքարին:

Եթե այս տեսակ խորհուրդը հանդես էր բերում պասիվություն, ապա ինչպես էր պատրաստվում հայ և թուրք պատմաբաններից ստեղծվելիք «համատեղ խորհուրդը» վեր հանել իրականությունը և որոշել, թե արդյոք եղել է, թե չի եղել 1915 թ. ցեղասպանությունը:

## ПЕРЕСТУПИМ ПОРОГ 100-ЛЕТИЯ С ОТРИЦАНИЕМ?

*Р. ЗАРАКОЛУ, директор-основатель турецкого издательства «Белге»,  
правозащитник*

### РЕЗЮМЕ

По мнению Турции Первая мировая война закончилась не в 1918 году, а в 1922 году, а в Лозанне в 1923 году были закреплены ее результаты. Согласно им, фактически, Турция оказалась в числе победителей, а Армения и Греция – потерпевших поражение, хотя и воевали на стороне победивших союзников.

Геноцид армян был первым геноцидом XX века. В «цивилизованном» мире он вызвал страх и предоставил прекрасные возможности для пропаганды войны. Можно сказать, что этот страх стал одним из тех факторов, которые повлияли на решение США вступить в Первую мировую войну.

Специфическое чувство вины и начавшийся после 1965 года процесс признания Геноцида армян со стороны мирового сообщества побудили Анкару к политике агрессивного отрицания вместо признания своей вины. Начиная с 2000 года политика отрицания Турции стала более агрессивной, ее правительство стало вести пропаганду в общинах турецкой диаспоры, переросшую в своеобразный криминальный лоббинг: взрывались памятники, срывались митинги и собрания, посвященные Геноциду. Циркуляром правительства Турции от 29 мая 2001 года был создан специальный орган – Совет по координации борьбы против бесосновательных утверждений о Геноциде (*ASIMKK*), руководителем которого назначался вице-премьер, а в его состав входили министерства национальной обороны, юстиции, внутренних дел, иностранных дел, национального образования и культуры, а также президиум Совета высшего образования, Секретариат Национальной разведывательной организации (МИТ), президиум Турецкого исторического общества, Главная дирекция государственных архивов и Главный секретариат фонда пропаганды правительства. В обязанности Совета входило осуществление программ по формированию общественного мнения, слежение за высказываниями армян, понтийских греков и ассирийцев и за их деятельностью. В результате системной работы за последние 10 лет в школах, университетах, государственных учреждениях, в армии были проведены многочисленные семинары, нацеленные на формирование позиции отрицания Геноцида армян, опубликованы тысячи книг, в больших книжных магазинах созданы специальные разделы с рубрикой «Армянин». Таким образом, создана целая индустрия отрицания.

В то же время за последние годы в Турции наметился некоторый сдвиг в направлении если не признания геноцида, то хотя бы выражения соболезнования армянам, что является в основном заслугой движения в защиту прав человека.

## CROSSING THE THRESHOLD OF THE CENTENARY WITH A DENIAL?

*R. ZARAKOLU, Founding Director, Turkish Belge Publishing House,  
Human Rights Activist*

### SUMMARY

In Turkey's judgement, the World War I did not come to an end in 1918, but in 1922, and its consequences were fixed in 1923 in Lausanne. According to them, Turkey, in fact, was among the winners, while Armenia and Greece were defeated, though they fought on the side of the victorious Allies.

The Armenian Genocide was the first genocide of the 20th century. It caused fear and provided excellent opportunities for war propaganda in the

"civilized" world. We can say that this fear, became one of the factors that affected the decision of the United States to enter the World War I.

A specific sense of guilt and the process of recognizing the Armenian Genocide by the international community, which started after 1965, impelled Ankara to adopt the policy of aggressive denial instead of admitting its guilt. Since 2000, the Turkish policy of denial has become more aggressive, its government has begun spreading propaganda in the Turkish diaspora communities, which turned into a kind of criminal lobbying: monuments were blown up, rallies and meetings devoted to the Genocide were derailed. A special body was established by the directive of the Turkish Government from 29 May 2001 – the Coordination Board to Fight Baseless Genocide Claims (ASIMKK). The Vice-Premier was appointed as head of that board, and it consisted of the Ministries of National Defense, Justice, the Interior, Foreign Affairs, National Education and Culture, as well as the Presidium of the Council of Higher Education, the Secretariat of the National Intelligence Organization (MIT), the Presidium of the Turkish Historical Society, the General Directorate of State Archives, and the General Secretariat of Government Propaganda Foundation. The responsibilities of the Council were the implementation of programs on shaping public opinion, the control over the statements of the Armenians, Pontic Greeks and Assyrians and their activity. In systemic work numerous seminars targeted at the formation of the position of denial of the Armenian Genocide have been held in schools, universities, state institutions, and the army for the last 10 years. Thousands of books have been published and special sections with the heading "Armenian" have been set up in major bookstores. Thus, a whole industry of denial is shaped.

At the same time, there has been some progress if not in recognizing the Genocide, then at least offering their condolences to the Armenians in recent years in Turkey. That is basically a credit of human rights movement.

## ՀԱՄԱՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

**Աշիրաթ.** Տես *աշիրեթ*:

**Աշիրեթ.** Մի ցեղապետի ենթարկվող քրդական ցեղ:

**Բեյ (բեկ).** 1. Մերձավոր և Միջին Արևելքում ազնվականության տիտղոս, Միջին Ասիայում և Անդրկովկասում՝ հողատիրոջ թյուրքական տիտղոս, 2. դիմելաձև թուրքիայում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1934 թվականը:

**Գեջեքոնդու.** Ապօրինի անբարեկարգ շինություն թուրքիայում:

**Երեսփոխան.** Պատգամավոր:

**Երիտթուրքեր.** «Իթթիհատ վե թերաքքի» կուսակցության անդամների եվրոպական անվանումը:

**Էֆենդի.** Հարգական տիտղոս թուրքիայում, «պարոն»:

**«Իթթիհատ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն»).** թուրքական քաղաքական կուսակցություն: Հիմնվել է 1889 թ. մայիսի 21-ին՝ «Օսմանյան միասնության ընկերություն» անունով: Նպատակը 1876 թվականի Սահմանադրության վերականգնումն էր և խորհրդարանի գումարումը: Վերանվանվել է «Միության և առաջադիմության օսմանյան ընկերություն» և միավորվել երիտթուրքերի Փարիզի խմբի հետ: Հիմնադիրներն էին Աբդուլլահ Ջևդեթը, Իսիակ Սյուքուբին, Իբրահիմ Թեմոն, Հիլմի Թունալին և Աբիլ Սուլթաբարը:

**Իթթիհատ.** «Իթթիհատ վե թերաքքի» կուսակցության համառոտ անվանումը:

**Իթթիհատական.** «Իթթիհատ վե թերաքքի» կուսակցության անդամ:

**Խեդիվ.** 1867 – 1914 թթ. Եգիպտոսի տիրակալների տիտղոսը:

**Կայմական.** Թուրքիայում գավառակի կառավարիչ, որին նշանակում է վալին, և որն անմիջականորեն ենթարկվում է մյութեսարիֆին:

**Հակոբիկյան եկեղեցի.** Ասորի ուղղափառ եկեղեցի, Սիրիական ուղղափառ եկեղեցի:

**Հակոբիկյաններ.** Հակոբիկյան եկեղեցու հետևորդներ:

**«Համիդիե».** Քրդերից կազմված անկանոն հեծելազորեր Օսմանյան կայսրությունում: Կազմակերպել և իր անունով կոչել է թուրք սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը 1891 թ.: Համիդիե միավորումները (մոտ 30 գունդ) ստեղծվել են հայերի ազատագրական շարժումները ճնշելու, Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրությունում հայկական ջարդեր կազմակերպելու, հնարավոր պատերազմի դեպքում՝ ռուսական զորքերի դեմ կռվելու համար:

**Հայրենագրկում.** Տվյալ տարածքում բնիկ ժողովրդին ցեղասպանության ենթարկելու, նրա ստեղծած նյութական և հոգևոր արժեքներին տիրանալու կամ ոչնչացնելու միջոցով այդ ժողովրդին տվյալ տարածքում առանց ինքնության կորստյան բնակվելու հնարավորությունից զրկում: Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենագրկման ենթարկվեց արևմտահայությունը:

**Մյուղիր.** Տնօրեն:

**Մյութեսարիֆ.** Օսմանյան կայսրությունում սանջակի կառավարիչ, գավառապետ, որին նշանակում է վալին, որին էլ նա ենթարկվում է:

**Մուհաջիր.** 1. Այն մահմեդականը, որը, հալածվելով հանուն հավատի, լքել է իր հայրենիքը, 2. Մահմեդական գաղթական:

**Նեստորականություն.** Ռեսմունք, ըստ որի՝ Քրիստոսն ունի երկու բնություն և երկու անձ:

**Շարիաթ.** Մահմեդական իրավունքի կրոնական և իրավաբանական նորմերի ամբողջություն:

**Չաուշ.** 1. Տասնապետ, 2. Մունետիկ, 3. Դիտող, լրտես:

**Պանթյուրքականություն.** Մշակութային ու քաղաքական շարժում, որի նպատակն է էթնիկական, մշակութային ու լեզվական ընդհանրության հիման վրա աշխարհի բոլոր թյուրքալեզու ժողովուրդների համախմբումը Թուրքիայի տիրապետության ներքո և թուրքական կայսրության ստեղծումը, որը ձգվելու էր Փոքր Ասիայից մինչև Ալթայ և Հեռավոր Արևելք:

**Պանիսլամականություն.** Կրոնական-քաղաքական գաղափարախոսություն, որը հիմնված է աշխարհի մահմեդականների «միասնության» և մեկ միասնական մահմեդական պետության կազմում նրանց համախմբման մասին գաղափարի վրա:

**Պասիոնարություն.** Պատմաբան Լ. Գումիլյովի տեսության հիմնական հասկացություններից. տվյալ էթնոսի ներկայացուցիչների մոլեգին ձգտումը դեպի նպատակ, ֆիզիկական ու հոգեբանական գերլարվածության և զոհողության պատրաստակամությունը հանուն այդ նպատակի:

**Պատրիոցիդ.** Տես՝ *հայրենագրկում*:

**Պոլիտիցիդ.** Որոշակի մարդկանց բնաջնջում քաղաքական նպատակներով:

**Ջադե.** Պողոտա:

**Ջիհադ.** Մահմեդականության պատվիրանը, ըստ որի՝ նրա հետևորդները պետք է այդ կրոնը տարածեն ամեն կերպ, անգամ՝ այլադավանների դեմ «սրբազան պատերազմի» միջոցով:

**Ուարթի.** Հուղայականների համայնքի ղեկավար, ծեսեր կատարողը:

**Ռես.** Գյուղապետ, տանուտեր:

**Վակֆ.** Նվեր տրված կալվածք մզկիթին կամ այլ բարեպաշտական հիմնարկի:

**Վալի.** Վիլայեթի քաղաքացիական գործերի կառավարիչ:

**Վեզիր.** Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում՝ բարձրաստիճան պալատական պաշտոնյա՝ խորհրդական:

**Վիլայեթ.** Թուրքիայում նահանգ:

**Վիկտիմացում.** Ջոհացում՝ ցեղասպանության զոհի վերածման պրոցեսը:

**Փաշա.** 1. Բարձրաստիճան զինվորական և քաղաքացիական պաշտոնյաների տիտղոս սուլթանական Թուրքիայում, Եգիպտոսում և մի շարք արևելյան երկրներում, ինչպես և այդ կոչումն ունեցող անձը, 2. Հարգական մակդիր:

**Քաղղեացի.** Իրաքի արաբ քրիստոնյա բնակիչ:

**Ֆեթվա.** Մահմեդական բարձրագույն հեղինակությամբ անձի որոշումը Ղուրանին ու շարիաթին այս կամ այն գործողության կամ երևույթի՝ համապատասխանության մասին:

## На вкладыше СТОЛЕТИЕ ГЕНОЦИДА АРМЯН

I. Заседание Государственной комиссии, координирующей мероприятия, посвященные 100-летию Геноцида армян. Ереван, 29 января 2015 г.

Президент РА Серж Саргсян зачитывает Всеармянскую декларацию к 100-летней годовщине Геноцида армян. Ереван, Мемориальный комплекс памяти жертв Геноцида армян, 29 января 2015 г.

II. ПРЕДСТАВИТЕЛИ АРМЯНСКОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ – ЖЕРТВЫ ГЕНОЦИДА  
*Рубен Зардарян* (1874–1915) – писатель, публицист; *Григор Зохран* (1861–1915) – писатель, публицист, общественно-политический деятель; *Даниел Варужан* (Даниел Чпуккярян, 1884–1915) – поэт, общественный деятель; *Комитас* (Согомон Согомонян, 1869–1915) – композитор, музыковед, певец, хормейстер, педагог; *Рубен Севак* (Рубен Чилинкирян, 1885–1915) – поэт, прозаик, врач; *Сиаманто* (Атом Ярджаниян, 1879–1915) – поэт.

III. Насильственная депортация армянского населения Эрзрума, 1915 г. Армянские беженцы, 1915 г. (фото немецкого писателя Армина Вегнера: Armin T. Vegner. Wallstein Verlag, Germany).

IV. Казнь армян в Константинополе. 1915 г.

Трупы армян, подвергшихся резне.

V. В первом ряду: группа армян, насильственно перемещенных из Зейтуна в Мараш в мае 1915 г. Спустя полчаса после фотографирования, все они были сожжены или зарезаны турками.

Суд над руководителями младотурецкой партии “Единение и прогресс” по обвинению в вовлечении Османской империи в Первую мировую войну, организации депортации и резни армян. Константинополь, 3 апреля 1919 г.

VI. АРМЯНЕ – ГЕРОИ САМООБОРОНЫ ОТ ГЕНОЦИДА

*Андралик Озаян* (1865–1927) – Командир 1 армянской добровольческой дружины в составе русской армии; *Арам Манукян* (1879–1919) – государственный, общественный деятель, организатор и руководитель героической самообороны Вана в 1915 г.; *Арменак Екарян* (1870–1925) – руководитель самообороны Вана в 1915 г.; *Мкртич Еотнехпарян* (1880-ые–1915) – руководитель самооборонительных сражений в Урфе; *Мисак Торлакян* (1889–1968) – народный мститель, руководитель самообороны армян Понта; *Чоло* (Арутюн Абрамян, 1878–1937) – фидайн, участник самообороны Сасуна в 1915 г.

VII. О. Туманян с дочерью Нвард с сиротами и медперсоналом. Эчмиадзин, август 1915 г.

Армянские сироты, подобранные в пустынях и перевезенные в Иерусалим в 1918 г. (первоисточник фотографии – сборник Библиотеки Нубарян, Париж. Из книги “100 фотоисторий о Геноциде армян”).

VIII. Поминовение жертв Геноцида армян. Ереван, Мемориальный комплекс памяти жертв Геноцида армян, 24 апреля 2014 г.

Поминовение жертв Геноцида армян в Турции. Стамбул, 24 апреля 2014 г.

**On the loose leaf**  
**THE CENTENARY OF THE ARMENIAN GENOCIDE**

I. The Session of the State Commission on Coordination of the events dedicated to the 100th Anniversary of the Armenian Genocide. Yerevan, January 29, 2015.

The RA President Serzh Sargsyan promulgates the Pan-Armenian Declaration on the 100th Anniversary of the Armenian Genocide. Yerevan, Armenian Genocide Memorial Complex, January 29, 2015.

II. THE ARMENIAN INTELLECTUALS – THE GENOCIDE VICTIMS

*Rupen Zartarian* (1874 – 1915) – writer, publicist; *Krikor Zohrab* (1861 – 1915) – writer, publicist, public figure and politician; *Daniel Varoujan* (Daniel Tchiboukessian, 1884 – 1915) – poet, public figure; *Komitas* (Soghomon Soghomonian, 1869 – 1935) – composer, music expert, singer, choirmaster, educator; *Rupen Sevag* (Rupen Çilingiryan, 1885–1915) – poet, prose writer, doctor; *Siamanto* (Atom Yartchanyan, 1878 – 1915) – poet.

III. The forcible deportation of Erzurum’s Armenian population, 1915. The Armenian refugees, 1915 (the photo taken by German poet Armin Vegner: Armin T. Vegner. Wallstein Verlag, Germany).

VI. The execution of the Armenians in Constantinople, 1915.  
The Armenians’s corpses subjected to the massacre.

V. In the first row: a group of the Armenians forcibly displaced from Zeytun to Marash in May 1915. Half an hour later after photographing, all of them were burnt or slaughtered by the Turks.

The trial of leading figures of the Young Turk Unity and Progress Party for involving the Ottoman Empire in the World War I, and organizing the Armenians’ deportations and slaughters. Constantinople, April 3, 1919.

VI. THE ARMENIAN HEROES OF SELF-DEFENSE AGAINST THE GENOCIDE

*Andranik Ozanian* (1865 – 1927) – Commander of the 1st Armenian volunteer squad included in the Russian Army; *Aram Manukian* (1879 –1919) – statesman and public figure, organizer and leader of the heroic Defense of Van in 1915; *Armenak Yekarian* (1870 – 1925) – leader of the Defense of Van in 1915; *Mgrdich Yotneghparian* (1880s –1915) – leader of Urfa Resistance; *Misak Torlakian* (1889 – 1968) – national avenger, leader of Pontos Armenians’ Self-Defense; *Cholo* (Harutyun Abrahamian, 1878 – 1937) – fidai, participant of the Defense of Sasun in 1915.

VII. H. Tumanyan and his daughter Nvard with orphans and the medical staff Etchmiadzin, August, 1915.

The Armenian orphans picked up in the deserts and taken to Jerusalem in 1918 (the primary source of the photograph is the collection of Nubarian Library, Paris. From the book “100 Photo Stories about the Armenian Genocide”).

VIII. The commemoration of the Armenian Genocide victims. Yerevan, Armenian Genocide Memorial Complex, April 24, 2014.

The commemoration of the Armenian Genocide victims in Turkey. Istanbul, April 24, 2014.



### **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

ՀՀ ՊՆ Գ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՒՀ-ի կողմից հաստատված «Գիտություն և քեկնածուական առեմախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և զաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Գիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

### **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

### **For the information of the authors and readers**

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԹԱԿ**

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անյրոնյան*  
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասարյան*  
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*  
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խաչաֆյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*

Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խաչաֆյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի,*  
*Ն. Ս. Մկրտչյանի, Լ. Հ. Պապիկյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ա. Ա. Խաչատրյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի,*  
*Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝ *Մ. Ս. Ավետիսյանի,*  
*Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՈՒԼՆԵՑՈՒ փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94

Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Պաշտոնական բլոգ-կայք՝ <http://razmavaraget.wordpress.com>

Էլ. փոստ՝ [haykakanbanak@mil.am](mailto:haykakanbanak@mil.am)

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների  
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015 թ.

Ստորագրվել է տպագրության 12.04.2015: Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:  
Տեքստը՝ 264 էջ + 8 էջ ներդիր: Պայմանական տպագրական 19,5 մամուլ: Տպաքանակը՝ 500:  
Տառատեսակները՝ «Արիալ», «Թայմս» և «Բարբիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:  
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լեզալ Պլյուս» և «Լիմոշ» տպարաններում



ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը (կենտրոնում՝ աջից),  
ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը (կենտրոնում),  
ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը (կենտրոնում՝ ձախից),  
մի խումբ բարձրաստիճան սպաներ և ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան  
ռազմական ինստիտուտի շրջանավարտներ հարգանքի տուրք են մատուցում  
Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրում



Երևան, 2014 թ. հուլիսի 26

Министр обороны РА Сейран Оганян (в центре – справа),  
Президент РА Серж Саргсян (в центре),  
Председатель Национального собрания Галуст Саакян (в центре – слева),  
группа высокопоставленных офицеров и выпускники Военного института  
им. Вазгена Саргсяна МО РА отдают дань уважения памяти жертв Геноцида армян  
у Мемориального комплекса «Цицернакаберд»

Ереван, 26 июля 2014 г.

The RA Defense Minister Seyran Ohanyan (in the center – from right),  
the RA President Serzh Sargsyan (in the center),  
President of the RA National Assembly Galust Sahakyan (in the center – from left),  
a group of high-ranking officers and alumni of Vazgen Sargsyan Military Institute  
of the MOD of the RA pay tribute of respect  
at the Armenian Genocide memorial complex

Yerevan, 26 July, 2014



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ